ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԱՐԻԱ ԻՄՄԱԿՈԼԱՏԱ ՄԱՉՈՏԻ
Սապիենցա համալսարան, Հռոմ, Իտալիա

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Թարգմանիչ՝ Վահե Գևորգյան

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2015

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)
Մ 297

Խմբագիր՝ **Արթուր Աթանեսյան**

Maria Immacolata Macioti
IL GENOCIDIO ARMENO: NELLA STORIA E NELLA MEMORIA

InterPolis
Collana di studi politici e internazionali

Roma: Edizioni Nuova cultura, 2011

Մաչոտի Մարիա Իմմակոլատա
Մ 297 ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ/ Մարիա Իմմակոլատա Մաչոտի; Սապիենցա համալսարան, Հռոմ, Իտալիա.- Եր.: ԵՊՀ հրատ., 2015.- 232 էջ:

Մարիա Իմմակոլատա Մաչոտի, մշակութային գործընթացների գծով սոցիոլոգիայի պրոֆեսոր, դասավանդում է քաղաքական գիտությունների, սոցիոլոգիայի, հաղորդակցման ֆակուլտետներում: Ղեկավարում է Հռոմի՝ Սապիենցայի համալսարանի՝ ներգաղթյալների և փախստականների գծով մագիստրատուրան, որտեղ երկար տարիներ շարունակ աշխատել է իր դոկտորական աշխատանքի վրա՝ սոցիալական տեսության և հետազոտության թեմայով: Հումանիտար գիտությունների, Արվեստի և Միջավայրի գիտությունների Դաշնային համալսարանի փոխնախագահն է: Նրա գրքերը լույս են տեսել *Liguori, Guerini* և *Laterza* հրատարակչությունների կողմից:

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-5-8084-1932-2

© Թարգմանչի համար, 2015
© ԵՊՀ հրատարակչություն, 2015

ՑԱՆԿ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 5

ԳԼՈՒԽ I
XIX ԴԱՐԻ ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐԸ ՀԱՅԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ 12

1. Մի «երկարատև» պատմություն 12
2. «Հայկական հարցը» և ութիարյուրականների կոտորածները..... 37

ԳԼՈՒԽ II
XX ԴԱՐԻ ԱՐՏԱՔՍՈՒՄՆԵՐԸ. ԴՐԱՆՑ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿԱՄ ԱՌԱՋԸՆԹԱՑԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԸ 64

1. Բազմազգ Օսմանյան կայսրություն. ճգնաժամային իրականություն..... 65
2. Ներքին միատարրության անհրաժեշտությունը և հայերի տեղահանումը 70
3. Քողարկում, բացահայտում 82

ԳԼՈՒԽ III
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ 95

1. Պատմողական ստեղծագործություններ..... 99
2. Հիշողություն և ինքնություն 125

ԳԼՈՒԽ IV
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ: ՈՉ ՄԻԱՅՆ ԱՆՎԱՆՄԱՆ ԽՆԴԻՐ 146

1. Ցեղասպանություն հասկացության մշակումը 147
2. Ցեղասպանություն, թե՞ բնաջնջում 155

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 169
ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ 177
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ՇՈՒՐՋ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 229

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այս գիրքը ծնվել է որպես ավելի ընդարձակ ծրագրի մի մաս: Մտադիր էի որևէ բան գրել ապաստան խնդրողների և փախըստականների թեմայով, որը մինչ օրս անտեսված է Իտալիայում, քանի որ 2011 թվականին դեռ չկա նրանց վերաբերող որևէ հիմնական օրենք: Բայց հարցին ճիշտ մոտեցում ցուցաբերելու համար հարկ համարեցի ետ գնալ մինչև Ժնևի Կոնվենցիա, որի վրա է մինչ օրս հիմնվում միջազգային նորմերի մեծ մասը: Փախստականներին վերաբերող Ժնևի Կոնվենցիան թվում է, թե այդքան էլ մեծ դեր չի ունեցել Երկրորդ համաշխարհային պատերազմի հարցում: Մյուս կողմից ավելի ետ գնալու դեպքում կհասնենք Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում տեղի ունեցած հայոց ցեղասպանության իրադարձություններին: Երկու ժամանակաշրջան, որոնք իմ կարծիքով իրենց դերն են ունեցել այն հարցում, որ Եվրոպան խորհի կատարվածի մասին և մշակի մի կանոնակարգ, որը կկարողանա միջամտել նմանատիպ երևույթների առաջացման դեպքում: Այսպիսի դեպքերից հետո գլխավոր անհրաժեշտությունը պետք է լիներ մարդկանց ապաստան տալը, նրանց հայրենադարձությունը, ընտանիքների վերամիավորումը և վերաբնակեցումն ապահովելը:

Իհարկե ինձ համար դեռ անհասկանալի էր մնում, թե ինչու հավաքական փաստերից հետո (հալածանքներ հայերի, քաղաքական այլախոհների, հաշմանդամների, կրոնական փոքրամասնությունների, գնչուների և հրեաների նկատմամբ) որոշվեց անցում կատարել արդեն անհատական հալածանքների՝ վտանգի տակ դնելով սեփական անձը: Անշուշտ մինչ այդ ճամբարներում տեղավորված փրկվածների և նրանց հայրենադարձության

դժվարին իրավիվիճակ էր ստեղծվել, այն դեպքում, երբ այդ հայրենադարձությունը կամովի էր, թե՝ պահանջված: Դժվար իրավիճակ էր նաև նրանց համար, ովքեր խուսափում էին հայրենադարձությունից դեպի մի երկիր, որի՝ իրենց հանդեպ ռասիզմի մեջ սեփական փորձով էին համոզվել, և որոշ դեպքերում դա հասնում էր անգամ տեղահանության և մահվան պատճառ դարձած հալածանքների և ազդակների: Հանգամանքներ, որոնք բացահայտում են հավաքական բնույթ ունեցող գործընթացի սահմանները:

Մի խոսքով, փախստականների մասին խոսել կարողանալու համար սկսեցի հետաքրքրվել հայկական ցեղասպանությամբ: Հիշում էի, որ տասնյակ տարիներ առաջ կարդացել եմ « Մուսա լեռան 40 օրը» գիրքը, որն ինձ վրա մեծ տպավորություն էր գործել: Ավելի ուշ ձեռքս ընկավ նաև «Մուսա լեռան իրական պատմությունը» անունով Գուերինի հրատարակչության մի նյութ, որի հեղինակներն էին Ֆլավիա Ամաբիլեն և Մարկո Տոսսատին և որտեղ ներկայացվում էր, թե ինչ է իրականում տեղի ունեցել և քննադատության էր ենթարկվում Ֆրանց Վերֆելի գիրքը, քանի որ վեպ լինելով ՝ այն տեղի ունեցածի ոչ այնքան իրատեսական պատկեր էր ներկայացնում՝ միահյուսելով լեռան պաշտպանության պատմական իրադարձությունը հայազգի Գաբրիել Բրագդյանի և նրա ֆրանսուհի կին Ջուլիետի անձնական խնդիրների հետ: Մի զույգ, որը ճգնաժամ է ապրում այն պահից ի վեր, երբ հասկանում է, որ հայերը անհասկանալի սահմանափակիչ միջոցառումների կենտրոնում են հայտնվել: Պարզապես արդարացում չունեցող միջոցառումներ: Ինչպես օրինակ՝ բանակի սպաների պաշտոնից հեռացվելը և անձնագրերի առգրավումը: Այդ ժամանակ ինձ թվացել էր, որ չնայած այդ նյութը հանդիսանում է հայալեզու արխիվների երկարատև ուսումնասիրության արդյունք, և հետևաբար գովելի է և հետաքրքրաշարժ, իրականում այն այդքան էլ մեծահոգի չի գտնվել Վերֆելի նկատմամբ, որին է պատկանում 1915 թ. Թուրքիայում տեղի ունեցած իրադարձություններն աշխարհի ուշադրությանը ներկայացնելու

պատիվը: Այս թեմայով մտքերս արտահայտել եմ «Սոցիոլոգիական քննադատություն» (145, Գարուն, 2003) կոչվող ամսագրում տպագրված իմ մի ակնարկում: Մի ընթերցում, որն էլ ավելի է բորբոքում 900-ականների ողբերգությունն ուսումնասիրելու իմ ցանկությունը: Այդ ժամանակից ի վեր շարունակել եմ հետաքրքրվել հայոց ցեղասպանությամբ, փորձել եմ նոր նյութեր, պատմագիտական ակնարկներ գտնել այդ թեմայով, ինչպես նաև լսել ասուլիսներ ու բանավեճեր:

Երբեք չեմ մոռանա տարիներ առաջ ձեռք բերածս փորձը, երբ Ստամբուլում (1995 հունվար) տեղի ունեցած «Եվրոպայի խորհրդարանի» կազմակերպած համաժողովի բանախոսների թվում էինք ես, ֆրանսիացի հայտնի գիտնական, քահանա Միշել Վիևորկան և Միլանի համալսարանից Սլոմո Ջիորա Շոհամը: Չափազանց հետաքրքիր մի համաժողով էր հրաշալի մի քաղաքում, որտեղ մեր ժամանման պահին ձյուն էր տեղում: Համաժողովի բացմանը ներկա էին բազմաթիվ դիտորդներ, լրագրողներ, լուսանկարիչներ և հեռուստաընկերությունների ներկայացուցիչներ: Խոսվում էր բոլոր կրոնների նկատմամբ հանդուրժողականություն և հարգանք ցուցաբերելու, յուրաքանչյուրի՝ իր սեփական համոզմունքները պահպանելու իրավունքը ճանաչելու մասին, այն դեպքում, որ Եվրոպայում հանդուրժողականության մակարդակը թվում է թե փոփոխական է: (ecraser l'autre, c'est la procedure habituelle, en Europe): Նույնիսկ Ջոն Լոկն էր հանդուրժողականությունից խոսում: Մինչդեռ Եվրոպան անցել է հակասեմիտականության միջով և այժմ նկատվում է վերադարձ դեպի հակամահմեդականություն: Երկար քննարկվում էր ռասիզմի և նախապաշարմունքների, դահիճների և զոհերի հարաբերությունների, ինչպես նաև հերոսի և զոհի նախատիպերի մասին: Արդյոք հնարավո՞ր է հակասեմիտականություն առանց հրեաների: Մեզ ասացին, որ Թուրքիայում հակասեմիտականությունը դեռևս չի հասել բացահայտ լինելու, ներկայի պատիվը վայելելու մակարդակի: Խալիֆը միշտ պայքարել է այդ միտման դեմ: Մեկ ուրիշն էլ ավելացրեց, որ ռասիզմի պակասը Թուրքիայում գուցե

կախված է ընտանիքի կառուցվածքից: Բայց մնացածը ձեռնպահ էին: Յերուսաղեմի հրեական համալսարանից Ստերնհելլը բացատրեց, որ հրեան դարձել է արդիականությունից զզված բոլոր մարդկանց քավության նոխազը, քանի որ հրեաներն ապրում են ազատական հասարակություններում, գաղափարական արդիականությամբ: Հիշում եմ, որ Վիևորկան առաջարկեց զգուշություն ցուցաբերել ընդհանրույթներ ներկայացնելիս և պետության դերի հարցն առաջ բերեց: Հիշեց, որ Մեծ Բրիտանիայում ռասիզմը ոչ մի կուսակցության կողմից աջակցություն չի ստանում: Մինչդեռ Ֆրանսիայում ստանում է: Այսինքն չի կարելի ընդհանրացնող դատողություններ անել: Եվ չկա պարտադիր շարունակականություն տարրական ռասիզմի և հակասեմիտականության ավելի մշակված ձևերի միջև: Խոսվեց նաև տրամաբանական ներթափանցում ապահովող ռասիզմի մասին, «տարբերակիչ ռասիզմ», որը շատ տարբեր է «խեղճ սպիտակների» ռասիզմից (այս արտահայտությունը մոտս տպավորվել է հին ժամանակների հայտնի վեպերից մեկից՝ Լուիս Բրոմֆիլդի «Մեծ անձրև»-ից, որի գործողությունները տեղի են ունենում Հնդաստանի Ռանչիպուրում:) Այստեղ «խեղճ սպիտակները» միջին դասի, աղքատ մշակույթի տեր անգլիացիներ են, ովքեր միայն այն փաստի համար, որ սպիտակամորթ են, իրենց բարձր են դասում հնդիկներից: Նույնիսկ առավել կրթվածներից: (Խոսքը գնում է հատկապես կանանց մասին, ովքեր չունեն աշխատանքային ինքնություն և ում ամուսինները վաղուց արդեն չեն հիշում հեռավոր սիրահարվածության մասին, հալածված և էությամբ միայնակ կանայք): Քննարկվեց ներգաղթի քաղաքական խնդիրների, ներգաղթյալների ներքին կառավարման խնդիրների, էթնոազգայնականության տարբերակման հնարավորությունների մասին, ինչպես նաև ռասիզմի զարգացման հիմնական գործոնների մասին՝ նյութական գործոններ, տնտեսական հանգամանքներ, և նաև գաղափարներ: Խոսվեց նաև որոշ մարդկանց՝ իրականում անկարևոր փաստերը չափից դուրս ընդգծելու և ուրիշների՝ ձախակողմյանների ռասիզմը չբացահայտելու

միտման մասին: Դանիացի մի գործընկեր առաջ քաշեց Թուրքիայի քրդերի խնդիրը: Նախագահն անմիջապես հակառակվեց՝ հարցն օրակարգում չկա: Բայց մի թուրք գործընկեր անմիջապես բացատրեց, որ խոսքը հասարակական և քաղաքական խնդիրների մասին է, որոնք ունեն շատ կրակոտ կողմեր: Քրդերը երկրի որոշ շրջաններում նույնիսկ մեծամասնություն են կազմում: Ավելի քան հազար տարի ավելի քրդերն ու թուրքերը ներդաշնակորեն միասին են և մտերիմ հարաբերություններ են ունեցել: Իսկ բաժանման գործընթացը անկասկած ցավոտ է եղել: Համենայնդեպս խաղաղ լուծում գտնելու հույս կա: Բայց այս ամենը ոչ մի կապ չունի ռասիզմի կամ հակասեմիտականության հետ: Ռասիզմը ՄԱԿ-ում թուրք դեսպանի՝ սեփական մաշկի վրա զգացածն է: Հակասեմիտականությունը 20-րդ դարի խայտառակությունն է: Համաժողովը շարունակվեց մի քանի օր տարբեր նիստերով: Բայց այլևս չխոսվեց քրդերի մասին: Եվ ընդհանրապես չխոսվեց նաև հայերի մասին: Թեման արգելված և անտեսված է զեկույցներում և բանավեճերում:

Քննարկումների սրահի հարևան սրահում կային Թուրքիայի կողմից հյուրընկալված հրեա դասախոսների անվանացանկեր և նկարներ: Խոսվում է կարեկցանքի մասին, որը հանդուրժողականությունից ավելի ցանկալի հասկացություն է:

Հիանում էինք Բոսֆորի նեղուցի երկայնքով շարված հին և շքեղ շինություններով, հսկայական ընդունելության սրահներով, Մուրանոյի բյուրեղապակով: Այցելեցինք Սուրբ Սոֆիայի ազդեցիկ տաճարը՝ հնագույն սյուներով, որոնցից մի քանիսը զարդարված են Մեդուզայի գլուխներով, ինչպես նաև գեղեցիկ լողավազանը, որտեղ մուգ գույնի ձկներ են լողում: Բարձրակարգ ընդունելության արժանացանք, ոչ մի վայր այցելելու համար ստիպված չեղանք սպասել, մի մեքենան մեզ վերցրեց հենց ինքնաթիռի մոտից, մեկ ուրիշը ուղեկցեց մեզ՝ փրկելով հոգնեցուցիչ հերթերից և ուղեբեռի ստացումից: Միաժամանակ եղանք նաև շուկայում, հիացանք հիասքանչ տեսարանով, Բոսֆորի նեղուցով: Ո՛չ լիագումար հանդիպումների և ո՛չ էլ որևէ այլ տեղ երբեք

չլսեցի հայերի մասին: Այդ թեմայի շուրջ միայն մի քանի իտալացի, ֆրանսիացի գործընկերների շրջանակում էինք խոսում: Կազմակերպիչները մեզ մեկընդմիշտ ասացին, որ թեման ողջունելի չէ: Այն նախատեսված չէ: Կարծում եմ հենց այդ պահից է իմ մեջ արթնացել հայկական ցեղասպանության մասին ավելին իմանալու ցանկությունը:

Բացի այդ, այս գիրքը որ լույս է տեսել երկար տարիների ուսումնասիրություններից հետո, պետք է որ ծառայի որպես առաջին քայլ՝ այսօրվա փախստականների մասին տեսություններն ու իրականությունը լավ հասկանալու համար: Սա մի թեմա է, որը կարիք ունի հումանիտար գիտություններին հարող մասնագետների կողմից ավելի մեծ ուշադրության, բայց որն Իտալիայում սահմանափակվում է օպերատորների և իրավաբանների շրջանակում: Ուշադրություն, որ այնքան կարևոր է, այնքան անհրաժեշտ: Բայց մշակութային և հասարակական մարդաբանները գուցե կարողանային գիտելիքի նոր ներդրումներ կատարել:

Բացի այդ հայկական ցեղասպանության հարցը ինձ չափազանց արդիական է թվում: Այն երբեք այնքան կարևոր չի եղել Եվրոպայի մեծ մասի կողմից Թուրքիայի ընկալման համար, որքան այսօր՝ դրա ժխտման դեպքում վտանգի տակ դնելով Թուրքիայի Եվրամիություն ընդգրկվելը: Մի բան, որ տարբեր պատճառներով շատ ցանկալի է, նույնիսկ եթե ոչ հատկապես այն պատճառով, որ երկիրը դարեր ի վեր Արևելքի և Արևմուտքի միջև սահմանի դեր է խաղացել և դեռ կարող է շարունակել խաղալ: Պատմական և միևնույն ժամանակ արդիական մի թեմա, որը փաստորեն ամբողջ Եվրոպայի ապագայի համար զգալի վտանգ է ներկայացնում: Փաստ, որի մերժումը ոչնչով չի օգնում միջազգային հարաբերություններին: Ժխտված ցեղասպանություն: Սակայն անշուշտ ոչ անհայտ: Այս առումով ավելի վատ վիճակում են գնչուները, ում Պորայմոսը (ցեղասպանություն) մինչ օրս անհայտ է: «Գնչուների նկատմամբ չի եղել համակարգային մտադրված բնաջնջում»- իր գեղեցիկ հուշերում գրում

է Յան Յուրսը («Գնչուներ», Հռոմ, Ճառագայթումներ, 2008 և Քրոսինգ, «Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանում գոյատևման և դիմադրության օրագիր», Հռոմ, Ճառագայթումներ, 2009): Բայց շատ գնչուներ հայտնվեցին ճամբարներում և այնտեղի բանտերում մահ գտան (500,000-ից 600,000): Երիտասարդներից շատերը, դուրս գալով մեծահասակների կարծիքի դեմ, զենք վերցրին գերմանացիների դեմ: Շատերն էլ ընդունեցին փախստականներին, կարողացան շրջափակված Ֆրանսիայից հեռացնել անգլիացի զինվորների և այլ փախստականների՝ ուղեկցելով նրանց մինչև Իսպանիա:

Լովարների հետ երկար ժամանակ ապրած Յուրսը գրում է.

«Ինչպես հրեաները, այնպես էլ գնչուները «rasseverfolgte» էին (իրենց ռասայի պատճառով անցանկալի) և Ռայխի թշնամիներ, ու ռասայական օրենքները նախատեսում էին նրանց բնաջնջում: Բայց, ի տարբերություն հրեաների, նրանց դժվար էր բռնել, քանի որ շարժվում էին փոքր խմբերով և չափազանց արագաշարժ էին: Դժվար է թվել այն վայրագությունները, որոնց ենթարկվեցին գնչուները այս ժամանակաշրջանում: Բայց երբեք, ոչ մի պարագայում փորձ չարվեց համակարգայնորեն ոչնչացնել նրանց: Շաբաթներով որսի էին դուրս գալիս գնչուների ետևից և հետո մոռանում նրանց մասին: Շատ գնչուներ այսօր իրենց կյանքով են պարտական գերմանացիների անհետևողականությանը»: («Գնչուներ», էջ 322):

Սա դեռևս քիչ հայտնի մի դյուցազներգություն է, որի նպատակը, իմ կարծիքով, գնչուների պատմությանը մարդկանց ծանոթացնելն է և այդ առումով արդիական շատ նախապաշարումներ վերացնելը:

Ինձ մնում է շնորհակալություն հայտնել այս աշխատանքի նախնական տարբերակը ընդունած երեք ամիսը մեկ լույս տեսնող «Սոցիոլոգիական քննադատություն» ամսագրին, որի հիմնադիր-տնօրենն է Ֆրանկո Ֆեռարոտին, ինչպես նաև Ալբանիայի Վլորեյի համալսարանի «Ակադեմիկուս» ամսագրին:

ԳԼՈՒԽ I

XIX ԴԱՐԻ ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐԸ ՀԱՅԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

1. Մի «երկարատև» պատմություն

XIX դարի վերջին և XX դարի առաջին տասնամյակներում ամբողջ աշխարհում գաղթի մեծ ալիք է տարածվում, ինչի պատճառները հիմնականում տնտեսական էին: Բայց հայերի կոտորածից, Երկրորդ համաշխարհային պատերազմից, ինչպես նաև Շոահից (Հոլոքոստից) հետո բոլորովին այլ պատկեր է առաջանում, որում մեծ տեղ են զբաղեցնում հալածանքներն ու բնաջնջման փորձերը, որոնք էլ բնութագրում են դարի պատմությունը և սկիզբ են դնում «ցեղասպանություն» հասկացությանը: Երևույթներ, որոնք մինչ օրս առկա են միջազգային ասպարեզում, քանի որ նույնիսկ մեր օրերում կիրառվում են հալածանքներ, որոնք ուղղված են ոչ թե մեկ անձի, այլ խմբային անդամակցության դեմ: Հալածանքներ, որոնք երբեմն վերածվել են իրական կոտորածների և պատճառ հանդիսացել հարկադիր գաղթի:

Ժամանակագրորեն դարը սկսվում է Եվրոպական ուժերի կողմից որոշ աֆրիկյան ժողովուրդների բնաջնջմամբ[1]: Մի քանի տարի անց, 1915-1916 թթ. տեղի է ունենում հայերի կոտորածը, որի տխուր հիշողությունները դեռևս պահպանված են շատերի գիտակցության մեջ և կասկածներ ու անորոշություն են առաջացնում Թուրքիայի՝ Եվրամիություն մտնելու հնարավորությունների վերաբերյալ (մի բան, որ տարբեր առումներով ցանկալի և շահա-

[1] **Ջ. Կի-Զերբո**, «Սև Աֆրիկայի պատմություն. նախապատմության և ապագայի միջև ընկած մի մայրցամաք», Թուրին, Էյնաուդի, 1977:

վետ կլիներ)՝ հաշվի առնելով, որ Թուրքիայի միմյանց հաջորդած կառավարությունները ցեղասպանությունը ճանաչելու ցանկություն երբեք չեն ունեցել և նախընտրել են այդ մասին լռել, կարծես թե գոյություն էլ չի ունեցել: Մանավանդ, որ տասնյակ տարիներ դրա մասին հիշողությունները վստահված են եղել բացառապես գեղարվեստական գրականությանը, մասնավորապես Ֆրանց Վերֆելի 1932-33 թվականներին գրված «Մուսա լեռան 40 օրը» վեպին:

Պատմական բարդ իրադարձություններ. ավերածություններ և գաղթ

«Օսմանյան կայսրության հայերը 1915 թ. աշնանից մինչև 1916 թ. գարնան ժամանակահատվածում Թուրքիայի կառավարության գլուխ «Միություն և առաջադիմություն» կուսակցության Կենտրոնական կոմիտեի կողմից պլանավորված ցեղասպանության զոհ են դարձել: Այս հանցագործությունը ի կատար ածելու համար թուրքական կառավարությունը այն քողարկել է տեղահանություն անվան տակ: Այսպիսի հայտարարությունները ենթադրում են, որ ցեղասպանությունը պարզ ճշմարտություն է, այդ պատճառով նրա մասին խոսելիս այն որակում են հանցագործություն, բացահայտում են մեղավորին և նրա մեթոդները: Պարզ ճշմարտությունները քննարկման ենթակա չեն: Հայկական ցեղասպանությունը վարկած չէ: Այն դարձել է անտարակուսելի փաստ: Ցեղասպանությունը հանցանք է, բացարձակ հանցանք, մարդկության դեմ հանցանքի ամենալուրջ տեսակը»[2]:

Այս բառերով է սկսում իր «Հայերը» գիրքը Իվ Թերնոնը՝ ֆրանսիացի մի բժիշկ, ով «Հանցավոր պետություն. 20-րդ դարի ցեղասպանությունները» ստեղծագործության հեղինակն է: Նրա ուսումնասիրությունները տևել են 5 տարի՝ 1972-1977 թ., երբ

[2] **Ի. Թերնոն**, «Հայերը 1915-1916 թվականներին. մոռացված ցեղասպանություն», Բոլոնիա, Բուր Ռիզոլի, 2007- մեջբերումներ՝ Ա. Կրեա, Վ. Պացցի, Ա. Զուկետտի, Կ. Ավանցի (բնօրինակ՝ Les Armeniens, histoire d'un Genocide, Paris, Editions du Seuil, 1977, 1996, իտալերեն տարբերակ՝ Բոլոնիա, Ռիզոլի, 2003):

ֆրանսերենով առաջին անգամ տպագրվել է իր ստեղծագործությունը: Հեղինակը հիմնվել է գրավոր աղբյուրների, ինչպես նաև հայերի հուշերի և վկայությունների վրա մի այնպիսի ընդլայնմամբ, որն այսօր մեծ տեղ է զբաղեցնում «բանավոր պատմության» և «որակական սոցիոլոգիայի» բնագավառներում:

Ի՞նչ է նշանակում պլանավորված ցեղասպանություն: Խոսքը վերաբերում է այն գործողություններին, որոնք նպատակ ունեն կանխամտածված կերպով և արտակարգ միջոցներով բնաջնջել մի ամբողջ խումբ, մի իրականություն: Փաստորեն սովորաբար մեղքը պատկանում է պետությանը, քանի որ, որպես կանոն, պետությունն է այն միակ սուբյեկտը, ում տրամադրության տակ գտնվում են լայն միջոցներ, կառույցներ, և որը կարող է իրականացնել շարունակական գործողություններ՝ մեծամասշտաբ ավերիչ ծրագիր պլանավորելու համար: Որպես կանոն՝ պետությունն է, որ ունի բռնության մենաշնորհ, ունի այն ամենը, ինչ գիտնականները պատկերացնում են «իշխանություն» հասկացության տակ:

Ցեղասպանության դեպքում փորձ է արվում մաքրել բոլոր հետքերը: Այդպես է եղել նաև հայերի դեպքում:

Շատ պատմաբանների ստեղծագործություններում կարևորություն է տրվում երիտթուրքերի երևան գալուն, հզոր, միացյալ, թուրքական Թուրքիա ստեղծելու իրենց երազանքին, որն էլ հենց ենթադրում էր փոքրամասնությունների բնաջնջում: Առաջին հերթին՝ հայերի: Եվ, իրոք, հայերը քրիստոնյա էին, խոսում էին իրենց լեզվով, ապրում և սերնդեսերունդ փոխանցում էին իրենց իսկ մշակութային ավանդույթները:

Հայերն ապրում էին Արևմտյան Ասիայի պատմությամբ հարուստ մի հատվածում, որտեղ վեր է խոյանում առասպելական Արարատ լեռը[3]: Տարածք, որն ընդգրկում էր Եփրատի, Տիգրիսի,

[3] Թուրքերեն՝ Ağrı Dağı. Լեռը գտնվում է Հայաստանի և Իրանի հետ սահմանների ուղղությամբ: Համարվում է հայերի ազգային լեռը: Ըստ ավանդության՝ այստեղ է իջել Աստվածաշնչյան Նոյյան տապանը:

Արաքսի, ինչպես նաև Քորութի որոշ հատվածներ: Տարածք, որ հարուստ էր բարձրավանդակներով, գագաթներով, անդնդախոր ձորերով և լեռնային լճերով: Հենց իր դիրքի պատճառով էլ այն երկար ժամանակ կռվախնձոր է եղել: Սկզբում գտնվել է Դարեհի և պարսիկ սատրապների ենթակայության ներքո[4], ապա Լուկուլլոսի և Պոմպեոսի հետ պատերազմից հետո դարձել է Հռոմի հաճախորդ-պետություն և վերջապես 224 թ. Հայաստանը դարձել է սասանյան կայսրության մի մարզ:

Թվում է, թե 295 թ. քրիստոնյա դարձած Տրդատ 3-րդի օրոք է, որ Հայաստանը, որտեղ քարոզչություն է անցկացրել Գրիգոր Լուսավորիչը, ճանաչել է Քրիստոնեությունը որպես պետական կրոն: Այսինքն՝ դա տեղի է ունեցել մի քանի տարի ավելի շուտ, քան ընդունվել է Միլանի հայտարարագիրը, որը 313 թ. հռոմեացիներին հանդուրժողականություն էր քարոզում այդ նոր կրոնի նկատմամբ: Գրիգոր Լուսավորիչը Կապադովկիայի Կեսարիա քաղաքում եպիսկոպոս էր օծվել: Դա նշանակում է, որ Կեսարիայից էին կախված կրոնական կազմակերպությունը, պաշտամունքը և հայկական եպիսկոպոսության գլուխ կանգնած եպիսկոպոսի՝ կաթողիկոսի ձեռնադրումը: Սա մի հոգևոր կոչում էր, որ ժառանգաբար փոխանցվում էր Գրիգորի ընտանիքին, ինչը հետագայում դառնում է ներքին ընդվզումների և հայերի ու Կեսարիայից անջատված քրիստոնեության միջև եղած էլ ավելի մոտ կապերի հաստատման պատճառ:

Նոր Հայաստանը հասնում է սեփական այբուբենը ստեղծելուն (մինչ այդ հնդեվրոպական ծագման բարբառ էր գործում): Սա մեծ առաջընթաց էր կրոնի և այլ բնագավառներում, քանի որ կարող էր փոխարինել եկեղեցական ծեսերի ժամանակ գործածվող հունարենին և ասորերենին, ինչպես նաև հանրային կառավար-

[4] Դարեհ Մեծը սերում էր Աքեմենյան արքայատոհմից (Ք.ա. 550-330), թագավորել է Ք.ա. 522-486 թթ.: Սասանյանները իշխանության են գալիս այժմյան Իրանի իսլամական հանրապետության տարածքում 224-642 թթ. (ըստ այլ աղբյուրի՝ 637):

ման արամեերենին և պարսկերենին: Եվ իսկապես լեզվի հետ զուգահեռ ծնվում և սկսում են զարգանալ առաջին հերթին գրականությունը, ապա նաև ազգային եկեղեցական ծեսերը, երաժշտությունը, ճարտարապետությունը և այդպիսով կյանք են տալիս մի համապարփակ և բարդ մշակույթի:

Այս նոր ծնված Հայաստանը կարծես երկու ոգի ունենար: Ոգիներից մեկը ձգտում էր դեպի Սասանյան Պարսկաստան[5], մինչդեռ մյուսը՝ դեպի Բյուզանդիա: Սկզբում պարսից շահի դեմ պատերազմների ժամանակաշրջան է գալիս, ապա հեռացում Հռոմից և Բյուզանդիայից, որը բնորոշվում է Քրիստոսի մարդկային և/կամ աստվածային բնույթի վերաբերյալ աստվածաբանական վեճերով, ինչպես նաև հայ աստվածաբանների հարկադիր բացակայությունով Քաղկեդոնի տիեզերաժողովից (451) և դրա ժամանակ ընդունված որոշումների կայացման գործընթացից:

Թվում է, թե Հայաստանը ի վիճակի էր պահպանել իր ինքնուրույնությունը և իր սեփական հավատքը. հենց այս ժամանակաշրջանում՝ 7-րդ դարում են սկսվում արաբական արշավանքները, որոնց հաջողվում է կոտրել նույնիսկ Սասանյան կայսրությունը: Հայկական քաղաքները անցնում են նրանց ենթակայության ներքո: Դրան հետևում են արաբ խալիֆայի կողմից հրահրված ներքին ընդվզումների մի ժամանակաշրջան, ինչպես նաև Բյուզանդիայի կողմից Հայաստանի տարածքները նորից գրավելու փորձերը: 859 թ. սկսած (կամ այլ աղբյուրների համաձայն՝ 885-ից) երկրի գլուխ է անցնում Բագրատունյաց արքայատոհմը, որի իշխանությունը տևում է 160 տարի: Սա

[5] Սասանյանների արքայատոհմը փոքր էր, և անսպասելիորեն անցել էր Արտաշես 1-ինի կայսերական միապետության կողմ (224-241): Զրադաշտն այդ ժամանակ նրանց պետական կրոնն էր: Սասանյանները բարելավել էին առևտուրը Պարսկական ծովածոցում և խրախուսում էին փոքր արտադրական ընկերություններին: Նրանց շնորհիվ զարգանում էին նաև քաղաքները: Սակայն Բյուզանդիայի հետ մղվող կռիվների պատճառով նրանք թուլանում են և մոտավորապես 632 թ. արաբների կողմից պարտության են մատնվում:

բարգավաճման և բարեկեցության ժամանակաշրջան է լինում թե՛ գյուղատնտեսության ու առևտրի և թե՛ մշակույթի բնագավառում: Կառուցվում են եկեղեցիներ և վանքեր, զարգանում են գյուղերն ու քաղաքները, որոնց թվում էր նաև մայրաքաղաք Անին:

Բայց բյուզանդացիներն ու արաբները շարունակում էին խրախուսել ներքին ընդվզումները և հզոր ընտանիքների միջև եղած մրցակցությունը ու ձգտում էին տարածքային ընդլայնման: Իսկ մահմեդականություն ընդունած սելջուկ թուրքերը լքել էին Արալ լճի շուրջ եղած իրենց տարածքները, անցել էին դեպի Անատոլիա և գրավել Բաղդադը: Այդ նույն մայրաքաղաք Անին 1064 թ. ավերվում է, շրջակա տարածքները թալանի են ենթարկվում: Հայկական տարածքների ավերածությունները իրենց ազդեցությունն են թողնում նաև Բյուզանդիայի վրա, որն այլևս հույսը չէր կարող դնել արևելյան պարիսպների պաշտպանության վրա: Հաջորդ 4 դարերի ընթացքում Բյուզանդական կայսրությունը դեռ կանգուն էր, բայց արդեն թուլացած և այլևս ի վիճակի չէր դիմադրել սելջուկներին: Մոնղոլները թալանի էին ենթարկում Հայաստանը (բայց շատ մարդիկ այդ ընթացքում փախել էին Կիլիկիա և այնտեղ հիմնել Փոքր Հայաստանի թագավորությունը): Թամերլանը 1387 թ. կտրում անցնում է երկիրը՝ ամենուր տարածելով կործանում և մահ:

1389 թ. հունիսի 15-ին տեղի ունեցած Կոսովոյի հայտնի ճակատամարտը[6] վերջ է դնում Սերբիայի թագավորությանը: Իշխանության գլուխ է անցնում Բայազետ 1-ինը, ով Մուրադ 1-ինի

[6] Ինը հարյուրականներին տարածքի համար պայքարում են Սերբիան և Ալբանիան, պետություններ, որոնք երկուսն էլ այն ձեռք բերելը կարևոր ու անհրաժեշտ էին համարում իրենց ազգային ինքնության համար: Այս հոգեվիճակի պատճառը սերբերի համար անցյալում ունեցած իրենց թագավորությունն էր, որը կորցրել էին 1389 թ., երբ ընկել էին օսմանյան լծի տակ, մինչդեռ ալբանացիների համար հերոս Սկանդերբեգի հիշողությունն էր, ով XV դարում այնտեղից ետ էր մղել օսմանյան զորքերին: Այս ավանդույթը դեռևս գոյություն ունի թե՛ Ալբանիայում և թե՛ հարավային Իտալիայի ալբանական ծագման այլ համայնքներում:

որդին էր և Օսմանյան կայսրության հիմնադիր Օսմանի թոռը: Բայազետի օրոք օսմանները գրավում են Բուլղարիան, բայց Անկարայում պարտություն են կրում Թամերլանի կողմից և Հայաստան կրկին թալանվում է մոնղոլների կողմից: Այստեղ իշխանություն են հաստատում «Սև խոյ» և «Սպիտակ խոյ» թուրքմենական ցեղերը: Այսպիսով՝ երկիրը ենթարկվում է ներգաղթի և արտագաղթի: Եվ շատ հայեր այդ պահին չարյաց փոքրագույն համարվող Բյուզանդիայից հեռանում են՝ ուղղվելով դեպի արևմուտք և հարավ:

Ինչպես գիտենք, մի խումբ հայեր ապաստան էին գտել Կիլիկիայում և հաստատվել Ռուբեն իշխանի ենթակայության ներքո (1080-1095): Այստեղ մինչև միջերկրական հասնող մի նոր Հայաստան է հիմնվում, որը ձգվում էր մի կողմից Ալեքսանդրեթի ծովածոցից մինչև Պանֆիլիայի ծովածոց, և մյուս կողմից՝ Եփրատի հովիտներից մինչև հին Հայաստանի տարածք: Սրանք են Աբբասյան և Սելջուկյան կայսրությունների անկման փոթորկալից տարիները, և Եգիպտոսում երևան են գալիս Սալադինը, ապա նաև մամլուքները: Սա մարտերի և խաչակրաց արշավանքների մի շրջան էր քրիստոնյա արևմուտքի և Բյուզանդիայի միջև, որոնցից վերջինը աջակցում էր մահմեդականությանը՝ ոչ ուղղափառ քրիստոնյաների դեմ և ավերում էր հայկական կոմսությունները: 1187 թ. միապետ Սալահ ալ-Դինը, որին անվանում էին Սալադին, միավորում է Մերձավոր Արևելքի մահմեդականներին և գրավում Երուսաղեմը:

Արևմուտքը պատասխանում է Երրորդ խաչակրաց արշավանքով, որի ընթացքում Ռուբենի իշխանաց տունը դառնում է Նոր Հայաստանի թագավորություն: Թագավորությունը հիմնադրվում է 1198 թ. և գոյատևում 177 տարի: 1375 թ. մամլուքները գրավում են մայրաքաղաք Սիսը և ձերբակալում ու աքսորում են Լուսինյանների արքայատոհմի վերջին թագավորին: Այնուամենայնիվ որոշ հայերի հաջողվում է դիմադրել և անկախ մնալ մինչև XIX դար:

Մի բարդ պատմություն՝ խճճված քաղաքական միասնությամբ պայմանավորված գաղթերի պատմության հետ: Իվես Թերնոնը խոսում է XI-XIII դարերում Մեծ Հայքից դեպի Ղրիմ և հետո նաև Լեհաստան ու Մոլդովա, ինչպես նաև Տրանսիլվանիա և Հունգարիա հազարավոր հայերի գաղթի մասին: Մինչդեռ Կիլիկիայի հայերը XIV-XV դարերում գնում էին դեպի Կիպրոս և Հունաստան, Իզմիր, Կոստանդնուպոլիս և Եգիպտոս: Միջերկրական ծովի կողմից որոշ հայեր կարողանում են հասնել Իտալիա, ուրիշները ուղղվում են դեպի Ֆրանսիա և Հոլանդիա: Հայերի մեկ այլ խումբ Պարսկաստանից հասնում է Հնդկաստան: Նրանց ներկայության հետքերը կարելի է գտնել նաև Սայգոնում և Չինաստանում: Այնուամենայնիվ՝ գիտնականը գրում է.

«Սելջուկների, մոնղոլների և հետո նաև օսմանների կողմից ճնշված, բայց իրենց առաքելական հավատքին նվիրված գյուղացիները հայկական բարձրավանդակի և Կիլիկիայի տարածքում չէին հեռանում իրենց դաշտերից, արհեստավորները վերաբացել էին իրենց խանութները, առևտրականները շարունակում էին առևտուրը: Հինգ դար անց Եվրոպան զարմանքով բացահայտում է, որ Օսմանյան կայսրության արևելյան սահմանների մոտ գոյություն ունի հայկական մշակույթ և կրոն, ապրում է հայ ժողովուրդը, որը չի կորցրել իր հպարտությունն ու արժեքները»[7]:

Բյուզանդական կայսրության անկումից (1453 թ.)[8] որոշ ժամանակ անց՝ XVI դարի սկզբներին, օսմանյան թուրքերը գրավում են Հայաստանը, որն իրենց և սաֆավիյանների (պարսիկների)[9] միջև եղած բախումների թատերաբեմն էր: 1533-1553 թթ.

---

[7] **Ի. Թերնոն**, մեջբերված ստեղծագործություն, էջ 27:

[8] Հարկ է հիշել, որ 1461 թ. Մուհամմեդ 2-րդ սուլթանը հիմնում է Կոստանդնուպոլսի հայկական կաթողիկոսությունը, որը ղեկավարում էին Հռոմի հետ միացմանը բացահայտորեն դեմ տրամադրված մարդիկ:

[9] Խոսքը գնում է մեծ ավերածությունների պատճառ դարձած պատերազմների մասին, որոնցից անխուսափելիորեն սով էր ծագում: Դրանց հետևանքները են լինում կրոնափոխությունները և ավելի մեծ կշիռ ունեցող արտագաղթը: Պարսկաստանի և Օսմանյան կայսրության պատերազմը ավարտվում է 1639 թ.

արևմուտքում հայտնի Սուլեյման Հիասքանչը [10] երեք տարբեր ռազմական արշավների հաղթող է դառնում: Արշավներ, որոնք հող են նախապատրաստում 1855 թ. Ամասիայի հաշտության պայմանագրի համար: Բայց քոչվոր թուրքերի և քրդերի կողմից[11] Հայաստանում դեռ շատ ավերածություններ և պատերազմներ են տեղի ունենում, որի արդյունքը բազմաթիվ հայերի դեպի Կոստանդնուպոլիս ուղղված գաղթն է լինում:

Ինչպես գիտենք, Օսմանյան կայսրությունում կրոնական համայնքների ներկայությունն ընդունելի էր, սակայն, նրանք պետք է ենթարկվեին սուլթանի կողմից նշանակված պատրիարքին: Հենց նա էր պատասխանատու համայնքի կամ «միլլեթ»-ի վարքի համար: Փոխարենը նա իրավունք ուներ պահպանելու

Կոստանդնուպոլսում կնքված հաշտության պայմանագրով: Բայց այս ընթացքում տեղի է ունենում մոտ 56,000 հայերի տեղահանություն, ովքեր ստիպված էին Արարատյան դաշտավայրից կտրել անցնել Արաքսը, քայլել Ադրբեջանի և Քուրդիստանի ճանապարհներով և հասնել Իսվահան: Տեղ է հասնում ճանապարհ ընկածների միայն կեսը: Կենդանի մնացածները դեռ հույս ունեին, որ կաթոլիկ Հայաստանը ազատություն կնվաճի, միգուցե Ռուսաստանի օգնությամբ: Մինչ օրս Իրանում գոյություն ունի հայկական համայնք, որը Խորհրդարանում երկու տեղի իրավունք ունի: Իսվահանի հայերը լուսավորչական են, այսինքն՝ Հռոմից անկախ են և Կիլիկիայի կաթողիկոսության (նստավայրը՝ Անթելիաս, Բեյրութ) մաս են կազմում: 2009 թ. նրանք մոտ 80,000 էին՝ բաժանված Թավրիզի, Թեհրանի և Իսվահանի թեմերի միջև, վերջինս մինչ օրս հայտնի է իր գեղեցկությամբ և արվեստով (գորգերն ու մանրանկարներն ամենամեծ պահանջարկն ունեն):

[10] 1529 թ. Սուլեյմանը (Սուլեյման Հիասքանչ) հասնում է մինչև Վիեննայի պարիսպների մոտ: Այս տխրալի իրադարձությունը կրկնվում է նաև 1683 թ., երբ Լեհաստանի թագավոր Ջովաննի Սոբիեսկիին հաջողվում է օսմանյան զորքին պարտության մատնել և ստիպել, որ վերջինս դադարեցնի պաշարումը: Իսկ 1699 թ. հաշտության պայմանագիր է կնքվում ներգրավված եվրոպական երկրների և Բարձրագույն դռան միջև: Օսմանյան կայսրությունն այս շրջանում ակնհայտորեն անկում էր ապրում:

[11] Թուրքիայի սահմանային շրջաններում, Իրանում, Իրաքում, Սիրիայում և Վրաստանում բնակվող քրդերի պատմությունը շատ բարդ է: Կգա ժամանակ, որ Թուրքիան, առաջնորդվելով հնագույն կարգախոսով՝ որն է բաժանիր, որ տիրես, նրանց կօգտագործի հակահայկական գործընթացներում:

սեփական օրենքները, բայց պետք է խոշոր հարկեր վճարեր: Օսմանյան կայսրության ներսում գտնվող հայկական համայնքի կամ «էրմենի միլլետ»-ի համար այդ հարկը կազմում էր մոտավորապես 10,000 մետաղադրամ: Կոստանդնուպոլսի կաթողիկոսը Բարձրագույն դռան հետ միակ կապող օղակն էր, և հենց նա էլ որոշում էր, թե հայկական թեմերից որ մեկն է զբաղվելու հարկերի հավաքագրմամբ: Մյուս կողմից հայերի թիվը Կոստանդնուպոլսում արդեն մեծ էր, ինչի պատճառը պատերազմների ժամանակ այստեղ գաղթածներն էին: 1800-ականների սկզբներին այնտեղ կար 150,000 հայ, իսկ 1860-1880 թթ. այդ թիվը կրկնապատկվում է:

Սփյուռքի տարածման հետ միասին խորանում էր սոցիալական անհավասարությունը: Թերնոնը նշում է, որ գոյություն ուներ քաղաքական և ֆինանսական օլիգարխիա (ամիրաները), որի նվիրատվությամբ էլ գոյատևում էր կաթողիկոսությունը: Հենց այս պատճառով էլ այն ղեկավարվում էր նրա կողմից՝ այն աստիճան, որ նույնիսկ կաթողիկոսն էր ընտրվում օլիգարխիայի ցանկությամբ: Այսինքն՝ օլիգարխիան իրենից մեծ հզորություն էր ներկայացնում: Միաժամանակ աճում և զարգանում էր արհեստավորների և առևտրականների մի մեծ բանակ, որոնք հիմնադրում էին տարբեր ընկերություններ ու բնակվում էին որոշակի թաղամասերում: Եվ ամիրաները չէին կարողանում ազատվել աստիճանաբար ավելի աճող այս դասակարգերից, որոնց ներկայացուցիչները օր օրի ավելի մեծ հավակնություններ էին ներկայացնում գործերի կառավարմանը մասնակցելու հարցում: Գիտնականը նշում է նաև վաճառականների բուրժուազիայի մասին, որոնցից էլ հետագայում առաջ եկան «էֆենդիները»՝ կայսրության ապագա հայ պաշտոնյաները: Սակայն այս արտոնյալ դասերի կողքին բնակչության մեծամասնությունը խեղճ կյանքով ապրող և շահագործման ենթարկվող գյուղացիներն էին: Նրանց վիճակը աստիճանաբար ավելի էր ծանրանում:

«Արևելքի հարցը»

Միևնույն ժամանակ առաջ է գալիս այսպես կոչված «Արևելքի հարցը»: 18-րդ դարում Օսմանյան կայսրությունը բազմաթիվ անգամներ տարաձայնություն է ունենում Ռուսաստանի և Ավստրիայի հետ՝ կրելով թե՛ պարտություններ և թե՛ հաղթանակներ, մինչև որ կնքվում է Քյուչուկ-Քայնարջայի պայմանագիրը (1774 թ. հուլիս), որը հաստատում է Ռուսաստանի իշխող դերը և ճանապարհ բացում հզոր իշխանությունների միջև տեղի ունեցող պայքարի համար, որոնցից յուրաքանչյուրը հույս ուներ վերահսկել բալկանյան Եվրոպայի և արևելյան Միջերկրական երկրներին[12]: Այս պայմանագրով Ռուսաստանին է վստահվում Օսմանյան կայսրության ուղղափառ հպատակների պաշտպանության հարցը: Այսպիսով՝ ծնվում է այսպես կոչված մարդասիրական միջամտությունը, որը հետագայում անվանվում է հումանիտար միջամտություն:

Սակայն Ռուսաստանն ուղղափառների պաշտպանության անվան տակ իրականում իշխանությունն ընդլայնելու հստակ նպատակներ ուներ և ձգտում էր Կովկասից հասնել մինչև Միջերկրականի ավազան և Պարսից ծոց: Մյուս կողմից Անգլիան վախենում էր այս վարկածներից և դեպի Հնդկաստան տանող ճանապարհները կորցնելուց: Բացի այդ նա կանգնած էր իր տիրապետության տակ գտնվող միլիոնավոր մահմեդականներին չթշնամացնելու անհրաժեշտության առաջ: Ավստրիան էլ իր հերթին էր վախենում Ռուսաստանի ընդլայնումից և փորձում ամրապնդել իր սահմանները:

Օսմանյան կայսրությունը նախկինի պես վախ չէր ներշնչում Եվրոպային: 19-րդ դարում նրա վարած պատերազմները հաջող ավարտ չեն ունենում: Ավելին՝ նպաստում են նրա թուլացմանը, էլ ավելի ընդգծում այդ թուլությունը: Նրա ներսում, ինչպես

---

[12] **Է. Հոշ**, «Բալկանյան երկրների պատմություն», Բոլոնիա, Մուլինո, 2006 (Մյունխեն 2004):

արդեն նշվեց, գոյություն ուներ դարավոր հակամարտություն մահմեդականների և քրիստոնյաների միջև, ինչպես նաև նոր դժվարություններ և բախումներ են առաջանում պահպանողական ու կրոնական հայացքներ ունեցող ոչ այնքան երիտասարդ թուրքերի և երիտթուրքերի միջև, որոնք պատվի հարց էին համարում իրենց ազգայնամոլությունը և իրենց նորարարական ոգին: Միապետը հայտնվել էր թուլությունների, ներքին հակասությունների և մեծ տերությունների ծավալապաշտական միտումների կենտրոնում: Եվ իսկապես ռուսական ուժերը 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում ներխուժում են Հայաստան և հասնում Կոստանդնուպոլսի դարպասներին: Տերությունները միջամտում են և փորձում հավասարակշռություն հաստատել: Հունաստանն անկախ է հռչակվում: Սերբիան, Մոլդովան և Վալաքիան մասնակի ինքնավարություն են ձեռք բերում, իսկ Ռուսաստանը՝ անցում նեղուցներով:

Ներքին պլանում Աբդուլ Մեջիդ սուլթանը կայսերական նոր հրովարտակ է ներկայացնում, որով վերականգնվում էր փոքրամասնությունների ավանդական անձեռնմխելիությունը և դավանանքի ազատությունը: Նրանց հնարավորություն է ընձեռվում կառավարել իրենց ունեցվածքը: Երաշխավորվում է նրանց մուտքը հասարակական գրասենյակներ և հարկերի ու օրենքի առջև հավասարություն: Թվում է, թե Փարիզի պայմանագիրը (1856 թ., մարտի 30,) ընդունում է մի շարք միջազգային համաձայնագրեր և հրաժարվում եվրոպական տերությունների կողմից որդեգրված ծավալապաշտական քաղաքականությունից:

Սակայն միջամտությունները Օսմանյան կայսրության ներքին քաղաքական կյանքում շարունակական և ծանր բնույթ են կրում: Միապետին խնդրանք է ներկայացվում բարեփոխումներ գործի դնել: Ռումինիան, Սերբիան և Մոնտենեգրոն անջատվում են կայսրությունից, իսկ Բոսնիա-Հերցոգովինայում ժողովուրդն ապստամբում է (1875): Միապետը խոստանում է բարեփոխումները: Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի և Ռուսաստա-

նի կայսրերը նրանից պահանջում են դրանց իրագործումը, հակառակ դեպքում՝ սպառնում են ներխուժել: 1861 թ. սուլթանը գահընկեց է արվում և նրան փոխարինելու է գալիս սկզբում Մուրադ իշխանը, ապա նրա եղբայր Աբդուլ Համիդը (1876 թ., սեպտեմբերի 1,), ով 30 տարուց ավելի գահին է մնում և որի անունը կապվում է հայերի առաջին կոտորածների հետ:

Նախատեսված բարեփոխումները նոր խմորումներ են առաջացնում թուրքական կայսրության արդեն հնամաշ կառուցվածքում: Տարբեր գիտնականներ խոսում են կայսրության ներսում բևեռացման, ինչպես նաև ազգային և կրոնական բնույթի միտումների մասին, որոնք երևի թե արմատացել էին ցածր խավերի և մասնավորապես գյուղացիների շահագործման ավելացման պատճառով, մինչդեռ տարածքների ընդարձակությունը թույլ չէր տալիս իրական տեղային վերահսկողություն հաստատել քայքայված կառույցների նկատմամբ:

Թվում է, թե հենց այս համատեքստում է, որ հայ մտավորականությունը մտածում է, որ կարող է կենտրոնական և կարևոր դեր գրավել: Այսպիսով՝ կայսրության ներսում մի քանի անկախ կղզիներ են պահպանվում և սփյուռքն այլ վայրերում մշակութային զարթոնք է կազմակերպում: Վերածննդի համար թվում է, թե արդեն հող է նախապատրաստվել:

Հայկական վերածնունդ

Ըստ պատմական աղբյուրների՝ 18-րդ դարում հայկական վերածնունդ է տեղի ունեցել, վերածնունդ, որ մեծ մասամբ վերագրվում է ծագումով Սվազից կաթոլիկ Մխիթար վանահորը, ով հետագայում հայտնի է դառնում որպես Սեբաստացի: Հենց նրա շնորհիվ է հիմնադրվում մխիթարյան միաբանությունն իր երկու կենտրոններով՝ Վենետիկի Սուրբ Ղազար կղզում (հիմնադրվել է 1717 թ.), որը մինչ օրս ձգում է Իտալիայում ապրող շատ

հայերի, և ապա նաև մյուս կենտրոնը՝ Վիեննայում: Այստեղից է սկսվում հայկական վերածնունդը, որն առավել զգալի էր դպրոցի, գրի և մամուլի բնագավառներում[13]: Այս շրջանի ամենանշանավոր անուններից է «Հայկ դյուցազն» էպիկական պոեմի հեղինակ Արսեն Բագրատունին (1790-1866 թթ.), նա պոեմում վերհիշում է Հայաստանի փառավոր անցյալը և այս տանջահար երկրի տխրալից իրադարձությունները: Զարթոնք, որն ինչպես ասում էին կապված էր եկեղեցուն, որը կարողանում է պահպանել կապերը Հռոմի հետ, փորձում է ներկայացնել հայ ժողովրդին, ապաստան տալ մտավորականներին և ներկայանալ որպես ազգի խորհրդանշան:

Ութհարյուրականներին զարգացած գրական ուղղությունները երկուսն էին՝ արևմտյան և արևելյան: Նրանք երկուսն էլ ձգտում էին պահպանել հայ ժողովրդի կատարյալ միասնությունը՝ չնայած այն ջարդերին, որոնց ենթարկվում էր վերջինս, ինչպես նաև դեպի Ռուսաստան ու ավելի հեռավոր վայրեր հայերի գաղթին: Այդ ուղղությունները ձգտում էին տեղեկացնել հայ ժողովրդի գոյության մասին նույնիսկ արտերկրում: Ռուս-պարսկական (1804-1828 թթ.) և ռուս-թուրքական (1806-1921 թթ.) պատերազմների ընթացքում հայ աքսորյալները ռուսական զորքերում էին, և կռվում էին ցարի հետ, դիմադրում էին Շուշիում և միանշանակ նպաստեցին ռուսների հաղթանակին հայ փառահեղ գեներալ Մադայանի օգնությամբ:

1828 թ. հետո պարսկահայերին հնարավորություն է տրվում ներգաղթել Ցարական կայսրություն: Մոտ 45,000 հայ պարսկական Ադրբեջանից անցնում է դեպի Անդրկովկասում գտնվող նոր ռուսական մարզեր: Իհարկե, նրանք այնտեղ էլ ինքնավարություն չեն ունենում: Նիկոլայ 1-ին ցարը միացնում է այս հողերը կայսրությանը ու իր նախկին տիտղոսների թվին ավելացնում

[13] Այս կերպ կամուրջ է կապվում կաթոլիկ եկեղեցու (Հռոմ) և հայ եկեղեցու միջև:

Հայաստանի արքայի տիտղոսը: Եվ սա դեռ ամենը չէ: Պատասխանատու կառավարիչ գեներալ Պասկևիչը ճնշումն ավելի է սրում, ու այս մարզի կառավարումը տրվում է մահմեդականներին: Ներսես Արքեպիսկոպոսը, ով ռուսներին համառորեն հիշեցնում էր չիրագործված համաձայնությունների մասին, հրաժարական է տալիս և աքսորվում:

Իսկ պարսիկների հետ հաշտության պայմանագիր կնքելուց հետո սկսվում է Օսմանյան կայսրության դեմ պատերազմը: Հայերը նորից ռուսական զորքերի թվում էին: Այս շրջանում իրենց հողը թողած և ռուսական կայսրություն ու արևելյան Հայաստան անցած հայերի թիվը մոտ 100,000 է: 1829 թ. Ադրիանուպոլսի պայմանագիրը վերջ է դնում պատերազմին, բայց ոչ հայերի արտագաղթին: Չնայած Ռուսաստանի սահմանած ճնշող ռեժիմին՝ արտագաղթը դեպի Անդրկովկաս պարբերական բնույթ էր կրում:

Այս բարդ իրադարձությունների ընթացքում, ինչպես նաև հաջորդ տարիներին եկեղեցին դառնում է հայ հավատքի և մշակույթի պահապան: Արևմտյան Հայաստանում, որտեղ չկային մեծ քաղաքներ և փոխարենը ընդարձակ ամայի տարածքներ էին ու բնակչության մեծ մասն էլ զբաղվում էր հողագործությամբ, այնուամենայնիվ վանքերում ծաղկում էին մշակույթն ու կրոնը:

1820 թ. շրջադարձային է լինում: Կոստանդնուպոլսի հայ կաթողիկոսությունը բարեգործական հրավերք է կազմակերպում, որն իրենից միասնության առաջարկ էր ներկայացնում: Դրան հետևում են հայերի խմորումները և սուլթանի կողմից հալածանքների հրամանագիրը:

Այդ ընթացքում Օսմանյան կայսրությունում խորքային փոփոխություններ են տեղի ունենում: Մասսիմո Կամպանինին իր «1798-2005 թթ. Միջին արևելքի պատմություն»[14] երկում նշում է,

[14] **Մ. Կամպանինի**, «1798-2005 թթ. Միջին արևելքի պատմություն», Բոլոնիա, Մուլինո, 2006:

որ սկզբում Սելիմ 3-րդ սուլթանը, ապա իրեն հաջորդող Մահ-մուդ 2-րդը փորձել են Օսմանյան կայսրության ձևափոխման հասնել, որ զորքի ամբողջական վերահսկողությունը իրենց պատկանի: Դա արվում էր մասնավորապես ենիչերիների մարմնի լուծարմամբ (1826 թ.) և հակառակորդների բնաջնջմամբ՝ Ստամբուլի զորանոցները[15] ռմբակոծելու միջոցով: Սա հանձն առավ իշխող խավը կամ ավելի ճիշտ փորձառու վերնախավը, որ պատրաստ էր կատարել օրենսդրական որոշումները՝ տնտե-սական և կառավարչական կառույցներն արդիականացնելու և ակտիվացնելու նպատակով: Այսպիսով, բանը հասնում է 1876 թ. սահմանադրությանը: Արդիականացումը նախատեսում էր տե-ղային կառավարման կատարելագործում՝ ներառյալ հին վիլա-յեթների վերամոդելավորումը:

1828 թ. 20.000 հայ կաթոլիկներ նույնպես սկսում են հալած-վել և աքսորվել դեպի Փոքր Ասիա: Շատ տարեցներ մահվան են դատապարտվում, նրանց գույքն առգրավվում է: Կնքվում է Ադրիանուպոլսի պայմանագիրը, որը կաթոլիկ հայերին տալիս է «կաթոլիկ միլլետ» կազմելու իրավունք, որին կարող էին միանալ Կոստանդնուպոլսի մարոնիտները[16], հայերը, քաղդեականնե-

---

[15] Սա չի խոչընդոտում, որպեսզի հույները համարյա 10 տարի տևած ազատագրական պայքարից հետո հաղթանակ տանեն օսմանների դեմ և ան-կախություն նվաճեն (1830): Հունաստանի անջատումը արտահայտվում է Թուրքիայի կողմից բարեփոխումներ անելու և «վերակազմավորման» (թանզի-մաթ) մեծ հնարավորությամբ, որը կատարելու միտք նա չուներ:

[16] Խոսքը գնում է սիրիական ծագում ունեցող քրիստոնյաների մասին, որոնց անվանումը ծագում է իրենց կողմից երկրպագված մի սուրբ վանականի՝ Մարոնեի անունից: Արաբական արշավանքների պատճառով ստիպված լինելով լքել Սիրիան՝(626-750 թթ.) փախչում են դեպի Լիբանանյան լեռներ: Սիրիան և Լիբանանը անցնում են սկզբում մամլուքների (1291-1516 թթ.), ապա օսմանյան տիրապետության տակ, բայց մինչև 1860 թ. մարոնիտներն ապրում են հարաբերական խաղաղության պայմաններում: Իսկ 1860 թ. զոհվում է մոտավորապես 20,000 մարդ, ինչի պատճառը դրուզների հալածանքներն էին, որոնց դրդում էին մարոնիտների աստիճանաբար աճող ինքնուրույնությունից վախեցած թուրքերը: Այստեղ միջամտում են եվրոպական տերությունները և

ը[17], մելկիտները[18] և սիրիացիները: Դրան հաջորդում է 1828 թ. աքսորվածների վերադարձի մասին հրամանագիրը:

Կրոնական և քաղաքական հակադրություններ

Ներքին խմբակցություններն ու տարաձայնությունները դեռ չէին հաղթահարվել: Օսմանյան կառավարությունը չէր ճանաչում Կոստանդնուպոլսի առաջնորդին, ով ընտրվում էր կաթոլիկ իշխանների և հաստատվում Հռոմի պապի կողմից: Երբ այս իրավիճակը շտկվում է մեկ այլ հայ կաթողիկոսի՝ Հակոբաս Կուկուրյանի ձեռնադրմամբ, ապա նաև արքեպիսկոպոս Հասունի հետ կապված իրադարձությամբ, ով արդեն նշանակվել էր Հռոմի պապի կողմից (1850) և այժմ ընտրվում է Սիցիլիայի պատրիարքը և հայ հասարակությունը բաժանվում է երկու մասի, որոնցից մեկը հարում էր հռոմեական կաթոլիկ եկեղեցուն, իսկ մյուսը՝ մխիթարյաններին: Վերջինները իրենց համարում էին հասարակության իրական պաշտպաններ և մոտ էին հայ առաքելականներին: Այս ամենին հաջորդում է Սուրբ Աթոռի և մխիթարյանների միջև կրոնական հակադրությունը, և ձախողվում է այդ հարցով կնքված Հռոմի և Կոստանդնուպոլսի պայմանագիրը:

նոր կանոնադրություն է շնորհվում մարոնիտներին, որը գործում է մինչև Առաջին համաշխարհային պատերազմ: 1920 թ. օգոստոսի 31-ին ծնվում է Մեծ Լիբանանը (1926 թ. մայիսին դառնում է Լիբանանի հանրապետություն): Այսինքն՝ 1944 թ. ֆրանսիո-անգլիական մանդատի դադարեցվելուն պես Լիբանանը անկախություն է նվաճում:

[17] Աստվածաշնչյան ծագում ունեցող այս բառը սկիզբ է առել հարավային Միջագետքից, որը հայտնի էր որպես Բաբելոնիա: Քաղդեականները սեմիտական մի ժողովուրդ են եղել, որ հավանաբար ծագել են Արևելյան Արաբիայից (Ք.ա. 2-րդ դար): Նրանք համարվում են նեստորականների հետևորդները: Հռոմի հետ ունեցած հարաբերությունները պատմականորեն բարդ են և խճճված:

[18] Մելկիտ են կոչվում Անտիոքի և Մերձավոր Արևելքի շրջանի հավատացյալ հույն կաթոլիկները: Կաթոլիկ մելկիտները կախվածության մեջ էին Անտիոքի կաթողիկոսությունից:

Ի օգուտ հույն վանականների միջամտելուց բացի 1853 թ. Նիկոլայ 1-ին ցարը ռուսական պրոտեկտորատ է պահանջում Բալկաններում գտնվող քրիստոնյաների համար: Բանը հասնում է Ղրիմի պատերազմին, որտեղ Ֆրանսիան, Սարդենիան, Մեծ Բրիտանիան (ինչպես միշտ այդ հողերում Ռուսաստանի հնարավոր գերիշխանության դեմ թշնամաբար տրամադրված) կռվում էին Թուրքիայի կողմից, որի անկումն ու մասնատումը բաց կթողնենք:

Այնուամենայնիվ քրիստոնեությունը պաշտպանելու կարիք կզգացվի: Բայց կառավարման անորոշության մեջ Ռուսաստանը այս պաշտպանությունը ներկայացնում էր որպես իր արտոնություն, մինչդեռ Թուրքիան կարծում էր, որ ինքը պետք է զբաղվի դրանով: Այսպիսով, վտանգավոր մի իրադրություն էր ստեղծվել, որից հաջողվեց ազատվել Ղրիմի պատերազմից հետո առաջին հերթին թուրքական շարժման շնորհիվ՝ ըստ որի արգելվում էր խտրականությունը ոչ մահմեդականների նկատմամբ և հետո համագումարի (փետրվար-մարտ 1856), հետևաբար նաև Փարիզի պայմանագրի շնորհիվ, այն նույն պայմանագրի, որ ամրացրեց Կավուրի կոմս Կամիլլո Բենսոյի քաղաքականությունը Պիեմոնտեում, ով ցանկացել էր այնպես անել, որ փոքրիկ սարդինյան պետությունը մասնակցի Ղրիմի պատերազմին:

Ռուսաստանն էլ իր հերթին է հայտարարում Օսմանյան կայսրությունում ապրող քրիստոնեության պաշտպանության պահանջի մասին:

Թուրք մահմեդական շատ համայնքներում այս համաձայնությունը հավանության չի արժանանում: Բողոք է սկսվում հայրերի ժառանգություն հանդիսացող այն Սուրբ օրենքի կորստի համար, ըստ որի մահմեդականությունը գերիշխանություն ունի Օսմանյան կայսրությունում: Ոչ էլ մշակութային և կրոնական հակամարտություններն են դադարեցվում 1856 թ. գրված այսպես կոչված «Բարեփոխումների փաստաթղթով»: Հայերն ակնհայտորեն հայտնվում են դժվար իրադրությունում: Մի

կողմից նրանք Օսմանյան կայսրության մաս են կազմում և ուզում են այնտեղ մնալ, բայց մյուս կողմից փորձում են պահպանել իրենց կրոնական և մշակութային ինքնուրույնությունը:

Բողոքական միլլեթ

Ըստ պատմական հավաստի աղբյուրների՝ այս իրադրության մեջ կարևոր էր նաև մեկ այլ գործոն՝ հայ ավետարանականների շարժումը, որին սկիզբ էին դրել ռուսական և անգլիական Աստվածաշնչյան ընկերությունները: Ամերիկացի միսիոներները դպրոցներ են բացում և Կոստանդնուպոլսի իշխանությունը վատ արձագանք է տալիս ու հայ բողոքականները իրենց հերթին անհանդուրժողականության են ենթարկվում: 1846 թ. Կոստանդնուպոլսում բացվել էր առաջին հայկական ավետարանական եկեղեցին և Կոստանդնուպոլսի կառավարությունը, Անգլիայի ճնշման տակ, 1850 թ. բողոքականներին իրավունք էր տվել ինքնուրույն համայնք կառուցել՝ բողոքական միլլեթ: Այս փաստը մի կողմից թուլացնում է առաքելական եկեղեցին, իսկ մյուս կողմից նպաստում է արևմտյան արժեքների տարածմանը և վերջ է դնում հայերի մեկուսացած վիճակին, որը առաջացել էր այն պատճառով, որ դեռ Քաղկեդոնի համաժողովի ժամանակներից նրանք աղանդավոր էին համարվել:

Այս ամենին հետևում է դժվարությունների և մրցակցության մի շրջան, որի գագաթնակետը եղան Կումկապու պատրիարքի հրաժարականը և Հակոբ Սերոպյանի ընտրվելը: Խոսքը գնում է ժողովրդի ցանկության առաջին դրսևորման մասին, որը զարմացրեց բոլորին, այդ թվում նաև իշխանությանը:

1848 թ. տարբեր եվրոպական երկրներում ժողովրդական հեղափոխության ժամանակաշրջան էր՝ տարբեր քաղաքական փոփոխությունների և նոր սահմանադրությունների ծննդի նախերգանք: Տիրում էր հայ արտագաղթածների և այլ պատճառներով երկրից հեռացածների կողմից ներշնչված մի մթնոլորտ: Հայրե-

նիքի, ժողովրդի, ժողովրդավարության գաղափարների շուրջ խմորումներ են առաջանում: Դրանք նոր հասկացություններ են, որոնք տարածվում են գրավոր և բանավոր խոսքի միջոցով: Հայրենիքում ծաղկում է գրականությունը, ծնվում և տարածվում է հայ մամուլը: Հետաքրքիր նորություններ են հասնում տարբեր եվրոպական տերություններից:

1855 թ. մշակվում և ներկայացվում է սահմանադրական մի ծրագիր, որը անմիջապես մերժվում է: Ավելին, որոշվում է, որ յուրաքանչյուր միլլեթ պետք է ընկնի կոնկրետ ժողովի ենթակայության ներքո, որը համայնքի և պատրիարքի միջև կապող օղակի դեր կունենա: Այդ ժողովին կներկայացվեն բարեփոխումների հնարավոր տարբերակները: Եվ նորից սկսվում է բախումների անհանգիստ մի շրջան, մինչև որ 1860 թ. մայիսին փոխզիջման հնարավորության մի նյութ է մշակվում: Այնուամենայնիվ, այս նյութն էլ բերում է գաղափարական բաժանում և խոր ճեղքվածք է առաջացնում, այսպես կոչված, լուսավորչականների և նորամուծությունների դեմ տրամադրված, տոհմական արժեքները պահպանողների միջև: Այստեղից էլ նորից ծագում են բախումներ և բռնություններ, որոնք ավարտվում են 1863 թ. մարտին հայ ժողովրդի կանոնակարգով՝ վավերացված կառավարության կողմից, որը հայերի համար մի իրական հայկական ազգային սահմանադրության[19] դեր է ունենում:

Այս լուծումը, կարծես, միջամտության իրավունք, կրոնական և մշակութային ինքնուրույնություն է տալիս հայերին: Նյութը նախատեսում է կրթական ոլորտը զարգացնելու, խորհրդարանական մեթոդներ կիրառելու հնարավորություն: Այս գործընթա-

[19] Օսմանյան կայսրության ներսում մի ներքին գործընթաց է սկսվում, որը հասցնում է 1876 թ. սահմանադրություն (1876), առևտրային (1850) և քրեական օրենսգիրք (1858) ընդունելուն: Ըստ Կամպանինիի՝ 1870-1876 թթ. Մեջելի հրապարակումը կրոնական (շարի) և եվրոպական մտածելակերպին ավելի մոտ գտնվող աշխարհական օրենքների միջև փոխըմբռնման փորձ է արմատավորում:

ցը էլ ավելի է ամրապնդվում 1869 թ. Կոստանդնուպոլսի կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի նշանակմամբ, ով հայտնի է որպես Խրիմյան Հայրիկ կամ որպես Վասպուրականի արծիվ (Հայաստանի պատմությունը ներկայացնող պարբերականներից մեկի անունով): Այս հոգևոր կոչումով նա շռայլություններ է թույլ տալիս հայերի և նրանց մարզերի համար՝ երկար ժամանակ դիմադրելով ամիրաների և նույնիսկ հոգևորականության մի մասին մինչև 1873 թ., երբ ստիպված է լինում հրաժարական տալ մի կողմից օսմանյան կառավարության և մյուս կողմից նշանավոր հայերի համատեղ ճնշման պատճառով:

Բայց խնդիրները չեն դադարում: 1876 թ. սահմանադրությունը, որ շատ չէր տարբերվում Բելգիայի սահմանադրությունից, ենթադրում է, որ Օսմանյան կայսրությանը պատկանելու ճանաչումը բխի «քաղաքացիության ժամանակակից իրավունքներից»[20] և ոչ թե հին կրոնական պատկանելությունից կամ զաղութացման ազգային գործընթացներին կապվող հասկացություններից: Սա էլ պատճառ է հանդիսանում կրոնական համայնքների համակարգի առաջացման, որոնք մինչ այդ որոշ չափով ճանաչում ունեին, պաշտամունք լինելու և կրոնական փորձ ունենալու աստիճան ինքնուրույնություն՝ ինչպես անձնական, այնպես էլ ընտանիքին վերաբերող իրավունքներում: Նրանց մեջ էին մտնում նաև հայերը:

Երիտասարդ օսմաններ

Այս ընթացքում սկիզբ է առնում երիտասարդ օսմանների շարժումը, որոնք միաժամանակ օսման էին և մահմեդական, կարևորում էին մահմեդական ծագումը: Նրանք են զցում հետագա թուրքական հանրապետության հիմքերը, որը երկար արդիականացման գործընթացի վերջնական արդյունքն է:

---

[20] **Մ. Կամպանինի**, մեջբերված ստեղծագործություն, էջ 27:

Թուրքիան այլևս չէր կարողանում դիմակայել օտար ուժերից վերցրած պարտքերին: Դրան գումարվում էին սուլթանի ծախսերը, ով արդեն ուժասպառ եղած ժողովրդին էր նոր հարկեր ներկայացնում: Այստեղից է ծագում Բոսնիա Հերցոգովինայի գյուղացիների ապստամբությունը տարածքի հարուստ մահմեդականների և թուրք պաշտոնյաների դեմ: Ապստամբությունը բռնկվում է Մոնտենեգրոյում, Սերբիայում, Բուլղարիայում և ընդգրկում սլավոնական ժողովուրդներին: Սա տեղի է ունենում ռուս գործակալների օգնությամբ, ովքեր բորբոքում էին ազգայնականության կրակը և հրահրում էին թուրքերի հանդեպ ատելություն: Եվ հատկապես Սերբիան, որ մի ժամանակ իշխում էր Մոնտենեգրոյի, Բոսնիայի, Հերցոգովինայի տարածքներում, և երբեք չէր հրաժարվել իր պատմական դերը վերականգնելու մտքից՝ Մեծ Սերբիայի առասպելը, որ բացատրություն է տալիս այս շեշտադրումներին[21]:

1875 թ. ապստամբում են Բոսնիան և Հերցոգովինան: Նրանք կրոնական ազատություն են պահանջում, պատրաստակամություն են հայտնում տեղափոխվել իրենց հողեր, որտեղ կարող են ազատ պահպանել իրենց քրիստոնեական հավատը: Եվ չնայած նախկինում կնքված բոլոր համաձայնագրերին՝ ոչ մահմեդական

[21] Խոսքը վերաբերվում է Բալկաններում գտնվող տարածքին, որը 1830 թ. Օսմանյան կայսրության ինքնուրույն մաս էր կազմում: 1878 թ. Բեռլինի Կոնգրեսից հետո անկախություն է նվաճում և 1883 թ. դառնում թագավորություն: Պետրոս 1-ին Կարագեորգովիչի օրոք հաստատվում է խորհրդարանական կառավարություն: Սերբիան հակառակվում է Բոսնիա-Հերցոգովինայի հանդեպ ունեցած Ավստրո-Հունգարիայի հավակնություններին (1908), որոնցից ծագում են բալկանյան պատերազմները (1912-13) և Սերբիան հաղթանակ է տանում՝ դրանցից դուրս գալով ավելի ընդարձակ տարածքներով և էլ ավելի հզորացած: Դրան հետևում է Առաջին համաշխարհային պատերազմը: Բալկանների պատմությանը ավելի խորությամբ անդրադառնալու համար (խնդիր, որ ըստ ֆրանսիացի մշակութային աշխարհագրագետ Անդրե Բլանկի ավելին է, քան մեկ շրջանի խնդիր) կարող եք օգտվել Է. Հոշի «Բալկանների պատմությունը», ստեղծագործությունից, Բոլոնիա, Մուլինո, 2006 (2004):

ազգային փոքրամասնությունների իրավունքները շարունակվում էին անտեսվել:

Չնայած եվրոպական տերությունների կողմից համաձայնության գալու փորձերին (որը, ինչպես միշտ չի վերաբերում Անգլիային) Մոնտենեգրոն և Սերբիան պատերազմ են սկսում (1876 թ., ամառ): Սերբիական զորքի թվում էին շատ ռուս զինվորներ և զորքը ղեկավարում էր ռուս գեներալ: Եվրոպական տերությունները կրկին փորձում են փոխզիջման գնալ: Ֆրանսիան և Անգլիան հրաժարվում են զինադադար կնքելուց: Անմիջապես հետո Ռուսաստանը ուլտիմատում է ներկայացնում (հոկտեմբերի 30, 1876): Ռուսաստանն իրականում արդեն երկար ժամանակ էր, ինչ ձգտում էր բոլոր նեղուցների իշխանության՝ և իրեն ներգրավված է զգում հատկապես Օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնվող Բալկանյան թերակղզու սլավոնական ժողովուրդների անկախացման իրադարձություններում: Պանսլավիստական գործոնը այս իրադարձություններում անկասկած մեծ դեր է խաղում:

Այսպես հասնում են Կոստանդնուպոլսի համաժողովին, որն ընդ որում չի ծառայում իր նպատակին: Ապա գալիս է Լոնդոնի արձանագրությունը (մարտի 31, 1877), որը վերջ է դնում եվրոպական տերությունների՝ լուծման տարբերակներ գտնելու փորձերին, որոնք նրանք անում էին Օսմանյան կայսրությունում ճնշման ենթարկված փոքրամասնություններին պաշտպանելու նպատակով: Արձանագրությունը նախատեսում էր, որ այն ստորագրած 6 տերությունները հետևեն Թուրքիայի խոստումները կատարելուն: Նախատեսում է նաև միահամուռ կերպով կատարված գործողություն, որ դրանք անտեսված չմնան: Սակայն Թուրքիան մերժում է Լոնդոնի արձանագրությունը՝ այն նվաստացնող համարելով Սուլթանի արժանապատվության և անկախության համար:

Ավելի ուշ՝ 1877 թ. ապրիլի 24-ին ցարը հրամայում է զորքին անցնել սահմանը: Զինված հակամարտությունը Թուրքիայի և

Ռուսաստանի միջև կշարունակվի 1877-1878 թթ. մինչև Թուրքիայի աղետալի պարտությունը և Սան Ստեֆանոյի պայմանագիրը (մարտի 3,1878), որը ճանաչում է Սերբիայի, Ռումինիայի, Մոնտենեգրոյի անկախությունը: Իսկ Բուլղարիային մասնատում էր սպասվում: Այսպիսով՝ ընդհանուր առմամբ Ռուսաստանը շարժվում է դեպի Բոսֆոր: Այստեղից է ծագում արևմտյան տերությունների անհանգստությունը և Բեռլինի պայմանագրի (հուլիսի 13, 1878) նյութի վերանայումը: Ռումինիան, Սերբիան և Մոնտենեգրոն վերահաստատում են իրենց անկախությունը: Արևմտյան տերությունները, սակայն, հարկադրում են Բուլղարիայի անջատումը, Ռուսաստանի նահանջը, մինչդեռ Բոսնիա Հերցոգովինան անցնում է ավստրո-հունգարական պաշտպանության տակ:

Ասիական շրջանների հայերը

Հայերին արդեն շնորհված կանոնակարգի ու սահմանադրության արդյունքն այն է լինում, որ, ըստ Թերնոնի, Կոստանդնուպոլսի հայերը (400.000) դառնում են գերներկայացված, մինչդեռ ասիական տարածքներում ապրողները (2.000.000) մնում են էականորեն մեկուսացված: Շրջանները իսկապես նոր տեղային կառավարման մարմինների կարիք ունեին, որոնք հաճախ ագահ էին և կոռումպացված: Քրեական օրենսգրքի խախտումները հաճախակի բնույթ էին կրում:

1864 թ. սկսած Հայաստանը բաժանվել էր 6 վիլայեթի, որոնցից յուրաքանչյուրը ղեկավարվում էր Վալիի՝ գլխավոր կառավարչի կողմից: Յուրաքանչյուր վիլայեթ իր հերթին բաժանվում էր տարածքային միավորների, որոնք պատասխանատու էին տարբեր մարմինների առջև: Ընդհանուր առմամբ տարածքը ընկալվում էր խիստ բյուրոկրատական կենտրոնացման համաձայն, որին համապատասխանում էր հարկային մի ծանր համակարգ: Եվ սա դեռ ամենը չէ, քանի որ Եվրոպայի իրադարձու-

թյունների հետևանք են հանդիսանում Ռուսաստանից բազմաթիվ չերքեզների[22] և աբխազների ժամանելը, ինչպես նաև քրդերի հաստատվելը հայկական հողերում: Դրան հետևում են բռնություններ և անապահովություն մինչև 1871 թ., երբ հետաքննչական հանձնաժողով է կազմվում առանձին բողոքներ հավաքելու և իրավիճակի հավաստի պատկերը ստանալու նպատակով: Դա կատարվում է երկու ճանապարհով՝ ժամանակի ընթացքում ստացված բողոքների վերծանմամբ և տարբեր եպիսկոպոսների ուղղված հարցադրումների միջոցով այն անարդարությունների մասին, որոնց զոհն է դարձել ժողովուրդը: Դրանք վերականգնելու համար այլ առաջարկների կարիք է զգացվում: Այստեղից սկիզբ է առնում համընդհանուր մի զեկույց, որ լույս է սփռում կառավարական վարչակազմի կողմից մասնավորապես կանանց և երեխաների նկատմամբ իրականացված չարաշահումների, որոնց ստիպում էին կրոնափոխ լինել, ինչպես նաև վաղեմի սպանությունների, թալանի, առևանգումների և կրոնական խոչընդոտների վրա:

Սա և սրան հաջորդող զեկույցը արդյունք չեն տալիս: Բարձրագույն դուռը կարծես չի էլ լսում այս բողոքները և արդարության պահանջը: Եվ ոմանք որոշում են դիմել մեծ տերություններին, ինչպես արդեն արվել էր ոչ այնքան հեռու անցյալում, երբ Զեյթուն քաղաքին, որը հայտնի էր իր անկախության և անցյալի պայքարների համար, սպառնալիք էր ներկայացվել 100,000 տղամարդկանց զորահավաքի մասին և որից փրկվել էր միայն Ֆրանսիայի միջնորդության շնորհիվ:

[22] Նաև Ադիգ անունը կրող չերքեզները բնիկ կովկասյան ժողովուրդ էին: Ռուսաստանի կողմից գրավվելուց և 1864 թ. կոտորածից հետո նրանցից շատերը գաղթում են դեպի Օսմանյան կայսրություն: Շատ չերքեզներ այսօր բնակվում են Ադիգեայում:

2. *«Հայկական հարցը» և ութհարյուրականների կոտորածները*[23]

Ռուս-թուրքական պատերազմի վերջին շրջանում (1877-1878 թթ.) հայերը դիմում են եվրոպական տերություններին բարեփոխումների տեսքով օգնություն խնդրելով, որն անարդյունք խնդրել էին արդեն թուրք սուլթանից: Իսկ ռուսներն այս ընթացքում մեկ անգամ արդեն կորցրած Բայազետը և Ալաշկերտը վերագրավելով՝ ստիպված էին ընդունել Ադրիանուպոլսի զինադադարը (հունվարի 31, 1878)[24], ինչպես նաև ստորագրել Սան Ստեֆանոյի պայմանագիրը, որպեսզի Անգլիան, որ այնքան էլ չէր վստահում Ռուսաստանի մարդասիրական մտադրություններին, չներգրավվի պատերազմի մեջ:

Այս պահից ի վեր Բարձրագույն դռան և Եվրոպական տերությունների միջև բախումների մի նոր փուլ է սկսվում: Ճիշտ է, որ 1875 թ. դեկտեմբերին երիտասարդ սուլթան Աբդուլ Համիդը մի սահմանադրություն էր հրապարակել, ըստ որի հավասար իրավունքներ և ազատություն էր տարածվում կայսրության բոլոր ենթակաների վրա և այդպիսով նոր հույսեր արթնացնում: Բայց բարեփոխման հեղինակներից մեկի՝ Միդհատ փաշայի հեռացումը պաշտոնից, ում շնորհիվ գրվել էր այդ սահմանադրությունը, ցույց է տալիս, որ իրավիճակը դեռ բարդ է և ոչ այնքան խոստումնալից: Դրան անմիջապես հետևում է հիմնական երաշխիքների կասեցումը:

Այսպիսով՝ եվրոպական տերությունները մի կողմից իրենց գոնե պաշտոնապես ներկայացնում էին որպես փոքրամասնությունների՝ մասնավորապես քրիստոնյաների իրավունքների պաշտպան՝ հիմնվելով մարդասիրական իրավունքների նոր

---

[23] «Հայկական հարցը» անշուշտ դիվանագիտական ծագում ունեցող նրբասույթ է:

[24] Հիշարժան է 16-րդ հոդվածը, որը նախատեսում էր ռուսական զորքի ներգրավվածությունը ազգային փոքրամասնություն կազմող հայերին ուղղված բարեփոխումների իրականացման գործում: Դրան հաջորդող Բեռլինի պայմանագիրը բարեփոխումները ներկայացնում է խնդրագրի ձևով:

սկիզբ առնող գաղափարի վրա, բայց մյուս կողմից Թուրքիան ստորացուցիչ և բացարձակապես անընդունելի էր համարում Եվրոպայի միջամտությունը Օսմանյան կայսրության ներքին հարցերին: Միապետ Աբդուլ Համիդը իր բռնապետական կարգով թագավորում է դեռևս երեսուն տարի՝ իշխանության հիմքում ունենալով մահմեդականությունը, և կրոնական տեղեկագրի միջոցով ձեռք է բերում խալիֆի տիտղոս ու գործում պանիսլամիզմի քաղաքականությամբ: Սա նշանակում էր արաբերենի պաշտպանություն, արաբների ավելի մեծ մասնակցություն կայսրության հարցերին: Բայց կյանքի բարդացում էր նշանակում Օսմանյան կայսրության ներսում գտնվող տարբեր փոքրամասնությունների, և հատկապես քրիստոնյա հայերի համար:

Սա հնարավոր աղետներով հարուստ մի իրավիճակ էր նաև այն պատճառով, որ Եվրոպան միտում ուներ բավարարվել միայն պաշտոնական պահանջներով, որի արդյունքում հայ փոքրամասնությունները չէին ստանում իրական և փաստացի պաշտպանություն: Մինչդեռ թուրքերը բացարձակ այլ նշանակություն էին տալիս եվրոպական տերությունների հանձն առած պարտավորությանը:

Բեռլինի Կոնգրեսը (հունիսի 13-ից հուլիսի 13, 1878) և հայերը

Բեռլինի պայմանագրով առաջին անգամ բարձրացվում է հայկական հարցը, քանի որ դրա 16-րդ հոդվածը հստակորեն պահանջում էր առանց ուշացնելու իրականացնել հայերի կողմից բնակեցված և ռուս զորքերի կողմից տարհանված շրջանների համար անհրաժեշտ բարելավումներն ու բարեփոխումները, որի շնորհիվ հայերը կպաշտպանվեն քրդերից և չերքեզներից[25]:

[25] Բայց ռուսական զորքը այս ժամանակահատվածում հեռանում է և նախատեսված միջոցառումները մնում են թուրքերի ձեռքին: Քրդերը քոչվոր

Այս շրջանում թեժանում է արդեն գոյություն ունեցող հակամարտությունը Օսմանյան պետության և ոչ մահմեդական փոքրամասնությունների միջև, որոնք պահանջում էին հարգանք ունենալ պայմանագրերի նկատմամբ և դադարեցնել չարաշահումները: Իսկ կատարյալ հումանիտար միջամտության գաղափարի ծննդից հետո հավանական վտանգավոր հետևանքներից խուսափելու համար նոր այլընտրանք է ներկայացվում, որը հատկապես իշխանության գալու և տիրելու խնդիրներով պայմանավորված միջամտությունների մի ազնիվ պատրվակ է նախատեսում եվրոպական տերությունների համար: Սրանք կարևորագույն հարցեր էին, որոնց անդրադարձել և ուսումնասիրել են այսօր սոցիոլոգիայի դասականներ համարվող գիտնականները: Օսմանյան կայսրությունը փորձում է համաձայնության գալ առանձին ուժերի հետ՝ խուսափելով մեկ միացյալ թշնամի ունենալուց: Եվ այդ ընթացքում վրեժ է լուծում որոշ փոքրամասնություններից և առաջին հերթին Հունաստանից, որ ռուսներին ընդունել էր որպես իր ազատարար:

ցեղ էին, հաստատվել էին Թուրքիայի և Սիրիայի, Իրաքի և Հայաստանի միջև ընկած լեռնային շրջաններում: Նրանք ոչխարաբուծությամբ էին զբաղվում: Առաջին համաշխարհային պատերազմից հետո, որի ընթացքում հաստատվում են սահմանները, նրանք ստիպված են լինում ավելի նստակյաց կյանք վարել: Խոսքն առավելապես վերաբերում է սուննի մահմեդականներին: Օսմանյան կայսրությունում գտնվող քրդերի մոտ նույնպես ազգայնական տարբեր շարժումներ են սկսվում, որոնք, սակայն, մերժում են ստանում, եթե չասենք դաժանորեն ճնշվում են 19-րդ դարի ընթացքում (նավթի հանքերը գտնվում էին Միացյալ Նահանգների և Իրաքի ուշադրության կենտրոնում): Հետագայում՝ 1894 թ. Թուրքիայում սկիզբ է առնում Քրդական աշխատավորական կուսակցությունը, որը անօրինական է ճանաչվում և խստորեն հետապնդման ենթարկվում: Մեր օրերում մեծ թվով փախստական քրդեր են ապրում Իտալիայում: Չերքեզները Կենտրոնական Կովկասի ժողովուրդ էին՝ զբաղված հատկապես ձիաբուծությամբ ու գյուղատնտեսությամբ, ինչպես նաև մանածագործությամբ: Նրանք կրոնափոխ են լինում 1700-ականների կեսերին: Երկարատև դիմադրությունից հետո անցնում են Ռուսաստանի իշխանության տակ (1864):

Բացի այդ եվրոպական ճակատն այդքան էլ միասնական և կուռ համակարգ չէր: Ինչպես արդեն նշեցինք Անգլիան վախենում էր Ռուսաստանի ծավալապաշտական քաղաքականությունից: Նրա շահերից էր բխում կայսրության սահմանների ամրապնդումը: Եվ ահա միակողմանի բանակցություններ է սկսում Օսմանյան կայսրության հետ, որի արդյունքում հասնում է մի համաձայնության (Բեռլինի պայմանագրից անմիջապես առաջ), որը նախատեսում էր Անգլիայի կողմից հակառուսական միջամտություն, երբ Ռուսաստանը պահանջեր Բաթումը, Արդահանը և Կարսը: Փոխարենը Օսմանյան կայսրությունը խոստանում էր փոքրամասնությունների պատշաճ ղեկավարում և պաշտպանություն: Եվ ոչ միայն: Անգլիացիների հնարավոր միջամտությունը հեշտացնելու համար Թուրքիան նրանց էր վաճառում Կիպրոս կղզին: Այս կերպ հակասում էր Փարիզի պայմանագրին, ըստ որի իշխանությունը պարտավորվում էր պահպանել Օսմանյան կայսրության ամբողջականությունը (փետրվարի 25, 1856) և որը տեղի էր ունեցել Բեռլինի Կոնգրեսից անմիջապես առաջ (Կիպրոսը վաճառելու մասին որոշումը ստորագրվել է 1878 թ. հունիսի 4-ին):

Բեռլինի Կոնգրեսի մասնակիցները պաշտոնապես եվրոպական վեց տերություններ էին և Թուրքիան: Այն ղեկավարում էր Բիսմարկի արքայազնը, որին, ինչպես հայտնի է, հաջողվում է հարկադրել քաղաքական իր հայացքները և բարձր հեղինակություն վայելել, քանի որ կարողանում է քաղաքական նախկին պատկերը ենթարկել տարբեր փոփոխությունների:

Ըստ Վահագն Ն. Դադրյանի եվրոպական տերությունների ջանքերը այնքան էլ դրական դեր չխաղացին հայերի համար: Դրանք առաջացրին կեղծ հույսեր այն դեպքում, երբ Օսմանյան կայսրությունում հանրային իրավունքի և ընդհանուր իրավունքի միջև կորստաբեր բաժանում էր տեղի ունեցել:

Մեծ տերությունների կողմից իրականացվող մարդասիրական միջամտության դեմ բողոքը թույլ տվեց միջազգային հարա-

բերություններում վարքագծի որոշ կանոններ ներառել, որոնք այնքան էլ մեծ ազդեցություն չունեցան Օսմանյան կայսրության տարածքում բնակվող ոչ մահմեդական փոքրամասնությունների համար: Տերությունների միջամտությունը նպատակ ուներ կանխել տարբեր շրջանների և անուղղակիորեն նաև ամբողջ Եվրոպայի խաղաղությանը սպառնացող ներքին ընդվզումները: Համենայնդեպս, մահմեդական ռազմատենչ ազգայնասիրությունը ձախողում է քաղաքական այն բոլոր միջոցառումները, որոնք նպատակ ունեին օսմանների սոցիալական համակարգում որոշ օրենսդրական բարեփոխումներ իրագործել: Պնդելով, որ գերիշխանությունը իրենց համար ինքնուրույն օրենք է, թուրք օսմանները հարկադրանքի միջոցով շեղում են տերություններին իրենց օրենսդրական քաղաքականությունից, որն արմատացած էր իրենց սովորույթներում և հասարակության ավանդույթներում[26]:

Թուրքիան, սովոր լինելով հարյուր տարուց ավելի պատմություն ունեցող քաղաքական իր ավանդույթներին, քրիստոնյա փոքրամասնությունների օգտին Եվրոպայի պահանջները անշուշտ ընդունում է որպես երկիրը անկառավարելի դարձնելուն ուղղված հանցանք: Շատ թուրք իշխանավորների մոտ ընդունված գաղափար կար, որ բարեփոխումները, այսինքն՝ օրենքի գերակայությունը, պետք է մնա թղթի վրա: Թուրքերի և հայերի միջև հակամարտությունը բնականաբար արմատավորվում է: Թուրքիայի ներքին իրադարձություններից Եվրոպայի հեռացմանը հաջորդող համատարած հուսահատության պայմաններում՝ 1878 թ. հետո հասունանում են որոշ հայ հեղափոխական ուժեր:

[26] **Վ. Ն. Դաղբյան**, Մեջբերված ստեղծագործություն, 2003, էջ 67:

Սասունի, Կոստանդնուպոլսի դեպքերը և այլ իրադարձություններ

Տարօրինակ է, բայց հենց խաղաղության շրջանում է հասունանում Սասունի կոտորածը: Մարզի լեռնաբնակ հայերը վաղուց արդեն ճնշված էին չափից ավելի հարկերի տակ, որոնք պետք է կրկնակի վճարեին կենտրոնական կառավարությանը և տեղի քուրդ իշխանությանը: Այսինքն՝ ապրում էին ծայրահեղ աղքատ պայմաններում: Բայց հաշվի առնելով հրապարակված բարեփոխումները՝ սպասում էին նորարարական լուծումների և իրադրության փոփոխության:

Իսկ թուրքերը ճիշտ էին համարում ավանդական օրենքները վերականգնելը: Եվ բախումը, այսպիսով, անխուսափելի է դառնում: Առաջին կայծը լինում է Սասունի բնակիչների կողմից ճնշման դեմ ապստամբելը: 1894 թ. օգոստոսի 18-ից մինչև սեպտեմբերի 10 հասունանում է հայերի ողբերգությունը, որոնց գյուղերը ամայացվում են և որոնք իրենց ապստամբության համար վճարում են մոտ 150 ընտանիքների ոչնչացմամբ: 6000 զոհ է լինում՝առանց սեռային կամ տարիքային տարբերակման[27]:

Ըստ տարբեր պատմաբանների, որոնցից մեկն էլ անգլիացի Լորդ Կինրոսն է, հայերի կողմից կրկնակի հարկեր վճարելուց հրաժարվելը պարզապես պատրվակ էր: Թշնամի համարվող փոքրամասնության դեմ ռազմական միջամտության հարմար առիթի թուրքերը վաղուց էին սպասում: Կոտորածը երեք շաբա-

---

[27] Արդյունքում այստեղ նույնպես, ինչպես մյուս դեպքերում, թվերի մասին տարակարծություններ կան: Դոնալդ Է. Միլլերը և Լորնա Թուրյան Միլլերը «Ցեղասպանություն վերապրածները. Ցեղասպանությունը՝ այն ժամանակ երեխա եղած ականատեսների պատմածով» (Միլան, Գուերինի և գործընկերներ, 2007, 1993) ստեղծագործության 55-րդ էջում խոսում են 900-16000 զոհերի և 26-40 ոչնչացված գյուղերի մասին: Գրիգորիս Բալաքյանի «Հայկական Գողգոթա» (Նյու Յորք, Random House, 2009, 1922՝ 1-ին հատոր, 1959՝ 2-րդ հատոր) գրքում խոսվում է Աբդուլ Համիդ 2-րդի կազմակերպած ջարդերի մասին, որոնց ընթացքում զոհվել են մոտ 200,000 հայեր և նշվում է այն մասին, որ այդ շրջանի մամուլը վերջինիս որակում է որպես «արյունոտ Սուլթան»:

թից ավելի տևեց: Սասունի անատոմիական միջազգային հետաքննության հանձնաժողովը[28], որ կազմված էր եվրոպացի երեք՝ ֆրանսիացի, անգլիացի և թուրք պատվիրակներից, իր հաշվետվության մեջ խոսում է սուլթանի և կենտրոնական իշխանությունների անառարկելի հանցակցության մասին: Ամեն ինչից զատ այս փաստը հաստատվում է Զեկի փաշայի շնորհիվ, ով կոտորածից հետո՝ ցուցաբերած հավատարմության և արժեքների համար պատվի է արժանանում[29]: Մինչդեռ հայերը ոչ մի բարեփոխման չեն արժանանում:

Դադրյանը նշում է, որ որոշ թուրք պատմաբաններ փորձել են այս կոտորածը վերագրել ապօրինի կերպով ներգաղթած քուրդ համիդիեներին[30]: Բայց պարզից էլ պարզ է, որ վերջիններս ինքնուրույն չեն գործել, այլ թուրք իշխանավորները նրանց օգտագործել են սկզբում հրահրելու, ապա հայերին ճնշելու նպատակով[31]՝ հետևելով փոքրամասնություններին միմյանց դեմ տրամադրելու հայտնի և փորձված ռազմավարությանը: Այս ռազմավարությունը ժողովրդի մեջ եղած բաժանումները ծառայեցնում է վերջիններիս ավելի լավ ղեկավարելու օգտին: Կառավարությունը քրդերին նույնիսկ զինել էր հրացաններով[32]:

---

[28] Սուլթանը հարկադրվում էր կազմել այդ հանձնաժողովը:

[29] Դա 1895 թ. նոյեմբերի 24-ին Ֆրանսիայի դեսպան Բերգերոնի կողմից ուղարկված զեկույցի արդյունքն էր:

[30] Քուրդիստանը ինքնավարություն է ձեռք բերել 1920 թ. Սևրի պայմանագրով, սակայն փաստացի կիրառում այդպես էլ չի ստացել: Մինչդեռ 1923 թ. Լոզանի պայմանագիրը այն բաժանում է Թուրքիայի, Իրանի և Իրաքի միջև: Մեծ թվով ապստամբություններ են տեղի ունենում երկու համաշխարհային պատերազմների ընթացքում: 1960-ականներին Քրդական ժողովրդավարական կուսակցությունը անկախական շարժում է առաջ քաշում, որը հետագայում ընդլայնվում է և ընդգրկում նաև Քրդական հայրենասիրական միությունը և Քրդական աշխատավորական կուսակցությունը, որն այդ շրջանում ղեկավարում էր Օջալանը: Թուրքիայի և Իրաքի կողմից խիստ ճնշում է գործադրվում, որի հետևանքներն են հետագա արտաքսումները ու ապաստանի փնտրտուքները:

[31] **Վ. Ն. Դադրյան**, Մեջբերված ստեղծագործություն, 2003, էջ 142-144:

[32] **Դ. Է. Միլլեր, Լ. Թուրյան Միլլեր,** Մեջբերված ստեղծագործություն, էջ 55:

Եվրոպական տերությունների հանձնաժողովի հետաքննությունն ամեն կերպ խոչընդոտվում էր: Թուրքական իշխանության կողմից երկար ժամանակ ժխտված իրողությունների բացահայտումից բացի, նրանք կարողացան բարեփոխումների հետագա մի ծրագիր մշակել (1895 թ. մայիս): Միապետը նորից առաջ է բերում գործընթացը դանդաղեցնող միջոցներ՝ անտեսելով Մեծ Բրիտանիայի, Ավստրիայի, ինչպես նաև Գերմանիայի նախազգուշացումները, որոնցից վերջինը մեծ հույս ուներ, որ Թուրքիան ուշադրություն կդարձնի Եվրոպայի պահանջներին:

Եվ ահա գալիս է 1895 թ. հոկտեմբերը, երբ «Հնչակյանների» կուսակցությունը Կոստանդնուպոլսում հանրահավաք է կազմակերպում: Հանրահավաքի նպատակն էր մահմեդական կառավարությանը խնդրագիր հանձնել, որտեղ կլուսաբանվեին շրջաններում ապրող հայերի աղետալի պայմանները և կենտրոնական իշխանությունների միջամտության բացակայությունը: Միաժամանակ ափսոսանք էին հայտնում Սասունի կոտորածների համար, ինչպես նաև խնդրում էին քաղաքացիական իրավունքների կիրառում, ավելի անաչառ հարկեր, հայերի գույքի, ամենօրյա կյանքի և արժանապատվության երաշխիք: Խնդրում էին նաև ազատել քրդերի հալածանքներից և զենք կրելու իրավունք տալ այնտեղ, որտեղ քրդերը չեն զինաթափվում: Չնայած հանրահավաքի դիմաց արգելք չի դրվում, բայց այն ընկալվում է որպես մի աննախադեպ մարտահրավեր:

Այդ պատճառով արյունալի ճնշում է գործադրվում: Հոկտեմբերի 1-ից 3-ն ընկած ժամանակահատվածում հայերի հաջորդ կոտորածն է տեղի ունենում: Հիմնականում դռնապաններից, բանվորներից, աղախիններից կազմված հայերի խմբերը սպանվում են սրի կամ մահակի հարվածներից: Ներկա գտնվող եվրոպացիները սարսափահար զեկույցներ են ուղարկում, որտեղ հստակորեն նշում են կանխամտածված կոտորածի մասին: Նրանց թվում էր ֆրանսիացի դիվանագետ Պոլ Կամբոն, նա խոսում էր արդեն կրակի մեջ գտնվող Փոքր Ասիայի մասին: Իրա-

կանում ամբողջովին բռնությունների մշակույթ էր տիրում, որը չէր տարբերակում ճնշողներ և ճնշվածներ և որպես ընդդիմության դեմ պայքարի միակ ձև՝ տեսնում էր կոտորածը: Նույնիսկ եթե այդ ընդդիմությունը խաղաղ էր: Անգամ ամենափոքր բողոքի պատասխանը լինում էին դաժան հալածանքները:

Ահա այս պայմաններում, երբ պաշտոնապես հայերի համար բարեփոխումների ծրագիր էր մշակվում (իշխանությունների կողմից ներկայացվել է 1895 թ. մայիսի 11-ին և ստորագրվել նույն տարվա հոկտեմբերի 17-ին), իրականում տեղի է ունենում հայերի հաջորդ կոտորածը, որը սկիզբ է առնում Տրապիզոնում և Ախիսարում (հոկտեմբերի 8, 1895 թ.): Կոտորածը ներառում է արևելյան Թուրքիայի հայաբնակ շրջանները: Գերմանացի բողոքական պատմաբան Լեպսիուսը, այս ջարդերից որոշ ժամանակ անց այցելեց այս շրջանները, հայտնում է, որ հարյուրավոր կոտորածներ կային: Հենց նրան են պատկանում այս թեմայով գոյություն ունեցող բազմաթիվ փաստաթղթեր:

Պարզապես հնարավոր չէ հաշվի առնել յուրաքանչյուր դրվագ, բայց հայերն անշուշտ զոհվեցին եվրոպական տերությունների անգործության պատճառով: Դադրյանը նշում է.

«Սասունից մինչև Կոստանդնուպոլիս, այնտեղից էլ մինչև շրջաններ թե՛ մարդկային, և թե՛ նյութական ոչնչացման կայուն աճ էր նկատվում: Այս հարցը հարկավոր է հաշվի առնել, քանի որ կոտորածների այս ավելացումներն են հասցնում Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում տեղի ունեցած ցեղասպանությանը, որն իրենից ներկայացնում է այդ ջարդերի գագաթնակետը և որի հիմնական մեխանիզմն այն է, որ դրանց պատասխանատու անձինք վստահ էին, որ մինչև վերջ անպատիժ են մնալու»[33]:

Կարևոր է նաև Զեյթունի ապստամբությունը, որը տեղի է ունեցել 1895 և 1896 թթ.: Բարձրադիր լեռների մեջ գտնվող

[33] **Վ. Ն. Դադրյան**, Մեջբերված ստեղծագործություն, 2003, էջ 153:

Կիլիկիայի այս քաղաքը՝ Զեյթունը, որն արդեն ընտելացել էր մահմեդականների հետ բախումներին[34] և նպատակ ուներ ազատվել շարունակական հալածանքներից, ապստամբում է շրջակայքի հայկական գյուղերը հրդեհելու դեմ: Եվ թուրքական ուժերին մեծաքանակ զոհեր է պատճառում: «Մուսա լեռան 40 օրը» գրքի հեղինակ Ֆրանց Վերֆելն այսպես է ներկայացնում այդ իրողությունները.

«Կիլիկիայի Տավրոսի արևմտյան հատվածում գտնվող հնագույն և բարձրադիր լեռնային մի վայր է Զեյթունը: Ինչպես Մուսա լեռան գյուղերում, այնպես էլ Զեյթունում բացառապես տեղացի հայեր էին բնակվում: Բայց քանի որ շատ ազդեցիկ մի քաղաք էր, որի բնակչությունը հասնում էր 30.000-ի, Թուրքիայի կառավարությունը այնտեղ մեծ թվով զորք, սպաներ և պաշտոնյաներ էր բնակեցրել, որոնք իրենց ընտանիքներով տեղափոխվել էին այնտեղ և հետևում ու հսկում էին ժողովրդին, ինչպես որ ոչ թուրք բնակչություն ունեցող բոլոր վայրերում էր արվում: Սա մի ռազմավարություն է, որ հիմնականում առկա է այն պետություններում, որտեղ ամենակարող ազգային բնակչությունը իշխում է մյուս ազգային փոքրամասնություններին: Թուրքիայում այս ռազմավարությունը հատուկ դաժանությամբ էր կիրառվում, քանի որ իրենց ազնվական լիազորությունները պահանջող օսմանները այլ միլեթների կամ էլ այլ ռասաների ներկայացուցիչների նկատմամբ նույնիսկ թվային գերակշռություն չունեին»[35]:

Հայերի ապստամբությունը թուրքերի կողմից խարանի է ենթարկվում, միապետին անմիջապես տեղեկացնում են, որ հայերը կոտորում են մահմեդականներին: Ուղարկված զորքերը երկար ժամանակ ապարդյուն պաշարում են քաղաքը, որը հուսա-

[34] Հիշարժան է 1863 թ. քաղաքի ապստամբությունը՝ չնայած անցյալում թուրքական կառավարությանը ապստամբ ցեղերի դեմ կռիվներում մեծ աջակցություն ցուցաբերելուն:

[35] **Ֆ. Վերֆել**, Մեջբերված ստեղծագործություն, էջ 92:

հատորեն շարունակում էր պայքարել և մեծ կորուստներ էր պատճառում թուրքական զորքին, որի կազմում անկանոն կերպով կռվում էին քրդերն ու չերքեզները[36]:

Զեյթունին փրկեց ոչ միայն թուրքական չարաշահումների նկատմամբ աճող ատելությունը, այլ նաև իր դիրքը:

«Պատկերացրեք բարձր մի ժայռ՝ գլխին թագի պես պարուրված խրոխտ մի քաղաք՝ փեթակի պես շարված տներով: Բրգի պես մեկը մյուսի վրա խռնված անցուղիներ, որ հարթավայրին են ամրանում միայն քաղաքի ժամանակակից հատվածներով: Զեյթունը միշտ էլ թուրքերի ազգասիրության մսի մեջ խրված մի ժանիք է եղել: Քաղաքը նախ և առաջ մինչև տասնիններորդ դարի կեսը ինքնավար է եղել, դա նշանակում է , որ ավելի հին ժամանակներում պետության ժողովուրդը պետք է որ այստեղ տհաճ փորձությունների ենթարկված լինի: Բացի այդ Զեյթունի հայերի մոտ պահպանվել էր իրենց պատմությանը հատուկ անկախության հնագույն ոգին: Բայց ամենաաններելի փորձությունը, որ ընկած էր նրանց ատելության հիմքում, 1896 թ. անակնկալ վարքագծի հիշողությունն էր: Այդ ժամանակ բարի սուլթան Աբդուլ Համիդը այլ կամավորական շարքերի կողքին հիմնել էր նաև համիդիեականներին, որոնք ազատ արձակված դատապարտյալներից, ավազակներից և քոչվորներից կազմված զինվորական խմբեր էին և ներկայացնում էին հզոր զորքեր՝ պատրաստ առանց ահի փակել բարեփոխումների սպասող հայկական միլլեթների բերանը: Մինչդեռ այդ կամավորական ջոկատները, որ ամենուր հաջողության էին հասնում, Զեյթունում արյունալի պարտություն կրեցին, փոխանակ խոստացածի պես այստեղ էլ իրականացնեին ուրախալի և շահեկան մի կոտորած»[37]:

---

[36] Տարբեր աղբյուրներում տարբեր թվեր են նշվում: Ըստ որոշ աղբյուրների՝ 20,000 թուրք է զոհվել: Դրա վերաբերյալ Դաղրյանը մեջբերում է անգլիացի Զեյմս Բրայսի մեկնաբանությունը, նա Զեյթունի պաշարման և Մոնտենեգրոյում տեղի ունեցած կռիվների միջև կապ է տեսնում (162):

[37] **Ֆ. Վերֆել,** Մեջբերված ստեղծագործություն, էջ 93:

Եվ սա դեռ ամենը չէ: Պարտվել էր նաև կանոնավոր զորքը և քաղաքը կարողացել էր դիմադրել պաշարմանը: Ակնհայտորեն անհանդուրժելի իրավիճակ էր տիրում: Մյուս կողմից ժամանակը չէր բարելավում պաշարման մեջ գտնվող քաղաքի դրությունը: Եվ այս պահին է, որ եվրոպական 6 տերություններ նորից են փորձում միջնորդության դիմել, որը երկու կողմերն էլ ընդունում են: Զեյթունն այդպիսով մեծ հաջողությունների է հասնում[38]. բավականին պակասում են հարկերը, երաշխավորվում է, որ կառավարության և իրավապահ մարմինների անդամները ընտրվելու են տեղաբնակների շարքերից (բացառությամբ դատավորի): Եվ սա էլ դեռ ամենը չէ: Վերահաստատվում են բարեփոխումների մասին խոստումները: Ու կառավարիչ կամ քրիստոնյա «կայմակամ» է նշանակվում, ով արդեն սեպտեմբերից պետք է զբաղվեր այս հարցերով: Ապստամբած հայերը համաձայնում են համաներման դեպքում զենքերը վայր դնել: Բայց թուրքերը դեռ իրենց ստորացած էին զգում առևտրականներից, բանվորներից և մտավորականներից կազմված զորքի կողմից կրած պարտության պատճառով: Դեռ երկար ապրում են նրանք այդ ատելությունը իրենց մեջ պահելով մինչև որ Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում արտաքսման և կոտորածների միջոցով կարողանում են դրան հագուրդ տալ:

Որոշ հայերի հաջողվում է փախչել դեպի եվրոպական մայրաքաղաքներ: Նրանց թվում էին Զեյթունի կռիվների հիմնական 4 առաջնորդները, որոնց արտաքսել էին և նրանք էլ ուղղվել էին դեպի Մարսել: Իսկ ով էլ, որ մնում է, փորձում է դաշինք կնքել: Եվ ահա այս շրջանում է, որ զարգանում է թուրքական

[38] Միաձայն արժևորվում է հայերի հերոսական ոգին, ովքեր 6000 զոհ ունենալով, սպանեցին իրենց ոչնչացնելու համար ուղարկված զորքի մեծ մասը՝ չնայած իրենց ունեցած հին զենքերին և սակավ զինամթերքին: Պոլ Կամբոնը ձեռք բերած համաձայնությունը մեկնաբանում է այնպես, որ եվրոպական տերությունները միապետի համար երկրորդ անգամ են արգելք հանդիսանում՝ միջամտելով նրա համար անբարենպաստ իրադրությունում:

ընդդիմադիր շարժում Աբդուլ Համիդի վարչակարգի դեմ, որի նպատակն էր օսմանյան համայնքներում բարեփոխումների հասնել: Բայց այստեղ մի խորքային նրբություն կար: Թուրք հեղափոխականները բոլորովին չէին համակրում հայերին՝ չնայած այն փաստին, որ երևի թե նույն այդ հայերի արդեն գոյություն ունեցող շարժման ազդեցությամբ էին նրանք սկսել գործել: Դեռ ավելին, նրանք հայերին օգտագործում էին մահմեդականներին համախմբելու, մահմեդական աշխարհում գոյություն ունեցող հակասությունները հաղթահարելու նպատակով:

Այս ընթացքում բազմաթիվ հայկական կուսակցություններ, որ մինչ այդ պայքարի մեջ էին գտնվում միմյանց դեմ, միավորվում են և ապստամբում միապետի լուռ համաձայնությամբ քրդերի կողմից իրականացված յուրացումների դեմ[39]: Միապետը ուղարկում է գեներալ Սաադէդիին, որպեսզի վերջինս վերահսկի 1895 թ. հոկտեմբերի 17-ին կայսերական հրովարտակով նախատեսված բարեփոխումների իրականացումը: Իրականում վերջինս արդեն բազմիցս փորձված ձևով քրդերին օգտագործում է հայերի դեմ: Այսկերպ անխուսափելիորեն հասնում ենք «Վանի մեծ իրադարձությանը»: Հասունանում է մի կռիվ, որը պատրվակ է հանդիսանում գործերի ժամանակավոր հավատարմատար անգլիացի Հ. Հերբերտի ծառայություններից հրաժարվելու համար: Պայքար է սկսվում, որը տևում է 9 օր: Հայերի դեմ կռվում էին 4 գումարտակ և հեծելազոր: Ծայրամասային շրջաններում բնակվող հայերը առանց սեռային կամ տարիքային տարբերակման սպանդի են ենթարկվում: Իսկ ներքին շրջանների բնակիչ-

[39] Խոսքը հնչակյանների մասին է, ովքեր օտարազգի սոցիալիստական խմբերի հետ կապ էին պահպանում, և վերջիններս փորձում էին ուտոպիստական զարթոնքի հասցնել զանգվածներին ու պատրաստ էին ցանկացած զոհողության, անգամ ահաբեկչական գործողությունների, միայն թե հայ ժողովրդին փրկեին թուրքական տիրապետությունից: Դաշնակները, ովքեր հեղափոխական բջիջների կազմակերպիչներ էին և պատրաստ էին ցուցադրական, և ահաբեկչական գործողությունների: Եվ Արմենակյանները, ովքեր ավելի կազմակերպված և ավելի ազդեցիկ էին:

ները, չնայած քանակական անհավասարությանը (տարբեր աղբյուրներ նշում են 600 կամ 700 հայերի մասին), դիմադրում և բազմիցս ետ են մղում թուրքական զորքերին: Այս դեպքում էլ բանակցություններ են սկսվում, որոնց հիմքում ընկած էր Անգլիայի կողմից մի առաջարկ: Հայ ազատամարտիկները համաձայնում են լքել երկիրը հավատալով հանդիսավոր խոստումներին՝ թե իրենք պետք է իրանական սահման հասնեին հյուպատոսների հսկողության տակ: Բայց նրանցից միայն 35-ն են այնտեղ հասնում: Իսկ մյուսները ընկնում են Կարահիսար լեռան լանջին թուրքերի կանոնավոր զորքի հարձակումներից[40]:

Ողբ և շփոթություն էր տիրում: Եվ չէին դադարում տխուր լուրերը, որոնք փաստում էին Վանի շրջակայքում ամբողջական գյուղերի ավերման մասին (ըստ որոշ վկայությունների դրանք 350 էին):

Եվ այստեղ հասնում ենք «Օսմանյան բանկի գրավում» անունով հայտնի դրվագին: Դա տեղի ունենում փոքրաթիվ հայերի կողմից (25 հոգի), որոնք զինված էին և ունեին բացատրական թռուցիկներ, որոնք ուղղված էին թուրքերին (որտեղ ափսոսանք էին հայտնում վերջին կոտորածների համար, հիշեցնում էին հայերի և թուրքերի խաղաղ գոյակցության մասին, բացատրում էին, որ հայերի պայքարը ոչ թե թուրք ժողովրդի, այլ նրա կառավարության դեմ է), հայերին (որտեղ ափսոսանք էին հայտնում հայերի դեմ իրականացած արյունալի իրադարձությունների, եվրոպական տերությունների անտարբերության համար, խնդրում էին գործի դնել իրավական բարեփոխումները, ինչպես նաև վերահաստատել Եվրոպայի 6 մեծ տերություններից բաղկացած Եվրոպայի գերագույն հանձնակատար), ինչպես նաև եվրոպական տերություններին, որտեղ նշվում էր, որ նրանք դառնում են թուրքերի անպատիժ մնացած հանցագործություն-

[40] Թերնոնը նշում է, որ մինչ այդ պահը փորձում էին ամեն կերպ մեկուսացնել հայերին և նրանց տարածքներում տարածել չերքեզներին (էջ 58):

ների մեղսակիցը: Սրան հետևում են պաշարման երկար ժամեր, խելահեղ բանակցություններ և ռուսական դեսպանատան ներկայացուցչի միջամտությունը: Իսկ փրկված 15 հայերը պահակազորի ուղեկցությամբ լքում են շինությունը և նստում են դեպի Մարսել տանող Ժիրոնդ նավը: Որոշ վիրավորներ ռուսական հիվանդանոցում մնալուց հետո ռուսների կողմից տարվում են Եգիպտոս: Այսպիսով, եզրափակվում է մի զարմանալի և սահմռկեցուցիչ քայլ, որի նպատակն էր տեսանելի դարձնել հայերի խնդիրը: Այս քայլն ակնհայտորեն հաղորդակցական նպատակ էր հետապնդում:

Ոչ ոք չէր փորձել տիրանալ բանկում մնացած զումարներին: Մամուլում տարակարծիք էին այս քայլի մասին: Որոշ թերթեր ափսոսանք էին հայտնում բանկի վրա գործած հարձակման համար՝ որակելով այն որպես անհամոզիչ և անհեթեթ քայլ, որը կարող էր վրեժխնդրություն սրել, իսկ մյուսները ընդգծում էին հայերի ազնվությունը և խորհրդանշական թիրախի վրա հարձակում գործելու նրանց արիությունը, ինչով փորձում էին տեսանելի դարձնել իրենց համայնքի ծայրահեղ ծանր վիճակը:

Սակայն այդ ժամանակահատվածում նախատեսված մյուս ցուցադրական քայլերը բացասական արդյունք ունեցան: Դրանք երբեմն ձախողեցին իրենց նպատակը, ինչպես օրինակ Մեծ Վեզիրի դեմ հարձակման դեպքում:

Բանկի վրա հարձակումից 3 օր անց տեղի է ունենում ավելի քան երկու հազար հայերի կոտորածը Ակն քաղաքում, որտեղ ծնվել էր ասպատակության առաջնորդներից մեկը: Գթություն այլևս հնարավոր չէր ցուցաբերել հայերի նկատմամբ, ովքեր համարձակվել էին հավասար իրավունքներ պահանջել: Օսմանյան սովորութային իրավունքի համար սա անընդունելի էր: Օտար ուժերին դիմելու հայերի կողմից իրականացված փորձերը թուրքերին ստիպում են էլ ավելի բարդացնել նրանց վիճակը: Կարծես թե հայերը խախտել էին իրենց և թուրքերի միջև եղած մի

համաձայնություն, ըստ որի նրանք գթություն պետք է ցուցաբերեին պարտվող կողմի և իրենց ենթակաների նկատմամբ:

Այսպիսով, կոտորածները սկսում են կրկնվել հին հունական քաղաք Տրապիզոնում (հոկտեմբերի 8, 1895), Բարձր Հայաստանի հնագույն մայրաքաղաք Էրզրումի վիլայեթում (հոկտեմբերի 30), հայկական բարձրավանդակի և Կովկասի միջև ընկած Բիթլիսի վիլայեթում (հոկտեմբերի 25), Եփրատի երկու վտակների միջև 1200 մ բարձրության վրա գտնվող Խարբերդի վիլայեթում: Նոյեմբերի 1-ին այնտեղի հայերի վրա հարձակում են գործում: 10 օր տևած կոտորածի արդյունքում տարածքը ավերվում է և զոհվում են հազարավոր մարդիկ՝ ներառյալ քահանաներ և կանայք: Մոտավորապես նույնն է տեղի ունենում քրդերի տարածքում գտնվող Դիարբեքիրի վիլայեթում: Փոքրամասնություն կազմող հայերը նոյեմբերի 1-ից 3-ը կոտորածի են ենթարկվում (զոհերն էին 5000 հայ և 95 մահմեդական, որոնցից 70-ը երևի զոհվել են հետագայում՝ ավարի շուրջ ընդհանուր հայտարարի չգալու պատճառով), մինչդեռ այդ նույն պահին և հաջորդող օրերին մոտ 119 գյուղ թալանվում և կրակի է մատնվում: Դաժան է լինում նաև Անատոլիայի և Հայաստանի միջև գտնվող Սեբաստիա վիլայեթի ճակատագիրը: Այն հարուստ և խիտ բնակեցված մի համայնք էր մինչև նոյեմբերի սկզբին տեղի ունեցած քոչվոր քրդերի արշավանքը և նույն ամսվա 12-ին վերջիններիս կողմից կատարած թալանը, որի արդյունքում բացի խանութների ու տների կողոպուտից նաև 1500 մարդ է զոհվում: Նույնը տեղի է ունենում նաև շրջակա 150 գյուղերում: Թերնոնը գրում է.

«Հայկական 6 վիլայեթները՝ չհաշված Տրապիզոնի վիլայեթը, որը հայաբնակ շրջանների թվին չէր դասվում, 1895 թ. նոյեմբերին անասելի անարխիայի են ենթարկվում: Ամենուրեք նույն վայրագություններն էին, սպանելու և կողոպտելու նույն մոլուցքն էր տիրում: Հայաստանը պատել էին մոխիրն ու սպանվածների մարմինները: Կայսրությունը, անհագուրդ մոլուցքի

զոհ դարձած, հայերի որսի էր դուրս եկել: Բայց ամենանողկալի իրադարձությունները տեղի են ունենում Հալեպի վիլայեթում»[41]:

Այս իրադարձությունների մասնակից են դառնում նաև Ուրֆայի, հնագույն Եդեսիայի (Միջագետք) հայերը, որոնց հորդորում էին դուրս գալ տներից և աշխատել, բայց դա անելուն պես հարձակվում էին նրանց վրա, թալանում ու սպանում: Նաև հրդեհներ էին բռնկվում, օրինակ մի եկեղեցում, որտեղ ապաստան էին գտել մոտ 3000 հայեր և համարյա բոլորը զոհվեցին: Անգլիայի հյուպատոս Ֆիցմորիսը նշում է, որ դեկտեմբերի 28-29-ին 8000 հայ է զոհվել, ապա հստակեցնում է, որ չնայած մարտին կատարած իր հետազոտությունների՝ արդյունքն անշուշտ մոտավոր է և զոհված հայերի թիվը հավանաբար 10.000 է:

Քիչ են դեպքերը, երբ որևէ թուրքական մարմնի հաջողվում է կասեցնել հայերի կոտորածները: Համարյա ամենուրեք նրանք տառապում էին, քանի դեռ հայ հեղափոխական շարժումը նոր էր ծնվել և դեռ պետք է հասունանար: Թերնոնը մեծ ոգևորությամբ գրում է.

«1895 թ. կոտորածները կազմակերպվել և համակարգվել են սուլթան Աբդուլ Համիդի, կամ համենայնդեպս Պալատի կողմից: Սրանում կասկած չկա: Կարևոր չէ, թե կոտորածների շարքը սկիզբ է առել անձամբ սուլթանի նախաձեռնությամբ, թե նրա խորհրդականներն են միտքը հղացել: Բռնապետական համակարգում բռնապետը պատասխանատու է իր կառավարության իրականացրած բոլոր գործողությունների համար»[42]:

---

[41] **Ի. Թերնոն,** մեջբերված ստեղծագործություն, 2003, էջ 116:
[42] **Ի. Թերնոն,** մեջբերված ստեղծագործություն, , էջ 119:

Կրոնական տարրի դերը

Լորդ Կինրոսի[43] կողմից նկարագրված և Դաղրյանի մոտ մեջբերված իրադարձություններում տեղի ունեցածը հասկանալու համար կրոնական տարրը կարևոր է: Հատկապես կարելի է առանձնացնել մուֆթիների (մահմեդական օրենքները ընդունող իրավաբաններ և ղեկավարներ), կադիների (օրենքը վերահսկող մահմեդական դատավորներ), ուլեմաների (մահմեդական աստվածաբանները, ովքեր համարվում էին մարգարեի ժառանգները և սուննի իսլամի միասնականության երաշխավորները), մուլլահների (որոշակի կրոնական կրթություն ունեցող հավատացյալներ) և սոֆտաների (աստվածաբանության ֆակուլտետի ուսանողներ, ուլեմաների հետևորդներ) դերը, ովքեր առաջիններից էին կոտորածների համար արդարացում գտնողների շարքում: Փոքրաթիվ փրկվածներին ստիպում էին կրոնափոխ լինել, իսկ եթե չէին համաձայնում, ապա նրանց կոկորդը կտրում էին կամ վառում:

Դաղրյանը նույնպես այլ գիտնականների պես կոտորածները որակում է որպես մի քանի տասնամյակ անց տեղի ունեցած հայ ազգի բնաջնջման գլխավոր փորձ: Պատկերը լրացնում են ամսաթվերի փոփոխությունը, փաստերի հաջորդականությունը թաքցնելը, որոնք, սակայն, պարզ էին արևմտյան հետազոտողների համար (վկայություններ կան, որ մահմեդականները հիվանդանոց տարված վիրավոր հայերին ներկայացնում էին որպես մահմեդական՝ ցույց տալու համար, որ հենց մահմեդականներն են զոհերը): Եթե թուրքական աղբյուրները թաքցնում էին սպանությունների տվյալները, հայկական կողմը, իր հերթին, ի վիճակի չէր խոսել տեղի ունեցածի լրջության մասին,

---

[43] **Լ. Կինրոս**, «Օսմանյան դարեր», Նյու Յորք, Morrow Quill, 1977, էջ 559-560: Ուրֆայի կոտորածների մասին զեկույցը, որ կազմվել էր բրիտանացի դեսպան Ժերարդ Ֆիցմաուրիչեի հետաքննության ավարտին, պահվում է Foreign office-ում, 195/1930, էջ 30-72 (թերթ 185-206):

քանի որ փրկվածները քիչ էին, մեկուսացած և ցրված: Ամենահուսալի աղբյուրները, որոնց վրա հիմնվում են հայերի ջարդի մասին վերջին ուսումնասիրությունները, Թուրքիայում գտնվող հյուպատոսությունների հետ կապված աղբյուրներն են, որոնք իրենց երկրներից ցուցում էին ստացել թուրքական կայսրության գոյատևման կարևորության մասին, ուստի չունեին հայերի հերթական ապստամբությունների համար ուրախանալու որևէ պատճառ[44]: Բայց բոլորը խոսում են կոտորածի զոհ դարձած մարդկանց հսկայական թվի մասին, որոնք բոլորը առանձնակի դաժանությամբ են սպանվել: Բացի դրանից կային նաև վիրավոր, խեղված, հաշմանդամ դարձած, չքավորության, իրենց ապրած սարսափների, ոչնչացված, կրակի մատնված, թալանված գյուղերի և գույքի պատճառով թուլացած մարդիկ: Որոշ շրջաններում մարդկանց սպանելուց և կրոնափոխ անելուց հետո ոչ մի քրիստոնյա չէր մնացել:

Զոհերի հանդեպ խոր արհամարհանքը, երբ անտեսվում էին նրանց բոլոր մարդկային արժեքները (հայերը հույների պես համարվում էին շներ, խոզեր կամ խոզի կեր) սկիզբ էր առնում հենց պետությունից: Հարձակման էր անցել կանոնավոր զորքը: Կոտորածները հանգիստ էին ընդունվում: Դեռ ավելին, գտնվել են զինվորների՝ հարազատներին գրած նամակներ, որոնցում իրենք իրենց փառավորում են կատարած սպանությունների, հաջողված կոտորածների, արշավանքների համար[45]: Սրանք քաղաքական գործիք են դառնում այնտեղ, որտեղ անպատժելիությունը թույլ էր տալիս, որ ամեն ինչ շարունակվեր: Օսմանյան կայսրության աստվածապետական բնույթը այդ ամենն ավելի էր թեժացնում: Եվ Աբդուլ Համիդը կարող էր 1897 թ. հայ-

[44] Այդ նույն աղբյուրները շատ կարևոր են 1915 թ. հայերի կոտորածը արձանագրելու համար:

[45] **Վ. Ն. Դաղբյան**, մեջբերված ստեղծագործություն, 2003, էջ 193-194:

տարարել, որ «հայկական հարցը փակված է»[46]: Այսքանով եզրափակվում է այն կործանարար եղանակը, որով եվրոպական մեծ տերությունները փորձում էին մեղմ ձևով մարդասիրական միջամտություն ցուցաբերել և հայերի համար բարեփոխումներ իրականացնել: Հայերի ոչնչացումը միապետին մղում է իմաստազրկելու Եվրոպայի ճնշող և ձանձրալի միջամտությունները: Այս տեսակետից հայկական հարցը գոյություն ունենալու պատճառ չուներ: Խնդիրը զրոյացվել էր:

Ըստ Դադրյանի՝ 1894-1896 թթ. սպանությունները նախազգուշացում էին ապագայի համար: Իր կարծիքով այստեղ պատմական շարունակականություն կար, որի ներսում «դահիճ/զոհ հարաբերության հանցավոր բնույթը ոչ միայն պահպանվել էր, այլ նաև տարիների ընթացքում ընդգծվել՝ հասնելով մինչև զոհի, այսինքն՝ Օսմանյան կայսրությունում բնակվող հայերի ամբողջական վերացման»[47]:

Համոզված լինելով, որ վերոհիշյալ իրադարձությունների և Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում տեղի ունեցած դեպքերի միջև շարունակական կապ կա, այնուամենայնիվ սոցիոլոգը նկատում է, որ կա երկու մեծ տարբերություն տեղի ունեցածի և 19-րդ դարի ցեղասպանության միջև: Առաջին հերթին նա նկատում է, որ այս սպանությունները տեղի են ունեցել խաղաղ ժամանակաշրջանում, մինչդեռ 19-րդ դարի ջարդը պատերազմի ընթացքում է կատարվել: Եվ երկրորդ, նա նշում է, որ սրանք տեղի էն ունեցել Աբդուլ Համիդի ցանկությամբ, ով հետագայում գահընկեց է արվել Իթթիհադի երիտթուրքերի կողմից, որոնք նախկին երիտասարդ օսմանների հետևորդներն էին (ապրիլի 13, 1909): Նրանք են պատասխանատվություն կրում

---

[46] Դեսպան Կուրիեյի՝ Սալիսբուրի ուղղված զեկույցից, 1897 թ., հոկտեմբերի 28, **Ռ. Դուզլասի** «Բրիտանիան և հայերի ցեղասպանությունը» ստեղծագործությունից, 1894-1897, «Պատմական ամսագիր», 19-րդ հատոր, հ. 1, 1976 թ., էջ 132:

[47] **Վ. Ն. Դադրյան**, մեջբերված ստեղծագործություն, 2003, էջ 197:

Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում տեղի ունեցած հայկական ցեղասպանության համար:

Գիտնականը անդրադառնում է նաև շրջանների սահմանների վերաձևակերպմանը, որ արվել էր այնպես, որ մնացած փոքրաթիվ հայերը աննշան լինեին մեծաթիվ մահմեդականների համեմատությամբ, ինչը արվել էր եվրոպական տերությունների կողմից 1880 թ. սեպտեմբերի 7-ին գրված մի ծանոթագրությամբ, որտեղ հանդիպում է մի կանխատեսող հայտարարություն՝ կապված Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածի հետ, որի անտարբերությունը ամենայն հավանականությամբ հասցնելու էր քրիստոնյա բնակչության՝ այսինքն հայերի ոչնչացման:

Այլ կարծիքի են մյուս գիտնականները, որոնցից նշենք Նորման Մ. Նեմարկին, նրան իր՝ «Հայերի ցեղասպանություն»[48] աշխատությունում մեջբերում է Մարսելո Ֆլորեսը, ով ութհարյուրականների ջարդերը որակում է որպես «դաժան պատժի» մի ձև, որը բնութագրվում է որոշակի պատահական բնույթով, այն դեպքում, երբ 19-րդ դարի ցեղասպանությունը բոլորովին այլ է նաև իր համակարգվածությամբ: Խոսքը գնում է մինչ օրս գոյություն ունեցող մի բանավեճի մասին, որին գուցե պատշաճ պատասխան կտրվի, երբ կկարողանան թեմային վերաբերող այլ աղբյուրներ գտնել:

Եվրոպական տերությունների երկիմաստ քաղաքականությունը

Միապետի հեռացմամբ հայերի դրությունը ոչ մի շոշափելի փոփոխության չի ենթարկվում և վերջիններիս օգտին Եվրոպան ևս մեկ անգամ է գործողության է դիմում: Բայց Եվրոպային ավելի շատ հետաքրքրում էր Արևելքը, որն աստիճանաբար ավելի անկանոն էր դառնում, ինչի պատճառն Անգլիայում և Ռուսաստանում աճող անվստահությունն ու թշնամանքն էր, այն դեպքում, երբ Ավստրո-Հունգարիան կլանել էր Բոսնիա-Հերցո-

[48] **Մ. Ֆլորես**, «Հայերի ցեղասպանություն», Բոլոնիա, Մուլինո, 2006, էջ 34:

գովինան, իսկ Բուլղարիան անկախություն էր հռչակել (1908 թ.): Համենայնդեպս Եվրոպան պահանջում է հարգանք ցուցաբերել Բեռլինի պայմանագրի և հատկապես դրա 61-րդ հոդվածի նկատմամբ:

Այս ամենի հետևանքով էլ ավելի է սրվում հայերի և Երիտթուրքերի միջև եղած թշնամանքը, մինչդեռ եվրոպական տերությունների հետաքրքրությունը Բեռլինի պայմանագրի[49] կիրառման նկատմամբ աստիճանաբար նվազում է, այսինքն՝ հայաբնակ մարզերում բարեփոխումների և բարեկարգման (ոչ հստակորեն սահմանված) նկատմամբ նրանց հետաքրքրությունը պակասում է[50]: Այդ իսկ պատճառով շատ գիտնականներ հենց Բեռլինի պայմանագրի հետ են կապում այն հակասության ծագումը, որ երկար ժամանակ գոյություն ուներ, սակայն մինչ այդ հայտնի չէր միջազգային մակարդակում:

Իրականում ընդհանուր ճակատից, մարդասիրական իրավունքների նկատմամբ հարգանքի պահանջից մի քանի տարի անց սկզբում Անգլիան, ապա Գերմանիան և Ավստրիան առաջ են քաշում Թուրքիայի պահպանության քաղաքականություն: Գործնականում, բարի կամքի խոսքերից և պաշտոնականություններից այն կողմ, եվրոպական տերությունները շատ քիչ բան են արել կամ գուցե ոչինչ էլ չեն արել հայերի համար: Նույն

---

[49] Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածը փոխարինել էր Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածին, որը մինչև բարեփոխումների կիրառումը նախատեսում էր ռուսական զորքերի ներկայությունը:

[50] Վ. Ն. Դաղբյանը (մեջբերված ստեղծագործություն, 2003, էջ 92-93) մեջբերում է ռուս-թուրքական պատերազմի ընթացքում անգլիացի վարչապետի՝ Լլոյդ Գորջի հայտարարությունը, որտեղ վերջինս նշում է, որ առանց Անգլիայի ոչնչացման տանող միջամտության՝ 1878 թ. Բեռլինի պայմանագրի և դրան նախորդող Սան Ստեֆանոյի պայմանագրի համաձայն հայերը պետք է ռուսների պաշտպանության տակ լինեին: Այստեղ նախատեսվում էր, որ Ռուսաստանը կշարունակի զբաղեցնել հայկական մարզերը մինչև որ կիրառվեն զոհացուցիչ բարեփոխումներ: Այսպիսով՝ վարչապետը նշում է. «Հայաստանը զոհաբերվեց մեր կառուցած հաղթական խորանի վրա» (էջ 93):

ինքը Ռուսաստանը, անհանգստանալով նիհիլիստների առկայությունից իր տարածքներում, ինչպես նաև Անդրկովկասի տարածքում հայ հեղափոխական շարժումների ծնունդով, հայեր, ովքեր հստակորեն փորձում էին միջամտել Թուրքիայում ապրող իրենց ազգակիցների օգտին, կտրուկ կերպով փոխում է իր քաղաքականությունը: Իհարկե ցարին ձեռք չէր տա սահմանին հզոր Հայաստան ունենալ:

Դեռ ավելին, Բուլղարիան դեմ էր դուրս եկել ռուսական իշխանությանը, ով միջամտում էր իր գործերին՝ կարևոր պաշտոններին ռուս գեներալների նշանակելով (1881): Սա ոչ ժողովրդական և անցանկալի մի միջոց էր, քանի որ ռուսների կողմից աստիճանաբար ավելի շատ է խոսվելու «բուլղարացիների ապերախտության» մասին: Մինչդեռ բուլղարացիները խոսում էին բուլղարացիներին վստահված Բուլղարիա ունենալու անհրաժեշտության մասին: Այս ընթացքում Ալեքսիս Բորիսովիչ Լոբանովի միջոցով Ռուսաստանի մոտեցումը Թուրքիային մարդասիրական միջամտության սկզբունքի աղոտացման պատճառ է հանդիսանում: Թուրք միապետը այս կերպ կարողացել էր հասնել 1894 և 1896 թթ. հայերի կոտորածներին և դեռ նույնիսկ համերաշխություն էր հաստատել Նիկոլայ 2-րդ ցարի հետ: Անգլիայի մասին արդեն խոսվել է: Ֆրանսիան իր հերթին էր Թուրքիայի հետ կապված երկարատև, նաև տնտեսական հարաբերություններով, քանի որ 1894 և 1896 թթ. կոտորածների ժամանակ նա մոտ 2 միլիարդ ֆրանկով ակտիվորեն ներգրավված և ներկայացված էր Թուրքիայում: Հայրենական մեծ պատերազմի սկզբին այս թիվը հասնում է 3 միլիարդի: Ֆրանսիային բնականաբար ձեռնտու չէր Թուրքիայի փլուզումը:

Վիկտոր Բերարդը գրում է, որ ֆրանսիացի ֆինանսիստները, գործարարները և ինժեներները հակված էին լռության, որպեսզի խուսափեին կայսրության և սուլթանի թուլացումից, ինչը դեմ էր իրենց շահերին: Ֆրանսիական մամուլը նրա կարծիքով մեծ դրամաշնորհների կարժանանար, եթե հայկական հարցը

անուշադրության մատնվեր[51]: Առանց խորանալու Ֆրանսիայի պատմության այս տխուր էջերի մեջ, հիշենք, որ Պոլ Կամբոնը 1891-1898 թթ. Թուրքիայում դեսպան էր և քաջատեղյակ էր կայսրության ներսում գոյություն ունեցող անհավասարություն-ներին և հակված էր հայերի պատմության ընթացքը փոխելուն՝ չեղյալ է հայտարարում Ֆրանսիայի լռության դավադրությունը և հակառակվում Ռուսաստանին միացած Ֆրանսիայի արտաքին քաղաքականությանը՝ խստորեն մեղադրելով Նապոլեոն 3-րդի քաղաքականությունը, ինչի հետևանքով Թուրքիան դաշինքի մեջ էր մտել եվրոպական պետությունների հետ: Կամբոնը այն շատ քչերից է, ով հստակ կերպով և խստորեն տեղեկացնում է Ֆրանսիային տեղի ունեցող հայերի կոտորածների մասին, միևնույն ժամանակ մնալով իր պաշտոնին և փորձելով միջա-մտել ու լուծում գտնել առաջացած ճգնաժամի համար, չնայած որ նրան այդպես էլ չի հաջողվում դա անել[52]: Իսկ հումանիտար միջամտության սկզբունքները, որոնք առաջ էին քաշվել և հաս-տատվել Ֆրանսիայի, Անգլիայի, և Ռուսաստանի կողմից, արդեն մնացել էին անցյալում:

Իրավիճակն այլ էր Գերմանիայում, որը որպես տերություն և միասնական պետություն ծնվել է մոտավորապես հայկական հարցի առաջացմանը զուգահեռ: Պրուսիայի վերահսկողության ներքո իրագործվող միավորման այդ գործընթացի հեղինակն է Բիսմարկը, այն նույն վարչապետը, ով Բեռլինի կոնգրեսում հաղթանակի արժանացավ: Բիսմարկը համոզված է, որ Գերմա-նիան Օսմանյան կայսրության դեմ հնարավոր պատերազմից ոչ մի շահ չէր ունենա: Նրա կարծիքով 61-րդ հոդվածով նախատես-

---

[51] **Վ. Բեռնարդ**, «Սուլթանի քաղաքականությունը», Revue der Paris, 1897 թ. հունվարի 15:

[52] Դաղրյանը գրում է. «Կամբոնի գործելաոճը համապատասխանում էր հումանիտար միջամտության սկզբունքին և հենց այս հարցում է հարկավոր գնահատել այս այլախոհ դիվանագետի՝ Պոլ Կամբոնի հանձնառությունը»: (Մեջբերված ստեղծագործություն, 2003, էջ 118):

ված հայկական բարեփոխումների գործնական արժեքը շատ կասկածելի էր: Ըստ Բիսմարկի՝ բարեգործությունը այնքան էլ չի առնչվում քաղաքականությանը: Իր քաղաքականության առաջնային նպատակ ունենալով Գերմանիայի հզորացումը, որի ձևավորման մեջ մեծ ներդրում էր ունեցել, Բիսմարկ իշխանը առավել հակված էր հասկանալու այն խնդիրները, որոնք ստեղծվում են անզուսպ փոքրամասնություններով լի տարածքներ կառավարելիս և այդ փոքրամասնությունների իրավունքները սահմանելիս:

Միջազգային բանակցություններում Գերմանիան արժանացել էր Ռուսաստանի խոր դժգոհությանը, քանի որ վերջինս իրեն խաբված էր համարում Բեռլինի կոնգրեսի հաղթանակների արդյունքից: Մասնավորապես անտեսվել էր Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը՝ ըստ որի ռուսական զորքերը պետք է Թուրքիայում մնային այնքան ժամանակ, մինչև որ բարեփոխումները իրականություն դառնային: Ըստ Գերմանիայի կանցլերի՝ Ռուսաստանը Բեռլինում պահանջներ չէր ներկայացրել լիազորված արքայազն Գորչակովի քաղաքական անկարողության պատճառով: Անտարակուսելի էր այն փաստը, որ Ռուսաստանը պետք է հեռացներ իր զորքերը, իսկ բարեփոխումների հարցը մնում էր թղթի վրա:

Եվ հետո Գերմանիայի քաղաքականությունը որոշ փոփոխությունների էր ենթարկվել Բիսմարկի հրաժարականի (1890 թ. մարտի 18) և երիտասարդ կայսր Գուլիելմոյի առաջ գալու հետևանքով, նա ցանկանում էր փոխել Գերմանիայի արտաքին քաղաքականությունը, արժևորել իր սեփական տեսակետը և ազատվել Բիսմարկի ծանր հսկողությունից: Մյուս եվրոպական երկրների կողմից տեսականորեն ընդունված հումանիտար միջամտության գաղափարը չէր արժանացել Գուլիելմոյի համակրանքին: Փոխարենը նրան հետաքրքրում էր Գերմանիայի տնտեսական շահերը Թուրքիայում կիրառելու միտքը և այս նպատակով երկու անգամ՝ 1889 և 1898 թթ. մեկնում է Թուրքիա:

Հարկ է նշել, որ դա տեղի է ունենում 19-րդ դարի վերջում տեղի ունեցած հայերի կոտորածներից ուղիղ երկու տարի անց: Այսինքն՝ Գերմանիան մեծ ներողամտություն է ցուցաբերում այդ իրադարձությունների նկատմամբ՝ դրանք որակելով ներքին խնդիրներ, որոնք չպետք է ազդեին Գերմանիայի և Թուրքիայի հարաբերությունների վրա: Փոխարենը Գերմանիան Թուրքիայի տնտեսության մեջ կենտրոնական դեր է ձեռք բերում՝ գերազանցելով Անգլիային և Ֆրանսիային՝ ընդլայնելով իր հետաքրքրությունները նաև առևտրի, արդյունաբերության և նույնիսկ զինամթերքի մատակարարման բնագավառներում:

Գերմանացի պաշտոնյաները ուշադրություն էին հրավիրում այն փաստի վրա, որ հայերը, լինելով խորամանկ և խռովարար ազգ, անկասկած շարունակաբար սպառնում էին Թուրքիայի ազգային պետություն դառնալուն: Եվ Գերմանիայի շահերից չէր բխում միջամտության գնալ մի ռասայի[53] օգտին, ում հետ որևէ կապերի մեջ չէր: Ավելին, հաշվի առնելով Գերմանիայի՝ Թուրքիայում ունեցած տնտեսական շահերը, Հայաստանում տեղի ունեցող կոտորածները նրանք ընդունում էին որպես չարյաց փոքրագույն: Գուլիելմո 2-րդը թեկուզ գաղտնի կերպով, բայց բազմիցս սարսափով է նշել միապետի կատարած վայրագությունները, ով, իր կարծիքով, պետք է գահընկեց արվեր:

Համենայնդեպս 1894-1895 թթ. Թուրքիայի համար եվրոպական տերությունների արձագանքը փորձարկելու տարիներ էին:

---

[53] Ռասայականության հարցը Ֆրանսիայում ծագել է հավանաբար 18-րդ դարում: Սկզբնապես այն կապվում էր բուսական և կենդանական տիպերի դասակարգմանը և միայն հետագայում է անցել մարդկային ուսումնասիրությունների բնագավառ: Մարդաբանների միջև բանավեճեր են սկսվում ռասաների ծագման հարցի շուրջ, այս թեմայով տարբեր տեսություններ են ներկայացվում (տե՛ս նաև Բուֆֆոն և Վոլտեր): 19-րդ դարում բարձրանում է մեծ ռասաների հարցը: Օրինակ՝ հյուսիսային աֆրիկացիները համարվում են առանձին ռասա: Համենայնդեպս հասկացությունը կապվում է ժառանգականության հետ՝ այսինքն գենետիկ և կենսաբանական ծագմամբ առաջանում է ռասաների և արժեքների մի հիերարխիա:

Եվ իրականում արձագանք այդպես էլ չեղավ: Դադրյանի մեկնաբանմամբ՝ անպատժելիությունը ճանապարհ է բացում կոտորածների համար: Համենայնդեպս այս տեսանկյունից շարունակակություն կա գահընկեց եղած Աբդուլ Համիդ սուլթանի և երիտթուրքերի քաղաքականության միջև, որի կարգախոսն էր տարածքների «օսմանացումը»: Սա ենթադրում էր այլ իրականությունների և առաջին հերթին հենց հայերի վերացում[54]: Բայց 1915 թ. ջարդերը նախորդներից տարբերվում էին: Դրանք ունեին կանխամտածված և համակարգված բնույթ, ինչը մինչ այդ երբեք չէր եղել:

Նույնիսկ Միացյալ Նահանգները չի ընդունում 1915 թ. ապրիլին դեսպան Հենրի Մորգենթաուի Վուդրով Վիլսոնին ուղղված ծանր գանգատը, որը հարկադրաբար առաջ է մղվում և աջակցություն գտնում բազմաթիվ հյուպատոսական զեկույցների հիման վրա:

Այսպիսով՝ բանը հասնում է հայերի ցեղասպանությանը: Ցեղասպանություն, քանի որ սպանությունները կատարվում են հայ հասարակությանը ոչնչացնելու հստակ ցանկությամբ: Եվ դեսպան Հենրի Մորգենթաուի հուշերը դառնում են այն աղբյուրներից մեկը, որին այս ողբերգական իրադարձության ուսումնասիրող գիտնականները դիմում են ապագայում[55]: 1915 թ. ցեղասպանությունը հետևանք էր բացառիկ ազգայնամոլական հակումների, ռասայական ատելության, տնտեսական հարցերի և կրոնական հայացքների տարբերության և այն ընդգրկում էր թե՛ ուղղափառ և թե՛ բողոքական հայերին:

---

[54] Միշտ տարբեր ազգային և կրոնական փոքրամասնություններն են, որ դիտվում են որպես վտանգ: Բավական է հիշել, թե ինչ տեղի ունեցավ 20-րդ դարում քրդերի, ասորիների և հույների հետ: Բայց հայերը երկար ժամանակ ճնշման էին ենթարկվում նաև այն պատճառով, որ բարգավաճող և հարուստ համայնք էին ներկայացնում:

[55] **Պ. Բալաքյան**, «Վառվող Տիգրիսը. հայերի ցեղասպանությունը և Ամերիկայի պատասխանը», Նյու Յորք, Harper & Collins, 2003:

ԳԼՈՒԽ II

XX ԴԱՐԻ ԱՐՏԱՔՍՈՒՄՆԵՐԸ. ԴՐԱՆՑ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿԱՄ ԱՌԱՋԸՆԹԱՑԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԸ

19-րդ դարում հայերի կրած կոտորածների (առանձին քաղաքներում և գյուղերում տեղի ունեցող կոտորածներ, որոնք շարունակվեցին մինչև 20-րդ դար) և 20-րդ դարում՝ Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում տեղի ունեցած և այսօր հայերի ցեղասպանություն անվամբ հայտնի կոտորածների միջև շարունակականության մասին տարբեր կարծիքներ կան: Վերջինս արդեն ուղղված չէր որոշակի քաղաքային խմբի դեմ, այլ ընդգրկում էր համարյա թե ամբողջ հայ հասարակությունը: Այսինքն՝ սա մի չլսված և աննախադեպ երևույթ էր, որը, ըստ որոշ մեկնաբանումների, հասունանում է հզոր իշխանություն ունեցող նոր Թուրքիայում՝ հեղափոխական խթանի միջոցով: Մինչդեռ ըստ այլ տեսակետի՝ այն հանդիսանում էր ութհարյուրականների վերջին հայերի առանձին համայնքներում կրած կոտորածների շարունակությունը: Այս թեմայով տարակարծությունները մինչ օրս շարունակվում են[56]:

Եվ դեռ մինչ օրս վիճելի է այն հարցը, թե ինչ անվանում պետք է տրվի հայերին ոչնչացնելու այս ցանկությանը: Շատերի կարծիքով դա ցեղասպանություն է՝ գենոցիդ, որը կազմված է genos՝ ռասա և լատիներեն caedes՝ կոտորած արմատներից: Բայց դեռ այսօր էլ Թուրքիան ժխտում է այն փաստը, որ մասսայական

[56] Հմմտ. **Մ. Ի. Մաչոտի**, «19-րդ դարում հայերի կրած հալածանքները», Հռոմ, Սոցիոլոգիական քննադատություն XLV, h. 177, 2011 թ. Գարուն, էջ 69-92:

կոտորածի ցանկություն է եղել: Ոչ էլ սպանված հայերի թվի հարցում են համաձայնության գալիս: Ամերիկացի դեսպան Հենրի Մորգենթաուն կարծում է, որ նրանց թիվը միլիոնից մի փոքր քիչ է[57]: Ըստ թուրքական աղբյուրների՝ այդ թիվը շատ ավելի փոքր է: Ըստ այլ աղբյուրների՝ միլիոնից էլ ավելի:

Եվ այս բարդ իրադարձությունների մեջ գիտնականների կարծիքով միայն մի բան է հաստատ՝ հայերի հուսահատ վիճակը: Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում նրանք հարյուրներով տեղահանվեցին և ոչնչացվեցին: Քչերն էին, որ կարողացան փախչել և գաղթի դիմել: Հակիրճ ձևով տեսնենք, թե որոնք են եղել ցեղասպանության փուլերը:

1. Բազմազգ Օսմանյան կայսրություն. ճգնաժամային իրականություն

Դադրյանը նշում է, որ 1909 թ. ապրիլին կրկնվող կոտորածներ են տեղի ունենում Ադանայում՝ այն հատուկենտ վայրերից մեկում, որը մինչ այդ պահը ջարդերի չէր ենթարկվել: Իր կարծիքով ողբերգության պատճառը տարբեր գործոնների զուգընթացությունն էր: Առաջին հերթին հայերի ուրախությունը երիտթուրքերի հաղթանակի, իրենց կարծիքով սահմանադրության ցանկալի սկզբունքների իրականացման առիթով, սկզբունքներ, որոնք ընդգծվում էին Իթթիհադի միջավայրում:

Բայց այն փաստը, որ հայերն արդեն իրենց հավասար էին համարում թուրքերին, բարկացնում է պահպանողականներին, որոնք գաղափարապես դեռ կապված էին հին վարչակարգին:

---

[57] Հմմտ. **Հ. Մորգենթաու,** «1913-1916 թթ. օրագիր», Միլան, Գուերինի և ընկերներ, 2010 թ.:

(Դեսպան Մորգենթաուի պատմությունը): Գովելի է այն փաստը, որ Գուերինի հրատարակչությունը հայկական հարցին վերաբերող մի շարք է բացել և թարգմանության է հանձնել Մորգենթաուի գրքի 2003 թ. հրատարակությունը, որը խմբագրվել է Վեյնի պետական համալսարանի կողմից:

Մյուս պատճառը շրջանի բարգավաճումն է: Հարձակումը երկու փուլով է ընթանում, որոնցից առաջինը տեղի է ունենում ապրիլի 1-ից մինչև 14-ը: Հարձակումը կատարվում է իշխանության օժանդակությամբ, որը իր զինանոցներն է բացում օսմանների առջև: Զինված և կազմակերպված հայերը կարողանում են ետ մղել նրանց և թշնամուն մեծաքանակ զոհեր հասցնել: Ապա Անգլիայի հյուպատոսության միջնորդությամբ զինադադար է կնքվում: Եվ այսպես սկսվում է երկրորդ՝ ավելի դաժան կոտորածը: Հազարավոր հայեր, ովքեր այդ ընթացքում զենքերը վայր էին դրել, սպանվում են, ողջ-ողջ այրվում, մասնատվում: Առաջին և երկրորդ փուլերի միջև (ապրիլի 14-27) մոտ 25.000 զոհ է լինում:

Եվրոպական մեծ տերությունները, ում նավերը խարսխված էին Ադանայի նավահանգիստ Մերսինում, միջամտելու հրաման չեն արձակում: Եվրոպայի անշարժությունը ևս մեկ անգամ պատճառ է դառնում, որ հետագա կոտորածները իրականանան:

Այս ընթացքում սրվում է Բալկանների հարցը: Եվ իսկապես, Բալկաններում Ֆրանսիական հեղափոխության պատճառով ազգայնական խմորումներ էին առաջացել, որոնք եվրոպական տերությունների կողմից այն աստիճան էին հրահրվում, որ վերջում պատերազմ է ծագում: 1911 թ. Իտալիային հաջողվում է գրավել Տրիպոլին և հայտարարել Լիբիայի միացման մասին (1912 թ.)՝ հիմք դնելով դեպի Աֆրիկա[58] հետագա ընդլայնմանը: Թուրքիայի համար էլ ավելի վատ ազդեցություն են ունենում 1912-13 թթ. բալկանյան պատերազմները, որոնց հետևանքները աղետալի են լինում օսմանյան իրականության համար, որի ամբողջականությանը վտանգ էր սպառնում:

[58] Ոչ առանց դժվարությունների և Օսմանյան կայսրության, ինչպես նաև Սանուսիայի եղբայրության կողմից դիմադրության: Վերջինս գտնվում էր այսպես կոչված Կանաչ լեռան (Կիրանաիկա) վրա, բայց բնակավայրեր ուներ նաև դեպի Չադ ընկած տարածքում: Այս թեմայով հմմտ. Ֆ. Կրեստի, «Մի՛ ցանկացիր ուրիշի հողը», Հռոմ, Carocci, 2011 թ.:

Հակասությունների ամենամեծ աղբյուրը թվում է, թե Մակեդոնիան է, որի բնակիչներն էին հույները, սերբերը, բուլղարացիները: Թուրքիան փորձում է վերաբնակեցնել այն մահմեդական ներգաղթյալներով և այնտեղից հեռացնել քրիստոնյաներին: Այս իրավիճակը վերամիավորում է սերբերին և բուլղարացիներին, որոնք մինչ այդ թշնամիներ էին և դաժանորեն պայքարում էին միմյանց դեմ (1885 թ.): Սա հիմք է ծառայում Բալկանյան Լիգայի համար[59]: 1912 թ. թուրքերի կողմից իրականացված կոտորածները Մակեդոնիայի Շտիպ քաղաքում, Սկոպյեի արևելքում, այսինքն՝ Կոչանիում, ապա նաև Սկոպյեի հարավ-արևելքում, ոչ մահմեդական փոքրամասնությունների հանդեպ թուրքերի անհանդուրժողականությունը, Բալկանյան երկրներում ամենուրեք տեղի ունեցող հանրահավաքների ավելացումը պատճառ են հանդիսանում, որ պատերազմ սկսվի Թուրքիայի դեմ, որի բանակը մի շարք անսպասելի և ստորացուցիչ պարտություններ է կրում: Սա դառնում է անպարտելիության առասպելի ավարտը: Սերբերն ու հույները հաղթանակը հաղթանակի ետևից են տանում, մինչդեռ թուրքերը ստիպված են զիջել քաղաքներ, տարածքներ, նահանջի դիմել: Նույնիսկ Սալոնիկն է անկում ապրում (1912 թ., նոյեմբերի 3):

Տարբեր արդյունքներով բարդ համաձայնագիր

Թուրքիայում իշխանության գլուխ է անցնում զինվորական կառավարություն, ի դեմս Էնվեր փաշայի, ով երիտթուրքերի ռազմական գործիչ էր: Ու պատերազմը վերսկսվում է: Բայց արդյունքները նորից չափազանց վատ են լինում թուրքերի համար: Ադրիանուպոլիսը և Ջանինը անկում են ապրում (1913 թ.

[59] 1912 թ. Դաշնակցությունը Սերբիայի, Բուլղարիայի, Հունաստանի և Մոնտենեգրոյի միջև էր, որոնք միավորվել էին Թուրքիայի դեմ:

մարտի 6)։ 1913 թ. մայիսին Լոնդոնում հաստատվում են նախկինում ընդունված որոշումները և այն դժվարին պայմանները, որոնց օսմանները ստիպված էին հարմարվել։ Դժգոհությունը մեծ է, քանի որ կայսրությունը կորցնում է բոլոր եվրոպական տարածքները՝ բացառությամբ Ստամբուլի։

Մասսիմո Կամպանինին գրում է, որ թեկուզ տարօրինակ հնչի, բայց այս իրավիճակը հզորացնում է Թուրքիայի ռազմական կառավարությանը և հետագայում թուլացնում օսմանյան իշխանության պահպանողական կառույցները[60]։ Հետևաբար հաջորդ տարիներին՝ 1913-1918 թվականներին երկիրը կառավարում են ռազմական առաջնորդներ, ինչպիսիք են Էնվեր փաշան, Ջեմալ փաշան և Թալեաթ փաշան, երրորդը երևի թե ամենահզորն էր։ Օսմանիզմը և արդիականացումը բնութագրում են այս շրջանը։ Բայց այս ընթացքում ցանկություն է առաջանում անկախացնել կայսրության կազմում գտնվող արաբական տարածքները։ Եվ ոչ միայն. Կամպանինիի կարծիքով Թուրքիայի ռազմական կառավարությունը նպաստում է մահմեդականության կենտրոնաձիգ իշխանության թուլացմանը նաև այն պատճառով, որ քաղաքական գործողությունները և ազգային ու պետական մակարդակում կիրառվող սիմվոլիկան տարածվում էին նաև աշխարհիկ հարցերում։

Հետագայում եվրոպական տերությունների միությունը ճեղքվում է։

Ռուսաստանին դուր են գալիս պատերազմի արդյունքները և դրա պատճառով առաջացած տարածքային փոփոխությունները[61], Անգլիան հայտարարում է, որ չի հակադրվի ռազմական

---

[60] **Մ. Կամպանինի**, մեջբերված ստեղծագործություն, էջ 32։

[61] Մեծ Բրիտանիայի հովանավորության ներքո կնքված զինադադարը ընդարձակ տարածքների անջատման պատճառ է հանդիսանում, քանի որ Հունաստանը գրավում է հարավային Մակեդոնիան և Կրետեն, մինչդեռ Սերբիան տիրանում է Կոսսովոյին և հյուսիսային Մակեդոնիային։ Մոնտենեգրոն էլ, իր հերթին, գրավում է Ալբանիայի մի մասը։

հաղթանակներով պայմանավորված այդ փոփոխություններին: Մինչդեռ այլ կարծիքի են կենտրոնական տերությունները, ովքեր անհանգստացած են այն հանգամանքով, որ Սերբիան կարող է Դուրես քաղաքում ափ ունենալ դեպի Ադրիատիկ, ինչն այնքան էլ չէր գոհացնում Իտալիային և Ավստրիային: 1913 թ. հունիս և հուլիս ամիսներին պատերազմ է սկսվում, որտեղ Բուլղարիան հակադրվում է նախկին դաշնակիցներ սերբերին և հույներին:

Այս վտանգավոր իրադրությունում տերությունները համաձայնության են գալիս Թուրքիայից նորից պահանջել ապարդյուն կերպով վկայակոչված բարեփոխումները, որոնց հայերը տասնյակ տարիներ էին սպասել: 1918 թ. փետրվարի 8-ի համաձայնագիրը թուրքերի համար անբարենպաստ հետևանքների նախագուշակ է լինում: Թուրքիան բոլորովին չէր ուզում իրականացնել այդ բարեփոխումները: Հայերը, ովքեր մնալով կայսրությանը հավատարիմ խորհրդակցության ուղի էին միշտ փնտրում՝ երկար ժամանակ է ինչ թուրքերի կողմից որպես վտանգավոր ներքին թշնամի էին դիտվում: Ռուսաստանի քաղաքականության փոփոխությունը, որ արդեն բարենպաստ էր պահանջված բարեփոխումների համար, համաձայնագրի պայմանները՝ ըստ որոնց օտարերկրացի գլխավոր տեսուչները համարվում էին այդ բարեփոխումների երաշխավոր, պատճառ են հանդիսանում, որ արդեն ստորացված, Բալկաններում պարտված և ներքին ընդվզումների պատճառով ավերված Թուրքիան զայրանա: Իսկ հայերը տեղ-տեղ ուրախանում են: Կարծում են, որ կոտորածների օրերն արդեն անցել են և նրանց ցանկությունը, որն է խաղաղ ապրել Թուրքիայում հավասար իրավունքներով, արդեն ճանաչվել և երաշխավորվել է: Մարդու պարտադրված իրավունքները ևս մեկ անգամ մեծ դաժանությունների պատճառ են դառնում:

Քաղաքական դաշտում քաղաքականության ձախողումից, թուրք իշխանություն ունեցող բազմազգ Օսմանյան կայսրության անկումից հետո ճանապարհ է բացվում խիստ ազգայնական ծրագրի համար, որը պետք է իրականացվեր միևնույն կուսակ-

ցության՝ Իթթիհադի կառույցների միջոցով՝ ներթափանցելով և ընդլայնվելով դեպի արևելյան տարածքներ, որտեղ հայերի ներկայությունը դեռ մտահոգիչ էր: Խոսքը գնում է Անատոլիայի և Արևելյան Թուրքիայի մասին:

1913 թ. հիմնադրվում է Թուրքական ուժի խթանման ասոցիացիան, որը նախատեսում էր բանակի վերապատրաստում, դրա կողքին նաև Ազգային Պաշտպանության Լիգան, որի պաշտոնական նպատակը տեսականորեն բնակչության խաղաղ կյանքն ու բարեկեցությունը ապահովելն էր: Իրականում դաշինք է հասունանում կուսակցության և բանակի միջև, ինչը տանում է սպաների քաղաքականացման, Իթթիհադի ամենախիստ անդամների պաշտոնի բարձրացման: Կարևոր է պատերազմի հարցերով նախարար Էնվեր փաշայի դերը, լինելով այդ նույն կուսակցության անդամ, նորից առաջարկ է անում բարձր պաշտոն ունեցող սպաների կողմից կառավարվող համառազմական միություն ձևավորել՝ մի յուրահատուկ կազմակերպություն, որի նպատակն է հետևել և չեզոքացնել ներքին թշնամիներին: Հենց նա է համարվում հայոց ցեղասպանության գլխավոր հերոսը:

2. Ներքին միատարրության անհրաժեշտությունը և հայերի տեղահանումը

Ինչպես նշվեց, երկար ժամանակ էր, ինչ Թուրքիայի և Գերմանիայի կապերն ամրացել էին: Այդ պատճառով զարմանալի չէ 1914 թ. օգոստոսի 2-ին այս երկու պետությունների միջև կնքված դաշինքը, որին հաջորդում է դաշինք նաև Ավստրիայի հետ: Այս դաշինքները միջոց էին հանդիսանում՝ մի ներքին գործողություն իրականացնելու համար, որի նպատակը Օսմանյան կայսրության էթնիկ կառույցը միատարր դարձնելն էր[62], իսկ այսպես կա-

[62] **Վ. Ն. Դադրյան**, մեջբերված ստեղծագործություն, 2003 թ., էջ 231:

ռելի էր վստահ լինել, որ անհրաժեշտության դեպքում դաշնակիցները կմիջամտեին: Այս վստահությունը արտացոլվում է կայսր Վիլհելմի տված հրամանների մասին վկայություններում, որոնցով նա հրամայում էր անտեսել հայերի կոտորածը, այն պաշտոնապես ժխտել: Գերմանացի լրագրողներին չէր թույլատրվում միջամտել ներքին կառավարչական հարցերին, լռություն պահպանել: Իսկ օտարերկրացիները չէին կարողանում հայրենիք ուղարկել անհրաժեշտ իրեր[63]: Գերմանիայի դեսպան բարոն Վանգենհեյմը, ով ըստ Մորգենթաուի շատ անգամ է փորձել դադարեցնել հայերի կոտորածը, պատասխանում է. «Ոչինչ չեմ անի հայերի համար»:

1914 թ. դեկտեմբերի 16-ի կայսերական հրովարտակը չեղյալ է հայտարարում փետրվարի 8-ի Համաձայնագիրը, որի հետ հայերը մեծ հույսեր էին կապում: Դրա հետևանքով եվրոպացի պաշտոնյաները, ովքեր պետք է հետևեին հայանպաստ բարեփոխումների հարցին, կորցնում են իրենց դերը: Արդեն ամեն կերպ փորձ էր արվել նվազեցնել այս պաշտոնյաների գործառույթները: 1916 թ. դեկտեմբերի 5-ին Գերմանիայի դեսպանին հայտնում են, որ Օսմանյան կառավարությունը առոչինչ է համարում 1856 թ. Փարիզի պայմանագիրը, 1871 թ.՝ Լոնդոնի հռչակագիրը և 1878 թ.՝ Բեռլինի պայմանագիրը: Բացի այդ, արդեն բազմիցս խախտվել էր այդ պայմանագրերի բովանդակությունը և դրա համար եվրոպական տերությունները ոչ մի պատժամիջոց չէին կիրառել:

---

[63] **Վ. Ն. Դաղբյան**, մեջբերված ստեղծագործություն, 2003 թ., էջ 232-234: Մորգենտաուն նույնպես պնդում է, որ Գերմանիան մեծ ներգրավվածություն ուներ տեղահանության հարցում: 1915 թ. տեղի ունեցած առանձին կոտորածների և տեղահանությունների վերաբերյալ լուրերը նրան հասնում են Թուրքիայում գտնվող ամերիկացի տարբեր հյուպատոսների զեկույցների միջոցով: Խոսքը մանրամասն պատմությունների, փրկված ականատեսների վկայությունների, լուսանկարների և միսիոներների ու դիվանագետների պատմությունների մասին է (Հ. Մորգենթաու, մեջբերված ստեղծագործություն, Ռոջեր Սմիթի նախաբան, էջ 27-28):

Երիտթուրքերի կողմից սպառնալից նամակներ են ուղարկվում հայ մամուլին, Կաթողիկոսին: Դրանք հայերի ոչնչացման նախագուշակ էին հանդիսանում: Այս մտադրությունը շուտով սկսում է գործել: Պաշտոնապես ազգային անվտանգության նկատառումներով, ապա նաև հայերի ենթադրյալ դավաճանությունների պատճառով որոշում է ընդունվում կայսրության արևելյան և հարավարևելյան շրջաններից տեղահանել հայ բնակչությանը:

Այսինքն՝ որպես պատրվակ պատերազմն է օգտագործվում՝ Անատոլիան հայերից ազատելու համար: Պատերազմը հաճախ է ֆոնային պատկեր հանդիսանում քաղաքական նկատառումներով ենթադրյալ ներքին թշնամիներին վերացնելու համար:

Այս թեմայով արված ամենաուշադիր և ժամանակակից ուսումնասիրությունները ընդգծել են Ներքին գործերի և անվտանգության ծառայությունների նախարարության Իթթիհադ կուսակցության Կենտրոնական կոմիտեի, ինչպես նաև Պատերազմի հարցերով նախարարության[64] պարտավորությունները, և նաև մամուլի միջոցով մի ընդարձակ տեղեկատվական ու քարոզչական արշավ հայերի կատարած կամ պլանավորած հանցագործությունների մասին: Նրանք մեղադրվում էին թշնամու հետ բանակցելու, իշխանության գլուխ կանգնած կուսակցության պատասխանատու անձանց սպանելու մտադրությունների համար[65]:

---

[64] Ակնհայտորեն խոսքը վերաբերում է նախարար Էնվերին, ինչպես նաև 2-րդ բաժանմունքի (Ռազմական տեղեկատվության ծառայություն) պետ Սեյֆիին: Ճիշտ է, որ ազգայնական երակները այդ շրջանում անցնում էին ոչ միայն Թուրքիայով, այլ տարբեր երկրներով: Թուրքիայում էթնո-կրոնական տարբեր խմբեր անկախության հարց են բարձրացնում, ինչը նրանց հասցնում է Օսմանյան կայսրության քաղաքականության հետ բախման, որտեղ ազգայնամոլությունը, պանթուրքիզմը և պանիսլամիզմը փորձում են միախառնվել (**Մ. Ֆլորես**, մեջբերված ստեղծագործություն, 2006 թ.):

[65] Այս միտքն են արտահայտում սկզբում «Սաբահ», ապա «Արիամարտ» օրաթերթերը (1918 թ., դեկտեմբերի 13):

Տեղեկատվության արժեքը, հաղորդակցության կարևորությունը համատարած ընդունվում են և դրվում են լավ և ողջամիտ շարժառիթների կողքին: Շրջանառվում են գաղտնի տեղեկություններ, որոնք դրդում են ցեղասպանության:

1914 թ. օգոստոսի սկզբին Թուրքիան «զինված չեզոքության» սկզբունքի մասին է բարձրաձայնում և ընդհանուր զորահավաք է հայտարարում: Սա ընդգրկում էր նաև շատ հայերի, որոնց տարիքը սկզբում սահմանվել էր 20-ից 45 տարեկան, ապա 15-ից 20 տարեկան և ապա տարեկան ավելի մեծահասակներ՝ այսինքն 45-ից 60 տարեկան:

Միացյալ Նահանգների դեսպան Մորգենթաուն, ով հայերի ցեղասպանության ամենաուշադիր վկաներից է, նկարագրում է, թե ինչպես էին ոչնչացվում այս վերջին տարիքային խմբի հայերը, ովքեր երթերի ժամանակ ստիպված էին թուրքերի սվինների և մտրակների ներքո ձյան միջով մեծ ծանրություններ տեղափոխել: Քչերին է հաջողվում հասնել նշանակման վայր, բայց միևնույնն է շուտով նրանք էլ են ոչնչացվում[66]:

Ընդհանուր զորահավաքից որոշ ժամանակ անց Թուրքիան իսկապես պատերազմ է հայտարարում, հարձակվում է Սև ծովի վրա գտնվող ռուսական զորքերի վրա, մինչդեռ հայերի հանդեպ ճնշումները շարունակվում են՝ հատուկենտ տեղեր ապստամբության հանդիպելով: Այսպիսով՝ գալիս է 1915 թ. ապրիլի 24-ը, երբ Ներքին գործերի նախարարությունը հրաման է տալիս ձերբակալել Իթթիհադի հանդեպ թշնամանք տածելու մեջ կասկածվող բոլոր հայերին: Այս ձերբակալություններին հետևում են սպանությունները՝ առանց որևէ դատի կամ պատժի ենթարկվելու: Մորգենթաուն գրում է.

---

[66] **Հ. Մորգենթաու**, «Դեսպան Մորգենթաուի պատմությունը», Նյու Յորք, Doubleday and Co., 1918 թ., ֆրանսերեն թարգմանված տարբերակ «Me´moires de l'ambassadeur Morgenthau», Փարիզ, 1919 թ.: Հմմտ. նաև «Գուերինի և ընկերներ» հրատարակչության տարբերակը, 2010 թ.:

«1915 թ. սկզբներին թուրքական բանակում կռվող հայ զինվորների կարգն իջեցվում է: Մինչ այդ նրանք զինյալների կոչում ունեին, իսկ այժմ զրկվում են զենքից և դառնում բանվորներ: Իրենց երկրին հրաձիգի կամ հեծելազորի կարգավիճակով ծառայելու փոխարեն նրանք վերածվում են բանվորների և բեռնակիր անասունների: Ամեն տեսակի բեռը ուսերին՝ նրանք ստիպված էին ուժասպառ թափառել Կովկասի լեռներում՝ ծանրության տակ օրորվելով և թուրքերի սվիններից և մտրակներից առաջ մղվելով: Երբեմն այդպես լծված ստիպված էին մինչև իրանը ձյան մեջ մխրճված ճանապարհ բացել: Բացօթյա կյանք էին վարում և եթե իրենց անդադար առաջ մղող տանջողները կարճատև հանգիստ էին շնորհում, ապա քնում էին մերկ հողի վրա: Քաղցած և հոգնած էին, ու եթե հիվանդանում էին, ապա ճնշողները տեղում լքում էին նրանց և մի պահ կանգ առնում, որ թալանեն վերջիններիս ունեցած չունեցածը և անգամ հագուստը: Իսկ եթե որևէ մոլորյալի ինչ-որ կերպ հաջողվում էր հասնել նշանակման վայր, ապա հաճախ նա էլ էր ոչնչացվում: Շատ անգամ հայ զինվորները ավելի ամբողջականորեն էին վերացվում, որովհետև արդեն սովորական էր դարձել սառնարյուն կերպով նրանց սպանել: Գործընթացը համարյա միշտ նույնն էր: Բռնում էին հիսուն կամ հարյուր հոգանոց խմբերի, կապում չորս հոգանոց խմբերով և տանում գյուղերից ոչ հեռու ամայի վայրեր: Հանկարծակիորեն նրանք սրի հարվածներ էին ստանում և նրանց ուղեկցած թուրք զինվորները մռայլ տեսքով ետ էին վերադառնում: Իսկ նրանց թաղելու նպատակով այնտեղ գնացածները համարյա միշտ մերկ դիակներ էին գտնում, քանի որ թուրքերը վերցնում էին բոլոր հագուստները»[67]:

---

[67] **Հ. Մորգենթաու**, մեջբերված ստեղծագործություն, էջ 216-217: Տեքստում հեղինակը երկուհազարանոց որոշակի խմբերի օրինակներ է բերում, ովքեր սովից և ծայրահեղ թուլությունից նվաղել էին և սպանվում էին՝ չնայած այդ առումով պաշտոնյաների խոստումներին և հավաստիացումներին: Հաճախ սպանությունների գործիք են հանդիսանում քրդերը:

Սակայն ամերիկացի դեսպանը ոչինչ չի գրում այն հայերի ճակատագրի մասին, ում կասկածում էին զենքեր թաքցնելու և հրամանի համաձայն դրանք չհանձնելու մեջ: Այս պարագայում սովորաբար տանջում էին: Մասնավորապես եկեղեցիներն էին թալանի առարկա հանդիսանում, քահանաները ծեծի էին ենթարկվում, ովքեր եթե չէին խոստովանում, որ զենք ունեն, ապա նրանց զինում էին, քաշ տալիս փողոց, որտեղ գազազած ամբոխի բաժին էին դառնում: Իսկ կանանց մերկացնում և մտրակում էին, եթե նույնիսկ հղի լինեին: Դեսպանը գրում է, որ կանանց նկատմամբ բռնությունները սովորական էին: Մորգենթաուն նշում է ամենահաճակի բնույթ կրող տանջանքները՝ սկսած ոտքերի տակ մտրակելուց մինչև տաք երկաթը կրծքին սեղմելուն և տաքացրած աքցաններով թարթիչները և մաշկի ծայրերը պոկելուն: Եվ ավելացնում է, որ հայերը արդեն սովորել էին թուրքերից զենք առնել, որպեսզի հետո կարողանան հանձնել և խուսափել ցավոտ և դաժան մահից[68]:

Հաջորդում է վերջին շրջանը՝ տեղահանությունը. 1915 թ. մայիսի 26-ին Ներքին գործերի նախարարը դիմում է Մեծ Վեզիրին և խնդրում հատուկ օրենք կիրառել, որը հնարավոր կդարձներ տեղահանությունները: Խոսքը «Ժամանակավոր տեղահանության օրենքի» մասին է: Այս գործողությունը Մեծ Վեզիրի կողմից ստորագրվում է մայիսի 29-ին, իսկ կառավարության կողմից ուսումնասիրության է ենթարկվում նույն ամսվա վերջին[69]: Գործնականում դա թույլատրում էր խմբերով տեղահանել այն մարդկանց, ովքեր կասկածվում էին դավաճանության, լրտե-

---

[68] Մեկ այլ թուրք պաշտոնյա Մորգենթաուին հաստատում է տանջանքի այս և այլ ձևերի մասին՝ դրանք համարելով գերազանց գաղափարներ և օգտակար միջոցներ: Չևդետ բեյի և Վանի վալիի անուններին են վերագրվում ամենամեծ ոճրագործությունները: Նրանցից վերջինը ձիու սմբակները հայերի ոտքերին ամրացնելու համակարգի ստեղծողն էր:

[69] Իրականում թվում է, թե օրենքի ոչ մի պաշտոնական հայտարարություն չի արվել, չնայած որ հետագայում այն ուժը կորցրած է համարվում:

սության մեջ, ինչպես նաև զինվորական տարբեր անհրաժեշտություններից դրդված տեղահանում, եթե զինվորական իշխանությունը վտանգավոր էր «համարում»[70] տվյալ իրադրությունը: Այսինքն՝ սա մի շատ լայն հայեցողություն էր, որ դադարեցնում էր ցանկացած սովորական օրենք: Որպես հետևանք՝ հայ ժողովրդի մեծամասնությունը տեղահանվում և բնաջնջվում է[71]: Հարկ է նշել, որ այս տեղահանության նպատակը հայերի ոչնչացումն էր և ոչ թե պարզապես վերջիններիս տեղափոխությունը, ինչպես օրինակ մի քանի տարի անց հրեաների դեպքում:

Այսօր տեղահանությունը իսկապես ճանաչվել է որպես ցեղասպանության կամ ինչպես ոմանք նախընտրում են ասել՝ մասսայական ոչնչացման ուժեղագույն տարրերից մեկը:

Դրան հաջորդող օրենքները վերաբերում էին տեղահանվածների գույքին՝ նշելով աճուրդում հնարավոր վաճառքի, ունեցվածքի պահպանման վայրերի և այլնի մասին:

Ամփոփելով նշենք, որ ըստ «Դոտչ Բանկի» տնօրենի, խոսքը գնում է բռնագրավում թույլատրող և կառավարության կողմից հայերի ունեցվածքը բռնագրավելու մասին լուրը ավետող մի նորմի մասին[72]: Սրան հակառակվում է միայն սենատոր Ռիզան, նա 1915 թ. շատ անգամ մերժողական դիրք է գրավում և նշում, որ հայերի գույքը չէր կարող լքված գույք համարվել, քանի որ նրանք ստիպված և հարկադրված են եղել լքել այն: Իր կարծիքով բռնագրավումը չի կարող թույլատրված լինել ոչ օսմանյան

---

[70] Բառը օգտագործվել է, զեկուցվել և ընդգծվել է Դադրյանի կողմից, **Վ. Ն. Դադրյան**, մեջբերված ստեղծագործություն, 2003 թ.:

[71] Տեղահանության ժամանակավոր օրենքը 1918 թ. օգոստոսի 4-ին իր հակասահմանադրական բնույթի պատճառով անվավեր է ճանաչվում: Բայց այդ ընթացքում հայերի կոտորածը արդեն ավարտին էր հասել:

[72] Մորգենթաուն նշում է Թալեաթի մի հարցազրույցի մասին, որտեղ նրանից խնդրում են ամերիկյան ապահովագրական ընկերություններից վերցնել հայկական ծագում ունեցող մարդկանց կյանքի ապահովագրության անվանացանկերը: Թալեաթն ասում է, որ հիմա, երբ հայերը զոհվել են, շահառուն պետք է կառավարությունը լինի:

բարոյական արժեքներով, և ոչ էլ օրենքով: Փաստորեն մոտ մեկուկես միլիոն մարդ կորցնում է իր ունեցվածքը և դա այն դեպքում, որ այս թիվը թուլացնում էր դիմակայության ամեն հնարավոր փորձ: Ըստ թուրքական աղբյուրների սպանված հայերի թիվը մոտ 800.000 էր: Այս թվին հարկավոր է ավելացնել նաև պատերազմի ընթացքում զոհված զինվորականների թիվը:

Ըստ ամենաստույգ պատմաբանների՝ Հենրի Մորգենթաուի «Օրագրում» նշվում է, որ գերմանացիների պատասխանատվությունը ակնհայտ է, թեկուզ միայն հայերին օգնության ձեռք չմեկնելու հարցում: Բացի այդ շատերը, որոնց թվում է Դադրյանը, Գերմանիային են վերագրում տեղահանությունը՝ որպես կոտորածի միջոց օգտագործելու առաջարկը[73]: Այս թեմայի շուրջ շատ հակասական կարծիքներ կան և այն մինչ այժմ շատ բանավեճերի կենտրոնում է գտնվում[74]: Սա Մարսելլո Ֆլորեսին համոզիչ չի թվում և նա ավելի խորությամբ է ուսումնասիրում այս վարկածը: Աղբյուրները այս վարկածի հավանական լինելու շուրջ կարող են կասկածներ հարուցել, բայց հնարավոր չէ որևէ հստակ բան ասել: Համենայնդեպս մինչ օրս հնարավոր չի եղել:

---

[73] **Վ. Ն. Դադրյան**, «Գերմանիայի պատասխանատվությունը Հայոց ցեղասպանության հարցում. պատմական ապացույցների մի ակնարկ՝ Գերմանիայի մեղավորության մասին», Վոթերթաուն, Blue Crane Books, 1996 թ.: **Հ. Կայզեր,** «Գերմանիան և Հայոց ցեղասպանությունը» ակնարկ՝ տպագրված Հայագիտական ընկերակցության ամսագրում, հ. 8, 1995 թ., էջ 130-132:

[74] Մարչելո Ֆլորեսը անդրադառնում է այս թեմային իր «Հայոց ցեղասպանություն» աշխատությունում, Բոլոնիա, Մուլինո, 2006 թ., և հատկապես 6-րդ գլուխ: Նրա կարծիքով հնարավոր է համաձայնության գալ Գերմանիայի բարոյական պատասխանատվության շուրջ, սակայն չենք կարող վստահ լինել, որ ցեղասպանություն կատարելու որոշման և իրագործման հարցում ուղիղ միջամտություն է եղել: Իհարկե, նրա կարծիքով մեղավոր էին զինված ուժերը, այսինքն՝ ոստիկանությունը և բանակը, ինչպես նաև քաղաքական ուժերի (բաղկացած կառավարությունից և «Միություն և առաջադիմություն» կոմիտեից) կողմից վերահսկվող ռազմականացված մարմինները (Հատուկ կազմակերպությունը), որ գաղտնիություն էին պահում ոչ միայն հայերի, այլ նաև հենց թուրք բնակչության արձագանքներից խուսափելու համար:

Տեղահանությունները ենթադրում են գյուղերի անհապաղ ամայացում, հայերի մեկուսացում և համակենտրոնացում: Ընդհանուր զորահավաքի անվան տակ դյուրին է դառնում հաջորդող փոխկապակցված ցեղասպանությունը:Այն գործի է դրվում ռազմական և ռազմականացված կազմակերպությունների կողմից և տեղի է ունենում Իթթիհադի անդամների ցանկությամբ:

Որպես գործիք է կիրառվում մի հատուկ կազմակերպություն, որը օժտված էր միջոցներով, զենքով և այլն, և նպատակը «հայկական հարցի» լուծումն էր: Դադրյանը նշում է, որ ղեկավարները մեծամասամբ նախկին կալանավորներ էին, ովքեր հատուկ պաշտպանություն էին գտնում Ներքին գործերի, Շնորհի ու Արդարադատության նախարարությունների կողմից, ովքեր պետք է որոգայթներ սարքեին տեղահանվածների պահակախմբի համար: Երբ խորհրդարանում այս թեմայի շուրջ քննարկում եղավ, այն արդեն վայր էր դրել իր մանդատը[75]: Հետագայում՝ հակասության ավարտին, մամուլն է ձայն բարձրացնում Հատուկ կազմակերպության պատասխանատվության մասին: Առաջին հերթին դա անում է «Հադիսատ» օրաթերթը, ապա նաև ընդդիմադիր «Սաբահ» օրաթերթը:

Այս ընթացքում կար նաև պատերազմի անհրաժեշտություններից ելնելով հայերի տեղափոխության վարկածը (պաշտոնապես խոսվում է տեղափոխությունից): Այս վարկածը համոզիչ և կարծես օրինական բնույթ ունի: Այսինքն՝ դա պաշտպանություն էր, հոգում էին նրանց կարիքները: Բայց իրականում դա անվերադարձ տեղահանություն էր: Հաշվի առնելով աշխատանքի տնտեսությունը, դժվար է քայլ առ քայլ հետևել այս հուզիչ իրադարձություններին: Բայց արդեն ոչ միայն վկայությունները, այլ նաև պաշտոնական աղբյուրները հստակ նշում են, որ հայ ժո-

[75] **Վ. Ն. Դադրյան**, մեջբերված ստեղծագործություն, 2003 թ., էջ 267, որին հաջորդում է «Հատուկ կազմակերպության մասին», հմմտ. նաև **Վ. Ն. Դադրյան**, մեջբերված ստեղծագործություն, 1993 թ.:

ղովրդին ոչնչացնելու մտադրություն է եղել, որն իրականացվելու էր թե՛ Անատոլիայի ամբողջ երկայնքով և թե՛ «կայաններ» կամ համակենտրոնացման ճամբարներ (լագեր) երկրորդական վայրերում կազմակերպելով, որոնք հատուկ կերպով ընտրվել էին փրկվածներին վերացնելու նպատակով: Տեղահանությունները շարունակվում են 1915 թ. գարնան և աշնան ամբողջ ընթացքում[76]:

Սովորաբար դրանք անսպասելի տեղահանություններ էին, որոնք փախուստի և նախապատրաստությունների ժամանակ չէին թողնում: Համենայնդեպս բացառություններ կային: Որոշ դեպքերում հայերին թույլատրվում էր իրենց ունեցվածքը նվազագույն գներով վաճառել թուրք առևտրականներին, որովհետև դրանք վաճառելու որևէ այլ հնարավորություն հայերը չունեին:

Վերջին տարիներին տպագրվել, թարգմանվել և շրջանառության մեջ են մտել փրկվածների պատմությունները: Դրանցում խոսվում է մյուսների ետևից չհասնցնողների հրաձգության ենթարկվելու, կիզիչ արևի տակ քայլելու, սովի և ծարավի, ոտքերի ժանտախտահարվելու մասին: Խոսվում է նաև ոջիլների մասին, որոնք հարձակվում էին ծայրահեղ պայմաններում գտնվող և այլևս պաշտպանվելու ունակություն չունեցող մարդկանց վրա, ինչպես նաև ժանդարմների կողմից կիրառվող բռնությունների և ծեծի, կանանց նկատմամբ բռնաբարությունների և բռնություններ-ի, նրանց հղիացնելու մասին: Այս միտումը լայն տարածում է գտնում նաև հաջորդ դարաշրջանում և ստանում է «էթնիկ բռնաբարություն» անվանումը: Պատմություններ կան, որ կանայք ստիպված էին լքել իրենց հարազատ երեխաներին, քանի որ այլևս ի վիճակի չէին դիմանալ: Մյուս կողմից, ուժասպառ լինելով՝ նրանք այլևս նրանց տանելու ուժ չունեին: Այլ պատմություններում խոսվում է ճանապարհի մեջտեղում հարազատների դիակները լքելու, ինչպես նաև ինքնասպանությունների

[76] Փրկվում են միայն Կոստանդնուպոլիս, Զմյուռնե և Հալեպ քաղաքները:

մասին: Խոսվում է նաև գործունյա և զարգացած տղամարդկանց կախվելու, ուրիշների՝ մանգաղներով, փոցխերով և սղոցներով զինված գյուղացիների բաժինը դառնալու մասին: Իսկ քրդերի և թափառականների արշավանքները լրացնում էին բացթողնվածը:

Բայց փրկվածներից մեկի՝ Գրիգորիս Բալաքյանի պատմությունը «Հայկական Գողգոթա» անվանումով, արդեն պատկերացում է տալիս հայերի ցեղասպանության դաժանագույն միջոցների մասին[77]:

Դաղրյանը պնդում է, որ հայերի ոչնչացման հարցում Վիլհելմ 2-րդի Գերմանիան էլ է պատասխանատու (փաստ, որ շատ կողմերից է մերժվել, թեկուզ հենց թուրքերի կողմից, ովքեր ցանկանում էին Գերմանիայի վրա բարդել ցեղասպանության պատասխանատվությունը՝ պարզաբանելով, որ դրա միտքը հղացել են գերմանացիները՝ ճակատի ներքին ամրապնդման նպատակով), իսկ բանակն էլ, գործելով հայերի կողմից իրականացված սաբոտաժի հաշվեհարդարը տեսնելու անվան տակ, իրականում բացահայտ մեղսակից է: Վերջիններիս բաժանվում են աշխատանքային գումարտակների, գտնվում են ուժեղ հսկողության տակ և դառնում են խիստ միջոցառումների առարկա[78]: Այս

---

[77] **Գ. Բալաքյան**, «Հայկական Գողգոթա: Նվիրվում է 1915-1918 թթ. հայոց ցեղասպանության հիշատակին», Նյու Յորք, Vintage books, Random house հրատարակչության բաժին, 2010 թ.: Առաջին անգամ առաջին մասը լույս է տեսնում 1922 թ., իսկ երկրորդ մասը՝ 1959 թ.: Հեղինակը ծնվել էր 1876 թ. ապրել է Օսմանյան Թուրքիայում և Գերմանիայում, որտեղ ճարտարագիտություն և աստվածաբանություն է սովորել: Գրքի նախաբանում նշվում է, որ մշակութային առաջնորդներից մեկն է եղել և այդ պատճառով 1915 թ. ապրիլի 24-ին թուրքական կառավարության կողմից ձերբակալվել է և տեղահանվել: Քիչ փրկվածներից էր, հաջողվել է Ֆրանսիայի հարավում Հայ Առաքելական եկեղեցու քահանա դառնալ: Մահացել է 1934 թ., Մարսելում:

[78] Սա պարզ է դառնում գեներալ Բրոնսարտի տեղահանության հրամանից, մի փաստաթուղթ է՝ հայտնաբերված Բրիտանական բարձրագույն կոմիսարիատի պաշտոնյաների կողմից և հավաստիությունը նույնիսկ թուրք

ամենի ելքն ու հետևանքը կոտորածն է լինում այնպես, ինչպես տարիներ անց հրեաներին վնասազերծելու քաղաքականությունը դառնում է ցեղասպանության պատճառ:

Այսօր դեռևս հայտնի չէ սպանված հայերի թիվը: Տարբեր վարկածներ կան սկսած մեկ միլիոն երկու հարյուր հազարից մինչև մոտ մեկուկես միլիոն մարդ, որոնց մեջ կան և՛ տղամարդիկ, և՛ կանայք ու երեխաներ: Այսօր դեռ վիճելի է այս կոտորածների պատճառների հարցը: Իհարկե բաղադրիչներից մեկը կրոնական ֆանատիզմն է: Եվ իրոք հայտնի է, որ այնտեղ, որտեղ պատճառները կապված են իշխանության և դրա կառավարման, ինչպես նաև գումարի հետ, ապա առաջանում են կրոնական գործոններ, իրավիճակը նստվածք է տալիս, հակասությունը՝ արմատավորվում, ինչի վառ ապացույցն են հետագա շատ հակասություններ, որոնք ծագել են Աֆրիկայում կամ Միջին Արևելքում 20-րդ դարի երկրորդ կեսին և 21-րդ դարի սկզբին: Քրիստոնյաների դեմ ուղղված կրոնական ֆանատիզմը ժողովրդի կոտորածների, թուրքերի և քրդերի կողմից կատարված սպանությունների բաղադրիչներից է: Բայց վերևում նշվեց, որ Թուրքիայում շատերը առանձնապես հավատացյալ չէին: Ավելին, նրանք հայտարարել էին իրենց աթեիզմի մասին: Այսինքն՝ վերջին պատճառը պետության շահին էր վերաբերում: Հայերի բարեկեցությունը երևի թե պայթուցիչի դեր է ունենում[79]:

հեղինակների կողմից երբեք կասկածի տակ չի դրվել: Լեպսիուսը խոսում է ոչնչացման միջոցով վախ տարածելու մեթոդի մասին:

[79] Սա բնականաբար չի նշանակում, որ չեն եղել թուրքեր, ովքեր ամբողջությամբ տեղյակ չեն եղել այդ փաստերին և որ նրանցից շատերը չեն փորձել օգնել հայերին: Եվ բազմաթիվ մարդիկ դրա մասին հետագայում վկայություններ են թողել: Հմմտ. Պ. Քյուչուկյան, «Ձայներ անապատից. հայ արդարներ և վկաներ», Միլան, Գուերինի և ընկերներ, 2000 թ.:

3. Քողարկում, բացահայտում

Գերմանիայի և Թուրքիայի պետությունների կողմից ամեն կերպ փորձ է արվում քողարկել իրադարձությունները, հանրության ուշադրությունը շեղել տեղի ունեցածից, չնայած որ գերմանացի դիվանագետները շատ անգամ են զեկույցներ ուղարկում, փորձում տեղեկացնել Արտաքին գործերի նախարարությանը և Կանցլերի գրասենյակին՝ հույս ունենալով դադարեցնել արյունահեղությունը՝ չնայած դեսպան Մորգենթաուի՝ հայերի օգտին կատարված ուժեղ և հայտնի փորձերին: Այս փաստը մեկ անգամ չէ, որ քննարկման է ենթարկվել նույն՝ Թալեաթի հետ:

Բժիշկ Հովհաննես Լեպսիուսը նույնպես գնացել էր Թուրքիա և կապ հաստատել Հայ Պատրիարքության, Միացյալ Նահանգների դեսպանատան և թուրք կարևոր մեկնաբանների հետ, կարողանում է վկայություններ և ապացույցներ հավաքագրել և *Գաղտնի Զեկույց* գրել, որը ուղարկվում է Ռեյչստագի անդամներին և տարբեր հանրային դեմքերի[80]:

Գերմանական կառավարությունը այնուամենայնիվ միջամտում է և բռնագրավում պատգամավորներին ուղղված օրինակները, իսկ հեղինակը ծանր ճնշման է ենթարկվում անգամ Հոլանդիայում, դեպի ուր փախուստի էր դիմել: Գերմանացի դեսպանը նույնպես միջամտում է և Լեպսիուսը պետք է խոստանար, որ չի անի և չի ասի որևէ բան, որ կարող է պատերազմի հարցում փոխզիջման գնալու պատճառ դառնալ: Պատերազմի ավարտին նրան է վստահվում արխիվների կարգավորման հարցը: Իհարկե նա դա անում է՝ ընդգծելով Թուրքիայի պատասխանատվությունը (և երևի թե նվազագույնի հասցնելով Գերմանիայինը):

---

[80] Վերֆելը իր գրքի 5-րդ գլուխը հենց հոգևորական Հովհաննես Լեպսիուսի և Էնվեր փաշայի հարցազրույցից է սկսում՝ հիմնվելով վերջինիս առնչությամբ կարծրացած ավանդույթի վրա:

Տասնյակ տարիներ անց Գերմանիայի պատասխանատվության հարցը դեռ վիճելի է: Մորգենթաուն համոզված է, որ Գերմանիան պատասխանատու է նաև գերմանացի դեսպանի ժխտողական դիրքորոշման և նրա՝ հայերի օգտին չմիջամտելու հարցում: Իսկ ուրիշները նախընտրում են խուսափել այս հարցից կամ տարբեր կարծիքներ են հայտնում: Իհարկե դժվար է այս հարցի շուրջ հստակ փաստաթղթեր գտնել:

Այսպես, 1919 թ. ծնվում է 444 փաստաթղթերից և 5 հավելվածներից բաղկացած հավաքածու, որը սկսվում էր դիվանագիտական և ռազմական նամակագրությունից: Նպատակը Գերմանիային արդարացնելը և Թուրքիայի պարտավորությունները ընդգծելն էր: Այսօր արդեն հայտնի է, որ դա կիսատ մի ստեղծագործություն է, քանի որ հեռացվել են այն բոլոր փաստաթղթերը, որոնք կարող էին ապացուցել գերմանացիների պատասխանատվությունը և գուցե նույնիսկ տնտեսական հետևանքներ ունենալ, ինչպես օրինակ փոխհատուցման պահանջներ[81]:

Իրավաբանության դոկտոր, գրող և բանաստեղծ Արմին Վեգները նույնպես երիտթուրքերի կառավարած Թուրքիայում տեղի ունեցած հայկական ողբերգության վկաներից է եղել: Հարյուրավոր լուսանկարներ նկարելով՝ նա կարողանում է փաստագրել, թե ինչ է տեղի ունենում արտաքսվածների ճամբարներում: Եվ ոչ միայն, քանի որ հավաքագրում է նաև միջնորդագրեր և նշումներ: Փորձում է իրավիճակի մասին տեղեկացնել Գերմանիայում և ԱՄՆ-ում: Նրան Թուրքիայից արտաքսում են և 1916 թ. նոյեմբերին կանչում Գերմանիա: Քանի որ կարողանում է իր հետ մի քանի լուսանկարչական ժապավեններ վերցնել, փորձում է համաժողովների և բանավեճերի միջոցով տեղեկացնել հայերի կոտորածի մասին: Եվ հրատարակում է «Անվերադարձ ճանա-

[81] Վ. Ն. Դադրյանի մեջբերված ստեղծագործության մեջ, 2003 թ., էջ 314 և շարունակություն, առկա է գերմանական փաստաթղթերի մի ճշգրիտ հետազոտություն:

պարհ», «Մարտիրոսություն նամակներում» աշխատությունները, որոնք պարունակում էին Դերզորի անապատից ընկերներին և մորը իր կողմից գրված նամակները: 1929 թ. գրում է նաև ԱՄՆ նախագահ Վուդրով Վիլսոնին՝ հայտարարելով հայերի ոչնչացման մասին՝ հույս հայտնելով, որ փրկվածների համար նոր հայրենիք կկառուցվի:

Այս ամենին հետևում է Ադոլֆ Հիտլերի իշխանության գալը և Վեգները, ով հայտարարում է ազգայնականության հակահրեական դիրքորոշման մասին, ապա ձերբակալվում է գեստապոյականների կողմից, ազատազրկվում և տանջանքների ենթարկվում[82]:

Հետագայում երկու ավստրիացի հյուպատոս հավաքագրում են ամբողջ հնարավոր տեղեկատվությունը: Նրանցից մեկը՝ Տրապիզոնից Էռնստ Կվիատկովսկին, գերմանական աղբյուրներից պարզում է, որ հայերի տեղափոխման նախնական պատվերը տվել է Գերմանիան: Իսկ մյուսը՝ Ադրիանուպոլսից Արթուր Շեվալիե Նադամլենզկին, նույն բանն է պարզում, բայց այս անգամ թուրքական աղբյուրից: Այս նորությունները, որոնց նրանք անդրադառնում են, իրականում մեծ զգուշություն էին պահանջում: Եվ միայն դրանք չէին, քանի որ այդ ընթացքում պարզ է դառնում, որ թուրք-գերմանական հարաբերությունները կապ ունեին 1914 թ. հունվարին հրեաներին Միջագետք արտաքսելու հետ[83]: Արդյո՞ք ռազմամոլության հետևանք է այս երկու ազգերի միավորումը: Գուցե պատճառը Վիլհելմ 2-րդի անձնական հա-

---

[82] Իր ազատ արձակվելուց հետո 1936-1937 թթ. գնում է Պոզիտանո: Մահանում է Իտալիայում, 1978 թ. մայիսի 17-ին: Լուսանկարներով հարուստ նրա փաստաթղթերը հայտնաբերվել են 1965 թ. և 1968 թ. նա Յադ Վաշեմի կողմից ստացել է «Արդար»-ի տիտղոս: Կովկասյան Հայաստանի մայրաքաղաք Երևանում նրա անունը կրող փողոց կա, իսկ նրա աճյունի մոխիրը թաղված է «Ծիծեռնակների բլուրի» (Ծիծեռնակաբերդ) հիշատակի պատի մեջ, այնտեղ, որտեղ կանգնած է Հայոց ցեղասպանության հուշարձանը:

[83] Իր 1914 թ. հունվարի համարում լուրը տարածում է ռուսական «Գոլոս Մոսկվի» պարբերականը:

մակրանքն է, որ նա տածում է Էնվեր փաշայի նկատմամբ: Այս հարցը դեռ երկար ժամանակ վիճելի է մնում: Ու դեռ այսօր էլ ամբողջությամբ չի լուծվել:

ԱՄՆ-ի նախագահին այս ընթացքում տեղեկացնում են: Մորգենթաուն գրում է.

«Երբ իշխանությունը հրաման տվեց հայերին արտաքսել, իրականում այդպիսով մի ամբողջ ռասայի էին մահվան դատապարտում»:

Բայց Միացյալ Նահանգներում գերիշխում էր ներքին քաղաքացիական պատերազմի վարկածը: Եվ մինչ այսօր այս հարցը չի լուծվել, քանի որ 2010 թ. մարտի սկզբներին Խորհրդարանի արտաքին գործերի հանձնաժողովը Վաշինգտոնում կարծիք է հայտնում, որ հայերի հանդեպ իրոք ցեղասպանություն է տեղի ունեցել, և Թուրքիայի վարչապետ Թաիր Էրդողանի պատասխանը իր դեսպանին հայրենիք կանչելն է լինում՝ նշելով, որ այդպիսի հայտարարությունը վտանգ էր ներկայացնում Միացյալ Նահանգների և Թուրքիայի միջև եղած հարաբերություններին[84]:

Իհարկե պատերազմը թույլ էր տալիս Թուրքիային այդ հարցի շուրջ որևէ բացատրություն չտալ: Իսկ անհրաժեշտության դեպքում հիշեցնում էր հայերի սխալները, ինչպիսիք են ապըստամբությունները, անկարգությունները: Ըստ գիտնականների՝ օսմանյան արխիվներում մինչ այսօր կարելի է փաստաթղթեր գտնել, որոնք վկայում են հայերի դեմ կատարված գործողությունների օրինական լինելու մասին: Ասում են, որ այնտեղ որևէ հանցավոր մտադրություն չի եղել: Ուրեմն ինչպե՞ս դա կարելի է

[84] Արդեն 2007 թ. այդպիսի կարծիք կար, բայց նախագահ Բուշին հաջողվել էր դադարեցնել բանավեճը և խուսափել ամբողջ Կոնգրեսի ձայներից: Միացյալ Նահանգների ներկայիս նախագահ Օբաման թվում է, թե իզուր էր փորձում խուսափել հանրային դիրքորոշումներից՝ հույսը դնելով Թուրքիայի վրա՝ որպես չափավոր իսլամի հետ կապող մի կամրջի: Բայց Խորհրդարանի կամ Սենատի կողմից ցեղասպանության ճանաչմանը ձայն տալը ակնհայտորեն վերջ կտար այս ենթադրությանը՝ հաշվի առնելով Թուրքիայի՝ Հանձնաժողովի կարծիքի դեմ ունեցած արձագանքը:

անվանել: Հետագայում ընդունել են, որ կոտորածները իրոք տեղի են ունեցել: Մի բան, որ Թուրքիան պաշտոնապես երբեք չի ընդունել և ճանաչել: Բայց Թուրքիայում գտնվող ամերիկյան տարբեր հյուպատոսություններ և տարբեր քրիստոնեական առաքելություններ փաստագրում են այդ մասին: *«Փրկվածները»* ստեղծագործության հեղինակները հիշեցնում են ԱՄՆ-ի պետության բաժնի ֆայլերի առկայությունը և կանգ են առնում հյուպատոս Ջ. Բ. Ջեկսոնի նշումների վրա, նա այդ ժամանակ գտնվում էր Սիրիայում՝ Հալեպում: Նա դեմ առ դեմ հանդիպել է հազարավոր հայերի հետ, ովքեր հասնում էին Թուրքիայից և պատմում, թե ինչ է այնտեղ տեղի ունենում: Այս և այլ նյութեր հետագայում ձեռք է բերել նաև դեսպան Մորգենթաուն: Այստեղ խոսվում է տիֆի համաճարակի, փրկվածների կենսական վատ պայմանների մասին: Նշվում է նաև քրդերի կողմից հարձակման ենթարկված մի քարավանի մասին, որտեղից վերջիններս ամեն ինչ թալանել էին: Այն աստիճան, որ հայերը ստիպված էին կիզիչ արևի տակ մերկ քայլել առանց հացի կամ ջրի:

Այս նյութերից բացի Դոնալդ Ֆ. Միլլերը և Լորնա Տուրյան Միլլերը նշում են նաև Բրիտանիայի նախկին դեսպան Ջեյմս Բրայսի շնորհիվ Առնոլդ Թոյնբիի կողմից հավաքված հավաքածուների մասին: Դրանք 149 զեկույցներ էին՝ դասավորված ըստ մարզերի, որտեղից հնարավորություն էր ծագում համեմատել առանձին քաղաքներին, առանձին գյուղերին վերաբերող պատմությունները:

1915 թ. մամուլը Մեծ Բրիտանիայում, Միացյալ Նահանգներում, Ավստրալիայում մեծ թվով հոդվածներ է հրապարակում: Այդ տարիներին թվում է, թե ցեղասպանության հետ կապված կասկածներ չէին կարող լինել:

Բայց շատ տարիներ անց՝ 1973 թ. ռուանդացի Նիկոդեմր Ռուհաշյանիկոն, զբաղվում էր ցեղասպանության հետ կապված հետազոտություններով, մարդու իրավունքների Հանձնաժողովի շրջանակներում և ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական

Խորհրդի առնչությամբ հիշեցնում է հայոց ցեղասպանության մասին, բայց թուրքական պատվիրակության կողմից ուժեղ ընդդիմության է արժանանում: Այն աստիճան, որ 1978 թ. հուլիսի 4-ին Հանձնաժողովին ներկայացրած զեկույցից որևէ հետք չի մնացել: Այն անհետացել է:

Դրան հետևում է ուժեղ հակադրության մի ժամանակաշրջան մի կողմից հայ քաղաքական կազմակերպությունների և մյուս կողմից՝ Թուրքիայի ժխտողականության միջև: Սրա հետևանքը թուրք դիվանագետների կողմից բազմաթիվ ահաբեկչական ակտերն էին, ինչպես նաև հայ զինյալ խմբերի ինքնաոչնչացումը (1975-1983 թթ.): Դատարաններում հայերը հաճախ մեղավոր են ճանաչվում: Բայց դրա շնորհիվ հիշեցնում են տասնամյակների ընթացքում իրենց ազգի ապրած վատ հիշողությունների, սխալների մասին:

1974 թ. Ազգերի մշտական դատարանը հայտարարում է, որ արտաքսումների և կոտորածների միջոցով հայ ազգի ոչնչացումը համարվում է ցեղասպանություն: Դրանում պատասխանատու է երիտթուրքերի կառավարությունը, որը պետք է իրական ճանաչի այն: Խոսքը գնում է այս հարցի առաջին և կարևոր ճանաչման մասին: Դրան հետևում է միևնույն ենթահանձնաժողովի կողմից լիազորված Բենջամին Վայթակերի կողմից գրված մի զեկույց: Դա *Revised and Updated Report in the question of the Prevention and Punishment of the Crime of Genocide* էր, որտեղ նորից խոսվում էր հայոց ցեղասպանության մասին: Վայթակերի զեկույցը նույնպես, չնայած ենթահանձնաժողովի կողմից ընդունված լինելուն, վերջինիս կողմից չի ներկայացվում հանձնաժողովին՝ որոշ պարբերություններում կատարված վերապահումների պատճառով, օրինակ՝ դրանցից մեկը վերաբերում էր պատմական ցեղասպանություններին: Հետևում են սուր քննադատություններ հայերի կողմից, ովքեր խոսում էին ՄԱԿ-ի կողմից ճանաչում գտած ցեղասպանության մասին և թուրքերի

կողմից, ովքեր ժխտում էին այն, ինչ տեղի է ունեցել և այդ փաստի իրականությանը համապատասխանելը:

Այս հարցի շուրջ առաջացած բանավեճի ներդրումը կատարում է Եվրախորհրդարանը (1985-1986 թ.): Միայն 1987 թ. հունիսի 18-ին այս օրգանիզմը, դատապարտելով որոշ հայ խմբերի ահաբեկչական ակտերը (ընդ որում հայերի մեծ մասն էին դա դատապարտում), ճանաչում է ցեղասպանությունը: 2-րդ կետում նշվում է.

«1915 և 1917 թթ. միջև տեղի ունեցած և Օսմանյան կայսրության հայ բնակիչներին վնասած ողբերգական իրողությունները համարվում են ցեղասպանություն համաձայն 1948 թ. դեկտեմբերի 9-ին ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված ցեղասպանության հանցագործության կանխարգելման և պատժի կոնվենցիայի»[85]:

Սակայն նշում է, որ չնայած խոսքը Օսմանյան կայսրությունում սկիզբ առած դրամայի մասին է, գործող վարչակարգի հանդեպ չի կարող մեղադրանք ներկայացվել և ոչ էլ այն կարող է վրեժխնդրության առարկա լինել: Բայց ավելացնում է, որ ճշմարիտ է այն փաստը, որ գործող կառավարության՝ հայոց ցեղասպանության ճանաչման մերժումը կարող է անհաղթահարելի խոչընդոտ լինել Թուրքիայի՝ Եվրամիություն մուտք գործելու հարցի համար[86]:

Բայց այսքանով չի վերջանում: Իվ Տերնոնը նշում է, որ 1985 թ. մայիսի 19-ին ԱՄՆ-ում «Նյու Յորք Թայմս» և «Վաշինգտոն փոստ» օրաթերթերը խորհրդարանին ուղղված երկու էջանոց ստորագրահավաք են տպագրում, որտեղ կային թուրք-ամերիկյան տարբեր կազմակերպությունների վեհաժողովների 60 անդամների ստորագրություն: Դրանց մեջ էր պատմաբան,

---

[85] **Իվ Թերնոն**, մեջբերված ստեղծագործություն, էջ 342-343:

[86] Դեռ 2011 թ. խոսվում էր լուծում չգտած խնդրի մասին, որը մեծ դեր ունի Թուրքիայի՝ Եվրոպային մոտենալու կամ դրանից հեռանալու հարցում:

Մերձավոր Արևելքի Փրինսթոնի համալսարանի պատմաբանության դոցենտ Բեռնար Լուիսի ստորագրությունը: Ստորագրողները բողոքում էին Խորհրդարանի որոշման դեմ՝ ըստ որի ապրիլի 24-ը համարվելու էր «մարդը մարդու դեմ անմարդկայնության» հիշատակի օր և ընդունելի չէին համարում հայերի ցեղասպանության մեղադրանքները: Ավելին, ասում էին, որ դեռևս հնարավոր չէ ուսումնասիրել շահառու բոլոր կողմերի աղբյուրները: Օրինակ՝ օսմանյան աղբյուրները տեսանելի չեն: Ուրեմն ի՞նչ ցեղասպանության մասին է խոսքը:

Եվ սա էլ դեռ ամենը չէ: Պրոֆեսոր Լուիսը 1994 թ. Փարիզում «Լը Մոնդ»-ին տված հարցազրույցում Թուրքիային անվանում է մահմեդականության դեմ ուղղված մի ամրոց և նրա՝ Եվրամիություն մուտք գործելուն ավելի քան բարյացակամ է վերաբերվում: Լրագրողի այն հարցին, թե ինչու թուրքերը չեն ցանկանում ճանաչել հայոց ցեղասպանությունը, պատասխանում է.

«Նկատի ունեք ճանաչել պատմության հայկական վարկա՞ծը»: Ապա պարզաբանում է, որ իր կարծիքով չի կարելի խոսել ցեղասպանությունից, քանի որ դրա համար կպահանջվեր կանխամտածված քաղաքականություն, հայ ժողովրդին համակարգայնորեն ոչնչացնելու որոշում: Մինչդեռ իրականում իր կարծիքով սովորական արտաքսման մտադրություն է եղել, և ոչ թե ոչնչացման:

Այս հայտարարությունը զարմանք և վրդովմունք է առաջացնում ֆրանսիացի մտավորականների շրջանում: Նրանցից երեսունը ուժեղ բողոք են գրում և նրան հիշեցնում, որ ոչինչ չի արդարացնում այն փաստը, որ իր մակարդակի գիտնականը երաշխավոր է կանգնում «երեկվա հանցագործների» կեղծիքին: Եվ պարզաբանում են, որ չնայած վտանգավոր է սխալ օգտագործել եզրույթը, մյուս կողմից էլ հարկավոր է ճանաչել այն այնտեղ, որտեղ անժխտելի է: Լուիսը 1994 թ. հունվարի 1-ին «Լե Մոնդ»-ի հետ հարցազրույցում նորից պատասխանում է և առաջարկում իր մեկնաբանությունը: Խոսում է հայերի արտաքսման մասնակի

բնույթի մասին, փորձում առաջ քաշել հայերի ենթադրյալ դավաճանության մասին և եզրափակում է նրանով, որ չկան օսմանյան կայսրության կողմից հայերին ոչնչացնելու ծրագրի հստակ ապացույցներ:

Այս պահին Ֆրանսիայի հայկական կազմակերպությունները համախմբվում են: Եվ պատմաբանի դեմ քաղաքացիական շարժում է սկիզբ առնում, որը հիմնվում է քաղաքացիական օրենսգրքի 1382-րդ հոդվածի վրա՝ ըստ որի յուրաքանչյուր ոք, ով մեղադրանք է ներկայացնում, պետք է կարողանա այն փոխհատուցել: Փոխհատուցման պահանջի մեջ նշվում է հիշողության լուրջ փորձի, ինչպես նաև փրկվածների և նրանց ընտանիքների նկատմամբ հարգանքի և կարեկցանքի մասին:

Փարիզի Վերաքննիչ դատարանը որոշում է կայացնում՝ ըստ որի պրոֆեսոր Լուիսը պետք է 10.000 ֆրանկ վճարեր Ֆրանսիայի Հայկական կազմակերպություններին, 4.000 ֆրանկ՝ Լայկրային՝ չհաշված վարչակարգի վճարումները: Այս վճիռը թվերից այն կողմ անհերքելի բարոյական արժեք ունի, քանի որ պատմաբանի ազատության թեման կապում է գիտնականների պարտականությունների և պատասխանատվությունների հետ: Լուիսը իր մեկնաբանությամբ հակադրվում է այնպիսի կարևոր փաստթղթերի, ինչպիսիք են Վայթակերի զեկույցը, Մշտական դատարանի վճիռը, Եվրախորհրդարանի բանաձևը: Մյուս կողմից նա դրանց դեմ մրցունակ փաստաթղթեր չի ներկայացնում՝ չնայած պնդում է, որ հայերի ցեղասպանության ոչ մի «հավաստի ապացույց» գոյություն չունի: Եվ հետո նա չի հետևում օբյեկտիվության և զգուշության իր պարտականություններին և կտրուկ կերպով է արտահայտվում մի այդպիսի նուրբ հարցի շուրջ[87]:

[87] 1995 թ. հունիսի 21-ի դատավճիռ, Փարիզի Բողոքարկման դատարան, առաջին բաժին, առաջին մասնաբաժանում:

Թերնոնի կարծիքով հայոց ցեղասպանության ժխտումը ժամանակի ընթացքում կձախողվի, քանի որ 60-ականներից այն կողմ ոչ հայազգի տարբեր գիտնականներ[88] են հետաքրքրվել այդ թեմայով՝ դրան մոտենալով տարբեր տեսանկյուններից, ինչպես նաև նորանոր աղբյուրներ են բացահայտել: Պատմաբանները, իրավագետները և սոցիոլոգները այն համեմատել են նաև Շոահի հետ, որն իր հերթին համարվում է ցեղասպանության նախատիպ: Դրանից համոզմունք է ծագում, որ հայոց ցեղասպանությունը ոչ միայն 20-րդ դարի առաջին ցեղասպանությունն է եղել, որ հետաքրքրել է Եվրոպային[89], այլ նաև օրինակ է ծառայել հետագա մասսայական ոչնչացումների համար: Բացառությամբ ազգայնամոլությամբ պայմանավորվածների[90], որոնք բանականորեն էին ծրագրվում (օրինակ՝ գնացքներ էին կիրառվում, որոնք պատրաստվում, ուղղորդվում, ժամանում և մեկնում էին ճիշտ ժամանակին) և ունեին հստակ սարքավորումներ (առնվազն երկրորդ փուլում), 20-րդ դարի հաջորդող մյուս ցեղա-

[88] Հայ չէ, օրինակ, Դոնալդ Է. Միլլերը, ով կնոջ հետ «Փրկվածները» գրքի հեղինակն է: Անշուշտ սկսել է զբաղվել հայերի ուսումնասիրությամբ և նրանց վերաբերյալ Մեծ Բրիտանիայում առկա փաստաթղթերի հետազոտությամբ՝ հետաքրքրվելով իր կնոջ մշակույթով և կրոնով, նրա ընտանիքի և ազգի հետ տեղի ունեցած իրադարձություններով: Սկսելով այստեղից՝ նա, որպես ուշադիր պատմաբան, առաջին հերթին գնահատում է արխիվային փաստաթղթերը: Ապա անցնում է փրկվածների հետ հարցազրույցներ կազմակերպելուն: Արդեն հետաքրքրված էր «բանավոր պատմությամբ» և խոսում էր Ստուդս Տերկելի կողմից այդ առնչությամբ արված աշխատանքները; Բայց դեռ չգիտեր այդ առումով մասնագիտացված ամսագրերի և «Բանավոր պատմության ասոցիացիայի մասին»: Այս իմաստով հայերի ուսումնասիրությունը նրա առջև մշակութային նոր հորիզոններ բացեց: Հետագայում գիրքը կարդում էին և թարգմանում: Այն շատերի ուշադրությունն է հրավիրում մի ողբերգության վրա, որը փորձում էին թաքցնել և ժխտել:

[89] Իրականում որոշ գիտնականներ նշում են հերերոների դեմ այսօրվա Նամիբիայի տարածքում գերմանացիների կազմակերպած նախորդ ցեղասպանության մասին:

[90] Բայց հարկ է հիշել, որ արդեն հայերի համար օգտագործված տեղահանությունը ցեղասպանական նպատակ է ունեցել նաև Երրորդ Ռեյխի տարիներին հրեաների և քոչվորների դեմ՝ ճամբարներում ապաստան գտնելուց առաջ:

սպանությունները իրենց չափազանցված զինամթերքով, քարոզչությամբ և թշնամի համարվողներին ոչնչացնելու գործողությունների առաջացմամբ հիշեցնում են հայերի ցեղասպանությունը: Այս առումով տարբեր կողմերից միտում կա հայերին համարյա թե ոչնչացրած ցեղասպանությունը համարել հաջորդ ցեղասպանությունների նախատիպ:

Այսինքն՝ ամեն ինչ լուծվա՞ծ է: Այդքան էլ չէ, քանի որ 2000 թ. նոյեմբերի 11-ին թերթերը զեկուցում են, որ Հովհաննես Պողոս 2-րդ Պապի կողմից հայոց ցեղասպանության ճանաչումից հետո Թուրքիայի և Վատիկանի հարաբերությունները վտանգի են ենթարկվում[91]: Պապի զեկույցում նշվում է.

«20-րդ դարը նշանավորվեց ծայրահեղ դաժանությամբ: Դարասկզբի հայերի ցեղասպանությունը դրան հաջորդած սարսափների նախերգանքը եղավ. երկու համաշխարհային պատերազմներ, տարածաշրջանային մեծաթիվ հակասություններ և ավերիչ արշավներ, որոնք դիտավորյալ կերպով միլիոնավոր հավատացյալների կյանք խլեցին»:

Այս խոսքերը թուրքերի կողմից ուժեղ բողոքի պատճառ են դառնում: Վատիկանում առաջին անգամ հայ նահատակների հիշատակին պատարագ է կազմակերպվում, որտեղ հանրային փաստաթղթերից մեկում «հայոց ցեղասպանություն» արտահայտությունն է գործածվում: Թուրքիան շարունակում է հակառակվել նմանատիպ հանրային հայտարարություններին: Շուտով նրան հաջողվում է Ամերիկյան Կոնգրեսում արգելափակել այս տենորի շարժումը: Խոսում է մոտ 300.000 զոհերի մասին՝ հրաժարվելով հայերի հայտնած թվերից: Ֆրանսիայի կողմից ճանաչումը անհանդուրժելի էր, մինչդեռ Իտալիայում նույնպես այդ հարցն է բարձրացվում, որտեղ Խորհրդարանում այդ թեմայի շուրջ բանավեճ էր սկսվել[92]:

---

[91] Խոսքը Քահանայապետի և հայկական եկեղեցու կաթողիկոս Գարեգին 2-րդի ընդհանուր հայտարարության մասին է:

[92] Լիգայի անդամ Ջանկարլո Պոլվերինին պահանջում է, որ հարցին անդրադառնան Եվրոպայի մակարդակով Նիսում կայանալիք հաջորդ հրավի-

Առանց անդրադառնալու Թուրքիայի կողմից այս արյունահեղության ճանաչման բազմաթիվ մերժումներին, կցանկանայի խոսել 2006 թ. մարտի 18-ին տեղի ունեցած մի դեպքի մասին, երբ Բեռլինի փողոցներում մոտ 2000 ազգայնական թուրքեր Գերմանիայի Խորհրդարանից պահանջում էին չեղյալ հայտարարել բանաձևը, որով Գերմանիան ճանաչում էր հայոց ցեղասպանությունը (ճանաչել է 2005 թ.): Հանրահավաքը տեղի էր ունենում Բեռլինի Թալեաթ փաշա շարժման աջակցությամբ, որը թուրքական աշխատավորական՝ Իշի Պարտիզիի մաս էր կազմում: Մեկնաբանները ընդգծում են այն փաստը, որ մյուս կազմակերպությունները և կուսակցությունները իրենց հեռու էին պահում, բայց նաև նշում են, որ փողոցներում հնչող կարգախոսներն այսպիսին էին՝ «Կանենք ամեն ինչ հայրենիքի համար» կամ «Հայրենիքը պաշտպանելուց բացի ուրիշ ոչինչ չենք արել»[93]:

րումի ընթացքում: Ազգային դաշնակցությունից Սանդրա Ֆեյին և Զախակողմյան ժողովրդավարներից Մարկո Պեցցոլին հույս են հայտնում, որ պատմաբանները կվերանայեն տեղի ունեցածը, և առաջարկում են հանդես գալ որպես միջնորդներ՝ հայերի և թուրքերի հարաբերությունների կարգավորման հարցում:

[93] Կազմակերպիչների թվում էր նախկին հավատարմատար Վուրալ Սավասը, հենց նա, ով տվել էր Հադեպ քրդական կուսակցությունը արգելանքի տակ դնելու գաղափարը: Նրա կարծիքով ցեղասպանությունը ճանաչելու դեպքում Գերմանիան Եվրոպայում բնակվող թուրք համայնքի կազմում բաժանումներ կառաջացներ և Թուրքիայի մասին դաժան ու արյունոտ պատկեր կստեղծեր՝ խոչընդոտելով շատ ներգաղթյալների ինտեգրման գործընթացին: Թուրքական կառավարությունը հանրահավաքի հանդեպ բացահայտ աջակցություն չի ցուցաբերել, բայց ոչ էլ հեռու է մնացել Մուհամեդ Թալեաթ փաշային հաճույք պատճառելու առիթից, ով, լինելով երիտթուրքերի ղեկավարներից, ցեղասպանության գլխավոր մեղավորներից էր և 1918 թ. փրկվել էր մահապատժից՝ ապաստան գտնելով հենց Բեռլինում: Միջազգային Կարմիր խաչը նրան տրամադրել էր նոր ինքնություն և անձնագիր, որով շրջել էր Եվրոպայում և տարածել Աթաթուրքի գաղափարները: Սակայն նրան հայտնաբերել և սպանել էր Թեհլիրջյանը՝ կոտորածների արդյունքում ընտանիքին կորցրած մի հայ երիտասարդ, ով արդարացվում է՝ համարվելով հոգեպես խեղված: Ըստ որոշ պատմաբանների մեկնաբանության՝ դա արվել է միջազգային մակարդակով ուշադրությունը հայերի ողբերգությանը հրավիրելուց խուսափելու համար:

Այսինքն՝ չնայած ամեն ինչին դեռ մինչ օրս ցեղասպանության ճանաչման դեմ ուժեղ դիմադրություն կա, որը, ցավոք սրտի, պատմականորեն ապացուցված փաստ է[94]:

Մինչդեռ 1991 թ. սեպտեմբերի 23-ին ծնված Հայաստանի Հանրապետության ցանկությունը պատճառ է դառնում, մեկուսացած վիճակից կտրվելու և 2010 թ. նորից Թուրքիային մոտենալու համար[95]: Մնում է տեսնել, թե ժխտված հիշողությունների ժառանգությունը թույլ կտա արդյոք, որ նոր և ավելի ներդաշնակ հարաբերություններ հաստատվեն: Թեկուզև ճիշտ է, որ Հայաստանում բնակվող հայերի վիճակը տարբերվում է աքսորյալ հայերի վիճակից, բայց վերջիններս ավելի են հակված պահպանել հուշերի ժառանգությունը, այն սերնդեսերունդ փոխանցել և տեղեկացնել՝ առանց մեկուսացման ենթարկվելու, բայց փոխարենը, առնվազն նոր սերունդների մակարդակով, լիարժեք ապրել իրենց հյուրընկալած հայրենիքում[96]:

Հմմտ. NOCERA, «Երիտթուրքերը Բեռլինում շքերթ են ունենում: Շքերթ Գերմանիայում հայերի դահիճ Թալեաթ փաշայի պատվին», «Մանիֆեստ», 2006 թ., մարտի 24:

[94] «La repubblica»-յի հանրագիտարանի 31-րդ հատորում, «L'atlante storico» բաժնում 1915 և 1916 թթ. հատվածում հայերի ցեղասպանությունը տեղ չի զբաղեցնում: Սակայն այս թեմայի շուրջ գրված է 2-րդ հատորում, որտեղ Հայաստանի մասին ներկայացվում է որպես Արևմտյան Ասիայի շրջան, որ այսօր բաժանված է Թուրքիայի, Հայաստանի և Իրանի միջև, ինչպես նաև նշվում է, որ Հայաստանը եղել է ԽՍՀՄ երկիր, իսկ հետո անկախացել է: Մեծ տեղ է տրված հայերի լեզվին և մշակույթին:

[95] 1918-1920 թթ. Հայաստանի Հանրապետությունը ապաստան է տալիս Թուրքիայից փախուստի դիմած իր հայրենակիցներին, ինչպես նաև սերունդներ ի վեր Ռուսաստանում բնակվող հայերին: Բայց 1920 թ. փոքր հանրապետությունը պաշտոնապես կլանվում է Ռուսաստանի կողմից: Տասնամյակներ ի վեր պայքարում է իր մշակույթը և իր պատմությունը պահպանելու, տարածելու և փոխանցելու համար, մինչև որ անկախ է հռչակվում: Դա մի փխրուն անկախություն էր, որ ամեն կերպ փորձում էր պաշտպանվել հավանաբար նաև այսօրվա Թուրքիային մոտենալու փորձերի միջոցով:

[96] Այս առումով անշուշտ հարկ է հիշել «Ագոս» ամսագրի խմբագիր, հայտնի լրագրող Հրանտ Դինքի դիրքորոշումը, ով նշում էր, որ Հայաստանից դուրս

ԳԼՈՒԽ III

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Այսօր հայոց ցեղասպանությունը ուսումնասիրելու, նրա մասին առավելագույնս պատկերացում կազմելու և շրջանառությունը, հոսքը, ուղղությունն ու հետևանքները հասկանալու համար թե՛ թուրքական և թե՛ հայկական աղբյուրները բազում են: Իհարկե դրանք խաչվում են միմյանց, ինչպես նպատակահարմար է, եթե չասենք նույնիսկ անհրաժեշտ է ցանկացած ուսումնասիրության դեպքում: Հատկապես այս դեպքում, որ շատ թղթեր են ոչնչացվել և բացակայում են թուրքական պաշտոնական աղբյուրներից շատերը: Երկար ժամանակ հիմնական աղբյուր էին համարվում տարբեր դեսպանատներին ուղղված հյուպատոսական, եկեղեցական և առաքելական զեկույցները: Այս ամենի վրա են հիմնվել Մեծ Բրիտանիայում (Առնոլդ Թոյնբի), Գերմանիայում (Հովհաննես Լեպսիուս), ԱՄՆ-ում (Հենրի Մորգենթաու) առաջին անդրադարձներն ու բողոքները:

Հյուպատոսական զեկույցներից և հայկական արխիվներից բացի, որոնք այսօր նախկինի համեմատ ավելի ուսումնասիր-

---

բնակվող հայերը մոտ հինգ ու կես միլիոն են կազմում՝ ի տարբերություն Հայաստանում բնակվող երկուսուկես միլիոնի: Եվ նրանք, ովքեր դրսում են ապրում, Հայաստանը հիշում են այնպիսին, ինչպիսին էր 1915 թ.: Դինքը գրում է. «Նրանց համար «թուրք» բառը դաժան, անմարդկային և չար բառերի հոմանիշն է: Նրանց և մեր՝ Թուրքիայում ապրող հայերիս միջև տարբերությունն այն է, որ մենք թուրքերի հետ ենք ապրում: «Թուրքի գործոնը», որ նրանց թունավորում է, իրականում մեր հակաթույնն է»: (**Վ. Հ. Դինք**, «Աղավնու անհանգստությունը», Միլան, Գուերինի և ընկերներ, 2008 թ., էջ 30): Այստեղ մեջբերված հատվածը 2005 թ. հոկտեմբերի 16-ին է գրանցվել:

ված են, իմ կարծիքով հարկ է նշել նաև գրական աղբյուրները: Գրականությանը հաջողվել է ավելի վառ գույներով վերարտադրել ժամանակի և տեղի մեջ հեռու թվացող իրադարձությունները՝ շարունակական թելեր գործելով այն ժամանակվա և այսօրվա առօրյա կյանքի միջև (Ֆրանց Վերֆել, Անտոնիա Արսլան): Իհարկե գրականությունը պատասխանում է նաև իր սեփական տեսակետներին, որոնք միշտ չէ, որ համապատասխանում են իրադարձությունների իրական ընթացքին, այլ կերպ ասած՝ իրադարձությունների օբյեկտիվ ընկալմանը: Մյուս կողմից սոցիալական գիտությունները երկար ժամանակ է, ինչ գիտեն, որ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ ցանկացած իրադարձություն զեկուցելիս հնարավոր չէ օբյեկտիվ լինել: Գոյություն ունեն տարբեր մեկնաբանումներ, բազմաթիվ տարբերակներ ու նույնիսկ ամենաբանական իրադարձություններից տարբերվող պատմվածքներ, ինչը որ ցանկացած, նույնիսկ ամենահամեստ փորձարկումը կարող է ապացուցել: Այսինքն՝ կարծում եմ, որ շատ բան կարելի է քաղել գրական ստեղծագործություններից՝ հասկանալու համար այնպիսի ցավոտ փաստեր, որոնք հասարակ տարեգրությունը ի վիճակի չի լինի ներկայացնել, այն դեպքում, երբ գրականությունը կարող է վերքեր բացել, որոշակի միջավայր ներկայացնել, փոխանցել հոգեկան վիճակներ, առաջարկել փոքր մանրուքներ, որոնք կբացեն ըմբռնման աշխարհը: Այսինքն՝ իմ կարծիքով պատմությունը կարող է օգուտ քաղել նաև ոչ արխիվային աղբյուրներից, ինչպիսիք են գրական աղբյուրները: Սա ավելի իրական է դառնում, եթե գրական ստեղծագործության նպատակը միայն տարեգրությունը չէ և եթե արխիվ մուտք գործելու դժվարություններ կան:

Այսօր գիտնականների տրամադրության տակ գտնվող հեղինակավոր աղբյուրների թվում են ինքնակենսագրականները և հուշերը: Հուշ ասելով նկատի ունենք որոշակի իրադարձությունների վերարտադրումը դրանց իրականացումից որոշ ժամանակ անց: Այս դեպքում հուշերը կարող են պատկանել

փրկվածներին կամ ավելի ճիշտ որևէ փրկվածի: Բայց ոչ միայն: Դրանք կարող են տպագրվել, երբ հեղինակները դեռ կենդանի են, բայց նաև կարող են երկար ժամանակ գաղտնի մնալ և տպագրվել հեղինակի մահվանից հետո (Ջանին Ալթունյան, Վահրամ Ալթունյան):

Հուշերը միայն փրկվածներին չեն վերաբերում: Դրանք կարող են նաև լինել այդ ժամանակաշրջանի «վկաների» կողմից գրված մի շարք պատմվածքներ, ինչպես օրինակ ամերիկացի դեսպան Հենրի Մորգենթաուն և Հովհաննես Լեպսիուսը: Նրանք հայ հերոսներ չեն, այլ մարդիկ, ովքեր ապրել են այդ իրադարձությունների անմիջական շրջակայքում: Դեսպան Մորգենթաուի, հոգևոր հովիվ Լեպսիուսի դեպքում նրանք մարդիկ են, ովքեր փորձել են կանգնեցնել, սանձել նրանց՝ թե՛ տեղում գործելով և թե՛ ԱՄՆ-ում և Գերմանիայում Թուրքիայում տեղի ունեցող իրադարձությունների մասին բարձրաձայնելով: Իհարկե գրական ստեղծագործությունները միմյանց հետ համեմատվում են պատմական նյութերի էջերով: Հուշերն իսկապես երբեմն սխալի տեղիք են տալիս երկարացնելով կամ կարճացնելով ժամանակաշրջանները և ստվերում թողնելով որոշակի փաստեր, որոնք չափազանց ցավոտ են հիշելու համար: Դրանք երբեմն լռության են մատնում նույնիսկ կարևոր անուններ և փաստեր: Բայց սոցիալական հետազոտողները լավ գիտեն փաստաթղթերից բացի նաև ինքնակենսագրականների ներուժը, ինչպիսիք են օրագրերը, նամակագրությունները, հուշերը:

Այս դեպքում այլ հուշեր ևս ունենք մեր տրամադրության տակ: Օրինակ՝ նրանց հուշերը, ովքեր հանձն են առել չմոռանալ և չներել, ովքեր իրենց անխուսափելի խնդիր են դարձրել հայերին կոտորողներին վերացնելը (Արշավիր Շիրագյան): Այս դեպքում ևս կարելի է դիմել այս գրական ստեղծագործություններին հասկանալու համար, թե հայոց ցեղասպանությունը ինչ մեծ բեռ է եղել ամբողջական սերունդների համար և ինչպես է արմատապես փոխել շատերի կյանքը:

Հասարակական գիտությունները սովոր են դիմել տարբեր աղբյուրների և պատմական արխիվներից բացի, դրանց թվում են բանավոր աղբյուրները: «Ազատ» կամ որոշակի ուղղվածություն ունեցող հարցազրույցը, որում, սակայն, զրուցակիցն ազատ է իր խոսացածի մեջ, իսկ հարցազրույց վարողն էլ զրուցակցին թույլ է տալիս ընդարձակվել, այսօր համարվում է մարդաբանական և սոցիոլոգիական հետազոտությունների գլխավոր միջոց[97]: Այն իսկապես որոշակի թեմայի շուրջ ընդլայնվելու, այն ուսումնասիրելու, որոշակի կողմի վրա կանգ առնելու, առանց կատարյալ ժամանակագրությանը հետևելու հուշերով ետ վերադառնալու հնարավորություն է տալիս զրուցակցին: Հետազոտողի կողմից նրան լսելը հարցազրույցի հաջողության համար որոշիչ դեր է կատարում: Եթե փոխհարաբերությունները հաջողվում են կամ հաջողվել են, ապա ունենում ենք թանկարժեք նյութ, որ նախկինում գոյություն չի ունեցել: Այսինքն՝ տարբեր աղբյուրներից օգտվելը և դրանց թվում նաև հարցազրույցների, անձամբ տվյալ անձանց կողմից առաջին դեմքով գրված պատմությունների վերաուսումնասիրությունը, որտեղ այդ անձինք ներգրավված են տարբեր եղանակներով և սովորաբար հանդիսանում են փրկվածների զավակներն ու թոռները՝ ի պատասխան տվյալ հետազոտողի տված խթանի, ուշադիր ընթերցողի համար կարող է բացարձակապես թանկարժեք լինել (Դոնալդ Ֆ. Միլլեր, Լորնա Տ. Միլլեր): Ոչ թե արդեն գոյություն ունեցող, այլ հետազոտողների պահանջով ակտիվացվող աղբյուրների մասին է խոսքը:

Պետք է կարողանալ դիմել ոչ միայն պատմական գրքերին, այլ նաև արխիվային աղբյուրներին: Բայց այս դեպքում սա ոչ միայն թուրքական կողմի՝ այս իրադարձությունները հիշելու,

---

[97] Հմմտ. «Կենդանի ձայներ. հարցազրույցը որպես փաստաթղթային աղբյուր», խմբագիր Մասսիմո Պիստակի, Հռոմ, Դոնձելլի հրատարակչություն, 2010., որից օգտվել են տարբեր մարդաբաններ, սոցիոլոգներ, պատմաբաններ և լրագրողներ:

դրանք ճանաչելու ոչ բավարար ցանկության, այլ նաև լեզվաբանական խնդիրների պատճառով դժվար է դարձել: Էլ չասած դրանք փոխանցելը: Այսինքն՝ արխիվ մուտք գործելն այս դեպքում ավելի խնդրահարույց է, քան այլ դեպքերում եղել է և հիմա էլ է շարունակում մնալ: Բացի այդ, քանի որ ես պատմաբան չեմ, չեմ խորհրդածել այդպիսի հետազոտությունների մասին, այլ օգտվել եմ այդ թեմայի շուրջ եղած այլ հայտնի հրատարակություններից: Մանավանդ, որ այսօր գոյություն ունեն ավելի ճշգրիտ ուսումնասիրություններ, տեղի ունեցածի ավելի ուշադիր վերարտադրություններ, որոնք հիմնվում են հայկական արխիվների վրա:

1. Պատմողական ստեղծագործություններ

Կարծիք կա, որ տասնամյակներ շարունակ հայերի ողբերգությունը սերնդեսերունդ է փոխանցել հատկապես Ֆրանց Վերֆելի՝ մեծ ճանաչում և հաջողություն ունեցած *«Մուսա լեռան 40 օրը»* գիրքը: Այն իտալերեն է թարգմանվել և 1935 թ. Մոնդադորի հրատարակչության կողմից տպագրվել «*I quaranta giorni del Mussa Dagh*» վերնագրով (մինչև 1948 թ. ունեցել է 7 հրատարակություն, ապա 1953 թ. անցում է կատարվել ավելի էժանագին տպագրության՝ «Սիրամարգի գրքերը» շարքում)[98]: Գիրքը պատ-

[98] Այլ հրատարակություններ են հետևում: Օրինակ՝ «24 ժամ արև» օրաթերթի 1997 թ. ապրիլի 20-ի համարում լույս է տեսնում գրքի վերահրատարակությունը Կորբաչո հրատարակչության Անդրեա Կազալենյոյի կողմից, ով ներկայացնում է Կրիստինա Բազեջոյի իտալերեն թարգմանությունը, բայց առանց որևէ հղում անելու գրքին և դրա հեղինակին: Սակայն դա անում է հենց Կազալենյոն՝ նշելով, որ Վերֆելը երիտասարդ տարիքում Կաֆկայի և Բրոդի Պրահայի շրջանին է հարել և հետագայում ապրել է Բեռլինում և Վիեննայում, ինչպես նաև գերմանական առաջին էքսպրեսիոնիզմի ներկայացուցիչներից է եղել: Ապա Կազալենյոն շարունակում է, որ Վերֆելը 1929 թ. ամուսնացել է Գուստավ Մահլերի այրի Ալմայի հետ: Չնայած որ Բրեխտը և Մուսիլը «Անո-

մում է հայերի ողբերգության մասին, ապա կանգ է առնում մոտ 5000 հայերի կողմից թվով գերազանցող թուրքերի դեմ իրականացված դիմադրության վրա, որը տեղի է ունեցել ամուր Մուսա Դաղի կամ այլ կերպ ասած Մուսա լեռան վրա, որը գտնվում է Անտիոքի ծովախորշի հյուսիսում: Արաբերեն դրա անունն է Ջեբել Մուսա:

Հեղինակը մեծ զգացմունքայնությամբ և ուշադրությամբ է անդրադառնում թեմային՝ որպես սկզբնակետ վերցնելով կաթոլիկ կենդանի հավատը: Առաջին գլխի ներածական մեջբերումը պատկանում է Սուրբ Հովհաննեսին:

«Տեր ի՛մ, դու որ Սուրբ ես ու ճշմարտասեր, մինչև երբ պետք է դատաստան ցույց չտաս և երկրի վրա ապրողների համար մեր արյամբ վրեժխնդիր չլինես»[99]:

Խոսքը պատմաբանի գրած գրքի մասին չէ, այլ մի վեպի: Բայց փաստերը, որոնց մասին խոսվում է, պատմական են՝ սկսած հայերի տեղահանումներից մինչև նրանց ոչնչացում, որը տեղի էր ունենում թե՛ ճանապարհի կեսին, քանի որ տեղափոխությունների պայմանները սարսափելի էին, և թե՛ ժամանման վայրերում: Հինգերորդ գլխի հիմքում ընկած է մի պատմական ավանդություն՝ կապված Էնվեր փաշայի և հեգևոր հովիվ Հովհաննես Լեպսիուսի հարցազրույցի հետ: Շարադրանքին նախորդող նշումներում հեղինակը բացատրում է, որ գրքի առաջին էսքիզները գրվել են 1929 թ.: Բուն շարադրանքը գրվել է 1932 թ. հուլիսից մինչև 1933 թ. մարտ: Այսինքն՝ բազմաթիվ այլ աղբյուրների ի հայտ գալուց ավելի առաջ:

բակ մարդ» աշխատությունում Վերֆելին համարում էին փոքր հեղինակ, Վերֆելը մինչ օրս հիշվում է իր բազմաթիվ քնարական ստեղծագործություններով, ակնարկներով, վեպերով և պատմվածքներով: «Մուսա լեռան 40 օրը», որ թարգմանվել է բազմաթիվ լեզուներով և տարբեր հրատարակություններ է ունեցել, դեռ այսօր հիրավի համարվում է նրա ամենահայտնի և գնահատված գիրքը: 1890 թ. Պրահայում ծնված Վերֆելը մահացել է Կալիֆորնիայում 1945 թ.:

[99] Հովհաննես, Հայտնություն, 6, 10:

Վեպի գլխավոր հերոսը մի հայ սպա է, ով ամուսնացել է ֆրանսուհու հետ և Հայաստան վերադարձել եղբայրներից մեկի հիվանդության և մահվան հետևանքով: Սկզբում ամուսինների մոտ ամեն ինչ լավ է, ապրում են Մուսա Լեռան ստորոտում գտնվող տոհմական ընդարձակ և շքեղ առանձնատան մեջ: Բայց հարևան քաղաք կատարած մի փոքրիկ ճանապարհորդությունից հետո Բրագադյանն իմանում է, որ իր բացակայության ընթացքում Անտիոքի որոշ պաշտոնյաներ խնդրել և բռնագրավել են իրենց թե՛ արտերկրի և թե՛ ներքին անձնագրերը՝ «տեսկերեները»:

Անտիոքում նրան հանգստացնում են: Դրանք պատերազմական իրավիճակով պայմանավորված ընդհանուր միջոցառումներ են, քանի որ գտնվելով չորրորդ բանակի թիկունքում, հարկավոր է վերահսկել տեղափոխությունները: Ինչու՞ անվեհեր մարտիկ, զինվորական Բրագադյանին դեռ չեն կանչել: Դա շուտով տեղի կունենա, օսմանյան կայսրության բոլոր քաղաքացիները հավասար են օրենքի առջև, սա է պատասխանը:

Ինչ-որ չափով հանգստացած՝ նա ուղղվում է դեպի հայկական գոտում գտնվող Անտիոքի շուկա: Նրա առջևում փոխարժույթի փոխանակման կետեր էին, գորգերի վաճառականներ և ոսկերիչներ, որոնց հանդեպ նա ոչ մի եղբայրական զգացում չէր տածում: Բաղնիքում պատահական կերպով լսում է զինվորական իշխանություններին ուղղված Նորին Գերազանցություն Էնվեր փաշայի՝ Զեյթունին վերաբերող հրամանների մասին մի խոսակցություն, որում նշվում էր melu'n ermeni' mille't՝ «դավաճան հայ ազգի» զինաթափության մասին: Հայ սպան կոպիտ արձագանք է տալիս՝ հիշեցնելով, որ Էնվեր փաշան Կովկասում իր մեծ պետությամբ փրկվել էր հենց հայերի շնորհիվ, որոնց ճանաչել էր sa՝dika ermeni' mille't, այսինքն՝ «հավատարիմ հայ ազգ»: Նա, ով թունավորում է այս ճշմարտությունը և անհեթեթ հերյուրանքներ է տարածում, թուլացնում է միությունը, պատերազմի ընթացքը, մեղադրվում է մեծ դավաճանության մեջ:

Բրագադյանը գլուխը բարձր է դուրս գալիս շինությունից: Բայց հասկանում է, որ վիրավորել է kaimaka՝m-ին և արդեն փակել է Անտիոք տանող ճանապարհը: Նրան հանգստացնում է իր հոր՝ ազգությամբ թուրք ընկերներից մեկին կատարած այցելությունը, ով պատրաստվում էր ճանապարհ ընկնել, ինչպես ինքն է ասում, որոշ երևույթներ քաղելու, հայերին փրկելու նպատակով: Հին ընկերը տեղյակ է Զեյթունից, ստորացուցիչ այն կարգից, որը հայ զինվորներին տրանսպորտում և փողոցներում էր օգտագործում: Նա Գաբրիել Բրագադյանին համոզում է նորից մտնել տոհմական տուն, խուսափել հարստությունից: Հետապնդումները սովորաբար սկսվում են ամենահզորներից և ամենահարուստներից:

Եվ Բրագադյանը տուն է վերադառնում աշխատասեր գյուղերի միջով՝ խորհելով ապագայի մասին: Թուրքերը հեռանում էին ճակատից և զինաթափում էին հայկական ջոկատները: Ինչու՞: Նրա մեջ եղած սպան հանգիստ չէր: Գաբրիելն այցելում է գյուղերը, տեղեկանում է զորահավաքի ենթակա տղաների քանակի մասին: 6000 հոգուն հասնում է 200 տղամարդ: Այս հարաբերակցությունը պայմանավորված է հայերին շատ անգամ բաժին հասած ծանր արյունալի մարտերով: Նա խոսում է քահանայի հետ և պարզում է, որ հայտնի հայերից շատերը Ստամբուլում ձերբակալվել են և ազատազրկվել: Ապա քաղցած և ուժասպառ՝ գալիս են առաջին փախստականները: Նրանց հետ երիտասարդ մի կին է, ում վրա ճանապարհին հարձակվել են, ինչի պատճառով զրկվել է ձեռքերն օգտագործելու կարողությունից: Նրանք Զեյթունից տեղահանվածների թվում էին[100] և արժանացել էին այնտեղի բնակիչների ճակատագրին՝ ուղղվելով դեպի Միջագետքի անապատ, ստիպված լինելով անցնել հազարավոր դժվա-

[100] Վ. Ոսգանյանի մոտ («Շշուկների գիրք», Ռովերետո-Տրենտո, Keller հրատարակչություն, 2011 թ.:) պատմվում է նաև Սահակ Շեյթանյանի, նրա կնոջ և երեխայի պատմությունը Միջագետքի կիզիչ անապատում (էջ 126):

րությունների միջով, քարքարոտ և ճահճոտ ճանապարհներով՝ առանց որևէ պաշտպանության և սովից, դժվարություններից և թշնամիների կողմից տանջահար: Փրկվել են օտարազգի առաքելական հայրերի շնորհիվ, ովքեր նրանց սայլ են տրամադրել, որը նրանց շուտով լքել է: Բրագադյանը մտածում է դիմել Ջելալ բեյին, Հալեպի վալիին, ով միշտ արդար է եղել հայերի նկատմամբ, բայց ամսագրում տպագրված մի փոքրիկ նորություն հայտնում է, որ վալիին ազատել են պաշտոնից:

Մուսա լեռան ստորոտում գտնվող գյուղերը չեն կարող չիմանալ, որ դոկտոր Հովհաննես Լեպսիուսը Էնվեր փաշայի հետ հարցազրույց ունենալու ճանապարհին էր: Նա վատ է ընդունում Գերմանիայի դեսպանատան, եվրոպական այլ ներկայացուցչությունների կողմից ընդունված նորությունները: Լեպսիուսը լավ է հիշում 1896 թ. կոտորածները, նա շտապում է դեպի շատ ցանկալի մի հարցազրույցի, որից շատ է վախենում: Պատրիարքը նրան երկար ժամանակ խորհուրդ է տվել. «Էնվեր փաշայի հետ խոսելիս խուսափիր երկար բարոյախոսություններից, հստակ պահանջներ ներկայացրու, սպառնա Գերմանիայի գովազդով, տնտեսական փոխհատուցմամբ: Քաղաքում այլևս չկան օտար տարբերանշաններ, գաղտնաբառը հետևյալն է՝ Թուրքիան թուրքերին»: Նա վերջապես հասնում է Ներքին գործերի նախարարություն, սպասում է պատերազմի նոր արքա Էնվեր փաշային, ով ժամանելուն պես սկսում է գովաբանել գերմանացիներին և պատերազմում ունեցած նրանց դերը, բայց սառնությամբ է պատասխանում դոկտոր Լեպսիուսի՝ ներքին շրջաններում, խաղաղ վիլայեթներում տիրող իրավիճակի հետ կապված պահանջներին: Եթե պատերազմ է, ապա դա անդրադառնում է ամբողջ տարածքի վրա: Չկան շրջաններ, որոնք ենթարկվում են տարբեր նորմերի: Ինքն ու իր մարդիկ միշտ փորձել են բարելավել հայերի վիճակը, վերականգնել հին համաձայնագրերով հաստատված արդարությունը: Բայց ճշմարիտ է, որ հայերը, ցավոք սրտի, խախտել են տված խոստումները, մեծ դավաճանությունների են

դիմել, ավելացել են կործանարար գաղափարները: Հայերը գաղտնի կապ են պահել Ռուսաստանի, դավադրություն են կազմակերպել Ֆրանսիայի և Անգլիայի հետ: Պատերազմի դատարանը նրանց առաջնորդներից ոմանց մեղավոր է ճանաչել և նրանք մահապատժի են ենթարկվել: Զուր է Լեպսիուսը նշում, որ նրանք ձերբակալվել են պատերազմից առաջ, հետևաբար դժվար թե վտանգի մեջ գտնվող հայրենիքի հանդեպ դավաճանություն գործեին: Գեներալը հստակեցնում է, որ Թուրքիան կարիք ունի ազատվելու բոլոր «հնարավոր» դավաճաններից: Իսկ Զեյթու՞նը: Դա Թուրքիայի պատմության ամենատխրահռչակ ապստամբություններից մեկն է: Եվ թուրքական կողմը մեծ թվով զոհեր է տվել: Սադրանքներ, հալածանքներ: Ակնհայտ է, որ դոկտոր Լեպսիուսը լավ տեղեկացված չէ: Ո՞րն է նրա տեղեկությունների աղբյուրը: Գերմանացի հյուպատոսնե՞րը: Ամերիկացի դեսպան Մորգենթաու՞ն: Մի հրեա՞: Հայտնի բան է, որ հրեաները միշտ էլ փոքրամասնությունների օգտին են հանդես գալիս:

Լեպսիուսը հիշեցնում է հայերի դեմ կատարված նախկին հետապնդումները: Դրանք չի կարելի համեմատել ներկայիս տեղահանումների հետ: Գեներալը հանգիստ պատասխանում է. «Ինչպե՞ս կվարվեր Գերմանիան իր հնարավոր ներքին թշնամիների հետ: Օրինակ՝ ֆրանկո-էլզասցիների, լեհերի, սոցիալ դեմոկրատների, հրեաների հետ: Արդյո՞ք նա նույնկերպ չէր վարվի: Լեպսիուսը հիշում է պատրիարքի խորհուրդները և այլ ոճի է անցնում: Առևտրի 90%-ը քրիստոնյաների ձեռքում է: Հայկական կազմակերպությունները էական նշանակություն ունեն երկրի բարեկեցության համար: Էլ չասած գյուղատնտեսության մասին: Հայերի մեջ շատ են բժիշկները, ճարտարագետները, փաստաբաններն ու այլ մասնագետներ: Ո՞վ է կարող նրանց փոխարինել: Գեներալը բացատրում է, որ նրան դուր չի գալիս այդ մտավորականությունը: Թուրքերը գուցե այդքան խելացի չեն, բայց միանշանակ սերում են հնագույն հերոսական ռասայից: Նրանք նոր կայսրություն կկառուցեն: Հայերի համար կա

արդյո՞ք խաղաղ լուծում: «Մարդու և ժանտախտի բացիլի միջև չի կարող խաղաղություն լինել»[101]: Բացի այդ, նա, ով հրամաններ է արձակում, պետք է հավատա իր սեփական որոշումներին: Ուրեմն թույլ տալ, որ Լեպսիուսը միջոցներ ձեռնարկի, հայերին միանա՞: Իհարկե ոչ: Լեպսիուսը կարող է Ամերիկայից և Գերմանիայից գումար հավաքել և այն տանել Էնվեր փաշային: Չի կարելի թույլ տալ, որ գերմանական կողմը, կամ այլ օտար ազգեր վերահսկողություն հաստատեն:

Մնացածը ձևականություններ էին և ողջույններ: Եվ մինչ Դոկտոր Լեպսիուսը հարցազրույցի բացասական ելքի պատճառով հիասթափված դուրս է գալիս, Էնվեր փաշան հանդիպում է Թալեաթ բեյին, ում ձեռքում Հալեպի նամակներն էին: Մեկ շաբաթվա ընթացքում Ալեքսանդրետտայի, Անտիոքի և ափամերձ տարածքի բնակչությունը կարող էր մեկնել: Ծածկագրված հրամանում նշված տեղահանությունների նպատակակետը բացակայում է:

Մինչ շատ հայերի ճակատագիրն է որոշվում, Մուսա լեռան գյուղերի բնակչությունը ընդունում է Բրագադյանի առաջարկները, հավաքում է գոյություն ունեցող զինամթերքը, սնունդն ու կենդանիներին: Եվ պատրաստություն է տեսնում դիմադրելու, լեռան ստորոտում պաշտպանվելու համար:

Վեպը շարունակվում է հարձակմանը սպասելու, տղամարդկանց պատրաստելու, կանանց աշխատանքների մասին պատմություններով: Խոսվում է փրկվածներին շատ շուտով բաժին հասած հիվանդության (բծավոր տիֆ) և սովի, ինչպես նաև ժամանակի ընթացքում առաջ եկող մրցակցության, նախանձի ու խանդի, անելանելի իրավիճակում գտնվելու փաստը գիտակցելու մասին: Բրագադյանի միակ որդու՝ երիտասարդ Ստեփանի մահվանից է խոսվում, ով մահ գտավ, երբ օտարազգի իշխանու-

---

[101] **Ֆ. Վերֆել,** «Մուսա լեռան 40 օրը», Միլան, Մոնդադորի, 1953 թ., 1-ին հատոր, էջ 151:

թյուններին փորձում էր լուր հասցնել թուրքական շրջափակմանը լեռան մոտ դիմադրող հայերի գոյության մասին: Իսկ հետո սկսվում է մեկ այլ ճակատամարտ, որ զոհերի, վիրավորների և հրդեհների պատճառ է դառնում: Ապա հրաշք է տեղի ունենում: Գուիչեն նավը, տեսնելով կրակի բոցերը, շեղվում է նախատեսված ուղղությունից, մոտենում է ափին, հրանոթ է արձակում, որը թուրքերին հրամայում է բարձրանալ: Հածանավը անգլո-ֆրանսիական թիմին է պատկանում և նրա առաջադրանքն է անատոլիական ափով դեպի Հյուսիս-արևմուտք նավարկելը: Առաջնորդ նավն արդեն տեղեկացվել է: Եվ շուտով սկսվում է փրկվածների՝ նավ բարձրանալը և նրանց փրկությունը:

Այսինքն՝ Վերֆելը, ով հայոց ցեղասպանության մասին աշխարհին հայտնելու հարցում ամենաներգրաված գերմանացիներից էր, հենց իր՝ Լեպսիուսի հետ մեծ ներդրում ունեն այն իրադարձությունների հաղորդակցման և ճանաչման մեջ, որոնք երկար ժամանակ փորձ էր արվում նվազեցնել և թաքցնել:

Վերջերս իրականության և վեպի ուրախ վերջաբանը, (կենդանի մնացած համարյա բոլոր հայերը փրկվում են ֆրանսիացիների կողմից) ցավոք սրտի, փոփոխության է ենթարկվել Ֆլավիա Ամաբիլեի և Մարկո Տոզատտիի կողմից արված հետազոտությամբ, ովքեր գնացել են փրկվածների հետքերով և պարզել, որ Սաիդ նավահանգստից վերջիններս ուղղվել են արևելյան լեգեոն, թուրքերի դեմ ճակատամարտեր ունեցել և հետագայում վերադարձել Հայաստան: Բայց այստեղ նրանք ևս մեկ անգամ ողբերգական իրադարձությունների են հանդիպել և կրկին ստիպված են եղել գաղթի ճանապարհը բռնել[102]:

---

[102] Գյուղերը ավերված և ամայացած են գտնում: Իրենց հուշերում պահպանված մրգառատ ծառերի և վեր խոյացող թթենիների փոխարեն ամենուր թփեր էին և փոշի: Բնակավայրերը ավերվել էին, սովը թակել էր մարդկանց դռները: Ձմեռն էլ իր հետ հիվանդություններ և համաճարակներ է բերում: Եվ սա դեռ ամենը չէ. ներքին հակասություններ են սկսվում (այս թեմայի շուրջ խոսում է նաև Վերֆելը): Բազմաթիվ մարդկանց ջանքերով կենսական պայման-

Այս անգամ դեպի Լիբանան, որտեղ «Բեքա հովտի Այնճար քաղաքում երկրորդ անգամ իրենց հողերից հեռացված Մուսա լեռան հայերի կողմից 1941 թ. հայրենիք է հիմնվում»[103]: Ըստ երկու լրագրողների, ովքեր իրենց երկարատև հետազոտությունները նվիրել էին Հայաստանին ու հայերին, այս ամենի համար պատասխանատու են հենց ֆրանսիացիները, նրանք, ովքեր առաջին տեղահանության ժամանակ որպես փրկարար էին հանդես եկել:

Ասում են, որ հայոց ցեղասպանությունը երկար ժամանակ քիչ հայտնի փաստ է մնացել: Այն տեղի է ունեցել հեռավոր հողերում, վերաբերում էր թուրքական մի երկրի, որտեղ իշխում էր մահմեդական հավատը: Թվում է, թե դա չէր վերաբերում Եվրոպային, Միացյալ Նահանգներին: Տասնամյակներ շարունակ միայն Վերֆելի «Մուսա լեռան 40 օր» գիրքն էր, որը լեռան վրա ահռելի թուրք զորքին դիմադրող 7 հայ գյուղերի մասին դյուցազներգությունը պատմելով, տարածում է այս ազգի զոհաբերությունների, բազմաթիվ հայերի ողբերգական ճակատագրի մասին: Եվ հարկ է նշել, որ գիրքը գրելու ընթացքում Գերմանիայում հրեաների համար ոչ բարենպաստ ամպեր էին կուտակվում:

Սոլ Ֆրեդլանդերը իր՝ «Նացիստական Գերմանիայի և հրեաների մասին» կարևոր աշխատությունում (1933-1938 թթ.), որն Իտալիայում լույս է տեսել 1998 թ. «Գարձանտի» հրատարակչության կողմից, նշում է, որ այդ ժամանակ Արվեստի և Գիտության ակադեմիայի անդամ Ֆրանց Վերֆելը պատրաստակամություն է հայտնել հավատարմության հայտարարագիր գրել Հիտլերյան

ները բարելավվում են, տուրիզմ է սկսում զարգանալ: Բայց միևնույն ժամանակ փոխվել էր Ֆրանսիայի քաղաքականությունը: 1939 թ. հուլիսի 23-ին Սանջակը վերջնականապես միացվում է Թուրքիային և հայերը ստիպված են նորից մեկնել:

[103] **Ֆ. Ամաբիլե, Մ. Տոզատտի**, «Մուսա լեռ. դավաճանված հերոսներ», Միլան, Գուերինի և ընկերներ, 2005 թ., էջ 137:

նոր վարչակարգին: Դա 1933 թ. էր և Ադոլֆ Հիտլերը դեռ նոր էր անցել իշխանության գլուխ:

Վերֆելն արդեն խնդրել էր անհրաժեշտ ձևը, երբ մայիսի 8-ին նրան տեղեկացնում են, որ միևնույնն է պետք է լքի Ակադեմիան: Նրա հաջորդ նամակները անպատասխան են մնում: Նրա որոշ գրքեր կրակի են մատնվում: Ֆրեդլանդերը ենթադրում է, որ նա ցանկանում էր վստահ լինել, որ «Մուսա լեռան 40 օրը» կտպագրվի, որը 1933 թ. վերջին իսկապես լույս է տեսնում Ռեյխում, բայց 1934 թ. այնուամենայնիվ արգելանքի տակ է դրվում:

Հետևաբար երկար տարիներ հայոց ցեղասպանության հարցը լռության էր մատնվել: Միայն փոքրիկ բացառություններ կային, որոնցից էր հենց այդ գիրքը:

Հետո աստիճանաբար սկսեցին երևան գալ փրկվածների հուշերը, ինչին կանդրադառնանք մի փոքր ուշ: Այսինքն՝ որոշ ուսումնասիրություններ նոր փաստաթղթերի տպագրության են տանում: Կտեսնենք նաև, որ որոշ մարդիկ, նույնիսկ հենց թուրքերից, ազգի դիվականացումից խուսափելու համար փորձել են ամեն կերպ օգնել նրանց, ովքեր ստիպված էին լքել իրենց քաղաքները, տները և ճանապարհ ընկնել, ճանապարհ, որ շատերի համար ելք չուներ: Քիչ են փրկվածները: Եվ նրանք սփռվել են ամբողջ աշխարհով՝ Եգիպտոսից մինչև Հունաստան, Եվրոպա: Ոմանք էլ հասել են հեռավոր Միացյալ Նահանգներ: Բազմաթիվ պատմաբանների կատարած պեղումների ողջունելի աշխատանքից այն կողմ, կարծում եմ, որ հայերի ողբերգության նկատմամբ մեր օրերում նոր ուշադրությունը անկասկած պայմանավորված է նաև գեղարվեստական գրականությամբ և կինեմատոգրաֆիայով:

Գեղարվեստական գրականության տեսանկյունից կարծում եմ, որ առաջին հերթին նշանակալից է Անտոնիա Արսլանի՝ «Արտույտների ազարակը» գիրքը[104] և հետագայում նաև Տրավիանի

[104] **Ա. Արսլան**, «Արտույտների ազարակը», Միլան, Ռիցոլի, 2008 թ. (2004 թ.):

եղբայրների համանուն ֆիլմը: Այս գիրքը հուշերի և գեղարվեստական գրականության միջև է գտնվում: Հեղինակը պատմում է մի ընտանիքի սփռվելը աշխարհում՝ հետևելով բոլոր իրադարձություններին՝ սկսած սովորական բարեկեցիկ կյանքից, որը տղամարդկանց համար անցնում էր աշխատավայրում և տանը, թղթախաղի սեղանի շուրջ, որսի գնալով: Իսկ կանանց համար գույնզգույն զգեստների, ասեղնագործության, սննդի, կահավորանքի, հույսերի ու երազների մեջ: Բայց հետո այս անտեղյակ և խաղաղ աշխարհում, որտեղ սպասում են Իտալիայում մեծ հաջողության հասած հեռավոր եղբոր խոստացված այցին, ով վերջապես մտադիր է վերադառնալ հայրենիք և անգամ որոշել է առանձնատուն կառուցել եղբոր ագարակի կողքին, տեղի է ունենում անսպասելի մի աղետ: Տղամարդկանց հեռացնում են իրենց բնակավայրերից և աշխատավայրերից: 1915 թ. ապրիլի 24-ն է:

Մի հարուստ դեղագործ մի քանի հոգու հետ կարողացել է փախչել և ուղղվել Ագարակ, որտեղ վերջին պատրաստություններն են տեսնում սիրելի եղբոր վերադարձի համար: Քիչ անց նրան են միանում նաև կանայք և երեխաները: Հանպատրաստից տոնի համար սեղան են գցում: Բայց զինվորները խանգարում են: Եվ դա դեղագործի, նրա ընկերների և արական սեռի ներկայացուցիչ մյուս հարազատների վերջն է լինում: Դեղագործին գլխատում են: Արյունը ցայտում է պաստառների և նրա կնոջ վրա, ում գրկում էր գտնվում մեռած ամուսնու գլուխը: Դիակները լցվում են աշխատանքների ավարտի համար նախապես փորված մի փոսի մեջ: Մի բժշկի էլ են գցում մյուսների հետ, ով դեռ կենդանի էր և բերանն էին դրել սեփական ամորձիները:

Փշուր-փշուր է լինում ապակյա արտադրանքը, պատուհանները, որոնք բերված էին Անգլիայից և ներկայացնում էին Դամայի և Ասպետի կերպարանքները և ունեին փարթամ գունատ ծաղիկներ, որոնք տերերի հպարտությունն էին:

Սա ձգձգված ավարտի սկիզբն էր: Գնդապետ եղբայրը փորձում է միջամտել, բայց արդեն շատ ուշ է: Միայն կարողանում է

բռնաբարությունից փրկել կանանց, ովքեր այնուամենայնիվ ստիպված են լինում մահացածների թաղումից հետո շտապ պատրաստություն տեսնել և մեկնել: Նրանց պահակախումբ է տրամադրում, բայց շուտով ինքն էլ զրկվում է պաշտոնից և ձապտիեները կանանց և երեխաներին տանում են դեպի հյուծում, սով և մահ... Հստակ հրաման էին ստացել.

«Գործողությունը պետք է կատարվի ժամանակակից ձևերով, վիրաբույժի ճշգրտությամբ: Հարկավոր է խուսափել հայերի հարևանների, թուրք ընկերների, ամերիկացի միսիոներների, հրեաների, և բազմաթիվ հույների մոտ տագնապ առաջացնելուց և նրանց՝ կարեկից տեսարաններով միջամտությունից: Մեկնումը պետք է տեղի ունենա սառը օրինաչափությամբ, ոչ ոք չպետք է հիշի սուլթանի ժամանակների արդեն վերացած մարդկային որսի մասին, երբ մահացած հայերի դիակները Էրզրումի և Կոստանդնուպոլսի փողոցներում հաղթականորեն փոսն էին գցում և մի մարդ էլ իրեն անմահացրել է արևմտյան թղթակիցների կողմից՝ հրացանին հենված կանգնելով դիակների կույտի վրա:

Այս դեպքում, ինչպես իթթիհադի անդամներն են բացատրում, պարզապես ուռուցք է հեռացվում՝ առանց անձնական թշնամության, ազգի հիվանդ մարմինը առողջացնելու, մաքրման նպատակով(...): Միայն հարկավոր է կարգին հետևել, գործի անցնել նախատեսված օրերին, քաղաքում մեծ իրարանցում չստեղծել: Ամեն ինչից զատ տեղահանությունը պետք է խստությամբ իրականացվի, պրուսական ձևով»[105]:

Այստեղ տեղահանությունը երկար օրեր, անքուն գիշերներ է տևում: Բազմաթիվ էջեր են լցված համարձակ, նախնական, անտրամաբանական հույսերով, որոնք փոխվում են մռայլ հրաժարականով: Շատ է խոսվում թալանից, կանանցից, երեխաներից և բռնություններից: Գողանում էին դեռ մնացած հատուկենտ իրերը, որոնց թաքցրել էին երեխաների մազերի մեջ կամ ավելի

[105] **Ա. Արսլան**, մեջբերված ստեղծագործություն, 2008 թ., էջ 128-129:

վտանգավոր թաքստոցներում[106]: Հրաման էր տրվել չօգնել հայերին: Ճանապարհին գտնվող գյուղերի բնակիչները ոչինչ չունեին, բայց ձապտիեները միևնույնն է խոչընդոտում էին շփման ցանկացած հնարավորություն: Եթե նրանք հեռանում էին, ապա դա արվում էր քրդերին արշավանքի հնարավորություն տալու համար: Պիստակներով լի պարկը, որ մնացած վերջին իրն է, բաժանվում է մեծերի և փոքրերի միջև ու համտեսվում: Հուղարկավորություններին լացող մի կին, մի մահմեդական մուրացկան և մի հույն քահանա միակ մարդիկ էին, ովքեր փորձում են սնունդ տալ և ժամանակավորապես սփոփել տեղահանվածներին: Եվ չնայած դիակներով լի փողոցներին, տարածված համաճարակներին և պատերազմի վատ ընթացքին՝ կրկին հույս է արթնանում հասնել Հալեպ:

Սակայն այս քաղաքից՝ Հալեպից, փախչում էին բոլոր այն հայերը, ովքեր դեռ դրա հնարավորությունը ունեին: Հրամանագրերով, հեռագրերով, դիակներով, տեղահանվածների ճամբարներով և հիվանդություններով լի մի քաղաք: Ավելանում է նաև Ջեմալ փաշայի նյարդային լարվածությունը, ով գտնվում էր Հալեպում:

Բարեբախտաբար ընտանիքից մի քանիսը փրկվում են ֆրանսիական հյուպատոսության աշխատակից մի կնոջ շնորհիվ: Քեռու նկուղում մեկ տարի ացնկացնելուց հետո նրանք գերմանական անձնագրերով մեկնում են Վենետիկ՝ դեպի փրկություն, դեպի ընտանիքի մի մաս, որ երբեք չեն տեսել, դեպի մի հորեղբայր, ով դեռ փոքր տարիքում մեկնել է Հայաստանից և

[106] Քանի որ հայկական ընտանիքներում դեռ կենդանի էին նախորդ սպանությունների հիշողությունները, կանայք տունը լքելուց առաջ վերցնում էին տեղափոխման ենթակա բոլոր իրերը՝ սկսած Մարիա Թերեզայի թալերներից մինչև թագուհի Վիկտորիայի ստերլինգները և մինչև անգամ հազվագյուտ ֆլորիններ ու վենետիկյան ցեխիններ: Թանկարժեք քարեր ունեցողները վերցնում էին նաև դրանք: Խոսքը փոխանակման ենթակա ապրանքի մասին էր, ինչը որոշ մարդկանց մինչև ճանապարհի վերջ գոյատևելու և սովամահ լինելուց խուսափելու հնարավորություն կտար:

այլևս չի վերադարձել: Եվ որի աննախադեպ այցը կանխվել էր: Գնում են դեպի նրա կյանք, մի անծանոթ երկիր, դեպի մի կոմսուհի մորաքույր, ով գուցե այնքան էլ գոհ չի լինի ճակատագրի այս տարօրինակ անակնկալից: Գալիս են աղքատ, փախստական հայ բարեկամներ, ովքեր այդ տուժած վիճակում այնքան էլ պատրաստ չեն մուտք գործել իտալական հասարակություն:

Արսլանի այս վեպը շատ հուզիչ է: Այն նաև իր ընտանիքի պատմությունն է, այնպես, ինչպես պատմել է իր պապիկը: Իտալիայում մեծացած մի հորեղբայր, ով 13 տարեկանում մեկնել էր Վենետիկ՝ հայ երիտասարդ տղաների համար նախատեսված Մուրադ-Ռաֆայելյան վարժարանում սովորելու նպատակով: Այս հորեղբայրը այլևս երբեք չկարողացավ հայրենի փոքրիկ քաղաք վերադառնալ և նորից հանդիպել սիրելի եղբորը ու ընտանիքի մյուս անդամներին: Այս հորեղբայրը երազում էր հարազատների ագարակի հարևանությամբ առանձնատուն գնել: Մինչդեռ սփյուռքում ապրող մորաքրոջ մասին ոչ մի պատմություն երբեք չի պատմվել: Նա չէր ցանկանում հարազատների հետ խոսել ողբերգական այդ օրերի մասին և միշտ մերժում էր վերհիշել այն իրադարձությունները, որոնց պատճառով շատ հարազատների և ընկերների էր կորցրել:

Եթե տարիներ շարունակ Վերֆելի վեպն էր պատմում հայերի ողբերգության մասին, ապա այժմ Արսլանն է անմիջական և արդյունավետ ձևով հիշեցնում և տեղեկացնում հայկական սփյուռքին: Նրա գրքից ծնվել է Տավիանի եղբայրների ֆիլմը: Իսկ պատկերների խաղացած մեծ դերը հայտնի բան է:

Ապա լույս է տեսնում Արսլանի «Զմիռնեի ճանապարհը» ստեղծագործությունը[107], որը սկսվում է «Արտույտների ագարակը» վեպի ավարտից և ներկայացնում է որոշ փախստականների անցած ճանապարհը: Պատմությունը սկսվում է 1916 թ.: Եվ կարող ենք հետևել այս ընտանիքի հատուկենտ փրկվածների

[107] **Ա. Արսլան**, «Զմիռնեի ճանապարհը», Միլան, Ռիցոլի, 2009 թ.:

փախուստի ճանապարհին: Փախուստ, որ կայացավ 3 հուսահատների կողմից. կաղ մուրացկան, ում հարուստ ընտանիքը բազմիցս էր օգնել, հուղարկավորություններին լաց լինող հույն Իսմենե և քահանա Իսահակ: Նրանց շնորհիվ ամենաերիտասարդները՝ պատանի Նուբարը (որ մահից փրկվել էր կանացի շրջազգեստի շնորհիվ) և երեք աղջիկներ, որոնց հաջողվում է Հալեպից փախչել Իտալիա և հասնել հորեղբայր Երվանդին և նրա ընտանիքին: Հանդիպում են մանկուց Իտալիայում բնակվող հորեղբորը, ով այլևս երբեք չէր վերադարձել հայրենիք: Նա դաստիարակվել էր բոլորովին այլ մշակութային պայմաններում, ամուսնացել էր իտալուհի ազնվականի հետ (հորեղբոր կոմսուհի կին), ով գուցե այնքան էլ չէր ոգևորվել այդ անսպասելի բեռից: Այս երիտասարդները անցնում են այն դժվարությունների միջով, որոնց մարդը հանդիպում է օտար երկիր ժամանելիս՝ հարմարվելու, ընդունվելու և ընդունելության պակասի խնդիրներով: Միջմշակութային խնդիրներով: Իսկ այս ընթացքում ի՞նչ է պատահում Հալեպում մնացածների հետ: Արդյո՞ք նրանց հաջողվում է նոր կյանք սկսել, թե ստիպված են լինում ետ վերադառնալ: Ստեղծագործությունը մեզ է ներկայացնում քաղաքի դժվարություններով լի մի ժամանակաշրջան, երբ քարավանները հյուծված վիճակում հասնում էին այնտեղ: Շատ էին հայերը, ովքեր վշտից ինքնասպան էին լինում և մահանում Հալեպի շրջակայքում: Երեխաների հետ որտե՞ղ փրկություն գտնեին: Գրքում խոսվում է սովահար մարդկանցով լի որբանոցների մասին, որտեղ ավետարանական միսիոներների գործունյա կանայք փորձում էին օգնել ուժասպառ եղած բնակչությանը: Հայտնվում են չարացած և նյարդային թուրք զինվորներ, որոնցից հարկավոր էր ամեն կերպ խուսափել: Վտանգ կար, որ կարող է նորից ստիպված լինեն ուղղվել սիրիական անապատ՝ մինչև Դերզոր: Հարկավոր է թաքնվել: Բայց դժվարություններ ունեն նաև հենց իրենք՝ անձեռնմխելի օտարերկրացիները: Անհասկանալի հրամաններ են գալիս գերմանացիների ղեկավա-

րած մանկատները փակելու մասին, որտեղ ապաստան են գտել նաև այս ստեղծագործության թշվառ հերոսները: Մանկատունը հարկավոր է տեղափոխել Զմիռնե: Իհարկե գերմանացի հյուպատոսը կուղեկցի խմբին: Զմիռնեն հունական քաղաք է և գուցե ավելի ապահով վայր է: Որքանով, որ հայտնի է, գեղեցիկ քաղաք է: Նավահանգիստ էլ ունի: Գուցե Զմիռնեն կարողանա նպաստել Իտալիա գնալուն: Բայց մյուս կողմից էլ հեռու է: Երեխաների և մեծահասակների օրերն ու գիշերները վախի մթնոլորտում են անցնում, բայց որոշումն ընդունված է: Գերմանացի հրամանատարը տրանսպորտի միջոցներով կապահովի: Նախընտրելի է հայերի ողբերգությունից փրկված երեխաներին քրիստոնեական՝ ավելի ապահով վայրերում պահել: Զմիռնեում կարելի է հավասարակշռություն գտնել: Այնտեղ թուրքերն այնքան էլ սիրված չեն՝ չնայած որ, ի տարբերություն հայերի, հույները տեղահանության չեն ենթարկվել: Այսպիսով՝ դպրոց և լաբորատորիա են հիմնադրվում: Երգչախումբ է կազմվում: Թվում է, թե կյանքը վերադարձել է իր հունին: Անգամ մուրացկանների եղբայրությունն է ընդունում իր եղբորը և թույլ տալիս, որ մուրալու համար իր տեղն ունենա: Իսկ վեց ամիս հետո հայերի մանկական երգչախումբը համերգ է ունենում Գերմանական միությունում: Եվ ներկա է նաև թուրք գնդապետը: Ամեն ինչ կարծես դեպի լավն է գնում: Նույնիսկ երկու երիտասարդների հարսանիքն են տոնում: Եվ օրերն անցնում են, պատերազմը ավարտվում.

«1918 թ., նոյեմբեր». Եռյակ միությունը հաղթանակ է տանում: Կայսրությունը աղետի հասցրած կառավարությունը ավերիչ անկում է ապրում և այսպիսով՝ հայերի թշվառ ուրվականները կրկին հայտնվում են, սուլթանը նորից իշխանության է գալիս: Նշանակում է հետաքննչական հանձնաժողով և իր փեսա վարչապետ Դամադ Ֆերիդ փաշային հրաման է տալիս փոքրամասնությունների դեմ գործած հանցանքների հատուկ դատարան հիմնել:

Եվրոպան ամենուր մասնատված է: Գերմանական և ավստրո-հունգարական կայսրությունների բեկորներից նոր պետու-

թյուններ են ստեղծվում, աշխարհագրությունը վերագծվում է, Իտալիան նույնպես խոր ճգնաժամ է ապրում»[108]:

Զմիռնեում ուրախություն է տիրում, մարդիկ տոնում են՝ անտեղյակ լինելով, որ ամենավատը դեռ առջևում է: Իսկ այդ նույն ժամանակ Իտալիայում՝ Երվանդի տանը զարմիկները միմյանց են ուսումնասիրում: Նորեկները ըստ երևույթին ինքնամփոփ են և փակվել են իրենց մռայլ հիշողություններում: Կցանկանային գնալ հեռու՝ դեպի Միացյալ Նահանգներ, այնքան հեռու, որ թուրքերն այլևս չկարողանային նրանց հասնել: Նրանք գավառական վարվեցողություն ունեին: Իտալացիները մի փոքր ամաչում էին դրանից: Ապագայի ծրագրերն էլ աղոտ էին: Գուցե արժե՞ վերադառնալ Հայաստան: Մեծ տերությունները հաղթել էին, արդեն ամեն ինչ հնարավոր էր թվում:

Ընտանիքի անդամներից մեկը փորձում է Դամասկոսից վերադառնալ: Վերադարձները միշտ դժվար էին և խնդրահարույց: Բացի այդ այնտեղ հայերն ամենուր ավերածության էին հանդիպում: Պարիսպները փլուզված էին, ժողովուրդը՝ սոված: Ասում էին, որ տարածքով ավազակներ, դասալիքներ և մուրացկաններ էին պտտվում: Վերադարձը Արտույտների ագարակ ծանր է: Ծաղիկներն ու մոլախոտերը պատել էին փոսը, որտեղ փտում էին հարազատների և ընկերների դիակները: Ամենուր հրդեհի և փշրված ապակիների հետքեր էին: Քաղաքում նախկին տունը բնակեցված էր թուրքերով, որոնք հեռանալու միտք չունեին, քանի որ կառավարության կողմից թույլտվություն ունեին: Փախստականներին արդեն ծանոթ մի թուրք է օգնում և հայրենակիցներին միջամտում: Եվ օրերը կարծես խաղաղ են անցնում: Միացյալ Նահանգներից Հենրի Մորգենթաուի կողմից ուղարկված գումարային օգնությունը հասնում է Անատոլիա և բաժանվում միսիոներների միջև: Մանկատները նորից լի են երեխաներով:

---

[108] **Ա. Արսլան**, մեջբերված ստեղծագործություն, 2009 թ., էջ 115:

Եվրոպացի մաքսանենգներն ամենուր են, անգլիացիները, ֆրանսիացիները և իտալացիները իրենց ծառայությունն են առաջարկում: Նրանք փոխարինում են շտապ հեռացած գերմանացիներին: Նորությունները Զմիռնեից հասնում են Հալեպ, Հալեպից էլ՝ Ալեքսանդրիա: Գուցե արդեն երջանիկ շրջա՞ն է սկսվում: Արսլանը գրում է, որ Զմիռնեն անցնում է ուրախալի խոստումների մի ժամանակաշրջան: Նրա ծովը հնձվում էր «տարբեր տեսակի նավերով՝ որսորդական նավեր, զբոսանավեր, ռազմանավեր, առագաստանավեր և շոգենավեր»[109], որոնք ժամանում էին և մեկնում: Խաղաղության և բարեկեցության խոստումը տևում է մոտ 3 տարի, որ շռայլորեն բաշխում էր երազանքներ և պատրանքներ և հույսեր էր արթնացնում: Մի ժամանակաշրջան, որ կտրուկ ավարտվում է, երբ հույները փորձում են գրավել Զմիռնեն և դաժան պարտություն են կրում: Հազարամյակի վերջում Փոքր Ասիայում հազարամյա հունական քաղաքակրթության վերջն է:

1922 թ. գարունն էր և տարօրինակ դեպքեր էին տեղի ունենում: Խորհրդավոր կերպով գյուղացիներ էին անհետանում: Նույնիսկ իշխանություն ունեցող ֆրանսիացիները կարծես չգիտեին, թե ինչ անել: Խոսվում է գեներալ Քեմալի մասին, ով մեծ զորք էր հավաքում և նրան տղամարդիկ էին հարկավոր: Հայերը հույսները դրել էին Սուլթանի վրա, ով պատերազմը հաղթած պետություններից հետաքննչական հանձնաժողով էր պահանջել: Նրանց իրավունքները կճանաչվեին: Ամեն ինչ իր տեղը կընկներ: Բայց իրականում ամեն ինչ այլ ուղղությամբ է գնում: Ֆրանսիացիները մեկնում են: Փոքր քաղաք ժամանած հայերը աստիճանաբար ավելի անվստահ են իրենց զգում: Շատ փախստականներ ուղղվում են դեպի Սիրիա: Եվ սա դեռ ամենը չէ: Հայաստանի Հանրապետությունը Կովկասում ի վիճակի չէ պահպանել իր ինքնավարությունը, այդ պատճառով նախընտ-

[109] **Ա. Արսլան**, մեջբերված ստեղծագործություն, 2009 թ., էջ 174:

րում է մտնել Խորհրդային Միություն: Իսկ գեներալ Քեմալը ամենուրեք հաղթանակած է դուրս գալիս: Հայրենիք վերադարձած հայերի կողմից կատարված նոր շինարարությունները անավարտ են մնում: Փախստականները նորից գաղթի ճանապարհ են բռնում:

Արսլանը գրում է, որ 1922 թ. ամռան էր, երբ Զմիռնեում սկսում է զգացվել ազգայնամոլության նոր ալիքը: Հունական զորքը նահանջում է, իսկ թուրքականը՝ առաջանում: Անհանգստությունը հայերի և հույների մոտ մեծանում է: Սեպտեմբերի 9-ին Նուրեդին փաշան թուրքական հեծելազորով մտնում է Զմիռնե: Դա կրակի տված քաղաքի մահվան նախերգանքն էր: Քրիստոնյաների տները վառվում են: Բայց մանկատների երեխաները նորից փրկվում են Իսմենեի, Նազիմի և Իսահակի շնորհիվ: Ամերիկյան դրոշակները ձեռքներին՝ նրանք հասնում են մինչև ամերիկյան Սիմփսոն նավը:

Տարբեր ուսումնասիրությունների և հետազոտությունների հետ այս վեպը մեզ շատ տհաճ ճշմարտություններ է բացահայտում: Հայոց ցեղասպանությունը միայն 1915 թ. չէ, որ տեղի է ունեցել: Այն ավելի երկար է տևել: Թուրք ազգային հերոս Քեմալ փաշան ինչ-որ կերպ մեղավոր է հայերի հույսերը վերացնելու, այնպիսի Թուրքիա հիմնելու մեջ, որտեղ հայերի համար բառիս բուն իմաստով տեղ չկար: Հիմա ավելի հասկանալի է, թե ինչու Թուրքիայի համար դժվար է ճանաչել հայոց ցեղասպանությունը. դա կլինի մերօրյա՝ ազգային հերոս Քեմալ փաշայի սկիզբ դրած Թուրքիայի մութ ստվերների ընդունումը:

Փաստորեն թե՛ երեկվա (Վերֆել) և թե՛ այսօրվա (Արսլան) գրողները մեզ արդյունավետ կերպով ներկայացնում են հայոց ողբերգությունը: Եվ ոչ միայն գրողները: Ի հայտ են գալիս նաև այլ պատմություններ, որտեղ Միացյալ Նահանգներում մեծա-

ցած երիտասարդ կանայք փորձում են իրենց ընտանիքի հայկական արմատները գտնել[110]:

Արդեն հայտնվել են և դեռ շարունակվում են հայտնվել փաստաթղթեր, հետազոտությունների արդյունքներ, մտորումներ, ինչպես նաև ինքնակենսագրականներ: Ծնվում են նոր հուշեր, որոնք երբեմն նշում են բնանկարներ և վայրեր: Օրինակ՝ 2008 թ. հոկտեմբերի 5-ին Աքուի Տերմեն կատարում է Ջուստի այգու բացման արարողությունը: Խոսքը գնում է Անանուն մանկատանը նվիրված Տաճարի և չորս ցեղասպանություններին նվիրված Ջուստիում գտնվող 10 ծառերի մասին. 4 ծառ Շոահի համար, 3 ծառ՝ հայոց ցեղասպանության, 2 ծառ ռուանդական սպանդի և մեկն էլ՝ բոսնիականի համար[111]: Երեկվա և մեր օրերի ողբերգությունները միասին են հիշվում: Կարելի է ասել, որ սա պարտված ճակատամարտ էր նրանց համար, ովքեր ուզում էին այս ողբերգությունը լռության և մոռացության մատնել: Ինչ-որ չափով հայոց ցեղասպանությունը կարող է համարվել Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում տեղի ունեցած այլ ողբերգությունների՝ 20-րդ դարը նշանավորած ցեղասպանությունների նախերգանքը: Այդ ցեղասպանությունները նախորդում են նմանատիպ այլ իրադարձությունների (բավական է հիշել Ռուանդայի դեպքերի մասին) և ինչ-որ չափով պետք է հաշվի առնվեն ապաստան փնտրողների և փախստականների պաշտպանությունը հանձն առնողների կողմից: Այդ մարդիկ փախել էին կամ փախնում էին իրենց կյանքը վտանգի ենթարկող հալածանքներից:

---

[110] **Է. Շաֆակ**, «Ստամբուլի ընկեցիկը», Միլան, Ռիցոլի, 2007 թ.:

[111] Շոահի համար՝ Ջորջիո Պերլասկա, Պ. Պլաչիդո Կորտեզե և իր խումբը, Ջիովաննի Պալատչի և Կարլո Անջելա: Հայոց ցեղասպանության համար՝ Ջիակոմո Գորրինի, Այսե Նուր Զարակոլու և Արմին Թեոֆիլ Վեգներ: Ռուանդականի համար՝ Պիերանտոնիո Կոստա և Ժակլին Մուկանսոներա: Բոսնիականի համար՝ Լազար Մանոյլովիչ:

Եթե չլինեին Շոահը, հայոց ցեղասպանությունը, հետագայում Գերմանիայում տեղի ունեցած զնչուների (Պորայմոսը, բազմաթիվ կյանքեր խլելը), ինչպես նաև հաշմանդամների, Եհովայի վկաների, քաղաքական ընդդիմադիրների և այլոց սպանդը, ապա գուցե չէր լինի 1951 թ. Ժնևի կոնվենցիան, որը մինչ օրս թույլ է տալիս փորձեր կատարել՝ այլընտրանքից հեռանալու նպատակով, այն էլ այնպիսի պահին, երբ Եվրոպան կրկին խավարամոլության և ռասիզմի շրջանում է գտնվում: Այն թույլ է տալիս պաշտպանական գործողություններ ձեռնարկել տառապանքի ենթարկված, ամբողջատիրական կամ հակաժողովրդավարական վարչակարգի պատճառով իրենց կյանքը վտանգի տակ դրած մարդկանց համար:

Արդարություն և վրեժ

1915 թ. մայիսի 24-ին դաշնակների կողմից հայտարարագիր է հռչակվում, որտեղ նշվում է, որ Թուրքիան «մարդկության դեմ հանցանք» է գործել: Հաջորդ տարի բրիտանական կառավարության կողմից լույս է տեսնում *Կապույտ գիրքը*՝ մեծամասամբ գրված երիտասարդ պատմաբան Առնոլդ Թոյնբիի կողմից՝ Վիսկոնտ Բրիսի նախաբանով: Այն *Treatment of the Armenians in the Ottoman Empire, 1915-1916* է: Հետագայում 1918 թ. լույս են տեսնում դեսպան Հենրի Մորգենթաուի հուշերը՝ *Ambassador Morgentau's Story*, որը մինչ օրս կարևոր նյութ է համարվում և որին արդեն անդրադարձել ենք: Ապա 1919 թ. լույս է տեսնում Հովհաննես Լեպսիուսի *Deutscland und Armenian 1914-1918* գիրքը: Սրանք կարևորագույն նյութ են հանդիսանում, քանի որ աղբյուրները մեծամասամբ դիվանագիտական են (Դեսպանատներ և Հյուպատոսարաններ), ինչպես նաև ռազմական և առաքելական, որոնք տեղահանությունից և կոտորածներից փախուստի դիմած մարդկանց վկայություններ էին:

1919 թ. դաշնակների կողմից նշանակված հանձնաժողովը, որ պետք է ուսումնասիրեր հայերի նկատմամբ թուրքերի պահվածքը, գալիս է այն եզրակացության, որ մեթոդները «բարբարոսական և անօրինական էին»: 1920 թ. օգոստոսի Սևրի պայմանագիրը տարբեր հոդվածներում նշում է կոտորածների պատասխանատվությունը կրողներին դատելու նպատակով դաշնակից դատարանի անհրաժեշտության մասին: Այդ պատասխանատուներից շատերը, սակայն, փախել էին և բրիտանական միջամտության շնորհիվ ապաստան գտել Մալթայում:

Այդ ընթացքում երիտթուրքերի անկումից հետո Օսմանյան կառավարությունը նորից իշխանության գլուխ է անցնում: 1919 թ. ապրիլի 26-ին օսմանյան ռազմական դատարանը հեռակա կարգով մահվան է դատապարտում թուրք գլխավոր քաղաքական ղեկավարներին, ովքեր ցանկացել և կատարել էին հայերի տեղահանումն ու ոչնչացումը: Մեղադրանքը առանձին համայնք կազմող մի ամբողջ ժողովրդի ոչնչացումն էր: Այսինքն՝ մեղադրանքը ցեղասպանությունն էր: Նույն տարվա հուլիսի 19-ին ռազմական դատարանը հեռակա կարգով մահվան է դատապարտում Թալեաթ, Էնվեր, Ջեմալ եռյակին, ինչպես նաև այլ առաջնորդների. պակաս կարևոր, բայց ուղղակիորեն ներգրավված մարդիկ 15 տարվա ազատազրկման են դատապարտվում:

Բայց կարծես ոչինչ էլ տեղի չի ունենում: Եվրոպան փորձում է վերականգնվել ավերումներից և կրած վնասներից, մարդկային զոհերից, և հակամարտությանը հետևած հիասթափությունից հետո: Այս ընթացքում թուրքական որոշակի ազգայնամոլություն է առաջանում, որը առաջնորդում էր Մուստաֆա Քեմալը, ով դարձել էր Անատոլիայում թուրքական զորքի առաջնորդ՝ երկիրը դաշնակիցների ռազմական վերահսկողությունից ազատելու և արևմտյան հատվածում հունական օկուպացիան սեղմելու հստակ դիրքորոշմամբ: Սևրի պայմանագիրը չի իրագործվում: Ավելին, առաջադեմ քեմալականը աջակիցներ է գտնում Կովկա-

սը վերագրավելու նպատակներ ունեցող Ռուսաստանի քաղաքական դաշտում[112]:

1920 թ. օգոստոսին երիտասարդ Հայաստանի Հանրապետությունը[113] պետք է չափազանց անբարենպաստ զինադադար կնքեր: Ամեն ինչ գնալով ավելի վատ է դառնում: 1921 թ. Հայաստանը մտնում է Խորհրդային միություն: 1922 թ. Մուստաֆա Քեմալը կատարյալ հաղթանակ է տանում: Ապա 1923 թ. Լոզանի պայմանագիրը ժխտում է Սևրի հայտարարությունները և ողջունում է թուրքական կողմի տեսակետները: Հայաստանը կորցնում է անկախությունը: Կորցնում է նաև թուրքերի կողմից ցեղասպանության հիշողությունը: Հեռակա կարգով արված դատապարտությունների մասին այլևս չի խոսվում, փախչողները արդեն ազատ ման են գալիս:

Այս ժամանակ է, որ Հայաստանի Հեղափոխական դաշնակցությունը համախմբվում է, փորձում է գտնել մեծ արյունահեղությունների պատասխանատուների հետքերը և գտնելուն պես նրանց հանդեպ վերահսկողություն է սահմանում: Նրա երիտասարդ անդամներից ոմանք զբաղվում են մեղավորներին պատժելով: Դա Նեմեսիսն էր:

1921 թ. հունիսին Բեռլինի Ասսիզե դատարանը զբաղվում է Սողոմոն Թեհլերյանի դատավարությամբ, ով սպանել էր արդեն Ներքին գործերի նախարար և 1913 թ. այս կողմ թուրքական քա-

---

[112] 1920 թ. ապրիլի 23-ին նախագահ և կառավարության ղեկավար ընտրելու նպատակով Մուստաֆա Քեմալը (1881-1938 թթ.) ազգային հանձնաժողով է հրավիրում: 1922 թ. վերագրավում է հունական գերիշխանության տակ գտնվող Անատոլիայի հատվածը: 1923 թ. Լոզանի պայմանագիրը վերջ է դնում Ստամբուլի միջազգային վերահսկողությանը և Անատոլիայում ու Հայաստանի մի մասում թուրքական վերահսկողություն է հաստատում: Այսպիսով՝ ծնվում է Թուրքիայի հանրապետությունը, որ երկրի արևմտականացման և աշխարհիկացման ծրագիր ուներ: 1934 թ. նրան է շնորհվում թուրքերի հայր Աթաթուրքի տիտղոս:

[113] Ծնված լինելով 1918 թ. մայիսին՝ Ադրբեջանի հետ հակասություններ է ունեցել:

դաքականության պատասխանատու, 1915 թ. ապրիլի 24-ին տեղահանության ու մոտ 2000 նշանավորների մահապատժի միջոցով հայերի ոչնչացմանը սկիզբ դնող, եռյակի անդամ Թալեաթ փաշային: Թալեաթը առաջինն է մեռնում: Քննարկվում է Սողոմոն Թեհլիրյանին ազատ արձակելու վճիռը: Այնուամենայնիվ հաշվի է առնվում իրավիճակի բացառիկությունը: Սպանողը կանգնել է իր ողջ ընտանիքի մարդասպանի, բազմաթիվ հայերին ոչնչացնելու որոշման հեղինակի դեմ: Պաշտպանող փաստաբանները խոսում են նրա մեջ «զգացմունքային փոթորիկի», ինչպես նաև այն փաստի մասին, որ Թալեաթը մահվան էր դատապարտվել դատարանի կողմից: Այս դեպքում սպանությունը կարծես ինքնապաշտպանական միջոց, արդարության դրսևորում է դառնում: Ուրիշները հետևում են դրան: Սպանվում են նաև Սաիդ Հալիմը, Բեհադին Շակերը, «Տրապիզոնի հրեշ»[114] մականունը կրող Ջեմալ Ազմին, ինչպես նաև Ջեմալ փաշան:

Պետք է նշել, որ նրանք պատահական չէին ընտրված, ինչպես դա լինում է ահաբեկչության ժամանակակից տեսակի դեպքում: Վերահսկողության առարկա էին հանդիսանում և հետո սպանվում ցեղասպանության պատասխանատուները, ովքեր դատարանի կողմից պատժի էին արժանացել, բայց արտասահմանում հանգիստ և չպատժված ման էին գալիս: Նրանք պատասխանատու էին այնպիսի գործողությունների համար, որոնք նպատակ ունեին «վնասել» որևէ մեկին, ով ճանաչվել էր, որպես

[114] Պարծենում էր նրանով, որ իր կառավարման ընթացքում իր մարդիկ բազմաթիվ երեխաների էին զցել գետը և ասում էր. «Ձկները լավ կեր ունեցան այդ տարի»: Դեսպան Մորգենթաուն իր հուշերում նշում է ատելության առարկա հայ ռասայի նկատմամբ կիրառված տանջանքների մասին պարծանքի խոսքերը, որ արվել են թուրքերի կողմից իսպանական ինկվիզիցիայի արխիվները՝ այդ թեմայով գաղափար կազմելու նպատակով հետազոտելու շրջանակում:

անհանդուրժելի անարդարության իրավիճակի իրական կամ խորհրդանշական պատասխանատու[115]:

Մարչելո Ֆլորեսը իմ կարծիքով տեղին է նշում, որ քաղաքացիական դատարանի կողմից մեղավոր ճանաչված և որոշ ամենահայտնի ու հավաստի թուրք պատասխանատուների դահիճ դարձած Արշավիր Շիրագյանի *«Դատապարտված սպանելու»* ինքնակենսագրական պատմությունը մի շարք անդրադարձներ է առաջացնում: Առաջին հերթին անդրադարձ հայոց ցեղասպանության վրա, որը որպես այդպիսին դեռևս չի ճանաչվել Թուրքիայի կողմից (հենց վերջերս դատական գործ էր բացվել այն գրողների դեմ, ովքեր իրենց աշխատություններում նշել էին դրա մասին, սկսած Նոբելյան մրցանակակիր Օրհան Փամուկից մինչև «Ստամբուլի ընկեցիկը» գրքի հեղինակ Էլիֆ Շաֆակին[116]), մինչդեռ արդեն հայտնի բան է, որ հիշողությունների վերացումը, դրանց ժխտումը ամուր հիմք չէ այն հաղթահարելու և ապագա կյանք ունենալու համար: Երկրորդ անդրադարձը վերաբերում է մի ամբողջ համայնքի անունից, բայց մեկ անձի կողմից կատարված վրեժի օրինական և ոչ օրինական լինելուն (ուրիշները կա-

---

[115] Մարչելո Ֆլորես, Արշավիր Շիրագյանի նախաբան, «Դատապարտված սպանելու. մի հայ հայրենասերի հուշեր», Միլան, Գուերինի և ընկերներ, 2005 թ. («The Legaci. Memoirs of an Armenian patriot», Բոստոն, Մասաչուսետս, Հայրենիք մամուլ, 1976 թ.), էջ 14:

[116] Հարկ է նշել նաև Ռագիպ Զարակոլու հրատարակչին, ով շարունակաբար մեղադրվում էր «ազգային ինքնությանը վիրավորելու համար (Թուրքիայի քրեական օրենսգրքի 301 հոդված), և ով համարձակվել էր ձայն տալ հայերի ցեղասպանության մեծ աղետի՝ Մեծ Եղեռնի մասին խոսողներին: Էլիֆ Շալաֆը իր «Ստամբուլի ընկեցիկը» ստեղծագործության մեջ պատմում է երկու աղջիկների պատմությունը, որոնցից մեկը թուրք էր, իսկ մյուսի հայրը՝ հայ, և այս վերջինը ապրել էր Միացյալ Նահանգներում և շատ էր կապված իր ընտանեկան հիշողություններին և տատիկի պատմած պատմություններին: Այդ պատճառով գնում է Ստամբուլ՝ իր հայկական արմատները ավելի լավ հասկանալու և ժողովրդի ոչնչացման մասին պատկերացում կազմելու նպատակով: Գրողը Թուրքիայում դատի է ենթարկվել երկրի ինքնությանը վիրավորելու համար: Ազատ է արձակվել 2006 թ. սեպտեմբերին:

սեին արդարացի լինելուն): Հարկավոր է հարցադրում ներկայացնել մարդկության դեմ կատարված հանցանքների հարցում միջազգային արդարադատության արդյունավետության մասին: Մարդկության դեմ հանցանքներին միջամտող Աջայի պատժի միջազգային դատարանը տխրահռչակ դեպքերում առաջացնում է նմանատիպ դժվարություններ[117]:

Ինչպես քիչ անց կտեսնենք, «վրիժառուներից» մեկը հանդիսացող Շիրագյանը գրում է.

«Փաստորեն Հռոմում, Կոստանդնուպոլսում և ավելի ուշ նաև Բեռլինում, երբ ամբոխը ինձ սպառնում էր, երբեք մտքովս չի անցել անմեղ մարդկանց դեմ զենքիցս օգտվեմ: Ոստիկանությունը հաճախ էր ինձ հետապնդում, բայց ես երբեք ոչ մի գործակալի, առավել ևս թուրքի վրա չեմ կրակել: Ես չէի ուզում մարդասպան դառնալ: Եվ Սաիդ Հալիմի դատավարության օրը մեկ վայրկյան անգամ չեմ մտածել Թեվֆիկ Ազմիի թիկնազորին վնասել, եթե իհարկե դա ծայրահեղ անհրաժեշտություն չլիներ (...): Մեր կազմակերպությունը ոչնչացման մտադրություն չի ունեցել: Պատժում էր այն անձանց, ովքեր հեռակա կարգով դատվել են և մեղավոր ճանաչվել՝ որպես մասսայական մարդասպաններ: Մեր ցուցակում էին նաև հայ դավաճանները»[118]:

Հայ Հեղափոխական Դաշնակցությունը և նրա մարտիկները չեն մոռանում: Նրանց թիրախում են հայտնվում հայերի ոչնչացման ամենանշանավոր դերակատարները, ինչպես նաև որոշ հայեր, ովքեր գուցե վախի կամ թուլության պատճառով դավաճանել էին իրենց իսկ ազգի անդամներին: Բայց այդպես էլ չի ստացվում հասնել Թուրքիայի կողմից ցեղասպանության ճանաչմանը: Գալիս են 1970-ականները, երբ Հայ Հեղափոխական

---

[117] Տե՛ս նաև վերջերս տեղի ունեցած Ռադովան Կարադձիչի դեպքը, ով 2008 թ. հուլիսի 21-ի Բելգրադի ձերբակալությունից և մեղավոր ճանաչվելուց հետո հայտարարել է դատական իշխանությունը չճանաչելու մասին:

[118] Խոսքը ստեղծագործության մեջ հեղինակի կողմից նախաբանի ձևով գրված նշումների մասին է:

Դաշնակցության կազմում դաշնակների առաջնորդ հանդիսացող հայ մարտիկների, ինչպես նաև ASALA-ի՝ Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի անդամների կողմից թուրք դիվանագետների դեմ մի շարք մահափորձներ են իրականացվում (1975-ից 1982 թթ. 21 մարդ է սպանվում): Իհարկե վրդովված արձագանք էլ է լինում այն փաստի շուրջ, որ սպանվում են մարդիկ, ովքեր իրականում կապ չունեն տեղի ունեցածի հետ:

Այս ընթացքում կարևոր գրքեր են լույս տեսնում, որոնք նպատակ ունեին ճանաչում ձեռք բերել 1900-ականների առաջին ցեղասպանություններից մեկի համար: Եվ կրկին հարցադրումներ են առաջանում արդարության և վրեժի օրինականության և սահմանների մասին: Առաջ են քաշվում հիշողության և ինքնության թեմաները, որոնք մեծ տարածում են գտնում ամբողջ 20-րդ դարի ընթացքում և ուղեկցում են մեզ նաև 21-րդ դարում: Դրանց են ավելանում նաև տեղահանության, տանջանքի, շահագործման, վերքի թեմաները, որոնք մինչև դարավերջ չեն դադարում:

2. Հիշողություն և ինքնություն

Միշտ դժվար է պատմել ինքդ քո մասին, քո հարազատների մասին: Հատկապես, երբ նրանց հետ տխրալի դեպքեր են տեղի ունեցել, որոնք խորապես ազդել են նրանց թե՛ ֆիզիկականի և թե՛ հոգեկանի վրա: Ինչպե՞ս իրեն զգա մի մարդ, ով ներկա է եղել կնոջ կամ դստեր բռնաբարությանը, իր հարազատ ընտանիքի շարունակական թուլացմանն ու չարչարանքին, երբ նա այլևս ի վիճակի չէ օգնել, պաշտպանել և կերակրել: Ի՞նչ պետք է զգա մի կին, ով բռնությունների է ենթարկվել և դրանց արդյունքում երեխա է ծնվել: Կամ մեկ ուրիշ կին, ով ստիպված է եղել լքել իր երեխային կամ թույլ է տվել, որ նրան վաճառեին թուրքե-

ին՝ հույս ունենալով, որ այդպես կփրկի մյուսներին: Ինչպե՞ս հարմար բառեր գտնել, որ կեղծ կամ հռետորական չհնչեն և արտահայտեն փրկվածներին ուղեկցող մտահոգության, կորստի, միայնության զգացողությունները: Դժվար է գտնել ձայնի հնչերանգ, որ մելամաղձոտ և չափազանցված չհնչի: Դժվար է գտնել նախադասության մեջ բառերի նոր ռիթմ: Պատահական չէ, որ շատերը երկար ժամանակ լռություն ընտրեցին:

Եվ մյուս կողմից ակնհայտ է, որ շատ ծանր հիշողություններ կան, որոնք հնարավոր չէ մի կողմ դնել: Դրանք չափազանց կործանարար են և թողնելու դեպքում կթարախակալեն: Եվ չնայած ամեն ինչին՝ կյանքն առաջ է գնում: Այդ հեռավոր օրերին բոլորը չեն, որ լռում են: Բոլորը չեն, որ աջակցում են անզորներին ու անշարժներին: Հյուպատոսարանները համախմբվում են, միսիոներները սկսում են շարժվել: Որոշ տեղեր և ենթակառուցվածքներ են տրամադրվում փրկվածներին: Գումարներ են նվիրաբերվում, առաջին օգտագործման ապրանքներ են ձեռք բերվում: Կապեր են փնտրվում: Ով գիտի, գուցե ընտանիքից որևէ մեկը մազապուրծ է եղել: Երեխաներից ոմանք գուցե թուրք կարիքավոր ընտանիքների կողմից էժան աշխատուժի տեղ վաճառվել են շուկայում: Ոմանք էլ թերևս փողոցում մուրացկանություն են անում: Ամերիկացիների կողմից պատրաստված և ղեկավարված մանկատների քանակը 200 էր: Այնտեղ միայնակ, քաղցած, հիվանդ և վախեցած երեխաներ էին: Նրանք անտառաճանաչ էին: Միջամտում են նաև եվրոպական այլ հիմնադրամներ և շատ երեխաներ են բուժվում, սնունդ և ուսում ստանում: Կանանց և տղամարդկանց բառերի, գրվածքների, երգերի միջոցով խրախուսվում է ազատվել ծանր հիշողություններից, նույնիսկ եթե միշտ չէ, որ արդյունքը դրական է, որ վերքի ղեկավարումը արձագանք և համապատասխան հմտություններ է գտնում:

Շատ դեպքերում Թուրքիայից մեկնում են և դրան նախորդում է հարազատներին փնտրելը, հայկական ամսագրերում հայտարարություններ տալը: Որոշ հաջողակների հաջողվում է

վերամիավորվել 1915 թ. առաջ արտագաղթած հարազատների հետ: Այլ դեպքերում այս փորձերը հանգեցնում են վերաբնակեցման: Սա աստիճանաբար համարյա թե անհնարին է դառնում: Գյուղերը թալանված են, տները, հանրային շինությունները, ներառյալ եկեղեցիները, կրակի են տրվել: Վերաբնակեցում փնտրողներից շատերը նոր տեղահանությունների են հանդիպում: Բայց սա արդեն ուրիշ թեմա է[119]:

Այսօր այդ իրադարձությունների մասին շատ ստեղծագործություններ կան՝ պատմվածքներ, որոնք մեծամասամբ գրվել են հուշերի ձևով, այսինքն՝ Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում տեղի ունեցած զարհուրելի կոտորածի հաստատումից որոշ ժամանակ անց: Խոսում են զոհերը և վկաները: Արդեն նշեցինք, որ խոսել են նաև վրիժառուները: Իհարկե սպանվածների ընդհանուր թվի համեմատ նրանք քիչ են: Բայց այսպիսի ողբերգության բոլոր փրկվածները չեն, որ կարող են պարզեցնել այն, անել այնպես, որ դառնա հասկանալի և լավագույն ձևով ներկայանա: Ասում էին, որ մարդու համար դժվար է իր հետ պատահած ողբերգությունների մասին խոսել: Շատերի մոտ խոր և անարտահայտելի անհանգստություն էր առաջացել: Այնպիսի զգացողություն էր, կարծես ինչ-որ ձևով պղծված լինեին: Կարծես ինչ-որ ձևով մեղավոր լինեին: Մեղավոր նրանց հանդեպ, ովքեր չէին կարողացել այդ ամենը հաղթահարել: Մեղավոր էին զգում, որովհետև կարողացել էին փրկվել: Այս զգացողությունները քաջ հայտնի են նրանց, ովքեր ծանոթ են նացիստական կոտորածներից փրկվածների ճամբարներին վերաբերող ընդարձակ գրականությանը:

Ժամանակ է հարկավոր սեփական ծանր անցյալի հետ հաշտվելու, նրանից դուրս գալու համար: Նրա հետ հաղորդակցության հասնելու համար: Եվ այդպիսով հուշերը մեկ անգամ

[119] Մեր օրերում նույնպես շարունակվում է վերադարձի և վերաբնակեցման թեման, ինչը միշտ չէ, որ հանպատրաստից է և ճիշտ ու հարմար ձևով ընտրված:

գրելուց հետո դրանք մնում են դարակում: Երբեք չեն տալիս, որ կինը կամ դուստրը կարդան: Ոմանք միայն տասնյակ տարիներ հետո են ի հայտ գալիս[120]:

Պատմում են զոհերը

Զոհերի կողմից գրված պատմություններից մեկը պատկանում է Վահրամ Ալթունյանին և տպագրվել է Դոնձելլի հրատարակչության կողմից «Հիշել մոռանալու համար. հայոց ցեղասպանությունը հոր օրագրում և դստեր հիշողության մեջ» վերնագրով[121]:

Դա փոքրիկ մի գիրք է, Վահրամ Ալթունյանի պատմությունը 33 էջ է զբաղեցնում, գրված է հակիրճ ձևով, որոշակի, փաստացի պատմվածքներով: Հնչերանգը ակնհայտորեն ասեպտիկ է և չեզոք:

---

[120] Բանավոր պատմությունը և որակական սոցիոլոգիան հարցադրումներ են ներկայացնում հիշողության և վերջինիս կիրառման նպատակահարմարության մասին: Իտալիայում Ֆրանկո Ֆերրառոտին այդ թեմայի շուրջ Լատերցա հրատարակչության համար որոշ նախադեպային հատորներ է գրել. «Պատմություն և կյանքի պատմություններ» (1981 թ.), «Պատմությունը և ամենօրյա կյանքը» (1986 թ.), «Հուշ և ժամանակավորություն» (1987 թ.): Հմմտ. նաև «Կենսագրություն, պատմություն և հասարակություն» (1985 թ.) և «Բանավոր խոսք և փրկություն» (1986 թ.), որոնցից երկուսն էլ խմբագրել եմ ես Նեապոլում Լիգուորի հրատարակչության համար: Ավելի ուշ լույս է տեսել նաև Բարբարա Ա. Միսցտալի «Հիշողության սոցիոլոգիա» աշխատությունը, Միլան, McGraw-Hill, 2007 թ. (իտալերեն տարբերակի խմբագիրը ես եմ): Պատմաբաններից հիշողության և բանավոր խոսքի վերաբերյալ անդրադարձ է կատարել Սանդրո Պորտելլի: Հմմտ. նաև նրա «Հրամանն արդեն կատարված է» ստեղծագործությունը, Հռոմ, «Արդեատինյան կոտորած», հիշողություն (Հռոմ, Դոնձելլի, 1999 թ.), ինչպես նաև Գուիդո Կրայնցի գեղեցիկ «Ցավ և արտաքսում. Իստրիան և Եվրոպայով տարածված հիշողություններ» գիրքը (Հռոմ, Դոնձելլի, 2005 թ.):

[121] Ջ. և Վ. Ալթունյաններ, «Հիշել մոռանալու համար. հայոց ցեղասպանությունը հոր օրագրում և դստեր հիշողության մեջ», Հռոմ, Դոնձելլի, 2007 թ.: «Saggine»-ում լույս տեսած տեքստը օգտագործվում է ինչպես հենց Դոնձելիի և Մարիա Պալացեզիի կողմից գրված ներածական նշումների, այնպես էլ Մանուելա Ֆրեյրի իմաստուն վերջաբանի համար:

«Բուրսայից մեկնեցինք եզներին լծված մի սայլով և հասանք Ալայութ՝ Կութահյայի կայարան: Մեզանից պահանջվեց 10 օր: Այնտեղ էլ վրաններ խփեցինք:

Կութահյան 2 ժամ հեռավորության վրա գտնվող մի մեծ քաղաք է, որտեղից սննդամթերք են ստանում: Հայրս ասաց. «Չի կարելի անգործ մնալ, մեզ աշխատանք է հարկավոր»:

Պատմությունը սկսվում է 1915 թ. օգոստոսի 10-ից և ըստ հեղինակի՝ վերաբերում է այն ամենին ինչ տեղի է ունեցել 1915-ից մինչև 1919 թթ. ընթացքում: Ըստ դուստր Ջանինի 1921 թ. գրված այս ստեղծագործությունը իրենից ներկայացնում է ոչ թե օրագիր, ինչպես հայտարարվում է իտալական հրատարակության մեջ, այլ հիշողությունների մի շարք: Այս տարբերակումը գիտական մանրախնդրություն չէ, բայց ենթադրում է տարբեր գրելաձևեր: Ինչպես հայտնի է, օրագրի վրա գրվում է եթե ոչ ամեն օր, ապա գոնե հնարավորինս հաճախ, այնպես որ գրվածքը իրադարձություններին հավասար է գնում, կամ էլ փոքր հեռավորությունից հետևում դրանց, սովորաբար իր ազդեցությունն է թողնում անհապաղությունը: Այն կարող է մասնատված և անկանոն լինել: Սովորաբար չկա մեկնաբանման և համակարգման հնարավորություն: Մի բան, որ հնարավոր է որոշ ժամանակ անց գրվող հիշողությունների դեպքում: Այսինքն՝ վերջիններս սովորաբար ավելի կանոնակարգված նյութ են իրենցից ներկայացնում, օրագրերից ավելի քիչ անմիջական և մասնատված են, բայց միևնույն ժամանակ կարող են պակաս ճշգրիտ լինել, քանի որ հուշերում նշվում են որոշ անուններ, իրադարձություններ, որոնք կարող են մոռացված լինել կամ լավ չհիշվել:

Ինչպես Գրիգոր Բելեդյանը նշում է վերջաբանում, խոսքը գնում է աշակերտական տետրում գրված մի ձեռագրի մասին՝ կազմված երեսուն չորս համարակալված էջերից, որոնք լի են սուր և հաստ գրվածքներով: Ջնջումները քիչ են, ինչը վկայում է այն մասին, որ հիշողությունները գրվել են վարժ ձևով: Բուն պատմությունից բացի կան գնված և վաճառված ապրանքների

ցուցակներ և գնային նշումներ: Այն գրված է թուրքերեն, կամ ավելի ճիշտ թուրքերեն շարահյուսությամբ, թուրքերեն լեզվով և հայերեն բառեր պարունակող բարբառով: Այն ամբողջությամբ տառադարձված է հայերեն այբուբենով: Գրիգոր Բելեդյանը ընդգծում է, որ այս գիրքն օժտված է բանավոր խոսքի բոլոր հատկություններով և օգտագործում է բանավորին հատուկ բոլոր բանաձևերը:

Անտեսենք պատճառը, այն տարրը, որ հեղինակին դրդել է թղթին հանձնել իր հուշերը: Բայց Բելեդյանը շարունակում է, որ նույն 1921 թ. տարբեր իրադարձություններ են տեղի ունենում, որոնք հայոց ցեղասպանությունը նորից ներկայացնում են այն մարդկանց ուշադրությանը, ովքեր հետաքրքրված էին դրանով: Դա սկսվում է Թալեաթի սպանությունից հետո մարտի 15-ին Բեռլինում, ապա նաև հունիսին տեղի ունեցած համապատասխան դատավարությամբ: Քիչ անց՝ դեկտեմբերի 6-ին Հռոմում տեղի է ունենում Սաիդ Հալիմի սպանությունը:

Ինչևէ, 20-ամյա Վահրամ Ալթունյանը արդյունավետ ձևով է գրում իր ընտանիքի հետ տեղի ունեցած իրադարձությունների մասին: Նույն այդ չոր, ակնհայտորեն անջատ-անջատ լեզուն հաղորդակցական ուժեղ մեթոդ է: Այն շատ ավելի արդյունավետ, շատ ավելի հասանելի է, քան պաթոսներով առատ ելույթները, որ դեպի հռետորություն սահելու վտանգ ունեն: Այստեղ այդպիսի ոչինչ չկա: Միայն չոր և լրջախոհ գրվածք, որն ավարտվում է Ֆրանսիա հասնելով, որոշ հարազատների ամուսնության մասին մի քանի արագ նշումներ անելով:

«Օգոստոսի 7-ին Արթինեն ամուսնանում է: Ես տանն էին մնացել, նրանք գնացել էին Փարիզի Հայկական եկեղեցում ամուսնանալու: Այնտեղ նաև Մանուկի ամուսնությունն էին նշել: Այսպես միևնույն օրն էին ամուսնացել»:

Փաստորեն ուրախ ավարտ՝ ամուսնություն է նախատեսված ողբերգական ստեղներին դիպած այս պատմության համար: Պատմություն, որտեղ խոսվել է հոր մահից, մոր հիասթափությունից, ումից պահանջում էին առանց ամուսնուն հողին հանձ-

նելու ճանապարհը շարունակել: Մայր, ով իր որդուն վստահում է անծանոթ մի թուրքի[122]՝ հույս ունենալով, որ վերջինս այդպես կփրկվի: Հենց մորը նվիրված է Մանուելա Ֆոեյրի վերջին հատվածը, ով չի սխալվում, երբ խոսում է «հեղինակի կողմից գրելու միջոցով վերք մշակելու մասամբ հաջողված փորձի մասին», ինչպես նաև դարակում 60 տարի մնացած այս պատմության՝ ինչ-որ կերպ դստեր կողմից ընկալված «իմաստի հետքերով գնալու համատեքստ» տալու կարողության մասին:

Բայց սրա մասին կխոսենք ավելի ուշ: Այստեղ կցանկանայի հիշել, թե ինչպես է Մանուելա Ֆոեյրը հատուկ ձևով ընդգծում մայրական կերպարը Ալթունյանի պատմության մեջ: Մայր, ով թաղում է ամուսնուն, որդու հետ շարունակում է հարկադրված թափառումները և քաջություն ունի նրան իրենից հեռացնել՝ վերջինիս փրկությունը ապահովելու նպատակով: Ֆոեյրը գրում է, որ ծանր էր ամուսնուն կորցրած կանանց ճակատագիրը, քանի որ տանում էին սերունդներին կապող կենդանի հիշողությունների բեռը, գործառույթ, որ սովորաբար առնչվում է մշակույթի հետ[123]:

Այս ընթերցումից մեկ այլ թեմա է ծագում՝ հայրերի հիշողությունների կառավարման հետ կապված զավակների ունեցած դժվարությունները: Թարգմանչուհի և հոգեվերլուծաբան Ջանին Ալթունյանը գրում է.

Միայն երբ հայ ահաբեկչի առաջին տպավորիչ գործողությունից հետո հայոց ցեղասպանության շուրջ եղած լռությունը

---

[122] Խոսքը միակ դեպքի մասին չէ: Ինչպես թուրքեր են եղել, որ սպանել են հայերին, այնպես էլ թուրքեր են եղել, որ փորձել են փրկել նրանց և հայ երեխաներին հարազատի պես դաստիարակել են: Այդ դեպքերի մասին տասնամյակներ անց՝ այսօր է իմացվում: Ինչպես օրինակ՝ Ֆետյե Չետինը, ով Ստամբուլում հայ համայնքի «Ագոս» շաբաթաթերթի խմբագիրների փաստաբանն էր (գլխավոր խմբագիր Հրանտ Դինքը սպանվել է 2007 թ. գերազգայնամոլի կողմից) և ում տատիկը մահվան մահճում էր նրան հայտնել իր հայկական արմատների մասին:

[123] **Ջ. և Վ. Ալթունյան**, մեջբերված ստեղծագործություն, էջ 90:

խախտվում է (1981 թ. սեպտեմբերին թուրքական գլխավոր հյուպատոսարանից պատանդներ են վերցնում), համարձակվում եմ հաղթահարել ամոթս և հայրիկիս *«Տեղահանության օրագիրը»* տալ տպագրության: Առանց այն հուսահատ որոշման, որ որոշ կենդանի հայեր համարձակվում էին աղմկահարույց ձևով իրենց դրսևորել, այդ որոշումը կհամարեի մեռյալների սրբապղծություն[124]:

Այսինքն՝ «ամոթ» էի զգում: Ամոթ, որ այդ իրադարձությունների մասին մտածողները դժվար կհասկանան և այդ ամոթը բնականաբար հայերի կողմից չէ, որ պետք է զգացվի: Եվ հետո այն փաստը, որ զոհերը դժվար իրավիճակում էին և նմանատիպ զգացողություններ ունեին, որոնք հայտնի է, որ շատ հաճախ տանում են դեպի լռություն: Օրինակ՝ Իտալիայում այդպիսի վիճակում էին Գերմանիայում և Լեհաստանում՝ ճամբարներում շրջապատված և արգելափակված բազմաթիվ զինվորականներ: Վերադարձի ճանապարհին նրանք կաշկանդված էին և խոր ամոթ էին զգում: Եվ այս դեպքերում նույնպես քիչ բացառություններով տասնամյակներ են անցել մինչև որոշ հուշեր են ի հայտ եկել:

Այսինքն՝ Ալթունյանի այս հիշողությունները պատկանում էին մի երիտասարդ տեղահանված հայի: Բայց այսօր այլ հիշողություններ ևս ունենք: Օրինակ՝ գլխավոր մեղավորներին պատժողներից մեկի հուշերը:

Դահիճի հուշեր

Արշավիր Շիրազյանի 1976 թ. գրված հուշերում, այսինքն՝ տեղի ունեցած դեպքերից երկար տարիներ անց (Հռոմում նախկին Մեծ Վեզիր և հայոց ցեղասպանության ընթացքում վարչապետ եղած Սաիդ Հալիմի սպանությունը տեղի է ունեցել 1921 թ.

---

[124] **Ջ. և Վ. Ալթունյան,** մեջբերված ստեղծագործություն, էջ 15:

դեկտեմբերին: Ապա 1922 թ. դրան հետևել է նույնականացման և ստվերի շրջանը ու հետևաբար Բեռլինում Միություն և առաջադիմություն կուսակցության գաղափարախոս դարձած Բեհեդին Շաքերի և որպես «Տրապիզոնի հրեշ» հայտնի Ջեմալ Ազմիի սպանությունը) Միացյալ Նահանգներում հիշում է անցած ջարդերին նախորդող օրերը: 1914 թ. է և հայ բնակչության վրա ծանրացել են նախորդող տարիներին տեղի ունեցած կոտորածների հիշողությունները, որոնցից հատկապես կենդանի և ցավոտ է Ադանայի դեպքը: Նա նշում է քրիստոնյաների դեմ կազմակերպված հանրահավաքների, հայերի և հույների խանութների և անշարժ գույքի մասին, որոնց վրա հարձակվում և թալանի էին ենթարկում հենց թուրքական ոստիկանության առջև, բայց որը չէր միջամտում: Խոսում էր քրիստոնյաների մոտ տիրող խուճապի մասին, նրանց ամենօրյա կյանքի մասին: Ապա սկսվում են պատերազմը և տեղահանությունը: 17-ից 30 տարեկան տղաները երեք օրվա ընթացքում մեկ շաբաթվա համար նախատեսված պարագաներով պետք է ներկայանային Ռազմական հավաքագրման կենտրոն: Արհեստավորները պետք է իրենց գործիքները իրենց հետ վերցնեին: Ասում էին, որ նրանք պետք է տեղավորվեն աշխատավորական գումարտակներում: Բայց չարչարանքի են ենթարկվում և սպանվում: Իսկ ով էլ, որ փրկվում է, ստիպված է լինում մեկուսանալ և ոստիկանությունից հեռու ապրել: 1915 թ. ապրիլի 24-ին 250 հայ նշանավոր մարդիկ և մտավորականներ են ձերբակալվում: Սկզբում բանտ են ընկնում, ապա տեղահանվում են Անատոլիա, որտեղ ոչնչացվում են: Շիրազյանը գրում է, որ անգամ հայերը ամբողջովին չեն հասկանում, թե ինչ է տեղի ունենում[125]:

---

[125] Հետագայում նմանատիպ երևույթի են հանդիպում բազմաթիվ հրեա ընտանիքներ, ովքեր շատ ուշացրին իրենց քթի տակ տեղի ունեցածը հասկանալը, ինչպես հրեաների հանդեպ հալածանքներն ու սահմանափակող միջոցառումները և նրանց տնտեսական կարողություններին վնասելու նպատա-

Երիտասարդ Արշավիրը անհանգստությամբ է հիշում հալածանքները և դրանց հետևանքով առաջացած ավերածությունները, ինչպես նաև գործակալ դարձած, կառավարություն անցած և հայերի տեղափոխության հարցերով զբաղվող կրկնակի հանցագործների ձայները:

Նա պատանի էր, երբ ընտանիքի և ընտանիքի կողմից ապաստան տված որոշ մարդկանց համար սնունդ էր հայթայթում և տեղափոխում: Կեղծ օրապարեններ էր օգտագործում և ոչ առանց վախի: Բայց այդ օրերին գրում է.

«Պատերազմի սարսափելի տարիներին Կոստանդնուպոլսի հայերը վտանգի մեջ գտնվող հայրենակիցների հանդեպ արժանապատիվ կերպով իրենց դրսևորեցին: Նրանք հերոսական ջանքեր էին գործադրում իրենց տները ապաստարան դարձնելու նպատակով՝ իրենց հացը հալածված անբախտների հետ կիսելով: Եվ երբեք չգանգատվելով՝ իրենց բազմաթիվ վտանգների էին ենթարկում, դիմանում էին ամենօրյա ճնշումներին, ֆինանսական դժվարություններին, սարսափելի և ստորացուցիչ հալածանքներին: Այդ զարհուրելի օրերին արհամարհված մարդիկ ողջախոհ էին դարձել. հարբեցողները, մարմնավաճառները, չարագործները, ոստիկանության բաժինների բոլոր «մշտական հաճախորդները» (...) օգնում էին հաց հայթայթել և բաժանել մարդկանց»[126]:

Հեղինակը նշում է, որ օգնելու են գալիս նաև բարձր խավերի պահպանողականները: Նրանց մեջ կային, եթե չասենք մեծամասնություն էին կազմում կանայք: Եվ 1918 թ. զինադադարից հետո մանկատներ, ճաշարաններ, բժշկական կենտրոններ են բացվում և մարդիկ Թուրքիայից փախուստի են դիմում դեպի Սիրիա, Լիբանան և դեպի հեռավոր արևմտյան երկրներ:

կով դրված արգելանքները: Այնքան ուշացրին, որ արդեն անհնարին դարձավ իրենց հայրենիքը համարվող տարածքից փախուստի դիմելը:

[126] **Ա. Շիրազյան**, մեջբերված ստեղծագործություն, էջ 39-40:

Շիրազյանը կանգ է առնում պատերազմի առաջին տարիներին զգացած սովի, սննդի նպատակահարմար միջոցներ գտնելու, ինչպես նաև ոստիկանության թակարդների վրա, որոնք, իր ընտանիքի օգնությամբ, կարողացել էր հաղթահարել:

Պատմում է նաև, թե ինչպես հեռավոր 1918 թ. հայերը պատճառներ ունեին ցավալու թուրքերի կողմից սպանված ծանոթների, հարազատների, ընկերների մեծ թվի և ավերված տարածքների ու գույքի համար: Բայց ունեին նաև ուրախանալու առիթ, քանի որ մոտենում էր վերամիավորումը: Միայն թե մի մեծ փուշ էր դեռ ցավեցնում: Դա հայերի սպանությունների պատասխանատուների փախուստն էր: Մոտ 120 հայտնի անձինք անգլիացիների հսկողության ներքո իրենց ընտանիքների և ծառաների հետ միասին տեղափոխվեցին Մալթա: Եվ Մալթայում հանգիստ ու հարմարավետ կյանքով էին ապրում: Բայց կային որոշ հայեր, ովքեր մեղադրվում էին իրենց իսկ ազգի դեմ դավաճանություն գործելու մեջ: Եվ 1919 թ. հայկական «Ճակատամարտ» օրաթերթը կազմավորում է Դատավարությունների գրասենյակ, որը հեռակա կարգով դատում էր Իթթիհադի ղեկավարներին և հայ դավաճաններին՝ նրանց դատապարտելով մահվան:

Այս ընթացքում ի հայտ են գալիս նաև քեմալիստական ուժերը.

«Եթե եվրոպացիները լքեին Թուրքիան, մեզանից ի՞նչ կմնար: Մայրաքաղաքի հայ բնակչությունը զգալիորեն ավելացել էր: Ո՞վ կպաշտպաներ մանկատները, փախստականների կենտրոնները, ապաստարանները, եթե թուրքերը, քեմալիստների ունեցած հաջողություններով ոգևորված, սկսեին նորից մոլեգնել»[127]:

1920 թ. մայիսի 27-ին մի շարք ուսումնասիրություններից և հետապնդումներից հետո Շիրազյանը սպանում է Վահե Իհսանին: Իհարկե ոչ առանց դժվարությունների, քանի որ ետևում ականատես է թողնում: Այստեղից էլ փախչում է դեպի Պերա և

[127] **Ա. Շիրազյան**, մեջբերված ստեղծագործություն, էջ 60-61:

ապա Սկյութար: Վերջապես կազմակերպությունը նրան Հայաստան է ուղարկում: Վերջապես հնարավորություն ունի կրկին տեսնել իր հայրենիքը: Երկար և վտանգավոր ճանապարհորդությունից հետո գալիս է 1920 թ. հունիսը: Նրան տրված առաջադրանքը երիտթուրքերի կառավարության Պատերազմի հարցերով նախկին նախարար Էնվեր փաշային և նրա քեռի գեներալ Խալիլ փաշային չեզոքացնելն էր: Այդ պատճառով նա և ընկերներից մեկը գնում են Վրաստան, բայց ոստիկանությունը միջամտում է և նրանց տանում են Մետեղի բանտ: Այստեղ նրանք մեկուսացվում են և սարսափելի տանջանքների ենթարկվում: Ապա վրացական Սիբիր տեղափոխելու հայտարարություն է լինում, այնտեղից էլ՝ հայրենակիցների կողմից կազմակերպված փախուստ: Եվ հաշվի առնելով Հայաստանում տիրող փոխված իրավիճակը՝ նրանք ստիպված են վերադառնալ Կոստանդնուպոլիս[128]:

Դա ճակատագրական ժամանում էր. մայրաքաղաքում դեռ որոնման մեջ գտնվող Շիրագյանը հանդիպում է իր ապագա կնոջը: Ապա ճանապարհ է ընկնում դեպի Մարսել՝ որպես վերջնական նպատակակետ ունենալով Հռոմը:

Շիրագյանը պատմում է երկարատև դարանակալումների, ուսումնասիրությունների, հիասթափությունների, իր հետ աշխատող ընկերոջ հետ ունեցած հակասությունների մասին, որոնք հրաշքով լուծվում են դոկտոր Նազիմի և Հասան Տահսինի հետ ծանոթանալուց հետո: Նրանք երկուսն էլ մեղավոր էին հազարավոր հայերի մահվան համար:

Բայց խնդիրները չեն ավարտվում: Հարկավոր է առիթ գտնել նրանց վրա կրակելու համար՝ առանց անմեղ մարդկանց վնասելու կամ սպանելու: Սկսվում են սպասումները, դարանակալումները: Ապա տեղի է ունենում մի բան, որ Շիրագյանի համար

[128] 1921 թ. Հայաստանի անկախ հանրապետությունը չի դիմանում թուրքերի և կոմունիստների հարձակումներին: Միայն 1991 թ. է Հայաստանին հաջողվում խորհրդային միության գերիշխանությունից հետո նորից անկախություն ձեռք բերել:

ճակատագրի անսպասելի անակնկալ է դառնում. նա հանդիպում և դժվարությամբ ճանաչում է արդեն երիտթուրքերի տխրահռչակ կառավարության վարչապետ դարձած Սաիդ Հալիմ փաշային, ով պատասխանատու էր տեղահանությունների և կոտորածների համար: Շիրագյանն այլևս թույլ չի տալիս, որ իրեն շեղեն, չնայած որ ընկերոջ հետ եղած դժվարությունները նորից էին սկսվել:

Շիրագյանի հուշերում նաև կանացի կերպարներ կան: Հենց այս պահին է, որ հայտնվում է Մարիան՝ մի երիտասարդ այրի, որ նրան վարձով տուն է տալիս և առաջնորդում է Էլենային, ով համոզված էր, որ երիտասարդը պատուհանի առաջ կանգ է առնում իրեն տեսնելու և սիրահետելու համար: Ապա գալիս է ձիերով կառքը և նա հայտնվում է Շիրագյանի կառքի առջևում: Սաիդ Հալիմը սկսում է հասկանալ, թե շուտով ինչ է կատարվելու: Նա ապարդյուն շրջվում է դեպի իր թիկնազորը: Այս անգամ բավական է լինում մեկ կենտրոնացված կրակոց: Սրան հետևում են անմիջապես փախուստն ու ամսագրերի մեկնաբանությունները: Մայրաքաղաքից ժամանում են թուրք ոստիկանները:

Արշավիր Շիրագյանը մտածում է միայն Կոստանդնուպոլիս վերադառնալու մասին՝ իր կատարածի մասին զեկույց ներկայացնելու և նոր առաջադրանք ստանալու համար:

«1921 թ. մարտին Բեռլինում Սողոմոն Թեհլիրյանի կողմից Թալեաթի սպանությունը թուրքերի մոտ իրական խուճապ է առաջացնում: Բայց հետզհետե նրանք սկսում են դուրս գալ իրենց որջերից: Միանշանակ մտածում էին, որ Թալեաթի սպանությունը անհավասարակշռված հայի ձեռքի գործ է և որպես այդպիսին այլևս չի կրկնվի: Եվ հիմա՝ դեկտեմբերի 5-ին՝ 8 ամիս անց, հերթը Հռոմում սպանված Սաիդ Հալիմինն է: Սա թուրքերի համար պարզ հաղորդագրություն էր: Արդեն վստահ էին, որ մի ամբողջ կազմակերպություն վճռել էր պատժել մեկ ու կես միլիոն հայերի կոտորածի պատասխանատուներին: Թուրքերը վե-

բացել էին եվրոպական փողոցներից և այդ պահից ի վեր սարսափի մեջ էին ապրում»[129]:

Տեղի ունեցածի մասին լուրը Իտալիայում, Թուրքիայում և այլ վայրերում բազմաթիվ հայերի կողմից ուրախության արցունքներով է ընդունվում: Եվ որոշ ժամանակ անց տիրող անհանգստությունից հետո թուրքերի համար մեկ թշնամին է դառնում Բեռլին մեկնելը:

Եվ հետո նորից սկսում են երկարատև և նյարդայնացուցիչ դարանակալումների, սառնամանիքին անցկացրած ժամերի, հիասթափության, կարծես անիմաստ անցած ժամանակի մասին երկարատև հիշողությունները: Խոսվում է նաև թուրք պատասխանատուների դատով զբաղվող խմբում եղած ներքին դժվարությունների մասին, քանի որ մի պահ պարզ դարձավ, որ նրանցից մեկը չի պահում վերահսկողության համար սահմանված հերթը և հորինված զեկույցներ է գրում: Այստեղ գլխավոր հերոսի բախտը նորից բերում է իրեն ապաստան տվող ընտանիքի ընտրության հարցում, որը նրան բարեկամաբար է ընդունում և ինչ-որ չափով պաշտպանում, քանի որ ամուսինը ոստիկանության աշխատակից էր: Սրան հետևում է ընկերներից մեկի հետ կայացրած հարձակման որոշումը և սպանվում են «Տրապիզոնի հրեշ» Ջեմալ Ազմին և *Իթթիհադ*ի առաջնորդ ու բժշկական գիտությունների պրոֆեսոր Բեհեդին Շեքերը, ով իր գիտելիքները օգտագործում էր կոտորածի գործի համար: Այս իրադարձությունը մեծ տպավորություն է գործում և արագ տարածվում է ամբողջ աշխարհով:

Արշավիր Շիրագյանը գրում է, որ ոչ առանց ցավի է հետևել իրենց ամուսինների արյունոտ դիակի վրա լաց լինող կանանց: Եվ հստակեցնում է, որ նրանք բախտավոր են, որ քրիստոնյայի հետ գործ ունեն: Եթե թուրք եղած լիներ, նրանց չէր խնայի:

Մի խոսքով՝ գալիս է վտանգավոր և անհանգիստ փախուստը:

---

[129] **Ա. Շիրագյան**, մեջբերված ստեղծագործություն, էջ 145:

Գիտնականները և հիշողությունը

Դոնալդ Ֆ. Միլլերը և Լորնա Թուրյան Միլլերը իրենց «Փրկվածները» գրքում առանձին դեպքերի հիշողություններ և պատմություններ են ներկայացնում: Դրանք պատմում են հետագայի մասին: Այսինքն՝ կյանքը Միացյալ Նահանգներում, ուր շատ հայեր գաղթեցին և իրենց գոյությունը փորձեցին այնտեղ վերականգնել՝ չնայած տեղի ունեցած ողբերգության ծանրությանը, որը ժամանակի հետ տարօրինակ կերպով ավելանում էր: Նրանք հարցազրույց անցած հարյուրից ավելի մարդկանց խոսքեր և նախադասություններ են մեջբերում, որոնք խոսում են գիտակցություն ձեռք բերելու, միայն հետո՝ ժամանակի ընթացքում տեղի ունեցածի իրազեկում մշակելու մասին: Ցեղասպանությունը երկար ծանրանում է շատերի վրա: Այն առանց խնդրելու, առանց ցանկանալու հայտնվել էր փրկվածների երազներում և մղձավանջներում:

Գիտնականները վարքագծի և արձագանքի նոր տիպաբանություն են առաջարկում, որը մշակվել է առանձին փրկվողների կողմից և կազմվել է նրանց իսկ պատմությունների միջոցով՝ առանց բացառելու ժամանակի ընթացքում հանգամանքների փոփոխությամբ պայմանավորված մեկ ձևի անցումը մյուսին:

Սոցիոլոգիայի բնագավառում տիպաբանությունները հաճույքով կիրառվում են իրականը և գոյություն ունեցողը «կարգի բերելու» համար: Կիրառվում են նաև կանխատեսումներ անելու նպատակով, եթե ոչ երկար, ապա գոնե կարճ և միջին ժամկետների համար, այսինքն՝ գոնե մինչև հանգամանքների կտրուկ փոփոխություն: Այսպիսով՝ որո՞նք են փրկված հայերի մոտ եղած արձագանքների գլխավոր տեսակները: Ըստ հեղինակների՝ ինչպե՞ս է այս տիպաբանությունը արտահայտվում:

ա) Խուսափողականություն և հեռացում

Նրանք առաջին հերթին խոսում են «խուսափողականության և հեռացման» մասին: Այս արձագանքը ունենում են նրանք,

ովքեր չափից շատ են տառապել և ցանկանում են խուսափել այդ օրերի մասին հիշողություններից: Այդ պատճառով նրանք խուսափում են բոլոր այն իրադրություններից, որոնք ենթադրում են այդ հիշողությունների վերականգնում: Այս տեսակին պատկանող մարդիկ չեն սիրում բացահայտել իրենց հետագա ծրագրերը[130]:

բ) Զայրույթ և բարկություն

Հեղինակները երկրորդ տեղում առաջարկում են «զայրույթի և բարկության» տեսակը: Այս զգացողությունները վերաբերում են այդ ամենի մեջ ներգրավված կեղեքիչներին: Բայց խոսքը գնում է հատկապես չնախատեսված և չկազմակերպված հուզական պոռթկումների մասին, որոնք ժամանակի ընթացքում միշտ չէ, որ մեղմանում են:

գ) Վրեժ և վերականգնում

Երրորդ տեսակը կրում է «վրեժ և վերականգնում» անվանումը: Սա վերաբերում է նրանց, ովքեր փորձում են իրենց զայրույթը, դառնությունը և ցավը քաղաքական ձևով արտահայտել: Այսինքն՝ փորձ է արվում «վերականգնման» հնարավոր ձևեր գտնել[131], քանի որ հայերի կոտորածի պատասխանատուներն այլևս կենդանի չէին և փոխհատուցման առարկա են դառնում թուրքական կառավարության անդամները, ովքեր նույնպես չէին ճանաչում իրագործված կոտորածներն ու ցեղասպանությունը:

---

[130] Ունայնությունը և մոռացումը կարող են կամընտրական լինել: Հիշվում են գլխավոր իրադարձությունները: Մարդ կամովի չէ վերադառնում փաստերին, մասնավորապես հուզիչ տեսարանների և դեպքերի:

[131] Այդ վերականգնումը կարող է լինել ֆինանսական ձևով, գույքի և կորցրած հողերի փոխհատուցման միջոցով: Կան նաև ավելի ընդհանուր պահանջներ, ինչպես օրինակ կան մարդիկ, ովքեր գտնում են, որ պատմական Հայաստանը (այսօրվա Թուրքիայի տարածքում) պետք է կրկին միացվի Հայաստանի Հանրապետությանը: Մյուս կողմից այս առումով գործի դրված ջանքերի ապարդյուն լինելը ուժեղացնում է վրեժի ցանկությունը: Հատկապես 70-ական թվականներին թուրքերի դեմ իրագործված մահափորձները այսպես են զարգացել:

դ) Հաշտություն և ներում

Չորրորդ տեսակը «հաշտություն և ներումն է»: Խոսքը ոչ թե եղածը ուրանալու, այլ որոշակի հավասարակշռության հասնելու[132], տեսականորեն որպես այդպիսին համարվող հնարավորություն ունենալու մասին է, որը որպես կանոն չի գործառվում և գործառական չի համարվում հայերի կողմից՝ թուրքական կողմի՝ ցեղասպանությունը չճանաչելու որոշման պատճառով:

ե) Հրաժարական և հուսալքություն

Մինչդեռ հինգերորդ տեսակը կոչվում է «հրաժարական և հուսալքություն», երբ այլևս անհրաժեշտ ուժ չկա ունեցած վերքը տանելու համար և այլևս վստահություն չկա, որ քաղաքական միջամտություն կլինի և անկարողության զգացումը արդեն չափազանց է[133]:

Այդպիսի զգացողություններ են առաջանում նաև նացիստական ճամբարներում որոշ փրկվածների հետ եղած միջադեպերի վերաբերյալ: Շատերը երկար տարիներ խուսափել են վերադառնալ այդ ժամանակաշրջան, խոսել դրա մասին և նախընտրել են լռել նույնիսկ ամենամոտ մարդկանց միջավայրում: Այս թեմայի շուրջ Տոդորովը խոսում է փաստերի անհասկանալիության պատճառով ճամբարների հիշողությունները փոխանցելու դժվարությունների մասին, որի պատճառն է նաև այն, որ հասարակությունը հրաժարվում է իր մեջ այդպիսի գործողություններ կատարելու ընդունակություն և հնարավորություն տեսնել: Այնպես, ինչպես արեց Թուրքիան: Մեղադրելու համար առավելագույնս մարդկանց մի սահմանափակ խումբ է բացահայտվում: Այդ ժամանակաշրջանի ղեկավարները մեղադրվում

---

[132] Այսպիսի ճանապարհով է անցել Դեսմոնդ Տուտուի և Նելսոն Մանդելայի Հարավային Աֆրիկան:

[133] Ֆ. Միլլերը և Լ. Թուրյան Միլլերը արձագանքի այս տեսակը մեկնաբանում են «տեղահանություններից փրկվածների վատթարացումը, ստորացումը և դեհումանիզացիան» ակնարկում (**Ֆ. Միլլեր և Լ. Թուրյան,** մեջբերված ստեղծագործություն, էջ 200):

և գուցե նաև մահապատժի են ենթարկվում հայերի կողմից: Հիտլերը և իր նախարարները մի քանի այլ անձանց հետ մեղադրվեցին Շոահի, Պորայմոսի և նացիզմի անվան տակ իրականացված սպանությունների համար: Դեռ ավելին՝ այսպիսի դեպքերը խորությամբ ընկալելու հետագա դժվարությունը Տոդորովի կարծիքով ծագում է ընդհանուր տեսություն բացահայտելու անկարողությունից, որի շրջանակներում կարելի է դնել այդ իրադարձությունները: Այս ուսումնասիրությունները, իմ կարծիքով, կարող են վարքագծեր և վերաբերմունք բացատրել ոչ միայն նացիստական Գերմանիայի, այլ նաև հայոց ցեղասպանության համար:

զ) Բացատրություն և բանականացում

Ենթադրվող վերջին տեսակը «բացատրություն և բանականացումն» է: Ըստ հեղինակների՝ այս երկրորդական արձագանքը լինում է նրանց կողմից, ում չի հաջողվում քաղաքական արդարացումներ և բացատրություններ գտնել[134].

«Երբ բարոյական կարգը խախտվում է, հարկավոր է բացատրություն, որը կարդարացնի կամ կփորձի իմաստ գտնել մարդկային ողջամտությանը հակասող իրադարձություններին: Կարելի է ասել, որ ցեղասպանությունը ներկայացնում է մարդկային քաղաքակրթության կրողները համարվողների ծայրահեղ ոչնչացում: Եվ իսկապես, ցեղասպանությունը մեզ սպառնում է խորը մակարդակով և վտանգին դիմադրելու ձևերից մեկը բացատրություն կամ արդարացում գտնելն է: Մեր հարցազրույցներից պարզ է դառնում, որ փրկվածները ճանաչողական մակարդակում խորապես անհանգստացել էին ցեղասպանության պատճառով և իրենց ամբողջ կյանքն են անցկացրել դրան բացատրություն գտնելու որոնումներով»[135]:

---

[134] **Դ. Ե. Միլլեր և Լ. Թ. Միլլեր**, մեջբերված ստեղծագործություն. էջ 184-203:

[135] **Դ. Ե. Միլլեր և Լ. Թ. Միլլեր,** մեջբերված ստեղծագործություն. էջ 201:

Դժվար է, եթե ոչ անհնարին, զոհացուցիչ բացատրություն գտնել այսպիսի դեպքերում: Տարբեր վարկածներ կարող են առաջ քաշվել. գուցե տեղահանության միտքը ծագել է եվրոպացի (գերմանացի)[136] մտավորականների կողմից, ովքեր մտադրվել էին Թուրքիան հնարավորինս լավ օգտագործել, Թուրքիա, որը, սակայն, ավելի հզոր էր առանց մասնատումների և ներքին հակասությունների: Կամ էլ կարելի է կարծել, որ ցեղասպանությունը կատարվել է հայերի հարստության պատճառով. ուրիշի հարստությունը միշտ էլ նախանձ և որոշ դեպքերում նաև կոտորածներ է առաջացնում: Ուրիշներն էլ կարող են ասել, որ գլխավոր պատճառներից է կրոնական տարբերությունը. հայերը քրիստոնյա են, թուրքերը՝ մահմեդական: Որոշ մահմեդական բողոքականներ էլ կարող են մտածել, որ սա աստվածային պատիժ է՝ հայերին ճիշտ հավատի բերելու համար: Նույնիսկ եթե կան հեղինակներ 19-րդ դարում որոշակի հայկական իրականություններին ուղղված հալածանքների և 21-րդ դարում տեղի ունեցած ցեղասպանության միջև ուղիղ կապ են տեսնում, ցեղասպանություն հասկացության կիրառումը արդեն նշանակում է, որ խոսքը գնում է նախորդից տարբերվող մի երևույթի մասին[137]:

---

[136] Հարկ է նշել, որ տարբեր են կարծիքները գերմանացիների պատասխանատվության հարցում՝ հաշվի առնելով, որ նրանք ոչինչ չեն արել տեղահանությունները և սպանությունները կանգնեցնելու համար: Կարծիք կա, որ հենց Կայզերի կաբինետն է տեղահանության ուղիղ առաջարկ արել: Այդպես են կարծում հատկապես ֆրանսիացի կամ ոչ գերմանացի այլ գիտնականներ: Համենայնդեպս տեղահանությունը՝ որպես ոչնչացման գործիք նախադեպ է դարձել հետագայի համար:

[137] «Ցեղասպանություն» եզրը առաջին անգամ կիրառվել է 1943 թ. Ռաֆայել Լեմկինի «Բռնազավթված Եվրոպայի առանցքային կանոնը» աշխատության նախաբանում: Ցեղասպանություն ասելով հասկանում ենք տարբեր գործողությունների համակարգված ծրագիր, որը նպատակ ունի ազգային խմբերի կենսական հիմնական պայմանների և վերջ ի վերջո հենց այդ խմբերի ոչնչացում: Լեմկինը այդ հասկացությանը կրկին անդրադառնում է 1945 և 1946 թթ.: Իր ձևակերպումներով նա հասնում է Նյուրնբերգյան դատավարությանը, ինչպես նաև 1946 թ. Միացյալ ազգերի կազմակերպության գլխավոր Ասամբ-

Հեղինակները կանգ են առնում նաև տարբեր արձագանքներ և դիրքորոշումներ առաջացնող գործոնների վրա: Նրանց կարծիքով հայերի կողմից ցեղասպանության ընկալման և իրենց վարքագծի վրա մեծ ազդեցություն է թողնում ֆիզիկական և բարոյական տառապանքի բեռը:

Նույն բանը չէ կորցնել հարազատին, բայց կարողանալ մյուսների հետ մնալ և մնալ ամողջովին միայնակ՝ ստիպված լինելով բազմաթիվ խոչընդոտներ հաղթահարել գոյատևելու համար: Բայց իմ կարծիքով նրանց մեկ այլ նշագրում ավելի հետաքրքիր և հիշարժան է: Նրանց կարծիքով թուրքական մերժողականությունը խթանել է և մինչ օրս խթանում է սփյուռքով մեկ տարածված հայերի միասնականությանը:

Չնայած սփյուռքում հայկական մշակույթի անկմանը (որն այլ կերպ անվանում են «սպիտակ ցեղասպանություն»)՝ այնտեղ ցեղասպանությունը ժխտող թուրքերի դեմ զայրույթ է տիրում: Ընդհանուր թշնամու գոյությունը սոցիալական մեծ միասնականություն է առաջացնում, բայց թուրքական ժխտողականությունը բացասական հետևանքներ է թողնում, քանի որ հայերը կենտրոնացել են մեկ հարցի շուրջ և դա ինչ-որ չափով հետաձգում է հետ-ցեղասպանության մշակութային ծաղկումը[138]:

Այսօր սա շատ կարևոր հորիզոն է, հատկապես եթե ցանկություն չկա կորցնել Թուրքիայի հետ նոր հարաբերություններ սկսելու հնարավորությունը: Եվ եթե Եվրոպան մտադիր չէ հույսը կորցնել հարաբերությունների թելը վերականգնելուց մի երկրի հետ, որը երկար ժամանակ արևմտյան աշխարհի դաշնակցի դեր է կատարել և որը ընկած է Ասիայի և Եվրոպայի միջև ու այսօր վտանգ կա, որ Եվրոպայի կողմից երկարատև վարա-

---

լեայի կողմից սահմանված ցեղասպանության դատապարտման բանաձևին և դրա դատապարտման ու կանխարգելման հատուկ համաժողովի՝ հավանության արժանանալուն (դեկտեմբերի 9, 1948 թ.):

[138] **Դ. Ե. Միլլեր և Լ. Թ. Միլլեր**, մեջբերված ստեղծագործություն, էջ 187:

նումներից ու հետաձգումներից հետո կարող է գնալ դեպի հետագա հեռացում[139]:

Բնականաբար հիշողությունները երբեք այսքան բաժանված չեն, ինչպես այսպիսի դեպքերում: Բայց ինչպե՞ս կարելի է մտածել առաջ գնալու մասին առանց անցյալի հետ հաշիվները մաքրելու: Գիտնական Ցվետամ Տոդորովը, ով կանգ է առել հատկապես Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում տեղի ունեցած ողբերգությունների վրա, գրել և զգուշացրել է «Հիշողության չարաշահումների» մասին[140], և իսկապես գոյություն ունեն չարաշահման ակնհայտ վտանգներ: Բայց գոյություն ունի նաև հիշողության ջնջման վտանգ, որը նույնչափ, եթե չասենք ավելի սարսափելի է[141]:

---

[139] **Մ. Անսալդո**, «Ո՞վ է կորցրել Թուրքիային», Տորինո, Էյնաուդի, 2011 թ.:

[140] **Տ. Տոդորով**, «Հիշողության չարաշահումներ», Նեապոլ, Իպերմեդիում գրքեր, 2001 թ.:

[141] **Ֆ. Ֆեռռարոտի**, «Մոռացման փորձ», Հռոմ-Բարի, Լատերցա, 2001 (7) թ.:

ԳԼՈՒԽ IV

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ: ՈՉ ՄԻԱՅՆ ԱՆՎԱՆՄԱՆ ԽՆԴԻՐ

Ասում են, որ «ցեղասպանություն» բառն առաջացել է հայերի կրած կոտորածների հետ կապված: Բայց որոշ ժամանակ անց Գերմանիայում ի հայտ են եկել Հիտլերը և նացիզմը և տեղի են ունեցել հրեաների փոցխահարումն ու տեղահանությունը՝ նպատակ ունենալով հասնել նրանց ամբողջական ոչնչացման և ոչ միայն: Ճամբարներում փակվում և սպանվում էին հաշմանդամները, նացիզմի և Հիտլերի քաղաքական հակառակորդները, կրոնական խմբերը, ինչպես օրինակ՝ Եհովայի վկաները, ինչպես նաև սուֆիստներն ու գնչուները: Բայց ի՞նչ է նշանակում ցեղասպանություն: Ո՞րն է բառի սահմանումը, որ հասունացել է պատմության և իրավաբանության բնագավառներում: Եվ արդյոք այս հասկացությունը բավարար է և ի վիճակի՝ անմիջապես հաղորդել, թե խոսքն ինչի՞ մասին է: Թե՞ կարող են ավելի լավ հասկացություններ լինել տեսական և հաղորդակցական տեսանկյուններից:

Այս հարցադրումները ներկայացնելու համար կարծում եմ, որ հարկավոր է առաջին հերթին ուսումնասիրել ցեղասպանություն հասկացության անցած ուղին և դրա արտացոլումը ընդհանուր իրավագիտության բնագավառում:

1. Ցեղասպանություն հասկացության մշակումը

Առաջին հերթին հասկացությունը բացառում է բնական աղետների վարկածը, որը վերաբերում է այնպիսի երևույթների, ինչպիսիք են ջրհեղեղը, երկրաշարժը կամ նմանատիպ այլ դեպքերը, որոնք հավանաբար մասամբ պայմանավորված են անփութությամբ և գուցե նաև շահարկմամբ, բայց դիտավորությամբ չեն նախատեսվել որպես այդպիսին[142]:

Ցեղասպանությունը կապ չունի նաև ոչ կամավոր պատահարների հետ, ինչպիսիք են երկաթգծային աղետները, ինքնաթիռների վթարները և այլն:

Այս դեպքում մենք գործ ունենք ակնհայտորեն կամավոր և մտադրված բնույթ ունեցող երևույթի հետ: Այսինքն՝ խոսքը գնում է մի վերքի մասին, որին հետամուտ են եղել և այն ցանկացել են ու որի առարկա են դարձել կանայք ու տղամարդիկ: Այն ծրագրի առարկա է եղել:

Բայց այս առաջին մոտեցման ճշմարտացիությունը ցույց տալու համար ինքնին երևույթը հաշվի առնելը բավարար չէ: Դա իսկապես կարող է վերաբերել տանջանքի նման ծանր փաստերին, կարող է վերաբերել շահագործման տարբեր տեսակների, որոնք պարտադիր չէ, որ կապված լինեն ցեղասպանության հետ: Հաճախ սա կարող է նմանեցվել տանջանքին, քանի որ տանջանքն իր հերթին մարդու մեջ թե՛ ֆիզիկական և թե՛ հոգևոր ապրումներ է առաջացնում: Բայց որպես կանոն տանջանքը նպատակ ունի պարզել կարևոր համարվող տեղեկատվություն, կամ պատժել իրական կամ ենթադրյալ ուխտադրուժներին և դավաճաններին, նույնիսկ եթե իրականում կարող է կիրառվել

---

[142] Աղետների մասին այսօր գոյություն ունի պատմա-սոցիոլոգիական հարուստ գրականություն, որ նոր զարգացում է ապրել վերջերս տեղի ունեցած Իտալիայի Աքուիլայի երկրաշարժի (2009 թ.) և Հայիթին ողողած ջրհեղեղի դեպքերից հետո, որոնցից վերջինի արդյունքում մեծ թվով զոհեր եղան և անհաշվելի վնաս հասցվեց արդեն դժվարությունների մեջ գտնվող մի երկրի:

մարդուն ստորացնելու, նրան թե՛ ֆիզիկական և թե՛ մտավոր մակարդակներում ոչնչացնելու, ինչպես նաև նրա ինքնության զգացումը վարանելու և կասկածի տակ դնելու համար:

Ասում են, որ ցեղասպանությունը կարող է ուղեկցվել տանջանքով, բայց միանշանակ իրենից ավելին է ներկայացնում: Այն ենթադրում է (կամ առաջարկում է) ոչ թե մեկ առանձին անձի, այլ մի փոքր խմբի, մի ամբողջ իրականության, բայց նաև անձի ոչնչացում, եթե նա որոշակի խմբի անդամ է հանդիսանում:

Վերը նշված դեպքերում հայ ժողովրդի ոչնչացումն է հայոց ցեղասպանություն ասվածի նպատակը եղել, և ոչ թե այս կամ այն անձի սպանությունը որպես այդպիսին:

Թեկուզ մեծ դժվարությամբ, բայց տանջանքի միջոցով կարելի է վերականգնման որևէ ուղի պատկերացնել: Հետվնասվածքային և սթրեսից առաջացած հիվանդությունները որոշակի մշակման միջոցով կարող են հասցնել վերջնական վերլուծության և եթե ամեն ինչ լավ ընթանա, ապա իր կյանքով մտահոգված սուբյեկտը վերատիրապետման է գնում: Այսօր Իտալիայում, ինչպես ամենուրեք, գոյություն ունեն տանջանքի զոհ դարձած փախստականներ, ովքեր աջակցության, խնամքի, որոշակի իրավաբանական պաշտպանության, բժիշկների և հոգեբանների օգնությամբ և նորից ապրելու իրենց ցանկության շնորհիվ աստիճանաբար կարողացել են իրականության, ամենօրյա կյանքի հետ որոշակի կապեր ձեռք բերել և վերաձևավորել իրենց անձը և տեղավորվել ժամանակի և տարածության միջև՝ հող նախապատրաստելով ուրիշների հետ կիսվելու համար: Թե՛ ֆիզիկական և թե՛ հոգեթերապևտիկ բուժումների, ինչպես նաև դեղերի օգնությամբ կարողացել են վերականգնողական ուղի անցնել և դուրս գալ կաթվածահար մղձավանջներից:

Իհարկե խոսքը պարզ, հստակ, համասեռ ծրագրերի և ճանապարհների մասին չէ: Թերապևտների աշխատանքը հաճախ դժվարին է և երկար է ձգվում: Այն դժկամության է ենթակա: Սովորաբար փոքր միջուկների է վերաբերում: Օրինակ՝ Հայաստա-

նում կարող է այդպիսին համարվել ՏԱ.ԶՈ ծրագիրը (Տանջանքի զոհեր), որ երկար տարիներ մշակվել է ՓԻԽ-ի կողմից (Փախստականների իտակալան խորհուրդ), որը հոգեսոցիալական վերականգնման նպատակով առավելագույնը 10 հոգանոց անձնակազմով փոքրիկ լաբորատորիաներ է ոտքի կանգնեցրել. գորգերի և կահույքի վերականգնման (ակնհայտ խորհրդանշանական արժեք ունեցող արվեստ), ինչպես նաև երաժշտության, տեսանյութերի պատրաստման լաբորատորիաներ: Եվ իհարկե թատրոն. կատարսիսը (քավություն) դեռևս հնագույն դասական ժամանակներից բեմական ցուցադրության նպատակներից մեկն է եղել[143]:

Լավագույն դեպքերում ներգրավված մարդիկ կարողանում են ժամանակի ընթացքում ետ բերել ուրիշների հետ շփվելու կարողությունը (սա վերաբերում է թե՛ լաբորատորիաների վարիչներին և թե՛ նրանց ընկերներին), վերականգնել ինքնավստահությունը: Երբեմն կարողանում են քնքշանքի աշխարհ վերադառնալ, ոչ կործանարար զգացմունքներ ունենալ: Կարող են առաջին դեմքով մասնակցել առաջարկված գործընթացներին, որոնք ուղղվում են նրանց հավասարակշռության և անհատականության վերականգնմանը: Կարող են ետ բերել անգամ պլանավորման որոշակի կարողություն, մշակել իրենց ապրած դրամատիկ և ցավալի փորձը: Եվ կարողանան ապրել չնայած այդ ամեն ինչին: Կարող են իրենց այդ հիշողությունների հետ մաքրել բոլոր հաշիվները, հիշողություններ, որոնք նախկինում մոռացության էին մատնվել, ջնջվել, սառել ու հերքվել: Կարող են ապագայի համար որոշակի պատկերացումներ կազմել և այնտեղ որոշակի դեր խաղալու հնարավորություն ունենալ:

---

[143] Խոսքը Ֆիորելլա Ռաթաուսի ջանքերի մասին է, ով երկար տարիներ զբաղվում էր այդ հարցով, որը, փաստորեն, մեծ պատասխանատվություն կրող գործունեություն էր և միշտ չէ, որ շահ ունեցող սուբյեկտները անմիջապես էին այն հասկանում:

Մինչդեռ ցեղասպանությունը ոչ թե փորձում է առանձին անձի ոչնչացնել, այլ մի ամբողջ իրականության: Այդպես է եղել հայերի դեպքում (ոմանց հաջողվել է փախչել, բայց ոչնչացման ցանկությունը վերաբերում էր ամբողջ բնակչությանը): Նույնն է տեղի ունեցել նաև Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ՝ Շոահի դեպքում հրեաների և նաև մյուս փոքրամասնությունների հետ:

1948 թ. դեկտեմբերի 9-ի բազմակողմանի համաժողովը

«Գենոցիդ» բառը ծագում է հունարեն *ghenos*՝ ռասա, ժողովուրդ բառից, և լատիներեն caedere բառից, որն էլ նշանակում է սպանել:

Այսինքն՝ մենք հայերի տեղահանությանը, հրեաների, հաշմանդամների, գնչուների, քաղաքական ընդդիմադիրների, գրավված տարածքների բնակչության նացիստական ոչնչացմանը հաջորդող ժամանակաշրջանում ենք: Եվ մարդու իրավունքների հանդիսավոր համընդհանուր հռչակագրի նախօրեին:

Համաժողովի նյութը պնդում է ոչնչացման գործողությունների «կամավորական» բնույթի մասին: Այս տեսանկյունից մարդասպանությունը նույնպես կարող է դասակարգվել որպես ցեղասպանություն, եթե տվյալ անձը սպանվել է որպես որոշակի խմբի անդամ, որոշակի իրականության և պատկանելիության մի մաս:

Հավանություն է տրվում նաև ֆիզիկական կամ հոգեկան (հետևաբար նաև մտավոր) ամբողջականությանը վնասող ծանր վերքեր հասցնելու, ինչպես նաև «խմբին հարկադիր կերպով իր ֆիզիկական, ամբողջական կամ մասնակի ոչնչացմանը սպառնացող կենսական պայմանների հասցնելու միտքը, որտեղ այն ինչ հաշվի է առնվում և այն, ինչ պարսավանքի է ենթարկվում, գործողությունների դիտավոր և կանխամտածված բնույթն է:

Բացի այդ տեքստը դատապարտելի և արգելված գործողություն է համարում խմբի ներսում ապագա ծնունդները խոչընդոտող միջոցառումներ կազմակերպելը: Եվ հասկացությունը լայն իմաստով է հասկացվում, քանի որ հիշեցվում և նշվում են ամուսնությանը հստակորեն խանգարող խոչընդոտներ, սեռերի հարկադիր բաժանում, հղիության արհեստական ընդհատում, հարկադիր մանրէազերծում:

Բացի այդ նշվում են երեխաների՝ մեկ խմբից մյուսը տեղափոխելու մասին, որի հետևանքն է լինում ընտանեկան և հասարակական կապերի խզումը և դրան էլ հետևում է պատկանելիության զգացման կորուստ: 900-ականներին շատ էին իրենց հարազատ ընտանիքներից կտրված, Արգենտինայում ծնողներին սպանողների և հալածողների տներում մեծացած երեխաները:

Ո՞վ է մեղավոր

Համաժողովի 4-րդ հոդվածի համաձայն մեղավոր և հետապնդման ենթակա են հանցագործության հեղինակները՝ լինեն նրանք անհատ քաղաքացիներ թե պետական պաշտոնյաներ[144]: Եվ ոչ միայն: Հետապնդման ենթակա են նաև թեկուզ բարձր դասի պատկանող քաղաքական գործիչները այն չափով, որով դրդել կամ էլ «ընդամենը» թույլ են տվել, որ քրեական հանցանքը իրականություն դառնա:

Քանի որ խոսքը հատկապես սկզբունքների ցուցակավորման մասին է, համաձայնագիրը ստորագրող պետությունները 5-րդ հոդվածով պարտավորվում են իրենց երկրում համապատասխան օրենսդիր միջոցառումներ ձեռնարկել թե՛ խմբերի որոշակի պաշտպանություն իրականացնելու և թե՛ ցեղասպա-

[144] Նյուրնբերգյան դատավարությունը, որ հետաքննում է ազգայնականների կողմից կատարված հանցագործությունները, սահմանում է, որ հրաման կատարելը հարգելի արդարացում չպետք է համարվի:

նությունը արդյունավետ պատժամիջոցներով զսպելու և կանխելու համար:

Պետություններին նաև վստահված է դատավճռի ի կատար ածումը: Եվ քանի որ հաճախ հենց պետությունն է հետապնդում ոչնչացման նպատակ ունեցող իր ներսում գտնվող խմբերին, այդ պատճառով Համաժողովը նախատեսում է նաև պետության կողմից ՄԱԿ-ին (փաստացի՝ անվտանգության խորհրդի գլխավոր ժողովին) միջամտության պահանջով դիմելու հնարավորությունը, որը նախատեսում է այլ պետություններում հալածանքի ենթարկվող խմբի կամ խմբերի պաշտպանություն:

Համաժողովը միաձայն է ընդունվել՝ հաշվի առնելով Առաջին և Երկրորդ համաշխարհային պատերազմների ընթացքում տեղի ունեցած ցավալի իրադարձություններից հետո տիրող տրամադրությունը և ուժի մեջ է մտել 1951 թ. հունվարի 12-ից:

Ցեղասպանությունն այսօր

Սկզբում հայերի, ապա նացիզմով պայմանավորված հրեաների և այլ փոքրամասնությունների ոչնչացման ցավալի դեպքերից հետո 900-ականների երկրորդ կեսին նույնպես սարսափելի իրավիճակներ են ստեղծվում, որոնք կասկած են առաջացնում օրենքի և բռնության, պետության գերիշխանության և կարողության հարաբերությունների շուրջ: Դրանք էլ ավելի ակնհայտ են դարձնում միջազգային կազմակերպությունների ունեցած դերը ավելի լավ սահմանագծելու և դրանց հավանություն տալու անհրաժեշտությունը:

Բավական է հիշել նախկին Հարավսլավիայում տեղի ունեցած պատերազմը, որը սկիզբ է դրել Բոսնիայի մահմեդականների դեմ ուղղված ցեղասպանական գործողությունների[145]: Այլ

[145] **Է. Հոշ**, «Բալկանների պատմություն», Բոլոնիա, Մուլինո, 2006 թ. (Geschichte des Balkans, Munchen, 2004):

օրինակներ են Բուրունդիի, Ռուանդայի դեպքերը, ինչպես նաև նախկին Զաիրում տեղի ունեցած քաղաքացիական պատերազմը:

Հիտլերի ցանկությամբ կազմակերպված ցեղասպանությունը անշուշտ վերջինը չէ, քանի որ դրան Աֆրիկայում և այլ վայրերում հետևել են շատերը: Շատ դեպքերում ցեղասպանությունները հակառակորդների սպանություններն իրականացնելու համար չեն կիրառում տեխնոլոգիա կամ գիտություն, այլ օգտվում են պարզագույն միջոցներից: Օրինակ՝ Ռուանդայում սուրը շատ սպանությունների գլխավոր գործիքն է եղել՝ օգտագործվող զենքի առումով նման լինելով հայերին՝ ոչ ավելի քան հրեաներին և ուրիշներին:

Այնուամենայնիվ՝ ցեղասպանությունները և կոտորածները չեն դադարել: Փախստականների համար Միացյալ Ազգերի բարձրագույն կոմիսարիատը (UNHCR) թարմացրել է իր մանդատը և ընդլայնել է իր միջամտությունների ոլորտը:

Այստեղից էլ ծագել է մարդկության դեմ հանցանքները դատելու կարողությամբ միջազգային դատարանը:

«Էթնիկական»[146] բաժանումը հաղթահարելու հանձնառություն

Հայերի դեպքը, նաև Եվրոպայի և Աֆրիկայի մյուս դեպքերը, որոնց անդրադարձանք, ակնհայտ են դարձնում այս առումով ժամանակակից աշխարհի վերանայման կարևորությունն ու

[146] Օգտագործում եմ եզրը՝ հաշվի առնելով, որ այն ենթադրում է պատմամշակութային հարկադրանքներ, տարբերությունների խորացում, ինչի պատճառը գաղութացման օպտիկան է, ինչպես դա ցույց է տվել օրինակ Ա. Ռիվերան իր «14 հիմնաբառ ունեցող էթնիկական խառնաշփոթություն» աշխատությունում, Բարի, Դեդալո, 2000 թ.: Այս առումով հետաքրքիր է նաև Գ. Ֆազոյի «Ժողովրդավարական ռասիզմի բառապաշար. բացառության ենթարկված բառեր» աշխատությունը, Հռոմ, Դերիվե և Ապրոդի, 2008 թ.:

հրատապությունը, քանի որ այն դեռ բնութագրվում է ազգությունների և խմբերի միջև եղած բաժանման և բախման միտումներով:

Մենք տեսանք, թե ինչպես նախկին պետությունների անկումը առաջացրել է տարբեր ազգային ինքնություններ, հաճախ կան տարածքներ, որոնք խառնվել և բաժանվել են էթնիկական տարբերություններով և տարբեր կրոնական հավատքներով պայմանավորված լարումների միջև: Քիչ չեն նաև բերրի փոխանակումների դեպքերը: Էդգար Հոշը գրում է.

«Բոսնիա-Հերցոգովինայի մայրաքաղաք Սարաևոյի սրտում, ամենանեղ վայրերում, մահմեդականների, ուղղափառների, կաթոլիկների շենքերում և հրեական թաղամասերում զարմանալիորեն նկատվում է մշակույթների և տարբեր խոստովանանքների բերրի հարևանություն և համակեցություն»[147]:

Բալկանյան երկրների արվեստը ներկայացնող հուշարձանները, 300-ականների վերջի մոլդովական դպրոցի եկեղեցական ճարտարապետությունը երջանիկ վերամշակումների և խառնուրդների այլ օրինակներ են: Ժամանակակից շրջանի առաջին մասում Տրանսիլվանիան Արևմուտքի և Արևելքի միջև պատվավոր հանդիպավայր էր, և երկրի քաղաքացիների դավանանքային բազմազանությունը դրդում է հանդուրժողականության անսովոր մի քաղաքականության: Հեղինակը նաև գրում է, որ հարկավոր է հիշել, թե ինչպես Իտալիայի մոտ գտնվելը և Վենետիկի առևտուրը Ադրիատիկի շրջանում սկիզբ դրեցին մի յուրօրինակ «մշակութային շրջանի»: Եվ նշում է նաև, որ օսմանյան շրջանի հարստությունը բալկանյան թերակղզու մշակութային ժառանգության փոքր մաս չի կազմում: Հիշում է երաժշտության, լեզվի, խոհանոցի, ինչպես նաև հագուստի, սովորույթների և տների մասին:

---

[147] **Է. Հոշ**, մեջբերված ստեղծագործություն, էջ 96:

Եվ հետո նույն այս թերակղզում են սկսվել էթնո-ազգայնական ֆանատիզմի ծայրահեղության հասնող գործողությունները, պատմական մեծ արժեք ներկայացնող հուշարձանների ոչնչացումը, լեզվաբանական մաքրություն հարկադրելու փորձերը, հարավարևելյան Եվրոպայի ձեռագրերի և գրքերի գլխավոր հավաքատեղիի ոչնչացումը: Էլ չասած սպանությունների, տանջանքի կիրառման, «էթնիկական բռնությունների» մասին:

Եվ սա այն դեպքում, երբ խոսքը կառուցողական համակեցության բարեհաջող փորձարկում անցած տարածքների մասին է:

Այսօր արևմտյան Եվրոպայում, այնպես, ինչպես Միացյալ Նահանգներում և այլուր, ցեղասպանությունից փախած հայերի թոռները փորձում են ապրել իրենց հիշողությունների և տանջահար Բալկաններից եկած բազմաթիվ փախստականների ու ապաստան փնտրողների, ինչպես նաև տարբեր պատճառներով իրենց երկիրը լքած բազմաթիվ գաղթականների հետ:

Խոսքը, իհարկե, դժվարին համակեցությունների մասին է: Բայց գուցե հենց հայոց ցեղասպանությունը մեզ կարող է սովորեցնել, որ հատուկենտ փրկվածները գիտեն և կարող են արձագանքել, վերականգնել իրենց կյանքը, կարող են հիշողությունների մի ժառանգություն փոխանցել իրենց երեխաներին և թոռներին, ժառանգություն, որի հետ դժվար է հաշիվները մաքրել, բայց որը համենայնդեպս կարող է դառնալ նոր հավասարակշռություններ փնտրելու սկզբնակետ:

2. Ցեղասպանություն, թե՞ բնաջնջում

Մնում է պարզել անվանման խնդիրը: Չնայած թուրքական կողմը ժխտում է ցեղասպանությունը, գոյություն ունեն մի շարք բանավեճեր՝ Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում հայերի, ապա նաև հրեաների և շատ ուրիշների, որոնց թվում 3-րդ Ռեյխի ժամանակաշրջանում գնչուների կոտորածները ցեղասպանություն անվանելու կամ չանվանելու խնդրի շուրջ:

Ես դիմել եմ հատկապես մի ծավալուն, փաստացի և հետաքրքիր աշխատության՝ գրված Դանիել Ջ. Գոլդհագենի կողմից, որը Իտալիայում լույս է տեսել «Պատերազմի ամենավատ կողմը. մարդկության պատմության ամենամեծ կոտորածը»[148] անվանումով և գիտնականը այստեղ առաջարկում է մոռանալ «ցեղասպանություն» ասվածի մասին և օգտագործել «ոչնչացում» անվանումը: Նրա կարծիքով ճիշտ չէ դա ընդունել որպես այսօրվա մասսայական սպանություն: Եվ սա թե՛ այն պատճառով, որ դժվար է տարբերակել սահմանումը, բացատրությունը և բարոյական արժևորումը, և թե՛ այն, որ այս վերջին կետը շատ հաճախ առավելություն է ունենում գիտական վերլուծության անհրաժեշտությունների նկատմամբ: Սա հասկանալի է, բայց ապակողմնորոշիչ: Այսինքն՝ բավարար հարցադրումներ չեն ներկայացվում այն պատճառների, հանգամանքների վերաբերյալ, որոնք ըմբռնելի են դարձրել մասսայական սպանությունները: Նրա կարծիքով այդ է պատճառը, որ շատ ավելի հարմար կլինի խոսել «վերացման» մասին: Վերջինս միշտ գոյություն է ունեցել մարդկության պատմության մեջ, չնայած որ ամբողջ աշխարհում մեծ տեղ է գրավել 20-րդ դարի ընթացքում: Գոլդհագենը գրում է, որ վերացումը ավելի լայն հասկացություն է, քան ցեղասպանությունը և ավելի քիչ աղոտ: Նրա կարծիքով այն իր մեջ տարբեր կողմեր է ներառում: Այդ կողմերը կարող են թե՛ առանձին և թե՛ միաժամանակ օգտագործվել: Այս կողմերից որոշները կարող են միևնույն վերացման պատկերի տարբեր շրջաններում գոյություն ունենալ: Հեղինակը նրանց այսպես է ներկայացնում և առաջարկում: Նա գրում է, որ առաջին հերթին գոյություն կունենար մտադրված ցանկություն.

1. Թշնամի համարվող խմբի, իրականության «փոխակերպում»: Խոսքը գնում է խումբը այդպիսին դարձնող քաղաքական,

---

[148] **Դ. Ջ. Գոլդհագեն**, «Պատերազմից էլ վատ. մարդկության պատմության ամենամեծ կոտորածը», Միլան, Մոնդադորի, 2010 թ. (Worse Than War, 2009)

սոցիալական և մշակութային ինքնությունը ոչնչացնելու մտադրության մասին: Գիտնականը որպես օրինակ է բերում Թուրքիայի կողմից քրդական գրավոր և բանավոր խոսքի վերացման փորձերը: Եվ նշում է, որ հաճախ փոփոխության ենթակա համարվող հատկանիշների թվում է կրոնական կողմը (այստեղ քննության դրված օրինակը քրիստոնյա հայերի նկատմամբ տածած նողկանքն է):

2. Բացահայտած մեկ այլ տարր է «ճնշումը»: Այս դեպքում փորձ է արվում ատելության առարկա հանդիսացող մարդկանց պահել տարածքում, բայց բռնությամբ նրանց իշխել: Ծայրահեղ օրինակ կարող է լինել Հարավաֆրիկյան ռասայական խտրականությունը: Թուրքիայի հայերի դեպքում սա կարող է, 800-ականներին հայ քաղաքացիների հանդեպ կիրառված հալածանքների և բռնությունների պատճառներից մեկը լինել:

3. Նշված երրորդ տարրը «արտաքսումն» է, այլ կերպ ասած՝ տեղահանություն: Գիտնականը նշում է, որ մարդկության պատմության մեջ դարեր շարունակ առկա շարժառիթներից է դա, և նա հեշտությամբ օրինակ է բերում Իսպանիայում կրկնվող բնույթ ունեցող մահմեդական փոքրամասնությունների արտաքսումները[149], ինչպես նաև անգլիացիների կողմից իռլանդացիների՝ դեպի Հյուսիսային Ամերիկա և Արևմտյան Հնդկաստան տեղահանությունը[150]: Կամ էլ անցյալ դարերի ընթացքում Անգլիայից և Ֆրանսիայից գնչուների և ավազակների տեղահանությունները[151]:

---

[149] 1502 թ., ինչպես նաև հետագայում 1609 թ. և 1614 թ.:

[150] Կարծիք կա, որ այս միջոցառումները վերաբերում էին 100.000 իռլանդացիների: Դա տեղի է ունեցել 1641 թ. մինչև 1642 թ. ընկած ժամանակահատվածում:

[151] Արդյունքում այսօր արդեն խոսվում է գնչուների նկատմամբ ցեղասպանական ցանկություն ունենալու մասին, քանի որ նրանք շարունակական հալածանքների և կեղեքումների են ենթարկվել, որոնցից Իտալիայում հատկապես ակնհայտ և արդի են դաշտերում տեղի ունեցող սպանությունները,

Բայց այս դեպքում չեմ կարծում, որ հայերի կամ տարբեր երկրներից դեպի 3-րդ Ռեյխի դաշտեր հրեաների տեղահանության իրադարձությունները կարող են ամբողջությամբ նմանեցվել վերը նշված օրինակներին: Հենց ճանապարհորդության ընթացքում, առաջին պահին, իսկ հետո հնարավոր փրկվածների համար՝ վերջին հատվածում:

Գուցե հարկ է հիշել Գերմանիայից հրեաների արտաքսումների առաջին հատվածը, որի հետևանքը եղան ճակատային մասի խաղերը: Բայց հաջորդող տարիներին տեղահանությունը ավելի սերտորեն կապվեց ներգրավված անձանց ֆիզիկական և մտավոր ոչնչացման հստակ քաղաքականության հետ: Իմ կարծիքով դա ավելին էր, քան ուղղակի արտաքսում, որը կրկին ցավոտ էր, ինչպես, որ շատ է եղել պատմության ընթացքում: Որոշ դեպքերում այդ արտաքսումները հյուրընկալ երկրում կյանք են տալիս հետագա ավելի հարուստ մշակույթի և ոչ այնքան բացասական ինտեգրման:

4. Չորրորդ կետը վերաբերում է «վերարտադրման կանխարգելմանը», «երկարաժամկետ հորիզոն ունեցող վերացման նպատակ ունեցող գործողություն, որը վերաբերում է նաև ապագա սերունդներին»[152] և որպես կանոն ուղեկցվում է որոշակի խմբի կամ իրականություն ոչնչացնելու համար նախատեսված այլ գործողություններով: Այն սովորաբար ենթադրում է տղամարդկանց մանրէազերծում և կանանց բռնաբարություն: Ինչպես հայտնի է հեռավոր ժամանակներում այս ցավալի գործողություններին ենթարկվել են Բալկանների կանայք և տղամարդիկ:

Հայերի դեպքում անկասկած կանանց բռնաբարություններ են եղել: Երևի թե այն պատճառով, որ տղամարդկանց ավելի

որոնք դուրս են միջազգային բոլոր չափանիշներից, իսկ բնակության վայրից զրկվածներին այլընտրանք չէր էլ առաջարկվում:

[152] **Դ. Ջ. Գոլդհագեն**, մեջբերված ստեղծագործություն, էջ 21:

արագ և հարմար է թվացել տեղահանության հենց սկզբից ինքնասպան լինել:

5. Եվ վերջապես առանձնացված մեթոդներից վերջինը կոտորածն է: Սա «վերջնական լուծման» նախադրյալն ու խոստումն է: Գոլդհագենը նշում է, որ այս գործիքը բոլոր ժամանակներում էլ շատ է օգտագործվել: Հենց թեկուզ մեր օրերում:

Նրա վերլուծությամբ այս հինգ գործիքներն էլ վերացման համոզմունքների հետևանք են: Սակայն սա չպետք է շփոթել արդեն գոյություն ունեցող պատճառների հետ, որոնք իր կարծիքով բավարար չափով ուսումնասիրված չեն: Արդյո՞ք ցեղասպանությունը առանձին երևույթ է: Գիտնականը գրում է, որ եթե օգտագործվում է մասսայական ոչնչացման ամենալայն հասկացությունը, ապա արդյո՞ք չպիտի խոսենք աճող բռնությունների շարունակական բնույթի մասին: Եվ հարկավոր է հիշել, որ 800-ականների կոտորածների պատճառով հայերի կրած վնասների վերաբերյալ մի մեկնաբանություն կա, ըստ որի այս դեպքերը 1915 թ. տեղի ունեցածի նախադեպն են եղել: Ամեն դեպքում, ըստ Գոլդհագենի գրվածքի, որպես վերջնական նպատակակետ, այս տեսանկյունից, մնում է ոչնչացնելու լուծումը: Համենայնդեպս այն ավելի իրականանալի և հասանելի է ժամանակակից աշխարհում, որը տարբեր միջոցներ և գաղափարախոսություններ է առաջարկում:

«Թշնամին մարդկանց մի խումբ է, որոնց կարելի է ճանաչել իրենց մաշկի գույնով, ազգությամբ, կրոնով, սոցիալական դասով և քաղաքական պատկանելիությամբ: Այս թշնամուն չեզոքացնելու լուծումը պետք է ինչ-որ կերպ «վերջնական» լինի: Այստեղից էլ ծագում է վերացումը: Ոչնչացման ժամանակակից քաղաքականությունը սնվում է զգալիորեն փոփոխված գաղափարախոսություններով՝ սկսած կոմունիզմից մինչև նացիզմ և

իմպերիալիզմ (…)։ Շատ են ճանապարհները, որ տանում են դեպի ոչնչացման քաղաքականություն[153]։

Եվ սա դեռ ամենը չէ։ Գիտնականը կասկած է հայտնում ցեղասպանություն հասկացության հոսքի և դրա սահմանման հստակեցման մասին։ Նա հարցադրում է ներկայացնում, թե սպանության ո՞ր տեսակը կարող է համարվել ցեղասպանություն։ Արդյո՞ք ցեղասպանությունը պետք է ամբողջական լինի, որ հնարվոր դառնա դրա մասին այսպես խոսել և այդ անվանումը օգտագործել։ Հակառակ դեպքում որքա՞ն պետք է լինի զոհերի տոկոսային արժեքը։ Իսկ եթե կենտրոնանանք խմբի մշակութային և հասարակական ինքնության վրա առանց մասսայական կոտորածներ իրականացնելու, այդ դեպքում կարելի՞ է խոսել ցեղասպանությունից։ Հարցադրումները դեռ կարող են շարունակվել։ Այսինքն՝ նրա կարծիքով այսօր դեռ հնարավոր չէ ցեղասպանության համար հստակ և համապատասխան սահմանումներ գտնել։ Այս ոչ կատարյալ սահմանմանը նա վերագրում է նուրբ երևույթների հարկադիր բաժանում, իսկ այնտեղ, որտեղ իր կարծիքով կարող է գոյություն ունենալ ցեղասպանությունների շարունակականություն՝ ավելի սահմանափակ թվով կոտորածներ և ոչնչացման այլ ձևեր։

Գոլդհագենը մի շարք քննադատությունների է արժանացնում նրանց, ովքեր Շոահը համարում են ցեղասպանությունների «նախատիպ» և Շոահը կապում են մեքենաների կիրառման հետ, երբ, օրինակ, Ռուանդայում բավական եղան սրերը (երևի թե շարունակելիության գիծ կարելի է տանել դեպի հայերի կոտորածները)։

Կարծում եմ, որ կարելի է համաձայնության գալ այն փաստի շուրջ, որ Շոահը կարող է տեղակայվել գերմանացիների կողմից հրեաների հանդեպ թշնամության և ոչնչացման միտումների մի ավելի լայն շրջանակում։ Եվ իսկապես ցավալի է, բայց փաստ,

---

[153] **Դ. Ջ. Գոլդհագեն**, մեջբերված ստեղծագործություն, էջ 29։

որ 800-ականների վերջին և 900-ականների սկզբին Եվրոպայի մեծ մասում արդեն տիրում էին հրեաների նկատմամբ անհանդուրժողականություն և ռասիստական զգացմունքներ, որոնք սկիզբ էին դնում ողորմելի, բայց ոչ այդպիսի ծայրահեղ միջոցառումների: Ջորջ Լ. Մոսսեն իր «Ռասիզմը Եվրոպայում՝ Հոլոքոստի ծագումից սկսած»[154] հայտնի աշխատությունում այս թեմայի շուրջ արժանահավատ և ամբողջական պատկեր է ներկայացնում: Սակայն Հիտլերի և նացիզմի հետ այդ խոր թշնամանքը և ռասիստական ուղղվածությունը զգալիորեն փոխում են իրենց բնույթը՝ հասնելով ծայրահեղության: Եվ փոփոխությունը կայանում է նրանում, որ սկսվում են տեղահանություններ և մասսայական ոչնչացումներ, որոնց նպատակը հրեաների ոչնչացումն էր: Կա մի բան, որ ինձ խորապես տարբեր է թվում. դա այն է, որ պլանավորում էր պահանջվում: Բավական է հիշել գնացքների մասին, որոնք մարդկային բեռով լցված կապարե վագոններով գնում էին դեպի արտասահման և մեկնում էին՝ առանց որևէ հուզմունք առաջացնելու տարանցիկ և ժամանման երկաթուղային կայարաններում: Իմ կարծիքով Կլոդ Լանցմանը կարողացել է այս իրադարձությունների ամենաստացված վերարտադրումը մեզ տալ՝ իր հարցազրույցներում խոսելով հավասարակշիռ և հանգիստ ձայնով: Հարցազրույցներից երևում է, որ այս ամեն ինչի համար անկասկած գոյություն են ունեցել կազմակերպվածություն և նախագծում[155]: Եվ Գոլդհագենի բառերով

---

[154] **Ջ. Լ. Մոսսե**, «Ռասիզմը Եվրոպայում՝ Հոլոքոստի ծագումից սկսած», Հռոմ-Բարի, Լատերցա, 1980 թ. (Toward the Final Solution. A history of European Racism, 1978):

[155] Կլոդե Լանցմանի «Շոահ» ստեղծագործությունը 1973 թ. է գրվել: Ձայներիզ և գրված տեսքստ պարունակող այս հրատարակությունը լույս է տեսել 1985 թ. Librairie Artheme Fayard հրատարակչության շնորհիվ: Երկրորդ հրատարակությունը լույս է տեսել 2001 թ.: Դրան հետևել են տարբեր երկրներում լույս տեսած հրատարակություններ, այդ թվում և Իտալիայում, որտեղ աշխատությունը տպագրվել է մի քանի անգամ տարբեր հրատարակություններով: Շատ տարածված է Էյնաուդիի 2007 թ. հրատարակությունը: Կարծում

այս «ոչնչացման ծրագրի գագաթնակետը» իրականում բոլորովին այլ արդյունք է տվել, քան նախորդ առանձին գործողությունները և երկար ժամանակ հուզել է ամբողջական ժողովուրդների և ծանրացել ամբողջ Գերմանիայի խղճի վրա: Այն նման չէ նախկինում կատարվածին: Այս կետին անշուշտ հասել են աստիճանաբար՝ տարբեր փուլերի և փորձերի միջով: Միանգամից հնարավոր չէ ուսումնասիրել գնացքների մեկնման մեխանիզմը, տարբերակումը, դեպի դաշտեր ժամանումը, դիակիզող վառարանները: Եվ ինչպե՞ս է հնարավոր այս ցանկալի, ծրագրված, տարբեր միջոցներով իրականացված սպանությունները սոսկալի չհամարել:

Գոլդհագենը շարունակում է՝ հստակեցնելով, թե ինչպես է սպանություն հասկացությունը վերաբերում մասսայական ոչընչացմանը: Բայց հաստատում է, որ այդպես կներառվեին միայն հարյուրների և միլիոնների կոտորածները, մինչդեռ գոյություն ունեն մեծ մասշտաբի այլ սպանություններ, որոնք մեծ կոտորածների հետ համեմատելու դեպքում փոքր չափի են թվում: Մի առարկություն, որ իմ կարծիքով անտեղին է, այն է, որ ցեղասպանության սահմանման մեջ խոսում է պարունակվող թվերի հավանականության մասին: Ավելին, խոսվում է նաև միայն մեկ անձի սպանության դեպքում, երբ եղել է ցեղասպանական մտադրություն: Եվ հասնում ենք մի կարևոր կետի: Նա սկսում է քննարկել «կանխամտածվածության» ըմբռնումը՝ որպես ցեղասպանություն լինելու, թե չլինելու չափանիշ: Նրա կարծիքով սխալ է օգտագործել «մտադրություն» և «հարկադիր» եզրերը: Եվ ոչնչացման քաղաքականության այլ ելքերի օրինակներ է բերում: Այդպիսին են սերբերի կողմից իրականացված բոսնիակների և կոսովարների արտաքսումները, կոմունիստական Հյուսիսային

եմ, որ Լանցմանի աշխատության ընթերցանությունը և դիտումը խորհուրդ է տրվում հարցազրույցներ անելու ցանկություն ունեցողներին, քանի որ արված են նմուշային ձևով:

Կորեայի կողմից կորեացիների՝ համակենտրոնացման ճամբարներ ուղարկելը: Նշում է նաև Ինդոնեզիայի կառավարության կողմից մասսայական ոչնչացումից փրկված կոմունիստների հարկադիր կրոնափոխումը, ինչպես նաև նացիզմի ժամանակաշրջանում միլիոնավոր եվրոպացիների ստրկացումը: Եվ պնդում է, որ սովը նույնպես կիրառվել է որպես մասսայական ոչընչացման մի մեթոդ, քանի որ ոչ մի կառավարություն չի միջամտել սննդամթերքի նվիրատվությամբ և թույլ է տվել, որ որոշակի փոքրամասնություններ մեռնեն սովից և ծարավից:

Իրականում շատ դեպքերում դժվար է տարբերակումներ և սահմանազատումներ կատարել: Բայց տրամաբանական հետևանքը պետք է լինի ցեղասպանություն հասկացության լքումը և «ոչնչացման ցանկություն» տերմինի որդեգրումը: Այսպես է նա խոսում հայերի կոտորածների մասին.

«Նրանց վերջնակետը անապատն էր, որտեղ շատերը մահ գտան և երթի վերջում մոտ 200.000 փրկվածներ կոտորածի ենթարկվեցին: Թուրքերը համարյա ամբողջությամբ վերացրեցին Թուրքիայում ապրող մոտ երկու միլիոն հայերին, որոնցից մոտ 1.200.000-ին սպանեցին, իսկ մնացածներին արտաքսեցին: Բացի այդ, դիմելով ոչնչացման նպատակ հետապնդող տարբեր միջոցների, կրոնափոխ արեցին, ստրկացրին և առևանգեցին մոտ հարյուրից երկու հարյուր հազար հայ կանանց և երեխաների՝ նրանց թրքացնելու նպատակով: Փրկվեցին Կոստանդնուպոլսի՝ այսօրվա Ստամբուլի հայերը, քանի որ թուրքերի կարծիքով նրանց ոչնչացումը հարկավոր չէր խնդիրը լուծելու համար այնպիսին, ինչպիսին, որ իրենք էին տեսնում և հետո ոչնչացման ծրագիրը մինչև մայրաքաղաք ընդարձակելը կարող էր հետագայում աշխարհին ի ցույց դնել իրենց դաժանությունները: Բոլշևիկյան հեղափոխությանը և ռուսական բանակի անկմանը հետևեց որպես ռուսական Հայաստանի հայտնի Անդրկովկասի ոչնչացման արշավը, դեպի ուր փախել էին մոտ 300.000 հայեր և

որը գրավեցին 1918 թ.: Այնտեղ նրանցից սպանեցին մոտ 200.000-ին»[156]:

Հարկ է ընդգծել, որ այստեղ դեպի ժխտողական տիպի հեռանկար չենք գնում: Իրականում խոսքը անվանման խնդրի մասին է: «Ցեղասպանություն» թե «ոչնչացման ցանկություն» հասկացությանը դիմելու և չդիմելու խնդիր: Մյուս կողմից քաջ հայտնի է, որ բառերը և դրանց կիրառությունը տարբեր են: Նույն բանը չէ խոսել ցեղասպանության թե ոչնչացման ցանկության մասին, չնայած որ այս երկու հասկացությունները անկասկած մոտ են մեկը մյուսին: Այսօր ցեղասպանություն բառի նախապատվությունը իմ կարծիքով նպատակ ունի ընդգծել որոշ մասսայական ոչնչացումների ծայրահեղ բնույթը, նրանց սարսափելի յուրօրինակությունը մյուսների համեմատ: Օրինակ՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում Գերմանիայում տեղի ունեցածը որպես կանոն, հրեաների ցեղասպանություն անունն է կրում: Բայց գնչուներինը (Պորայմոս), քաղաքական թշնամիներինը, Եհովայի վկաներինը և սուֆիստներինը դիտարկվում են որպես կոտորածներ: Սովորաբար Պորայմոսը չի համարվում ցեղասպանություն: Այսինքն՝ փորձ է արվում տարբերակել հրեաների և գնչուների հետ տեղի ունեցածը, որոնցից առաջին դեպքում ցեղասպանություն է, իսկ երկրորդի դեպքում ցեղասպանություն կատարելու ցանկություն չի նկատվել, չնայած որ շատերը՝ մոտ 600,000 մարդ, դարձան նացիզմի զոհ:

Պատահական չէ, որ ցեղասպանությունը 1948 թ. դեկտեմբերի 19-ին Միավորված ազգերի կողմից ընդունված բազմակողմանի համաժողովի առարկա է դառնում: Հարկ է նշել, որ դա մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի նախորդ օրն էր: Որոշ ժամանակ պատերազմի ընթացքում քաղաքակիրթ

---

[156] Դ. Ջ. Գոլդհագեն, մեջբերված ստեղծագործություն, էջ 42: Թվերի հետ կապված դեռ այսօր անհստակություններ կան՝ չնայած որ մոտավոր հաշվարկները այս արդյունքն են տալիս:

մարդկանց պաշտպանության վերաբերյալ 1949 թ. օգոստոսի 12-ին տեղի ունեցած Ժնևի 4-րդ Կոնվենցիան նույնպես 32-րդ հոդվածում անդրադառնում է ցեղասպանությանը և արգելում է «ֆիզիկական տանջանքներ» և «պաշտպանված մարդկանց ոչնչացում» ծնող գործողությունները:

1946 թ. դեկտեմբերի 11-ի հ. 96-I բանաձևը, որը հարկ է նշել, որ ընդունվել է Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից և հնարավորության դեպքում Դաշնակիցների կողմից գտնված փրկվածների՝ Գերմանիայի և Լեհաստանի դաշտեր մտնելուց որոշ ժամանակ անց[157], արդեն հրավիրում էր տնտեսական և հասարակական խորհրդին՝ ցեղասպանության հանցանքի թեմայով համաժողով ծրագրել: Ցեղասպանությունը սահմանվում էր, որպես «մարդկային ամբողջական խմբերի գոյության իրավունքի ժխտում», ինչպես նաև «միջազգային իրավունքի հանցանք՝ հակառակ Միավորված ազգերի ոգուն և նպատակներին և դատապարտված քաղաքակիրթ աշխարհի կողմից»:

Առանց որևէ ձեռնպահ ձայնի ընդունված Կոնվենցիան ուժի մեջ է մտնում 1951 թ. հունվարի 12-ից: Այն արգելված գործողությունների շուրջ վերլուծական լուսաբանումներ է ներկայացնում: Այդ գործողությունները սկսվում են «խմբի անդամների» կանխամտածված սպանությամբ (ինչի համար բավական կլիներ նաև սպանությունների սահմանափակ թիվ. անգամ մեկ սպանվածն է բավական, եթե այդ սպանությունը տեղի է ունենում ոչնչացման ծրագրի շրջանակներում), այդ խմբի անդամների ֆիզիկական և հոգեկան ամբողջականությանը վնաս հասցնելով: Հոգե-

[157] Տեղահանված մարդկանց վերաբնակեցման դժվարին խնդրին անդրադարձ է կատարվում «Խաղաղության խորտակումներ. 1945 թ., փախստականներ և Եվրոպայով տարածված հիշողություններ» աշխատությունում, խմբագիր Գ. Կրայնց, Ռ. Պուպո, Ս. Սալվատիչի, Հռոմ, Դոնձելլի հրատարակչություն, 2008 թ., ինչպես նաև դրան հաջորդած Ս. Սալվատիչիի «Երկրորդ համաշխարհայինի հետպատերազմյան եվրոպացի փախստականներ», Բոլոնիա, Մուլինո, 2010 թ.:

կան ամբողջականություն ասելով նկատի ունենք, որ բացառվում է դեղամիջոցների միջոցով կյանքի կառավարումը: Կոնվենցիայի մեջ խոսվում է նաև խմբին «կանխամտածված» ձևով (այսինքն՝ այստեղ կա «կանխամտածված» բառը, որը համարվում է որոշիչ) այնպիսի կենսական պայմանների հասցնելու արգելքի մասին, որոնք կարող են տանել դեպի նրա ֆիզիկական կամ հոգեկան ամբողջական կամ մասնակի ոչնչացման: Կանխամտածվածության, կամավորության, դիտավորության տարրը փաստորեն այստեղ խիստ ձևով ընդգծված է: Բայց հարկ է նշել նաև, որ այն առկա է հայերի կոտորածների մոտ և անբաժանելի է նացիզմի հետևանքով հրեաների դեմ կատարվածից: Կոնվենցիան խոսում է նաև խմբի ներսում ծնունդները կանխելու միտում ունեցող միջոցառումների կիրառման մասին: Այսինքն՝ արգելվում են թե՛ ամուսնությունների առջև դրված խոչընդոտները և թե՛ սեռերի հարկադիր բաժանումը (այսօր կարող ենք ասել նաև գենդերների): Այս միջոցը օգտագործվել է թե՛ հայերի տեղահանության ժամանակ և թե՛ հրեաների դեմ դաշտերում: Արգելված են նաև հղիության բռնությամբ իրագործված արհեստական ընդհատումը, հարկադիր մանրէազերծումը՝ խմբի հետագա զարգացմանը խոչընդոտելու նպատակով: Կոնվենցիան արգելում է նաև երեխաների տեղափոխումը մեկ խմբից դեպի մյուսը: Սա տեղի է ունեցել թե՛ հայերի և թե՛ այլ դեպքերում: Այս դեպքում դատապարտվում է երիտասարդների՝ հարազատ խմբի պատկանելիության զգացումը կորցնելու՝ շատ անգամ ստացված փորձերը: Կոնվենցիայում հստակեցվում է, որ պատժվելու են ոչ միայն փաստացի իրականացնողները, այլ նաև քաղաքական առաջնորդները, որոնք հրահրել են, կամ էլ պարզապես թույլատրել են այդ հանցանքները: Քանի որ Կոնվենցիան ծրագրային բնույթ ունեցող գործողություն է, պետություններին պահանջ է ներկայացվել՝ ճանաչել և ընդունել օրենսդրական համապատասխան միջոցառումներ:

Նորից անդրադառնալով Դանիել Ջ. Գոլդհագենի արդեն մեջբերված «Պատերազմից էլ վատ» ստեղծագործությունը, կարծում եմ, որ ցեղասպանություն հասկացության այսպիսի անկումը իրականում հանդիպում է նրա կողմից առաջ բերված անհրաժեշտությանը՝ տարբեր գործոնների մրցակցության հնարավորության շուրջ, որոնք հարկ է հաշվի առնել, քանի որ առաջարկվում է նմանատիպ փաստեր վերլուծության ենթարկել: Այստեղ խոսվում է մեծ խմբերի մասին, բայց փոքր իրականությունների հնարավորությունը չի բացառվում: Չի բացառվում նաև, որ հնարավոր է խոսել որոշակի խմբի պատկանող մեկ առանձին անձի հալածանքների և սպանության մասին: Քանակական անհանգստությունները (Գոլդհագենը հարցադրում է ներկայացնում, թե քանի՞ տոկոս է հարկավոր ցեղասպանության մասին խոսելու համար) նույնպես ինձ հստակեցված են թվում: Սա անտեղի է: Նրա ցանկի մեջ կա մի կետ, որ Կոնվենցիայի մեջ չի պարզաբանվում և դա «վերափոխումն» է: Բայց այն առկա է ցեղասպանություն համարվող իրականությունների հայտարարություններում, այնտեղ, որտեղ խոսվում է դատական հետապնդման ենթակա հանցագործության մասին, այն դեպքում, երբ փորձ է արվում մարդկանց և առաջին հերթին երիտասարդների մոտ կորցնել սեփական պատկանելիության զգացումը:

Այսինքն՝ ինձ թվում է, որ ցեղասպանություն հասկացությունը այնպես, ինչպես նշվել է Կոնվենցիայում, լայն է և կարող է արձագանքի և հետազոտության տեղիք տալ, ինչպես նաև զինվել իմաստներով, որոնք գնում են ուղիղ դեպի որոշակի խմբերի ոչնչացման ցանկության ընդգծում: Անշուշտ համաձայն եմ գիտնականի՝ ցեղասպանության և մյուսի միջև եղած տարբերությունների և նրբությունների հարցում: Այն ինչին ենթարկվել են հայերը ունեցել է իր առանձնահատկություններն ու սեփական հատկանիշները: Այն բոլորովին չի իրականացվել ժամանակակից տեխնոլոգիաների միջոցով: Առաջ է եկել մի պետության սահմաններում, որն է Թուրքիան, որտեղ հայերը տասնյակ տա-

րիներ հալածանքների ենթարկված փոքրամասնություն էին կազմում: Այն բռնկվել է Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում: Փորձ է արվել ժխտել դրա մասին հիշողությունները, դրա գոյությունը: Բայց Թուրքիան երբեք չի հերքել, որ հայերի դեմ ոչնչացման առանձին գործողություններ են տեղի ունեցել: Ավելին՝ հայկական որոշակի քաղաքների դեմ և պատմական որոշակի ժամանակահատվածներում: Մինչդեռ ամբողջական հերքումը վերաբերել է հայոց «ցեղասպանության» ընդունմանը և ճանաչմանը:

Կարծում եմ, որ այս փաստը զուրկ չէ իմաստից: Դեռ արժե մինչև «ցեղասպանություն» եզրը լքելուն, դիմել «ոչնչացում» բառին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վերջին տարիներին շատ է քննարկվում Թուրքիայի՝ Եվրամիություն մտնելու հնարավորության մասին: Արդեն 1952 թ. Թուրքիան ՆԱՏՕ-ի անդամ է, իսկ 1959 թ. խնդրանք է ներկայացրել՝ մտնել ԵՏՀ: Սակայն այն մարդիկ, ովքեր արձագանքել են և գրել այսօրվա Եվրոպայի և Թուրքիայի մտնելու հնարավորության մասին, շեշտը դնում են այս պետության ունեցած դժվարությունների, նրան հարկադրված երկար ճանապարհի, և այն փաստի վրա, որ նրանից առաջ են անցել շատ երկրներ, որոնք ավելի ուշ էին դիմում ներկայացրել: Այս ընթացքում միաձայն ճանաչման համար փոխվել է Եվրոպան: Ինչպես տեղին նշում էր Բինո Օլիվին, այսօր այնտեղ կա բացահայտ ընդհատություն առաջին 40 տարիների և վերջերս ձևավորված համայնքների միջև: Իր *«Եվրոպան բարդ է: 1948-1998 թթ. Եվրոպական ինտեգրման քաղաքականության պատմություն»* աշխատությունում նա գրում է.

«Անժխտելի մի բան կա Պետությունների այս միության մեջ, որը ծնվել և աճել է միջազգային հարաբերությունների ավանդույթներին անծանոթ ձևերով և որը դեռ պետք է դիմակայի լարումների և վերափոխությունների ոչ այնքան կարճ մի շրջան»: Այն միևնույնն է քաղաքակիրթ անվտանգության հղման կետ ու խորհրդանիշ է համարվում, որը մինչ իրեն գոյություն չի եղել աշխարհի աշխարհագրական այն վայրում, որտեղ մոտ երկու հազարամյակ կենտրոնացվել է զենքի և զինամթերքի ամենամեծ քանակը»[158]:

---

[158] **Բ. Օլիվի**, «Դժվարին Եվրոպա. 1948-1998 թթ. եվրոպական ինտեգրացման քաղաքական պատմություն», Բոլոնիա, Մուլինո, 1998 թ. (1993 թ.), էջ 19:

Որո՞նք են Թուրքիայի՝ Եվրամիություն մտնելու խոչընդոտներն ու ամենաուժեղ դիմակայությունները: Օլիվին նշում է Հունաստանի հակաթուրքական թշնամության մասին, որը Կիպրոսը կորցնելու ցավալի դեպքերից հետո շարունակում է «արյունալի զոջումների պատմական հիշողություններով սնվել»[159]: Այդ զոջումները չեն փոխվել ԱՄՆ-ի և մի շարք Եվրոպական պետությունների կողմից ձեռնարկված հաշտության փորձերով:

Գիտնականը նաև նշում է, որ.

«Թուրքիայի ներքին դրությունը, մարդու իրավունքների նկատմամբ նրա հարգանքի պակասը և փոքրամասնությունների իրավունքների ծայրահեղ մերժումը նպաստել են Հունաստանի թշնամությանը, որը Գերմանիայի ակնհայտ աջակցության շնորհիվ կարողացել է Թուրքիային դնել մնացածի համեմատ երկրորդական դիրքում, որպեսզի այն չճանաչվի որպես թեկնածու»[160]:

Այսինքն՝ կան պատճառներ, որոնք հակառակ են Թուրքիայի մտնելուն: Բայց մյուս կողմից հենց ինքը Օլիվին ընդունում է, թե որքան կարևոր է այդ պետության մուտքը Եվրամիություն: Թուրքիան Եվրոպայի պատմության մեջ եղել է և մնում է գլխավոր դերակատարներից մեկը, ամեն դեպքում մեծ դեր է ունեցել այնտեղ: Խոսքը մի երկրի մասին է, որ Արևելքի և Արևմուտքի միջև միացնող օղակի դեր է կատարել և որը այսօր հետգաղութային կովկասյան երկրների բռնության և արաբական աշխարհում տիրող հակասությունների միջև մի խաչմերուկ է հանդիսանում: Այս երկիրը Օսմանյան կայսրության փլուզումից ի վեր իրեն եվրոպական է հռչակել: Օլիվին գրում է, որ սխալ է մերժել նրա թեկնածությունը, անդադար խոչընդոտներ ստեղծել և շա-

---

[159] **Բ. Օլիվի**, մեջբերված ստեղծագործություն: Խոչընդոտների թվում է քրդերի հարցը:

[160] Արևմուտքի և Թուրքիայի հարաբերությունների, բազմաթիվ երիտասարդների ձևավորման հարցում Արևմուտքի ազդեցության մասին է Օ. Փամուկի «Պարոն Ցեվդետը և իր որդիները» ստեղծագործությունը, Թուրին, Էինաուդի, 2010 թ. (Cevdet Bey ve Ogullan, 1982):

ռունակաբար հետաձգել: Այլ կարծիքի է Մարկո Անսալդոն, ով իր «Ո՞վ է կորցրել Թուրքիան» աշխատությունում նշում է, որ արդեն երկար տարիներ Թուրքիայի հարցը «առանց լուծում գտնելու շրջում է Եվրոպայով մեկ»[161]: Հեղինակը խոսում է օր օրի ավելի մարդաշատ և առավել ընդարձակ Թուրքիայի մասին, որը ժամանակավոր փոխարինող միջոցներ է առաջարկում, ինչպես օրինակ՝ ասոցացման համաձայնագրեր[162]:

Որտեղի՞ց է, նրա կարծիքով, Թուրքիայի մուտք գործելու դեմ այս հաստատուն և բարդ ընդդիմությունը: Նա նշում է, որ ամենաթշնամաբար տրամադրված երկրներն են Ֆրանսիան՝ սկսած Վալերի Ժիսկար դ'Էստենից, որին հետագայում շարունակեց նաև Սարկոզին[163]՝ կարծելով, որ Թուրքիան ոչ թե Եվրոպայի, այլ Փոքր Ասիայի մաս է կազմում, և նաև Գերմանիան, որը թուրքերի կողմից ենթարկվել է ներգաղթի մի հզոր ալիքի: Դեմ են նաև Հյուսիսային Եվրոպայի փոքր պետությունները, Ավստրիան[164], քանի որ, ինչպես գրում է Անսալդոն, Վիեննայի շրջափակման բեռը դեռ ծանրացած է հիշողություններում: Ուրիշներն էլ վախենում են Թուրքիայի ընդլայնումից: Եթե մտնի Եվրամիություն, ապա իր խորհրդականների կշիռը ավելի կլինի մյուս բոլոր անդամ պետությունների կշռից:

Մինչդեռ համաձայն լինելու պատճառները վերաբերում են այն փաստին, որ Թուրքիան «վտանգավոր անկայունության

---

[161] **Մ. Անսալդո**, մեջբերված ստեղծագործություն, էջ 237:

[162] Թուրքիայի կողմից արդեն 1963 թ. ստորագրված այս համաձայնագրերը, որպես կանոն, համարվում են Եվրամիություն մուտք գործելու նախասրահ;

[162] Խոսքը հենց այն վարչապետի մասին է, ով banlie բնակիչներին անվանել էր փարիզյան racaille, ինչը նշանակում է սրիկա և վատ մարդ:

[163] Խոսքը հենց այն վարչապետի մասին է, ով banlie բնակիչներին անվանել էր փարիզյան racaille, ինչը նշանակում է սրիկա և վատ մարդ:

[164] 2006 թ. դեկտեմբերի սոց. հետազոտության Եվրաբարոմետրի տվյալներ:

դեմ» արդյունավետ միջոց կլինի, ինչը «մեծ նվեր» կլինի: Անսալդոն գրում է.

«Ինչպես զբոսաշրջիկների մեծամասնությանը հայտնի է, Թուրքիան նաև գրավիչ և յուրահատուկ մի երկիր է՝ հրաշալի, հյուրասեր, սրտաբաց և մարդկային ժողովրդով, հատկություններ, որ երբեմն անհայտ կորել են այլ վայրերում և հաճախ առանց ցինիզմի, խմորումների մեջ գտնվող մշակույթով և առաջին կարգի ներքին բանավեճով: Երկիր, որ ունի բազմաթիվ հակասություններ ու լուծման ենթակա հանգույցներ: Բայց այն օժտված է մեծ արժեք ներկայացնող գրականությամբ, երաժշտությամբ, կինեմատոգրաֆիայով և արվեստով: Երկիր, որ իր իրական էությամբ գուցե այնքան էլ ճանաչված չէ: Ինչպես հավաստում են շատ ճանապարհորդներ, Ստամբուլը երկրագնդի ամենահետաքրքիր քաղաքներից է: (…)

Այսօրվա Թուրքիան ահռելի մարտահրավերի կենտրոնում գտնվող մի երկիր է: Դաժան բռնությունները, հանձնարարված սպանությունները, էթնիկական հակասությունները, քաղաքական գործընթացները, մարդու իրավունքների խախտումները վախի և անկայունության վտանգ են ներկայացնում: Քաղաքական գործիչները, դիվանագետները, լրագրողները, գրողները ու սահմանադրագետները, այսինքն՝ ազգի ամբողջ «մտավորականությունը», որ դժվարությամբ, բայց հաստատուն քայլերով փորձում է ազատվել վիճահարույց անցյալից, որպեսզի վերջապես կարողանա բարեփոխումներ մեկնարկել և մոտենալ Եվրոպային, այժմ գտնվում է դաժանագույն և արյունալի ճակատամարտի մեջ»[165]:

Անսալդոյի կարծիքով երկիրը կարող է պատռվել մի կողմից առաջադեմ ուժերի, մտավորականների և ազնվականության, որոնք ձգտում են դեպի հասարակական փոփոխություններ, աշխարհիկ կյանք, բարեփոխումներ, և մյուս կողմից «ներքին մութ ուժերի», կամ այլ կերպ ասած բյուրոկրատների, պաշտոնյաների

[165] **Մ. Անսալդո**, մեջբերված ստեղծագործություն, էջ 252:

և այլ ծառայողների միջև, որոնք փորձում են արմատական փոփոխությունների գնալ: Դժվարության մեջ գտնվող մի երկիր, որտեղ բաեփոխումների անհրաժեշտություն կա և որտեղ անգամ տնտեսության կանգ է նկատվում: Մի երկիր, որտեղ կսկսի դժվարություններ ունենալ նույն ինքը Ռեջեպ Թայիփ Էրդողանը: Բայց մի նորություն է ի հայտ եկել: Թուրքիան բացի Եվրամիությունից իր ուշադրությունը ուղղում է նաև այլ կողմերի: Նա ընդունում է Ահմադինեժադի հարցը՝ չնայած Եվրոպայի և ԱՄՆ հետ Իրանի լարված հարաբերություններին: Կարևոր հարաբերությունների մեջ է մտնում նաև Բալկանների, Աֆրիկայի, կենտրոնական Ասիայի և Մերձավոր Արևելքի հետ: Եվ Եվրոպան հեռու է թվում: Հատկապես թվում է, որ հեռանում է: Եթե Թուրքիային նորից դրդեն այլ կողմ նայել, եթե Եվրոպան կորցնի իր հնարավորությունը, ապա այս փաստի, այս կորստի համար ու՞մ կմեղադրեն:

Խոսքը մեր օրերում BRIC-ից հետո (Բրազիլիա, Ռուսաստան, Հնդկաստան, Չինաստան) ամենաաճաղկող և կարևոր տնտեսություն ունեցող երկրներից մեկի մասին է, որը միջազգային շախմատի տախտակի վրա պատրաստ է էական դեր խաղալ: Դա մի երկիր է, որ այսօր քննարկում է Եվրամիության դանդաղկոտ քաղաքականությունը: Մտավախություն կա, որ Թուրքիան մահմեդական երկի՞ր է: Բայց սա այնքան էլ պատշաճ չէ, եթե իհարկե Եվրամիությունը քրիստոնեական ակումբ չէ:

Իրականում, եթե հետևենք վերջին տարիների գաղթին, կհասկանանք, որ Եվրոպայում այսօր զգալի և կարևոր մահմեդական իրականություն կա, որը այսօր, չնայած շատերի վատատեսական կանխատեսումներին, երկմտանքին և դժվարություններին, մեծ անհաջողությունների և անլուծելի վեճերի պատճառ չի դարձել: Եվ սա այն դեպքում, որ մահմեդական իրականությունը երբեմն տգիտության է հանդիպում: Օրինակ՝ հյուսիսային Իտալիայի որոշ շրջաններում, որտեղ մզկիթների կառուցման դեմ անհանդուրժողականության և ֆանատիզմի լուրջ դեպ-

քեր են գրանցվել: Կամ էլ Շվեյցարիայում, որտեղ մինարեթների դեմ քվեարկություն է կազմակերպվել: Եվ հյուսիսային Եվրոպայում, որտեղ անպատշաճ և հայհոյանքներով ծաղրանկարներ են տպագրվել մահմեդականության մարգարեի դեմ:

Խոսքը Քրիստոնեությունից հետո ամենամեծ դերն ունեցող կրոնի մասին է, բայց մինչև օրս մահմեդականությանը կասկածանքով են նայում և այն ստիպված է տեղ գտնել սահմանային և լքված վայրերում, թե՛ Իտալիայում և թե՛ այլուր:

Եթե անգամ Հայաստանի Հանրապետությունն է գովելի կերպով փորձում նայել ապագային և Թուրքիայի հետ բաց հարաբերություններ պահել՝ իհարկե չմոռանալով իր տանջալի անցյալի մասին, ապա Եվրոպան լավ կաներ այդ առումով հարցադրում ներկայացներ, ինքն իրեն հարց տար, թե արդյո՞ք անուղղելի սխալ չեն գործում դուրս թողնելով մի երկրի, որը Արևելքի և Արևմուտքի միջև կարևոր դեր կարող է խաղալ: Իհարկե շատ հարցեր են ծանրանում: Ծանրանում են մտավախություններ, որոնք երևի թե անորոշ կերպով պայմանավորված են պատմական փաստերով: Իհարկե հայերի հետ տեղի ունեցած սարսափելի երևույթները չեն օգնում: Եվ անշուշտ քրդերի տանջանքները, ցավոտ իրադարձությունները նույնպես ծանրանում են եվրոպական կոլեկտիվ երևակայության վրա: Գուցե վատ անցյալում գործողության չդիմելը մասամբ բացասական ազդեցություն է թողնում եվրոպական հանրային կարծիքի վրա, որը սովոր է մեծ կարևորություն տալ հիշողություններին և իր սեփական ինքնությունը կապել պատմական իրադարձությունների հետ: Պահպանողական տեսակե՞տ: Իհարկե, հիշողությունը պետք չէ սառեցնել և ապագա զարգացումների խոչընդոտ դարձնել: Եվ հետո Եվրոպան իր ետևում սարսափելի հիշողություններ ունի. բավական է հիշել նացիստական ճամբարների մասին: Բայց ինչ-որ կերպ փորձել է իր անցյալի հետ հաշիվները մաքրել, դեմ հանդիման դուրս գալ իր տհաճ հիշողությունների հետ: Գերմանիան այս առումով կարևոր օրինակ է. երկար տարիներ միայնակ

կարողացել է Եվրոպայի փախստականների մեծամասնության ծանրությանը դիմանալ: Գերմանացի պատմաբանները աշխատել են տվյալների, նյութերի հետազոտության վրա, նացիզմի հակահրեական քաղաքականության էական կողմերը և Շոահին վերաբերող միջոցները ճանաչելու համար կարևոր գրքեր են տպագրել: Ավելի քիչ են Պորայմոսի ժամանակ բազմաթիվ գնչուների[166], հաշմանդամների, քաղաքական և կրոնական ընդդիմադիրների սպանության մասին ակնարկները:

Վատ հիշողություններ ունի նաև Եվրոպան: Եվ հարկավոր է դրանց հետ հաշիվները մաքրել և ապագային ավելի լավ աչքերով նայել: Հուսանք, որ հայերի ցեղասպանությունը, որ թուրքական կառավարության կողմից երբեք չի ճանաչվել ու չի ընդունվել, չի հիշվել և չի հաղորդվել, անխուսափելի պարիսպ չի դառնա Թուրքիայի և Եվրոպայի, ինչպես նաև քրիստոնյա և մահմեդական բնակչությունների միջև տեղի ունեցող ցանկալի բանակցությունների ճանապարհին: Կարծում եմ, որ Փամուկի և այլ մտավորականների գրածն ու ասածները կարող են (պետք է) խրախուսեն այդ հարցի շուրջ նորից մտածել, եթե իհարկե հենց

[166] Նացիզմի ի հայտ գալուց ի վեր գնչուները համարվում էին «օտար արյուն», artfremdes blut: 1936 թ. սկսում են նրանց ձերբակալել և տեղափոխել Դախաու և Ռավենսբրուկ, քանի որ համարվում էին «ասոցիալ և վտանգավոր աշխատանքներին» ենթակա, այսինքն՝ beisscheue, asoziale: Հայտարարվելով որպես «բոլորի գույքի որս», նրանց ոչնչացումը, ինչպես գրում է «Քրոսինգ. Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում փրկվելու և դիմակայելու օրագիր» ստեղծագործության մեջ (Հռոմ, Ճառագայթներ, 2009 թ. (1971 թ.)) Ջ. Յուրսը գրում է, որ նրանց ոչնչացումը տարբեր շրջանների տարբեր ֆյուրերների պատասխանատվությամբ է տեղի ունեցել (էջ 44): Այս գրքի հեղինակ Յուրսը նախկինում գրել է «Գնչուներ. Ճանապարհ՝ գնչու լովարների հետ» աշխատությունը, որը նույնպես իտալերեն տարբերակով լույս է տեսել Ճառագայթներ հրատարակչության շնորհիվ (2008 թ., բնօրինակ՝ The Gypsies, 1967 թ.); Պորայմոսը (նշանակում է ավերածություն, մեծ կեղեքումներ) նույնիսկ այսօր քիչ հայտնի է մնում, քանի որ չկան այդ թեմայով ուսումնասիրություններ: Բացի այդ, ի տարբերություն հրեաների, գնչուները չեն գրել պատմություններ՝ չհաշված որ Շոահը արդեն ամբողջությամբ ուսումնասիրվել, պատմվել և ներկայացվել է վավերագրական ֆիլմերի ու ընդհանրապես արվեստի միջոցով:

հայրենիքում դատական կարգով հետապնդման արձագանք չլինի: Այն փաստը, որ Թուրքիայում կան մտավորականներ, ովքեր տեղ են տալիս հայկական հարցին, այս դեպքում կարող է դրական ազդեցություն թողնել Եվրոպայում շատերի դիրքորոշման վրա՝ Թուրքիայի պես կարևոր պետությանը Եվրամիություն ընդունելու հարցում:

Երևի թե կարիք կլիներ «Ագոս» ամսագրի խմբագիր Հրանտ Դինքի դասավանդմանը նորից անցնել, հայ, ով միշտ խոսել է հայերի և թուրքերի, քրիստոնյաների և մահմեդականների լավ հարաբերությունների օգտին: Այս լրագրողը, որ 6 ամիս կալանքի տակ է եղել թուրքական ինքնությանը վիրավորելու մեղադրանքով և հետագայում նաև կյանքով է վճարել դրա համար, միշտ պնդել է իր հայկական ինքնության մասին, բայց չի մոռացել նաև թուրքական ծագման մասին: Նա տեղեկատվության մի գործընթացի և արտահայտման ազատության է սկիզբ դրել: Եվ գրել է. «Թուրքիան, որ ինքն իր հետ չի կարողանում խոսել, հայերին ասելու ոչինչ չի ունենա»: Ապա ավելացրել է.

«Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանների բացումը և դիվանագիտական հարաբերությունների զարգացումը բոլոր հարցերի լուծման համար շարժիչ ուժ կլինեն: Եթե սկիզբ դրվի այդպիսի մի հարաբերության, կարգավորումը կսկսվի նաև երկու ժողովուրդների միջև հարաբերությունների տեսակետից: Մենք չենք ցանկանում պատմության մեջ խրված մնալ: Կարևոր է մեր ապագան ապահովել»[167]:

Շատերի ապագան փրկելու համար, երևի թե հարկավոր է աջակցել Հայաստանին, բայց միաժամանակ նաև ընդունել Թուրքիային:

Մանավանդ որ Եվրամիություն մտնելը Թուրքիայի համար շարունակում է թիրախում մնալ:

---

[167] **Հ. Դինք,** «Աղավնու անհանգստությունը: Լինել հայ Թուրքիայում», Միլան, Գուերինի և ընկերներ, 2008 թ., էջ 48:

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1815 թ.

- Վիեննայի համաժողով, որ վերականգնում է Նապոլեոնին նախորդած ժամանակաշրջանի իրադրությունը:
- Սերբերը ապստամբում են թուրքերի դեմ և հաղթում նրանց. ինքավար կառավարություն են ձեռք բերում:

1821-1927 թթ.

- Ապստամբում են Մոլդովան և Վալաքիան, հույները հասնում են ինքնավարության:

1828 թ.

- Ռուսական զորքը առաջանում է դեպի Կոստանդնուպոլիս: Նրան կարողանում է կանգնեցնել Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի միջամտությունը:

1929 թ.

- Հույների անկախությունը հաստատվում է: Ռուսաստանին իրավունք է տրվում նավարկել Սև ծովում և անցնել Բոսֆորն ու Դարդանելը: Օսմանյան կայսրությունը անընդհատ և ուժեղ ճնշման է ենթարկվում Ավստրիայի և Ռուսաստանի կողմից, որոնք փորձում են պաշտպանել կայսրության ներսում ապրող քրիստոնյաներին:

1850 թ.

- Օսմանյան կայսրության թուլացումը ակնհայտ է նաև այլ վայրերում: Արդեն այս տարում Ալժիրը դուրս է գալիս նրա կազմից: Նրա օրինակին են հետևում Թունիսը և Եգիպտոսը, Օսմանյան կայսրության ենթակայության ներքո է մնում Լիբիան:

1856 թ.

- Ղրիմի պատերազմ:
- Փարիզի պայմանագիր: Այս պահին Ռուսաստանի համար Կոստանդնուպոլիս տանող ճանապարհը դեռ արգելափակված է: Վերահաստատվում է Օսմանյան կայսրության ներքին հարցերին միջամտելու արգելքը (քրիստոնյաների հետ հարաբերություններ):
- Օսմանյան կայսրությունը ճանաչում է Սանուսիայի եղբայրության դերը Կանաչ լեռան տարածքում և դրա շրջակայքում (Լիբիա): Այն իրավունք ունի նաև հարկեր նշանակել: Փոխարենը Խալիֆին ճանաչում է որպես մահմեդականության գլուխ: Սանուսիան մայրաքաղաքը աստիճանաբար տեղափոխում է դեպի Չադ և սև Աֆրիկա՝ հեռանալով քիչ կրոնական համարվող թուրքերից (Cresti):

1859 թ.

- Տրապիզոնում զորքերը սկիզբ են դնում հայերի կոտորածներին: Քիչ հետո տե՛ս Անատոլիայի հարավային ափին Ադանայի դեպքերի մասին:

1861 թ.

- Մարոնիտների վրա կատարած դրուզների հարձակումից հետո Լիբանանը քրիստոնյա կառավարչի իշխանության ներքո որոշակի ինքնավարություն է ձեռք բերում: Ֆրանսիան երաշխավոր է կանգնում: Հայերը հակված էին մտածելու, որ իրենց իրավիճակի լուծումը պետք է կապվի բալկանյան իրադարձությունների հետ:

1863 թ.

- Հայկական Միլլեթում ներկայացվում է ազգային Սահմանադրություն, որը ընտրվող հանձնաժողովի միջոցով Կոստանդնուպոլսի պատրիարքի իշխանությունը սահմանափակող նոր օրենսդրություն էր: Նույնն է տեղի ունենում հույների հետ, ինչ-

պես նաև 1965 թ. հրեաների հետ: Այս տարիներից սկսվում են գյուղերի ստորագրահավաքները, հայ Պատրիարքի պահանջները հայերի կենսական դժվար պայմանների, նրանց կողոպուտների դեմ:

1871 թ.

- Լոնդոնի հայտարարագիր. Օսմանյան կայսրության ներքին հարցերին միջամտելու արգելքը՝ դրված սուլթանի և քրիստոնյա հասարակության միջև, խախտվում է:

1872 թ.

- Հայերի շրջանում ծնվում է Փրկության միությունը (ինչպես Կարբոնարները):

1873 թ.

- Երեք կայսրերի միություն (Ավստրիա, Ռուսաստան, Գերմանիա): Համաձայնությունը ճգնաժամ է ապրում Ռուսաստանի կողմից Թուրքիայի տարածքները բռնագրավելու քաղաքականության հետ:

1875 թ., ամառ

- Հերցեգովինայում Օսմանյան կայսրության դեմ ապըստամբություն է սկսվում: Այն արագությամբ տարածվում է դեպի Բոսնիա, Մոնտենեգրո, Սերբիա և Բուլղարիա:

1876 թ.

- Թուրքիայում գահ է բարձրանում Աբդուլ Համիդը, որին անվանում էին «կարմիր սուլթան»: Նա թագավորում է մինչև 1909 թ.: Թուրքիայի համար դժվարին ժամանակաշրջան էր դա: Իր թագավորության առաջին երկու տարիներին նա կորցնում է Բուլղարիան (բայց մինչ այդ Օսմանյան կայսրության անկանոն զորքերը սպանում են հազարից ավելի քրիստոնյաների) և Կովկասի այլ շրջաններ, ինչպես նաև Մոնտենեգրոյում, Սերբիայում և Ռումանիայում ունեցած իշխանության վերջին մնացորդները:

Կորցնում է նաև Բոսնիա-Հերցոգովինայում ունեցած իրական իշխանությունը: Այս իրադրության մեջ միապետը մեղավոր է տեսնում Եվրոպական տերություններին: Նա այնքան էլ չի համակրում հայերին, քրիստոնյաներին, որոնք Եվրոպային մոտ էին համարվում: Փորձ է անում մոտենալ Գերմանիային և Ճապոնիային:

1877-1878 թթ.

- Ռուսաստանը և Օսմանյան կայսրությունը պատերազմի մեջ են մտնում, որում վերջինս ջախջախիչ պարտություն է կրում: Հաջորդող Սան Ստեֆանոյի պայմանագիրը ճանաչում է Սերբիայի, Ռումինիայի և Մոնտենեգրոյի անկախությունը: Բուլղարիան անջատվում է Ռուսաստանից, որը առաջանում է դեպի Բոսֆոր:

1877 թ.

- Ապրիլ: Ռուսաստանը մտնում է արևելյան Անատոլիա և Բալկաններից փորձում է ճանապարհ բացել դեպի Ստամբուլ:

1878 թ.

- Բարեփոխումների բացակայության պատճառով հիասթափված հայերը սկիզբ են դնում Սև Խաչի հիմնադրամին:
- Փետրվար: Ռուսական զորքերը մոտենում են օսմանյան կայսրության մայրաքաղաքին: Մինչդեռ անգլիական նավատորմը Դարդանելի մոտ է:
- Ադրիանուպոլսի զինադադար, որ նշանավորում է թուրք-ռուսական պատերազմի ավարտը:
- Մարտի 3: Սան Ստեֆանոյի խաղաղություն: Բուլղարիան ինքնավարություն է ձեռք բերում, իսկ Սերբիան և Մոնտենեգրոն անկախություն և գերիշխանություն: Ռումինիան նույնպես անկախանում է: Սկսում է Բեսարաբիայից և անցնում Ռուսաստանով: Օսմանյան կայսրության կազմում են մնում Բոսնիան և Հերցոգովինան: 16-րդ հոդվածը նախատեսում էր Թուր-

քիայում ռուսական վերահսկողությամբ վարչական բարեփոխումներ իրականացնել՝ քրդերի և չերքեզների սպառնալիքների դեմ ծայրամասերում բնակվող հայերի ապահովությունը երաշխավորելու համար:

- Բեռլինի պայմանագիր (աշխատանքներն իրականացվում են հունիսի 13-ից հուլիսի 13-ը ընկած ժամանակահատվածում): Եվրոպական տերությունները հաստատում են Ռումինիայի, Սերբիայի և Մոնտենեգրոյի անկախությունը: Սակայն հարկադրում են Ռուսաստանից անջատում: Նաև նոր Բուլղարիայի անջատումն է որոշվում: Բոսնիա-Հերցոգովինան անցնում է ավստրո-հունգարական պաշտպանության տակ: Ալբանիան մնում է օսմանյան գերիշխանության ներքո՝ չնայած որ այդ երկրին էին ձգտում Իտալիան և Ավստրիան: Հայերը մի հուշագրում Լիբանանի պես քրիստոնյա կառավարչով անկախություն են խնդրում: Բայց 61-րդ հոդվածը սահմանում է, որ ցանկացած բարեփոխում կամ բարելավում պետք է օսմանյան նախաձեռնությամբ լինի՝ չնայած որ եվրոպական տերությունները հնարավորություն ունեն հետևելու այդ ամենին: Բայց նրանք հաճախ տարբեր և տարամետ կարծիքներ ունեն: Գերմանիան Օսմանյան կայսրության կողմից Եվրոպային անդրադարձ կատարելու դեր է տանում: Նա փոքրամասնությունների իրավունքների հարցում ավելի քիչ էր զգայուն:

- Թուրքիայում Աբդուլ Համիդը (1876-1909 թթ.) դադարեցնում է հիմնական երաշխիքները: Մոտ 30 տարի իշխում է որպես բացարձակ միապետ՝ իրեն խալիֆի կոչում տալով: Փորձում է պանիսլամական քաղաքականություն վարել, որը կընդգծի մահմեդական ինքնությունը: Այստեղից էլ կսկսվի արաբերենի տարածում և արաբների ավելի ակտիվ մասնակցություն: Եվրոպական ասպարեզում միտում է նկատվում դեպի Գերմանիա: Հաղորդակցության փորձ է արվում նաև Ճապոնիայի հետ: Ներքին համաձայնություններ են կնքվում քրդերի, չերքեզների, ինչպես նաև բեդուինների, չեչենների, ալբանացիների հետ՝ անհրաժեշ-

տության դեպքում նրանց օգտագործելով հակաքրիստոնեական գործառույթով:

1880 թ.

- Մեծ Բրիտանիայում իշխանության է անցնում Գլադսթոունը, ով հաղթանակ է կրում Դիզրայելիների դեմ: Այդ արդյունքի մեջ իրենց դերն են ունենում կայսրության քրիստոնյա փոքրամասնությունների դեմ թուրքերի կատարած վայրագությունները, որոնք շատ անգամ դադարեցվում են Գլադսթոունի կողմից:

1881 թ.

- Հայկական միջավայրում ծնվում է Հայրենիքի Պաշտպանների գաղտնի կազմակերպությունը:

1885 թ.

- Հակամարտում են սերբերը և բուլղարացիները: Այս տարի Վանում ծնվում է նաև Արմենակյան կուսակցությունը:

1889-1890 թթ.

- Հայկական խռովություններ, որոնք ավելի են ընդգծում աստիճանաբար աճող անհանգստությունը:

1890 թ.

- Օսմանյան կայսրությունը տարածքներ է կորցնում, մինչդեռ Անգլիան իշխում է Սուդանում և Ֆրանսիայում, որը այս ընթացքում գրավում է Թունիսը, և ձգտում է դեպի Սահարա ընկած շրջանի ընդլայնման: Լիբիայում (այս պահին խոսքը դեռևս այդ անունը կրող մերօրյա իրականության մասին չէ, այլ օսմանյան շրջանների) շատ հակումներ կային, նաև իտալական:
- Այս ընթացքում Թբիլիսիում ծնվում է սոցիալիստական ոգեշնչում ունեցող Հայ Հեղափոխական դաշնակցությունը (արդեն քանի տարի առաջ Ժնևում կովկասցի ուսանողների կողմից

հիմնադրվել էր Հնչակյան կուսակցությունը): Հայերը տուժում են բարեփոխումների բացակայությունից:

1894-1896 թթ.

- Տիրող անհանգիստ վիճակի, խռովությունների և ազգային Սահմանադրության դադարեցման արդյունքում ձերբակալվում են եպիսկոպոսներ և նշանավոր հայեր: Մարտին հայ պատրիարքի և մի բանկիրի դեմ մահափորձ է կատարվում: Սասունի հակամարտությունն է ծագում (1894 թ., օգոստոսի 18/սեպտեմբերի 10), ինչը տեղի է ունենում 3 գյուղերի կրկնակի հարկեր չվճարելու հետևանքով (արդեն մեկ անգամ վճարել էին քուրդ հարկահավաքներին): Բախումներ են տեղի ունենում, միջամտում է Չորրորդ բանակը: Հետևանքը լինում է մոտ հազար մարդկանց մահը: Այս նույն բանը կրկնվում է համարյա բոլոր հայկական վիլայեթներում: Այս լուրերից հետո Եվրոպայում հայերի նկատմամբ ուշադրությունն աճում է: Նոյեմբերին Բարձրագույն Դուռը եվրոպական տերությունների կողմից հարկադրվում է հետաքննչական հանձնաժողով կազմել:

Այս հակահայկական բռնությունների թեմայով հյուպատոսական բազմաթիվ հաշվետվություններ են գրվում, որոնք հավաքագրվում են եվրոպական տերությունների և ԱՄՆ-ի Արտաքին գործերի նախարարությունների կողմից: Այնտեղ խոսվում է կրակի մատնված գյուղերի, հիմնահատակ ավերված եկեղեցիների, հարկադիր կրոնափոխությունների մասին: 1895 թ. Հնչակյան կուսակցության կողմից Կոստանդնուպոլսում հանրահավաք է կազմակերպվում, որտեղ պահանջում էին քաղաքացիական իրավունքների նկատմամբ հարգանք ցուցաբերել: Դրան հաջորդում են արյունալի հալածանքներ: 1895 թ. 1896 թ. տեղի է ունենում Զեյթունի միջադեպը: Իսկ 1895 թ. հոկտեմբերի 2-ին Տրապիզոնի զինվորական հրամանատար Համդի փաշայի դեմ մահափորձ է իրականացվում, որը ձախողվում է: Հոկտեմբերի 5-ին Կանդրի բեյի, Տրապիզոնի վալի եվրոպական պատվի-

բակությունը հայերի պաշտպանություն է պահանջում: Իրականում կոտորածները սկսվում են հոկտեմբերի 8-ին և երեկոյան ժամը 11-ին հայտարարվում են շեփորի հնչյուններով: Եպիսկոպոսները մոտ 600 զոհերի անունների և կրած վնասների ցանկն են հանձնում (տե՛ս Ոսգանյան, էջ 212):

1896 թ.

- Հունիս: Թեոդոր Հերցլը հասնում է Թուրքիա մի հարցազրույցի համար, որտեղ առաջարկում է հրեական կողմի պարտքերի ամրապնդում Պաղեստինի անկման դիմաց, կամ էլ եթե դա հնարավոր չէ, ապա օսմանյան գերիշխանության ներքո նոր ինքնավար պետություն ստեղծելու դիմաց: Միապետը իր անունից խնդրում է, որ հրեաները միջամտեն մեծ մայրաքաղաքների եվրոպական մամուլին, որպեսզի հայկական հարցը ներկայացվի թուրքական շահերից ելնելով:
- Օգոստոս: Կոստանդնուպոլսի օսմանյան բանկի դեմ հայերը հարձակում են գործում: Դիվանագետ, գյուղատնտես Արմեն Գարոն (իսկական անունը՝ Գարեգին Փաստերնաջյան) գրավում է բանկը 25 մմ-ով: Նա հայտարարում է. «Մենք հանցագործներ չենք: Մարդկության հանցագործ անտարբերությունն է մեզ դրդել այս քայլին»: Այդ առիթով բաժանված թռուցիկները խոսում են հայերի և թուրքերի միջև եղած անհամաձայնությունների մասին, որոնք ավելի են սրվում կառավարության պատճառով: Խոսվում է նաև այն փաստի մասին, որ Եվրոպան նպաստել է հայերի կոտորածներին, քանի որ չի միջամտել: Բարեփոխումներ են պահանջում, հույս են հայտնում, որ Եվրոպան Հայաստանի համար Բարձրագույն հանձնաժողով կնշանակի: Սրան հետևում են Եզին քաղաքի կոտորածները: Մոտ 2000 մարդ է զոհվում: Այստեղից էլ գալիս է Աբդուլ Համիդին տրված «արյունոտ սուլթան» մականունը: Ըստ հաշվարկների՝ նրա օրոք մոտ 200,000 հայ է սպանվել: Սպանվածները ավելի չէին, եթե հաշվի առնենք Եվրոպայի վրդովված արձագանքները (տե՛ս Մեծ Բրի-

տանիայի ծեր Գլադսթոունի կողմից գրված բողոքները «մեծ հանցագործի» մասին):

1898 թ.

- Կայսր Վիլհելմը ուղևորվում է դեպի Կոստանդնուպոլիս՝ Աբդուլ Համիդին այցելության և նրան առաջարկում է իր երկրի ամենահեղինակավոր զարդեղենը և հասնում է նրան, որ դրանք հանձնում է նրան և համբուրում է երկու այտերը: Ջերմ ընդունելության է արժանանում: Հույս է հայտնում Գերմանիայի կողմից թուրքամետ քաղաքականություն վարել, ինչը հակասում է կանցլեր Բիսմարկի վարած քաղաքականությանը: Ներդրումներ և ծրագրեր են քննարկվում:

1903 թ.

- Գերմանական մի խմբի դրամաշնորհ է տրվում Բաղդադի երկաթուղու համար:

1906 թ.

- Սալոնիկում հիմնադրվում է Ազատություն օսմանյան կազմակերպությունը:
- Փետրվար: Էրզրումում ապստամբություններ են տեղի ունենում:

1906-1907 թթ.

- Ապստամբություններ են տեղի ունենում արևելյան Անատոլիայում, որոնք կազմակերպվում էին անհատական նախաձեռնությամբ և ապակենտրոնացման Միության կողմից, և որին մասնակցում էին դաշնակյան հայերը, ովքեր կողմ էին երիտթուրքերին մոտենալուն:

1907 թ.

- Ծնվում է «Միություն և առաջադիմություն» կոմիտեն (CUP), որին աջակցում էր բանակը: Դրան հետևում են պահպանողականների և բարեփոխումների կողմնակիցների միջև հա-

կամարտություններ, ապստամբություններ Մոնաստիրում, Սերրեսում և այլ քաղաքներում (20, 23 հուլիս): Պահանջում էին վերականգնել 1876 թ. Սահմանադրությունը, ինչը թույլատրվում է կայսեր հրամանով: Հայտարարվում են նաև ընտրություններ և խորհրդարանի ժողով, որը երեսուն տարուց ավելի չէր հավաքվել: Բայց երիտթուրքերի շրջանում ներքին ընդվզումներ են նկատվում:

- Նոյեմբերի 25: Կառավարական ուժերը մտնում են Էրզրում: Հարյուրավոր ձերբակալություններ են տեղի ունենում:

1908 թ.

- Աբդուլ Համիդը վերականգնում է սահմանադրությունը, չնայած որ իրականում փորձում է հեղափոխական մի նոր ալիք առաջ մղել: Ընտրությունների արդյունքում Կոմիտեի կողմից օժանդակվող մարդիկ անցնում են խորհրդարան: Բայց այս ընթացքում անկախանում է Բուլղարիան, ապստամբում է Կրետեն (որը միացվում է Հունաստանին), մինչդեռ Բոսնիա Հերցեգովինան անցնում է Ավստրո-հունգարական կայսրության կազմի մեջ: Երիտթուրքերի դեմ մեղադրանքներ են առաջադրվում, ներքին ֆինանսական և վարչական խնդիրներ, արդիականացման միտումներ են առաջանում:

1908-13 թթ.

- Արաբ-օսմանական բարեկամության միությունները շատանում են: Բայց այս շրջանում Օսմանյան կայսրությունը կորցնում է իր տարածքների մեկ երրորդը: Ներքին իրադրության մասին ուժեղ անդրադարձներ են տեղի ունենում: Ամրապնդվում է երիտթուրքերի դիրքը, որի ներսում արդեն առավելություն ուներ ավելի արմատական և ազգայնական հատվածը:

1909 թ.

- Փետրվար: Մեծ Վեզիր Մեհմեդ Կամիլ փաշան իրեն հավատարիմ մարդկանցով փոխարինելու է գալիս Պատերազմի և

Ծովային հարցերի նախարարություններին՝ ցանկանալով զինված ուժերից հեռացնել «Միություն և առաջադիմություն» կոմիտեին մոտ գտնվող տարրերը (հակահեղափոխական փորձ): Էնվերին ուղարկում են արտասահման: Միության անդամները ընդդիմանում են: Կամիլ փաշան պաշտոնանկ է արվում: «Միություն և առաջադիմություն» կոմիտեն աստիճանաբար ավելի հակաբրիտանական ուղղվածություն է ստանում: Ստամբուլում ապստամբում են զինվորականները:

- Ապրիլ: Մահմուդ Շնքեթ փաշայի առաջնորդած ընտրյալ զորքերը «Միություն և առաջադիմություն» կոմիտեի աջակցությամբ ուղղվում են դեպի Ստամբուլ: Ապրիլի 13-ին Աբդուլ Համիդը գահընկեց է արվում և գահ է բարձրանում Մեհեմետ 5-րդը (Մուհամեդ): Իշխանության են գալիս երիտթուրքերը: «Միություն և առաջադիմություն» կոմիտեն ակնհայտ ազգայնամոլական քաղաքականություն է վարում և փոքրամասնությունների դեմ խտրականություն է ցուցաբերում: Եվրոպան կարծես չի հասկանում, թե ինչ է կատարվում: Հին միապետի հետևորդների կողմից իրագործված հակահեղափոխական փորձերի համատեքստում տեղի է ունենում Ադանայի կոտորածը (մարտ-ապրիլ):
- Ադանա: Ապրիլի 1-ից 14-ը ընկած ժամանակահատվածում քաղաքը թուրքական ուժերի կողմից հարձակման է ենթարկվում, բայց պաշտպանական գործողություններ է ձեռնարկում: Ապրիլի 14-ից 27-ին տեղի ունենում երկրորդ հարձակումը, որի ընթացքում մոտ 25,000 հայ է սպանվում:
- Հոկտեմբերի 24: Իտալիան ցար Նիկոլայ 2-րդի հետ գաղտնի համաձայնագիր է կնքում՝ Բալկաններում ստատուս քվոն պահպանելու նպատակով:

1909-1911 թթ.

- Թուրքիայի դեմ ալբանական առաջին ապստամբություններ:

1910 թ.

- Դեկտեմբերի 3-ից 5-ին հիմնադրվում է Իտալիայի ազգայնական միությունը (ANI), որը խթանում է գաղութային ընդլայնման քաղաքականությանը:

1911-1912 թթ.

- Առաջին բալկանյան պատերազմ:

1911 թ.

- Մարտի 29-ից ապրիլի 16: Թուրքիայի դեմ ալբանական ապստամբության երկրորդ փուլ:
- Ապրիլի 17-ից մայիսի 15: Թուրքիայի դեմ ալբանական ապստամբության երրորդ փուլ:
- Մայիսի 16-ից հունիսի 12: Թուրքիայի դեմ ալբանական ապստամբության չորրորդ փուլ:
- Սեպտեմբերի 28: Իտալիան (Ջոլիտտի կառավարություն), որը Միջերկրականը Ֆրանսիայի և Անգլիայի կողմից արգելված է տեսնում, Թուրքիային ուլտիմատում է ներկայացնում՝ պահանջելով թույլ տալ Տրիպոլիտանիայի և Կիրենաիկայի գրավումը: Իտալո-թուրքական պատերազմ է ծագում այսօրվա Լիբիայի տարածքի գերիշխանության համար:
- Հոկտեմբերի 5: Տրիպոլիի և Բենղազիի ժամանում և գրավում: Իտալական զորքը ուժեղ դիմադրության է հանդիպում Սանուսիա եղբայրության կողմից: Մեծ է զոհերի թիվը: Օսմանյան կայսրությունը կորցնում է այս տարածքների պաշտպանության վերահսկողությունը: Կորցնում է նաև Ռոդին և փոքր կղզիները:

1912-1913 թ.

- Բալկանյան պատերազմներ: Դրանք ավերիչ են լինում Թուրքիայի համար, քանի որ Սերբիան, Բուլղարիան, Հունաստանը և Մոնտենեգրոն միանում են Օսմանյան կայսրության դեմ:

1912 թ.

- Հունվարի 18: Երիտթուրքերը լուծում են ալբանական խորհրդարանը, ինչը սպասածից տարբեր արձագանքների պատճառ է դառնում: Ինքնության և անկախության ցանկությունը աճում է: Վերջապես բանը հասնում է նաև դրան:
- Ապրիլի 19: Ստամբուլի հայերը միաձայն ընտրում են «Միություն և առաջադիմություն» կոմիտեի կազմին: Դրան հետևում է շփոթ և անհասկանալի իրադրություն՝ տարբեր հրաժարականներով և փակուղային իրավիճակներով:
- Մայիսի 4: Իտալական զորքերը գրավում են Ռոդին և Դոդեկանեսի մյուս կղզիները:
- Հուլիս: Սադիկ բեյի առաջնորդությամբ պաշտոնյաների մի խումբ՝ «Փրկության պաշտոնյաներ» անունով, Թուրքիայում հարկադրում են ազատական կողմնորոշմամբ կառավարություն:
- Օգոստոսի 5: Այն իրականացնելը մերժող Խորհրդարանի լուծման մասին կայսերական հրամանագիր: Հավատարիմ պաշտոնյաները ձերբակալություն են պահանջում Սահմանադրությանը վտանգ ներկայացնողների համար: Իսկ մյուսները պահանջում էին Երրորդ զորքի միջամտությունը՝ պետության հարվածները խոչընդոտելու նպատակով:
- Սեպտեմբեր: Արտակարգ իրավիճակը կրկնվում է: Արքայազն Սաիդ Հալիմ փաշան դառնում է Գլխավոր քարտուղար: Այս ընթացքում մոտենում է բալկանյան պատերազմը: Եվրոպական տերությունների կողմից առաջարկված բարեփոխումների ծրագիրը չի ընդունվում:
- Հոկտեմբերի 8: Թուրքական կառավարությունը ընդունում է ռազմական օրենք: Մոնտենեգրոն Թուրքիայի հետ պատերազմ է հայտարարում: Որոշ ժամանակ անց Եվրոպական տերությունները հիշեցնում են բարեփոխումների մասին: Թուրքիան պատասխանում է, որ ընդունել է դրանք: Դրանց իրագործումը ընթացքի մեջ է:

- Հոկտեմբերի 15: Բուլղարացիների, արաբների, սերբերի և հույների կողմից պահանջները մերժելուց հետո Բարձրագույն Դուռը խզում է դիվանագիտական հարաբերությունները այդ երկրների հետ: Որոշ ժամանակ անց սկսվում է հակամարտությունը:
- Հոկտեմբերի 18: Լոզանի պայմանագիրը վերջ է դնում լիբիական պատերազմին: Թուրքիան ետ է քաշվում և Իտալիային է զիջում Կիրանաիկան և Տրիպոլիտանիան: Սանուսիան տղամարդկանց ուղարկում է թուրքական դաշտեր՝ բերսալիերների դեմ դիմադրությունը ճնշելու նպատակով: Իտալիայի արձագանքը շատ դաժան է լինում: Զարդեր և կոտորածներ են տեղի ունենում: Մոտ 4000 զոհ և Ֆավինիանա կամ Ուստիկա կամ էլ Տրեմիտի և Գաետա բանտ մոտ 3500 (կամ 5000) արտաքսվածներ են տարվում: Իտալացիների դեմ դիմադրությունը շարունակվում է մինչև 1923 թ.: Գլխավոր դերակատարը երկար ժամանակ Կանաչ լեռան (Կիրանաիկա) շրջանն էր: Բալկանյան հակամարտության շրջանակներում թուրքական կողմը մակեդոնական քաղաքներ է ավերում:
- Հոկտեմբերի 28: Լուլեբուրգասում թուրքական հակամարտություն է տեղի ունենում: Շատ քաղաքներ են ավերվում: Ռե Պիետրոն մտնում է սերբական հնագույն մայրաքաղաքի կազմի մեջ:
- Նոյեմբերի 3-ին Սալոնիկը ընկնում է:
- Նոյեմբերի 25: Իրականանում է թուրք և բուլղարացի լիազոր ներկայացուցիչների առաջին հանդիպումը: «Միություն և առաջադիմություն» կոմիտեի ներսում ձերբակալություններ և փախուստներ են տեղի ունենում:
- Նոյեմբերի 28-ին Վալոնայում հիմնադրվում է Ալբանական ազգային կոնգրեսը, որը հռչակում է Ալբանիայի անկախությունը: Սակայն Կոսովոն անցնում է Սերբիային, իսկ Հունաստանին այլ տարածքներ են անցնում (Կամերիայի տարածքի մեծ մասը):

• Դեկտեմբերի 1-ին (կամ 5-ին) Թուրքիան զինադադար է կնքում, որը ստորագրում են Բուլղարիան, Սերբիան և Մոնտենեգրոն: Նույն ամսվա 16-ին տեղի է ունենում Լոնդոնի Կոնֆերանսը:

1912-1913 թթ.

• Լոնդոնի Կոնֆերանս

Բարդ է Բալկաններում տիրող իրադրության լուծումը: Թուրքիան պահանջում է, որ Ադրիանուպոլիսը մնա իրեն, իսկ Մակեդոնիան թուրքական գերիշխանության ներքո ինքնավար ճանաչվի և Ալբանիան նույնպես ինքնավար լինի, բայց օսմանյան իշխանություններից որևէ մեկի գերակայության ներքո: Եվ Էգեյան կղզիները նույնպես մնան Թուրքիայի ձեռքում, իսկ Կրետեն մեծ տերությունների վերահսկողության տակ լինի: Բայց *Collective Note*-ը տարբեր բաներ է ասում (Ադրիանուպոլիսը զիջելու, Էգեյան կղզիները վերահսկելու մասին): Կոնֆերանսը պատերազմի վերսկսելու պատճառով մի պահ դադար է ունենում, քանի որ Թուրքիան շատ է տուժում եղած առաջարկների պատճառով: Որոշվում է, որ Սկյութարը Ալբանիայի մաս կկազմի, իսկ Հունաստանը և Սերբիան կդադարեն Ալբանիայի տարածքում գործունեություն ծավալել: Նույն Օսմանյան կայսրությունը 1913 թ. ապրիլի 6-ին ընդունում է տերությունների առաջարկները: Խնդիր է ծագում նաև Մոնտենեգրոյի հետ կապված, որը գրավել էր Սկյութարը, բայց այն պետք է վերադարձներ:

1913 թ.

• Հունվարի 3: Զինադադար. Եվրոպական տարածքների մեծ մասը հանձնվում են Բուլղարիային, Հունաստանին և Սերբիային: Բուլղարական զորքերը ուղղվում են դեպի Ստամբուլ:

• Հունվարի 17: Մեծ տերությունների կողմից Թուրքիային *Collective Note* է ուղարկվում, որպեսզի Ադրիանուպոլիսը զիջի Բուլղարիային:

- Հունվարի 23: Երիտթուրքերը պետական հեղաշրջում են կատարում՝ նպատակ ունենալով կառավարությունը դարձնել Ազատական: Ֆլորեսը գրում է, որ դա հին միապետին գահընկեց արած կոալիցայի ներսում կատարվող հաշվետվություն էր: Այն դժվարին և արյունոտ մի գործողություն էր: Մի նոր փուլ է սկսվում, որի ընթացքում կառավարությունը հայեցողական բնույթի մեծ հնարավորություններ ուներ՝ ճնշող անհրաժեշտության դեպքերի համար: Նրանց ղեկավարներն էին Թալեաթը, Էնվերը և Քեմալը: Բայց պատերազմի արդյունքը բացասական է լինում Թուրքիայի համար, որը մարտին կորցնում է Ադրիանուպոլիսը և Ջանինը:
- Ապրիլի 6: Թուրքիան ընդունում է եվրոպական տերությունների առաջարկները:
- Մայիսի 30: Լոնդոնի պայմանագիր, ինչը Թուրքիայի համար դաժան պայմաններ է ստեղծում, որը կորցնում է իր տարածքները: Հունաստանը գրավում է Հարավային Մակեդոնիան և Կրետեն, իսկ Սերբիան՝ Կոսովոն և հյուսիսային Մակեդոնիան, մինչդեռ Մոնտենեգրոն՝ Ալբանիայի մի մասը: Ողբերգական իրադրություն է տիրում:
- Մայիս: Լոնդոնում հաշտության վերջնական համաձայնագրեր են կնքվում, որոնք հաստատում են Օսմանյան կառավարության վրա դրված դաժան պայմանները: Կայսրությունը կորցնում է եվրոպական տարածքները՝ բացառությամբ Ստամբուլի ետնամասի: Թուրքիայում զայրալից հանրահավաքներ են տեղի ունենում, որոնց ընթացքում սպանվում է Մահմուդ Շևքեթը՝ հենց նա, ով ստորագրել էր այդ համաձայնագրերը: Արմատանում է անջատումը Դաշնակից տերությունների միջև, կամ այլ կերպ ասած՝ մի կողմից Մեծ Բրիտանիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի և մյուս կողմից՝ կենտրոնական կայսրությունների (Ավստրո-Հունգարիա, Գերմանիա): «Միություն և առաջադիմություն» կոմիտեի ներսում փոփոխություններ են գրանցվում:

- Հունիսի և հուլիսի ընթացքում Բուլղարիան պայքարում է նախկին դաշնակից սերբերի և հույների դեմ:

Այս նույն տարում ծնվում է Թուրքական ուժի առաջադիմության ասոցիացիան՝ նպատակ ունենալով բանակ վարժեցնել՝ համաձայն Ազգային անվտանգության Միության: Մեծ դեր է ունենում Էնվեր բեյը, ով ուժով իշխանության էր անցկացրել «Միություն և առաջադիմություն» կոմիտեն (հունվարի 23):

1913-1914 թթ.

- Թուրքիայում մեծանում է Գերմանիայի դերը նաև գերմանացի դեսպան Վանգենհեյմի շնորհիվ: Ավարտին են մոտենում Անգլիայի հետ լավ հարաբերությունները, քանի որ Թուրքիան վախենում է Ռուսաստանի վտանգից:

1913-1918 թթ.

- Թուրքական պետությունը կառավարվում էր ռազմական բռնապետության կողմից, որի գլխավոր ներկայացուցիչներն էին «Միություն և առաջադիմություն» կոմիտեի անդամները: Սովորաբար Թալեաթը համարվում է նրանց երեքից ամենահզորը: Ըստ պատմաբանների գլխավոր մեկնաբանումների՝ այս տարիներին թուրքերի և արաբների միջև որոշակի հեռացում է նկատվում, ինչն էլ պատճառ է հանդիսանում, որ արաբական տարածքներում անկախության ցանկություն առաջանա (Բերրի Կիսալուսին և Արաբիայի մի հատված):

1914 թ.

- Հունվար: Էնվերը դառնում է Պատերազմի հարցերով նախարար: Թուրքական զորքը ռուսականացվում է (տե՛ս Մորգենթաու), իսկ հրամանատար դիրքերում գերմանացի կատարածուներ են նշանակվում և հենց գերմանական կողմն է բանակին վերապատրաստում: Ամրապնդվում է «Միություն և առաջադիմություն» կոմիտեի ամենաարմատական թևի իշխանությունը:

- Փետրվարի 8: Եվրոպական տերությունները Թուրքիայից նորից պահանջում են իրականացնել հայերի համար նախատեսված բարեփոխումները: Օտարազգի գեներալ տեսուչներ են նախատեսվում՝ որպես այդ բարեփոխումների երաշխավորներ: Թուրքերի կողմից դժկամություն է նկատվում:
- Հունիսի 28: Սարայևոյում սպանվում են Ավստրիայի էրցհերցոգ Ֆերդինանդը և նրա կինը: Եվրոպայում մեծ զորահավաք է սկսվում: Կոստանդնուպոլսի մոտակայքում գերմանացիները մի հսկայական ռադիոկայան են տեղադրում: Չնայած որ այդ պահին Թուրքիան պաշտոնապես չեզոք դիրքում էր:
- Հուլիսի 23: Ավստրիան Սերբիային ուլտիմատում է ներկայացնում: Վերջինս, հետևելով Ֆրանսիային և Ռուսաստանին, հրաժարվում է կատարել պահանջները: Բայց այս ընթացքում թուրքերը ազատագրում են Ադրիանուպոլիսը: Էնվեր փաշայի աստղը փայլում է: Թուրքիայում ազգայանամոլությունը մահմեդական հավատի շնորհիվ թափ է ստանում: Ազգայանամոլությունը և մահմեդականությունը մեկը մյուսին հզորացնում են:
- Հուլիսի 28: Սկսվում է Առաջին համաշխարհային պատերազմը: Մի կողմից դաշնակից երկրներն են՝ Ռուսաստանը, Ֆրանսիան և Մեծ Բրիտանիան, իսկ մյուս կողմից Կենտրոնական կայսրությունները՝ Գերմանիան, Ավստրո-Հունգարիան, Օսմանյան կայսրությունը:
- Հուլիսի 5: Պոստդամում տեղի է ունենում գերմանական կայսրության Խորհրդի համաժողով: Օտարերկրյա տիտղոսները վաճառքի են հանվում՝ կանխիկ դրամական միջոցներ ձեռք բերելու նպատակով: Թուրքիայում այս ընթացքում բռնագրավումներ և զորահավաքներ են սկսվում: Բնակչության մեջ չքավորություն և սով է տիրում:
- Հուլիսի 22: Սերբիային ուլտիմատում է ներկայացվում: Թուրքիայում Էնվերը կանոնադրություն է ընդունում՝ ըստ որի զինվորական ծառայությունից խուսափելը կհավասարվի դասալքության և մահապատժի կարժանանա: Երկու գերմանական

նավեր՝ Գոեբենը և Բրեսլաուն, անցնում են Դարդանելը և հասնում Կոստանդնուպոլիս: Խոսքը Թուրքիային վաճառելու մասին է: Գերմանիան այդ ընթացքում գրավել է Լիեժը, Նամյուրը և այլ բելգիական քաղաքներ: Խորհրդածում են Փարիզը շտապ գրավելու մասին:

- Օգոստոսի սկզբներին Թուրքիան «զինված չեզոքություն է» խնդրում և ընդհանուր զորահավաք հայտարարում: Շատ հայեր են զինվորագրվում: Որոշ ժամանակ անց պատերազմը սկսվում է: Իտալիան իրեն չեզոք է հայտարարում:
- Սեպտեմբերի 27: Գերմանիան փակում է Դարդանելը: Ռուսաստանը դաշնակիցներից մեկուսացած է մնում: Սակայն այս ընթացքում ֆրանսիացիները կանգնեցնում են գերմանացիների առաջխաղացումը:
- Հոկտեմբերի 29: Բեդուինների զորքերը հատում են Եգիպտոսի սահմանը և հակամարտում են անգլիացի զինվորների հետ:
- Երեք թուրքական ականակիր նավեր, Դոնեց ռուսական նավին դիմադրելուց և նավի անձնակազմի մի մասին կորցնելուց հետո, մտնում են Օդեսայի նավահանգիստ: Վնասվել են նաև երկու հածանավեր: Ֆրանսիական Պորտուգալ նավը ջրասույզ է լինում, զոհվում են երկու նավաստիներ, ուրիշ երկուսը վիրավորվում են: Քաղաքի վրա կրակ են բացում: Տարբեր մարդիկ սպանվում են, շաքարի արտադրամաս է ավերվում: Թուրքական ականակիր նավերի անձնակազմի մեծ մասը գերմանացիներ են: Ըստ դեսպան Մորգենթաուի հուշերի՝ Գերմանիան մտադիր է Թուրքիային պատերազմի դրդել:
- Հոկտեմբերի 30: Թուրքիայում, որտեղ կառավարության որոշ անդամներ հրաժարական են տալիս, իշխանության են մնում «Միություն և առաջադիմություն» կոմիտեից ծագող երիտթուրքերը՝ Թալեաթը, Էնվերը և Քեմալը: Անգլիայի գերիշխանության և ազդեցության երկարատև շրջանը ավարտվում է, հարաբերություններ են սկսվում գերմանացի կայսեր հետ: Մինչ

Ամերիկան փորձում է մեկուսացնել ֆրանսիացիներին և անգլիացիներին, գերմանացիներն այդ նպատակով շատ դաժան քաղաքականություն են վարում (աղբյուրը՝ Մորգենթաու): Նրանց ծրագիրը քրիստոնյաների դեմ մահմեդական մոլեռանդության մոբիլիզացիան էր:

- Նոյեմբերի 13: Սուլթանը պատերազմ է հայտարարում, որը կարծես Ջիհադի՝ սուրբ պատերազմի դեմ, կամ այլ կերպ ասած անհավատների դեմ բողոքի մի ձև էր: Հետագայում գաղտնի կերպով արաբերեն գրքույկ է տարածվում Հնդկաստանում, Եգիպտոսում, Մարոկկոյում, Սիրիայում և այլն՝ քրիստոնյաներին սպանելու և կոտորելու մանրամասն մտադրությամբ: Այնտեղ ասվում է, որ մահմեդականները ստրկության են մատնվել, իսկ անհավատները դարձել են նրանց տերեր: Նա, ով կսպանի թեկուզ մեկ անհավատի, Աստծո կողմից կփոխհատուցվի: Այս իրավիճակի գլխավոր պատասխանատուներն էին Անգլիան, Ֆրանսիան, Ռուսաստանը և հետևաբար հարկավոր էր նրանց դեմ պայքարել: Այն փաստը, որ պայքարելու ենթակա թշնամիների կազմում չկային Գերմանիան և Ավստրիան, մտածելու տեղիք է տալիս Գերմանիայի հսկողության մասին:

Շուտով Ծովային հարցերի նախարար Քեմալը դառնում է թուրքական Չորրորդ զորքի հրամանատար (նստավայրը Սիրիայում էր): Նրա նպատակն էր «թուրքացնել» կայսրությունը: Մորգենթաուն խոսում է թուրքական ռազմական ուժը վերականգնելու նպատակով ազդեցիկ փորձ անելու, Եգիպտոսը գրաված Անգլիայի վերաբերյալ Թուրքիայի կողմից պատասխան տալու մասին: Իսկ Էնվերը Կովկասով Ռուսաստանի վրա հարձակվելու, Կասպից և Սև ծովերը ընդգրկող մեծմասամբ հայաբնակ տարածքները վերագրավելու հրաման է արձակում:

- Տարեվերջ: Հասունանում է մոտ 30,000 բնակչություն ունեցող հայկական խաղաղ Վան քաղաքի ողբերգությունը: Բարբեր ժամանակաշրջան էր: Հայերի թիվը այստեղ գերազանցում էր մահմեդականների թվին: Բռնագրավումներ են սկսվում,

որոնք առաջին հերթին հայերին էին ուղղված (քրիստոնյաներին): Խոսակցություններ են սկսվում, որ նրանցից շատերը անցնում են Ռուսաստան և մտնում են ռուսական զորք: Հայ քահանաները հավատացյալներին հորդորում են հանգիստ մնալ և խուսափել սադրանքներից: Բայց այս ընթացքում փոփոխություն է տեղի ունենում կառավարչի պաշտոնում մինչ այդ զսպվածություն ցուցաբերած Թահշին փաշայի և Էնվերի փեսա Չևդետ փաշայի միջև: Վերջինս հայերին վերացնելու հանձնարարություն էր ստացել: Գարնանը թուրքերը, փախուստի մեջ գտնվող ռուսներին հետևելու փոխարեն, արշավում են Վանի տարածք: Գյուղեր են կրակի մատնում, թալան են իրականացնում: Ապրիլի կեսին 500 հայեր գնդակահարվում են: Նմանատիպ երևույթներ կրկնվում են Վանա լճի հյուսիսում գտնվող 80 թաղամասերում: Չևդետ բեյը Վանից խնդրում է 4000 տղամարդ տրամադրել: Հայերը 500 տղամարդ և գումար են առաջարկում: Չևդետը սկսում է խոսել ապստամբությունը ամեն կերպ ճնշելու մասին, քաղաքի շուրջ սկսում են խրամատներ փորել: Հետագա մի պատահարից հետո (հայ կանանց են առևանգում) պաշարում են քաղաքը, որը, չնայած թվային թերարժեքությանը, հինգ շաբաթ շարունակվում է պաշտպանվել: Ռուսական զորքերի գալու պահին տվյալ շրջանում արդեն մոտ 55,000 հայ էր զոհվել: Բայց թուրքերը դա ներկայացնում են որպես «Վանի դավաճանություն»:

1914 թ. վերջ, 1915 թ. սկիզբ

- Գերմանիան Կոստանդուպոլիսը տեսնում է որպես խաղաղության հնարավոր փորձերի համար իդեալական մի վայր՝ մտադրություն, որ կարճ ժամանակում ցանկանում էր իրականացնել: Այդ նպատակով հույս ուներ, որ Ուիլսոնը կմիջնորդի: Գերմանիան հույսը դրել էր կարճ պատերազմի և արագ հաղթանակների վրա: Նա չուներ բավարար ցորեն, բամբակ և պղինձ

կայծակնային պատերազմից հետո ավելի երկար դիմանալու համար: Բայց փորձերն ապարդյուն են անցնում:

1915-1918 թթ.

- Հայերի տեղահանություն և կոտորած:

1915 թ.

- Տարին սկսվում է Թրակիայից և Մարմարածովյան տարածաշրջանից և Դարդանելի, Բոսֆորի,Սև ծովի ափերից հույների տեղահանություններով (պատերազմից առաջ ուրիշ տեղահանություններ են լինում), որոնց թիվը տատանվում է 200,000-ից մեկ միլիոնի միջև: Ճանապարհին նրանք թալանի են ենթարկվում և հետապնդվում, մեծ զրկանքների են դիմանում, բայց չեն սպանվում:

Միևնույն ժամանակ միտք է ծագում, որ հարկավոր է Հայաստանը զինաթափել: Եվ իսկապես, հայերը ծառայել են բանակում, ու ի տարբերություն անցյալի՝ արդեն զինված են: Ամեն ինչ սկսվում է նրանց կարգը իջեցնելով և բանվորներ դարձնելով: Նրանց սովի են մատնում: Ամեն անգամ մոտ 2000 մարդ են սպանում: Նրանց մոտ զենք են փնտրում, տանջում: Տեղի ունեցած դաժանություններով հատկապես աչքի են ընկնում Զևդեթ բեյը և Վանը:

- Հունվար: Խոսվում է անգլիական մի հետազոտության մասին, որը փորձում էր հզորացնել Դարդանելը: Միևնույն ժամանակ Քեմալի հետազոտությունը մեծ խնդիրների է հանդիպում, իսկ Էնվերինը՝ էլ ավելի վատ ընթացք է ստանում: Ռուսաստանը ռմբակոծում է Տրապիզոնը: Վախենում է, որ այն կմտնի Բոսֆոր և կմիջամտի Ռումինիայի և Հունաստանի հակամարտությանը: Իտալիայի միջամտությունը նախատեսվում էր գարնանից:

- Հունվարի 28: Մեծ Բրիտանիայի նախարարների կաբինետը Դարդանելի վրա հարձակման հրաման է տալիս:

- Փետրվարի վերջ: Դաշնակից նավատորմները ծայրահեղ դաժանությամբ ռմբակոծում են Դարդանելը: Միևնույն ժամանակ ռուսական զորքերը առաջանում են: Սերբիան ճնշում է ավստրիացիներին: Կայսրության լուծարումը անխուսափելի է թվում: Թուրքիայում լարվածությունը շատ ուժեղ է, ծրագրվում է Կոստանդնուպոլսից փախուստի դիմել: Միևնույն ժամանակ Էնվերը ավերիչ ելք ունեցող քարոզարշավից հետո վերահաստատվել է: Նրա կարծիքով Դարդանելը կդիմադրի: Եվ հենց այդպես էլ լինում է:
- Մարտի 18: Դաշնակիցները դաժանորեն հարձակում են գործում Դարդանելի վրա, ինչն աղետալի հետևանքներ է ունենում: Դաշնակիցները նահանջում են այն մասում, որտեղ Թուրքիայի կողմից այլ հարձակումներ էին սպասում: Խոսքը մի դրվագի մասին է, որը փոխում է պատերազմի ճակատագիրը, քանի որ Ռուսաստանը դաշնակիցներից մեկուսացած և սարքավորումներից զրկված է մնում:
- Ապրիլ: Ապրիլին Կոստանդնուպոլսում սկսվում են հայ մտավորականների և քաղաքական գործիչների առաջին ձերբակալությունները և հայերի տեղահանությունները դեպի Սիրիական անապատ և Միջագետքի հովիտ (տե՛ս Մորգենթաուն): Տեղահանությունները շարունակվում են ամբողջ գարնան և ամռան ընթացքում: Ապրիլի 24-ին սպանվում է հայ ամենամեծ բանաստեղծ Դանիել Վարուժանը: Այդ օրը հայտնի է դառնում որպես Բանաստեղծի մահվան օր (տե՛ս Ոսգանյան):
- Ապրիլի 26: Լոնդոնի պայմանագիր: Իտալիան դաշնակից երկրների հետ գաղտնի համաձայնություն է կնքում՝ կենտրոնական կայսրությունների դեմ միջամտելու նպատակով: Փոխարենը տարածքային փոխհատուցում էր նախատեսվում:
- Մայիս: Տեղահանության ժամանակավոր օրենք է ընդունվում: Հրամանագիրը ստորագրվում է մայիսի 29-ին Գրան Վեզիրի կողմից և ամսվա վերջում ուսումնասիրվում է կառավարության կողմից: Շատ մարդիկ, որ տեղահանությունների պատճա-

ռով ստիպված էին քաղցած վիճակում ենթարկվել թալանի և ավազակային հարձակումների, ինքնասպան են լինում:

- Մայիսի 2: Էնվերը հայտարարում է, որ նախորդ շաբաթվա ընթացքում դաշնակից ուժերը (ավստրալիական և նոր զելանդական) խարիսխ են գցել Գալլիպոլի թերակղզում: Քեմալը առաջարկում է անգլիական և ֆրանսիական գյուղերում բաժանել ձերբակալվածներին, այնպես, որ դաշնակիցները իրենց իսկ հայրենակիցներին գնդակահարեն: Բայց միայն գլխավոր ռազմական թաղամասն է առանձնանում:
- Մայիսի 3: Իտալիան հայտարարում է Երեքի Դաշնակցության մասին: Մի քանի օր անց Սոննինոն նախարարներին տեղեկացնում է Անտանտայի կողքին պատերազմ մտնելու մասին: Դրան հետևում են անկարգություններ, պատերազմի դեմ (Ջոլիտտի և ուրիշներ) և պատերազմի կողմ («Մայիսյան պայծառ օրեր»՝ Դ'Անունցիոյի հայտնի արտահայտության համաձայն) կոալիցիաներ:
- Մայիսի 24: Իտալիան Ավստրո-Հունգարիայի կայսրությանը պատերազմ է հայտարարում: Զորքերը անցնում են արևելյան սահմանը: Տեղի է ունենում Իզոնցոյի ճակատամարտը: Միևնույն ժամանակ հայտնի է դառնում դաշնակիցների կողմից արված հայտարարության մասին, ըստ որի՝ Թուրքիան «մարդկության դեմ հանցագործություն» է գործել: Ընթացքում Թուրքիան որոշ տարածքներ է զիջում Բուլղարիային, որը համոզվում է կենտրոնական տերությունների հետ դաշնակցել: Ապա Ֆրանսիան և Անգլիան մերժում են Գալլիպոլին, որը մեկնաբանում են որպես Թուրքիայի կողմից մեծ հաղթանակ, ինչի հետևանքը լինում է այն, որ Ռուսաստանում նստվածք է դնում անարխիան և երկիրը դուրս է գալիս միջազգային ասպարեզից:

1916 թ.

- Գերմանիայում լույս է տեսնում հայերի կոտորածի մասին գերմանացի բողոքական քահանա Հովհաննես Լեպսիուսի զեկույցը:
- Նույն տարում լույս է տեսնում կոտորածների ժամանակագրությունը՝ գրված դոմինիկյան ֆրանսիացի Տեր Հայր Ռետորեի կողմից: Այն վերցնում և տպագրում է Մարկո Իմպալիացոն՝ վերնագրելով՝ *«Պատուհան՝ դեպի կոտորածներ»*: Հրատարակչատունը, որ այս թեմայով մի ամբողջ շարք ուներ, Միլանի Գուերինին և ընկերներն էր:
- Քաղաքակրթության գծով պատմաբան Առնոլդ Թոյնբին, ով այդ շրջանում արտաքին գործերի նախարարության աշխատակից էր, համագործակցում է նախկին դեսպան Ջեյմս Բրայսի հետ՝ հայերի կոտորածների թեմայով փաստաթղթերի մի կարևոր հավաքածու կազմելու համար: Զոհերի թիվը հավանաբար մոտ մեկ միլիոն էր կամ մեկ միլիոն երկու հարյուր հազար: Խոսքը *Treatment of Armenians in the Ottoman Empire, 1915-16*-ի մասին է:
- Փետրվարի 22, դեսպան Մորգենթաուն նորից մտնում է ԱՄՆ:
- Օգոստոսի 27: Իտալիան Գերմանիային պատերազմ է հայտարարում:

1917 թ.

- Իտալիայի համար դժվար տարի է լինում՝ կյանքի բարձր գների և սովի պատճառով: Ծառայությունից խուսափելը և Իզոնցոյի ճակատամարտը շարունակվում են մինչև Կապորետոյի հակամարտություն և Բոսելիի կառավարության անկում, որին փոխարինելու է գալիս Վիտորիո Էմանուելե Օռլանդոն: Զինված ուժերի հրամանից հետո Արմանդո Դիազը փոխարինում է Կադորնային (նոյեմբերի 9):

• Դեկտեմբերի 15: Բրեստ-Լիտովսկում Ռուսաստանի բոլշևիկյան կառավարությունը զինադադար է կնքում: Սկսվում են հաշտության բանակցությունները:

1918 թ.

• Մայիսի 28: Հռչակվում է Հայաստանի Հանրապետությունը: Սակայն 1920 թ. արևելյան շրջանները (Երևանի բարձրավանդակ) վերագրավվում են Ռուսաստանի՝ Անաստաս Միկոյանի և Ալեքսանդր Միասնիկյանի գլխավորած բոլշևիկյան զորքերի կողմից: Կովկասյան հանրապետության մյուս հատվածների միացումը Ռուսաստանին այսպիսով անխուսափելի է դառնում (1922 թ.): Մինչդեռ թուրքական Հայաստանը վերանում է:

• Սեպտեմբեր: Ադրբեջանի Ներքին գործերի նախարար Բահբուդ Խան Ջիվանշիրը հրաման է տալիս Բաքվում 20,000-ից ավելի հայերի սպանել: Վրեժը լուծում է Միսակ Թորլակյանը 1921 թ. հուլիսի 18-ին («Նեմեսի» գործողության շրջանակներում):

1918-1920 թթ.

• Հայաստանի Հանրապետությունը մի փխրուն իրականություն է, որ փորձում է հյուրընկալել Թուրքիայից և Ռուսաստանից եկող փախստական հայերին:

1919 թ.

• Հովհաննես Լեպսիուսը տպագրում է *Deutschland und Armenian 1914-1918* աշխատությունը:

• Հունվար: Դաշնակիցների կողմից նշանակված հանձնաժողովը եզրափակում է իր աշխատանքները՝ խոսելով հայերի դեմ կիրառված «բարբարոսական և անօրինական» մեթոդների մասին:

• Հունվարի 18: Փարիզում բացվում են հաշտության Համաժողովի աշխատանքները: Ցարի կայսրությունը լուծարվել է, մինչդեռ եվրոպական ասպարեզում է հայտնվել Միացյալ Նա-

հանգների ներկայությունը: Ավարտին է մոտենում Ավստրո-Հունգարիայի կայսրությունը: Սերբիայի, Խորվաթիայի և Սլովենիայի միջև միություն է ստեղծվում, որը հետագայում դառնում է Յուգոսլավիա:

- Նույն տարվա ապրիլի 26-ին երիտթուրքերի անկումից հետո օսմանյան ռազմական դատարանը հեռակա կարգով մահվան է դատապարտում հայերի տեղահանության և կոտորածների պատճառ դարձած տարբեր ղեկավարների: Հուլիսի 19-ին հեռակա կարգով մահվան են դատապարտվում նաև Թալեաթը, Էնվերը և Ջեմալը: Թալեաթ փաշան նախկին Մեծ Վեզիրն էր, Էնվեր փաշան՝ Պատերազմի հարցերով նախկին նախարարը, Ջեմալ փաշան՝ Ծովային հարցերով նախկին նախարարը և դոկտոր Նազիմը՝ Կրթության նախկին նախարարը ու հատուկ մարմինների ստեղծողը:
- Հուլիսի 5: Ռազմական դատարանի 5 դատավորներ հաստատում են հայերի կոտորածների հարցում «Իթթիհադի» և «Միություն և առաջադիմություն» կոմիտեի անդամների մեղքը: Մեղավորները մահվան են դատապարտվում:
- Հուլիսի 29: Ալբանիային վերաբերող Իտալիայի պահանջներին աջակցող Հունաստանը վերջինիս հետ պայմանագիր է կնքում: Հաջորդող ժամանակաշրջանում Ալբանիան անկախության հասնելու, ապա նաև Իտալիային մոտենալու փորձեր է կատարում, այն աստիճան, որ չեղյալ է հայտարարվում իտալո-հունական համաձայնությունը (հուլիսի 26, 1920 թ.):
- Թուրքական ազգայնական նոր շարժում է սկիզբ առնում, որը գտնվում էր Մուստաֆա Քեմալ անունը ունեցող խարիզմատիկ առաջնորդի վերահսկողության ներքո, ով հետագայում հայտնի է դառնում որպես Քեմալ Աթաթուրք: Նա իր կառավարությունն է կազմակերպում Անկարայում՝ հակադրվելով Կոստանդնուպոլսի կառավարությանը:
- Սեպտեմբերի 10: Ֆրանսիան Սեն Ժերմեն-ան-Լեում Մեծ Բրիտանիայի հետ հաշտության պայմանագիր է կնքում: Իտա-

լիան ձեռք է բերում Տրենտինոն և Ալտո Ադիջեն՝ հասնելով մինչև Բրեններո, Վենեցիա Ջուլիա, Իստրիա և Դալմացիայի մի հատված:

1920 թ.

- Սևրի պայմանագիրը ճանաչում է Մուստաֆա Քեմալին: Թուրքական և ռուսական տարածքներ ընդգրկող Մեծ անկախ Հայաստան ունենալու երազանքը նոր թափ է ստանում: Սակայն Միացյալ Նահանգները չեն ստորագրում պայմանագիրը, որը մերժում է նաև Քեմալը: Պայմանագիրը հնարավորություն է ստեղծում Դաշնակից դատարան կազմել, որը կդատեր հայերի կոտորածների համար մեղավորներին: Երիտասարդ հայկական հանրապետությունը ստիպված էր ծանր և անբարենպաստ զինադադար ընդունել:
- Փետրվարի 9: Ռազմական դատարանը ընդամենը 5 տարի ազատազրկման է դատում Օգուտ բեյին՝ հենց նրան, ով 1915 թ. ապրիլի 24-ին ղեկավարել էր Կոստանդնուպոլսում հայ մտավորականների առևանգումը և հետագա սպանությունը (տե՛ս Ոսգանյան, էջ 222):
- Մարտի 27: Շիրագյանը սպանում է Վահե Իհսանին:
- Հունիսի 13: Փարիզում սպանվում է Էսսադ Տոպտանին:
- Օգոստոսի 2: Իտալո-ալբանական համաձայնություն է կնքվում: Ճանաչվում է Ալբանիայի անկախությունը, իտալական զորքերը նահանջում են:
- Նոյեմբերի 12: Իտալիան և Յուգոսլավիան ստորագրում են Ռապալլոյի պայմանագիրը: Իտալիային են անցնում որոշ դալմատական կղզիներ, ինչպես նաև Զառան: Ֆյումեն ճանաչվում է ազատ քաղաք (հետագայում հակամարտություններ են տեղի ունենում դանունցիան լեգիոներների հետ):

Միևնույն ժամանակ ծնվում է Ազգերի լիգան, որի հիմքերը դրվել էին Ուիլսոնի կողմից:

• Այս տարում Արմեն Գարոն (Օսմանյան բանկի ահաբեկիչներից մեկը) Շահամ Նատալիի հետ դատահիրավական մտադրություններ ունեցող հատուկ առաքելություն է կազմակերպում: Խոսքը «Նեմեսիս» գործողության մասին է:

1921 թ.

• Քեմալը Ռուսաստանի հետ համաձայնագիր է կնքում և գրավում թուրքական Հայաստանի տարածքները:

• Միացյալ Նահանգներում Ուիլսոնին թվում է, թե կատվածահար է եղել:

• Այս նույն տարում է ծնվում «Նեմեսիս» գործողությունը: Հունիսին դատական գործընթաց է տեղի ունենում, որի ընթացքում մարտին Բեռլինում (մարտի 15) Թալեաթին սպանած Սողոմոն Թեհլիրյանը արդարացվում է:

• Հուլիսի 18: Պերա Պալաս հյուրանոցի առջևում Միսակ Թորլակյանը սպանում է Բահբուդ Խան Ջիվանշիրին, լինելով Ադրբեջանի Ներքին գործերի նախարար, Բաքվում 1918 թ. սեպտեմբերին 20,000-ից ավելի հայերի էր սպանել:

• Հայաստանի փոքրիկ հանրապետությունը կլանվում է խորհրդայինների կողմից:

• Դեկտեմբերի 6: Տեղի է ունենում երիտթուրքերի ժամանակ նախարար եղած Սաիդ Հալիմ փաշայի սպանությունը: »Վրիժառուն» Արշավին Շիրագյանն էր:

1922 թ.

• Հայաստանի Հանրապետությանը մնացած տարածքների՝ Ռուսաստանին նվիրված լինելը՝ հասցնում է թուրքական կողմի հետագա առաջխաղացման դեմ պաշտպանության:

• Նույն այս տարում են լույս տեսնում *Ambassador Morgenthau Story* անունով Հ. Մորգենթաուի, ինչպես նաև Գրիգորիս Բալաքյանի հուշերը:

• Տարեվերջին Մուստաֆա Քեմալը արշավում է դեպի Կոստանդնուպոլիս: Վախենում էր փոքրամասնություններից: Նա

վերջ է դնում սուլթանությանը և հռչակում Թուրքիայի Հանրապետություն:

- Միևնույն ժամանակ աշնանը թուրքերը հարձակվում են և Զմիռնեն ընկնում է: Սեպտեմբերին կրակի է մատնվում հայկական թաղամասը, հրդեհը տարածվում է դեպի հունական թաղամաս: Չի տուժում միայն թուրքական հատվածը: Բոլորը ծովային ճանապարհով փախուստի են դիմում: Հունական ափերին հասած հայերի և հույների թիվը մոտ 750,000 է;
- Իտալիայում իշխանության է անցնում ֆաշիզմը:
- Բեռլինում սպանվում է Բեհեդին Շաքիրը, ով «Միություն և առաջադիմություն» կոմիտեն ստեղծողն էր: Դատի է ենթարկվում նաև որպես «Տրապիզոնի հրեշ» հայտնի դարձած Ջեմալ Ազմին (ապրիլի 17):

1923 թ.

- Մորգենթաուն Միացյալ Նահանգներից խնդրում է հանգստացնել թուրքերի ագրեսիան, բայց արդեն տնտեսական շահեր կային, որոնք հակառակ ուղղությամբ են գործում (տե՛ս Ստանդարտ Օյլը): Մուստաֆա Քեմալի տարածքային պահանջները ընդունվում են:
- Հուլիսի 24: Տեղի է ունենում Լոզանի պայմանագիրը, որի շնորհիվ իրավիճակը օրինականացվում է: Թուրքիայի տեսակետը լայն ընդունելություն է գտնում, Սևրի հայտարարություններ-ը կորցնում են իրենց արժեքը: Սրանով նշանավորվում է Հայաստանի անկախության ավարտը: Անատոլիայի և Հայաստանի մի մասի վրա սահմանվում է Թուրքական վերահսկողություն, ծնվում է Թուրքիայի հանրապետությունը:

Թուրքիայում բնակվող ազգային փոքրամասնությունների հարցը դեռ լուծում չի գտել: Դրանցից հատկապես կարևոր է քրդերի հարցը:

- Այս ընթացքում Հունաստանում բնակվող մոտ 800,000 թուրքերի և 80,000 բուլղարացիների ետ են ուղարկում Թուրքիա

և Բուլղարիա: Մարդկանց այս մեծ տեղափոխությունները ապակայունացման պատճառ են դառնում:

- Հիմնադրվում է Ազգերի Լիգային պատկանող Փախստականների կարգավորման հանձնաժողովը: Այն ղեկավարում էր Մորգենթաուն, ով արդեն համագործակցել էր Մերձավոր Արևելքի օգնություն (NER) և Ամերիկյան Կարմիր Խաչ հիմնադրամների հետ: 1923 թ. մինչև 1924 թ. այն զբաղվում է հատկապես Հունաստանով՝ վերջինիս օգնություն հասցնելով և զարգացման հասցնելով:
- Հոկտեմբերի 29: Սուլթանությունը չեղյալ հայտարարելուց հետո Քեմալը Հանրապետություն հռչակվելու համար նախադրյալներ է մշակում և հենց ինքն էլ նախագահ դառնում: Շատ բարեփոխումներ են դրան հետևում, որոնցից կարող ենք նշել կանանց և տղամարդկանց միջև հավասարությունը: Քողի (ինչպես նաև ֆեսի) կիրառումը չեղյալ է հայտարարվում: Առաջ են գալիս Գրիգորյան օրացույցը և լատինատառ այբուբենը: Եվ ոչ միայն: Մահմեդական օրենքը չեղյալ է հայտարարվում և նոր կանոնադրություն է սահմանվում, որը ավելի մոտ էր արևմտյան մեծ տերություններին: Զարգանում են գյուղատնտեսությունը և հանրային կրթությունը: Այդ պատճառով Քեմալը նաև Թուրքիայից դուրս ոչ միայն իր ժամանակների, այլև ամբողջ պատմության ամենամեծ արդիականացնողներից է համարվում:

1924 թ.

- Հունվարի 27: Իտալիայի և Յուգոսլավիայի միջև կնքված Հռոմի պայմանագիրը սահմանում է Ֆյումեի անցումը Իտալիային:
- Ֆաշիզմը ուժեղանում է: Ձերբակալություններ են կիրառվում և մահապատիժը սկսում է գործել: Շատ են աքսորյալները:
- Մարտի 3: Մուստաֆա Քեմալը չեղյալ է հայտարարում հոգևոր խալիֆայությունը: Միևնույն ժամանակ վերջ է դրվում Կրոնական իրերի նախարարության գործունեությանը: Շարիան

դադարում է համարվել ֆատական համակարգի աղբյուրն ու համեմատության եզրը:

- Դեկտեմբերի 23: Իտալիայի դեմ ալբանական դիմադրության ղեկավար Ահմեդ Բեյ Զոգուն, որ ավելի հայտնի է որպես Զոգ, մտնում է Տիրանա և սկիզբ դնում երկարատև ավտորիտար վարչակարգի:

1925 թ.

- Ռեզան հռչակվում է Պարսկաստանի (Իրանի) շահ և հիմնադրում Փահլավունիների դինաստիան:
- Մուստաֆա Քեմալը շարունակում է բարեփոխումներ իրականացնել: Արգելվում են ֆեսը և գլխափաթթոցները: Արգելք է դրվում նաև սուֆիստական եղբայրությունների վրա: Ընդունվում է Գրիգորյան օրացույցը:
- Զոգը Ալբանիան հանրապետություն է հռչակում և հունվար ամսից դառնում դրա նախագահ:

1926 թ.

- Մուստաֆա Քեմալը Թուրքիայում սկիզբ է դնում քաղաքացիական ամուսնությանը և Գրիգորյան օրացույցին: Հունաստանը Թուրքիայի և Ալբանիայի հետ դեռ խնդիրներ ունի. Մակեդոնիայի շուրջ մրցակցությունը դեռ շարունակվում է:
- Նոյեմբերի 27: Իտալիայի և Ալբանիայի միջև «Բարեկամության և անվտանգության» պայմանագիր է կնքվում: Իտալիան ճանաչում է Ալբանիայի՝ իրեն հավասար լինելը և պարտավորվում է խուսափել հետագա միջամտություններից:

1927 թ.

- Իտալիայի և Ալբանիայի միջև կնքվում է Տիրանայի պայմանագիրը: Հաջորդող ժամանակաշրջանում առևտրի և տնտեսության բնագավառներում խնդիրներ են առաջանում:

1928 թ.

- Սեպտեմբերի 1: Զոգը իրեն հռչակում է Ալբանիայի թագավոր: Նա բարելավում է կրթությունը և ներդրումային քաղաքականությունը (որոնք արվում էին իտալացիների և շատերի կողմից):
- Հոկտեմբերի 24: Ուոլլ Սթրիթը անկում է ապրում: Սկսվում է համաշխարհային տնտեսական ճգնաժամը, որ բռնկվում է 1929 թ.:
- Իսլամը Թուրքիայում դադարում է պետական կրոն լինելուց:

1929 թ.

- Արմին Տ. Վեգները գրում է նախագահ Վուդրով Ուիլսոնին՝ հայտնելով հայերի կոտորածի մասին և խնդրելով, որ փրկվածներին օգնություն ցուցաբերվի:

1930 թ.

- Հարկավոր է նշել, որ երեսունականներին Հանրապետության ներքո հունական, հայկական և հրեական փոքրամասնությունները պատժի էին ենթարկվում, ինչպես դա սահմանում է Փամուկը, քանի որ հատուկ ոչ մահմեդականներին ուղղված հարկեր էին գործում: Թուրքիայում աշակերտների պակասի պատճառով փակվում են կրոնական վարժարանները:

1932-1939 թթ.

- Եվրոպայում մեծ փոփոխություններ են տեղի ունենում: Գերմանիայում իշխանության է գալիս Հիտլերը, ով մտադրվել էր Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում կորցրած հողերը ետ վերադարձնել և միավորել գերմանաբնակ տարածքները:

1933 թ.

- Լույս է տեսնում Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» գիրքը:

1934 թ.

- Վերֆելի գիրքը Գերմանիայում արգելքի տակ դրված մյուս գրքերի հետ կրակի է մատնվում:
- Մուստաֆա Քեմալին տրվում է Աթաթուրքի՝ թուրքերի հոր և Թուրքիայի հանրապետության հիմնադրի և նախագահի տիտղոսը:

1935 թ.

- Թուրքիայում կիրակին դառնում է հանգստյան օր:
- Հոկտեմբերի 3: Իտալիան արշավում է դեպի Եթովպիական տարածքներ: Ազգերի Լիգան դատապարտում է նրան:

1936 թ.

- Նախկին Հայաստանի Հանրապետությունը ԽՍՀՄ կազմում անկախ հանրապետություն է դառնում: Տարիներ շարունակ լարվածություն է տիրում Ադրբեջանի մոտ գտնվող Լեռնային Ղարաբաղի գերիշխանության համար, ինչը 1989 թ.՝ ԽՍՀՄ փլուզման շրջանում զինված հակամարտության պատճառ է դառնում:
- Մայիսի 5: Իտալական զորքերը մտնում են Ադիս Աբեբա: Որոշ ժամանակ անց (նույն ամսվա 9-ին) Վիտտորիո Էմանուելե 3-րդը Եթովպիայի կայսեր տիտղոսին է արժանանում:
- Հոկտեմբերի 24: Իտալիայի արտգործնախարար Գալեացո Չանոն և Գերմանիայի արտգործնախարար Կոնստանտին վոն Նեյրատը Բեռլինում «բոլշևիզմի» դեմ համաձայնագիր են կնքում: Ծնվում է Հռոմ-Բեռլին առանցքը:

1937-1939 թթ.

- Իսպանիայում քաղաքացիական պատերազմ է տեղի ունենում:

1937 թ.

- Դեկտեմբերի 11: Մուսսոլինին հայտարարում է Իտալիայի՝ Ազգերի Լիգայից (հիմնադրվել էր 1919 թ.) դուրս գալու մասին:

1938 թ.

- Ապրիլի 16: Հռոմում համաձայնագրեր են կնքվում: Երաշխավորվում է Միջերկրականում ստատուս քվոն:
- Աթաթուրքը մահանում է, նրան հաջորդում է Իսմեթ Ինոնուն:

1939 թ.

- Ապրիլի 7: Իտալական զորքերը արշավում են դեպի Ալբանիա:
- Մայիսի 22: Բեռլինում Իտալիայի և Գերմանիայի միջև կնքվում է «Պողպատե պայմանագիր»:
- Սեպտեմբերի 1: Իտալիան իրեն պատերազմից դուրս է հայտարարում:

1940 թ.

- Հունիսի 10: Մուսսոլինիի Իտալիան Ֆրանսիային և Անգլիային պատերազմ է հայտարարում:
- Հոկտեմբերի 28: Իտալիան հարձակվում է Հունաստանի վրա (բարեկամությանը արդեն նոյեմբերի 13-ին վերջ է դրվում):

1941 թ.

- Սիրիան անկախ է հռչակվում և ամբողջությամբ այդպիսին է դառնում 1946 թ. սկսած:
- Հուլիսի 10: Իտալիայից դեպի Ռուսաստան է մեկնում մոտ 22,000 տղամարդ:
- Օգոստոս: Կալանավորյալներ Վենտոտենե Ալտիերո Սպինելլին, Էռնեստո Ռոսսին և Էուջենիո Կոլորնին գրում են «Ազատ և միացյալ Եվրոպայի» մանիֆեստը:

1941-1942 թթ.

• Գերմանիայում կազմավորվում է Հայկական Լեգեոնը, որը նպատակ ուներ ազատագրել Հայաստանը: Առաջնորդը գեներալ Դրոն էր:

1942 թ.

• Նոյեմբերի 4: Էլ-Ալամեյնում ճակատամարտեր են տեղի ունենում: Իտալական միությունները ոչնչացվում են: Առանցքի զորքերը նահանջում են:

1943 թ.

• Հուլիսի 9: Անգլո-Ամերիկյան զորքերը ափ են բարձրանում Սիցիլիայում: Դրան հետևում է Մուսսոլինիի ձերբակալությունը (հուլիսի 24), Բադոլիոն դառնում է վարչապետ: Սեպտեմբերի 3-ին Կազիբիլեում զինադադար է կնքվում, որի մասին նույն ամսվա 8-ին տեղեկանում են իտալացիները: Թագավորը և կառավարությունը լքում են Հռոմը (սեպտեմբերի 9), ծնվում է Ազգային ազատագրման կոմիտեն: Մուսոլինին ազատ արձակվելուց հետո վերադառնում է Իտալիա: Հիմնադրվում է Սալոյի Հանրապետությունը (սեպտեմբերի 23):

• Հոկտեմբերի 13: Բադոլիոյի կառավարությունը Գերմանիային պատերազմ է հայտարարում:

1944 թ.

• Ծնունդով հրեական ընտանիքից լեհ իրավաբան Ռաֆայել Լեմկինը հայերի մասսայական կոտորածների առնչությամբ առաջարկում է «ցեղասպանություն» տերմինը:

Իտալիայում դիմադրություն է լինում և տեղի են ունենում Ստացեմայի Սուրբ Աննայի (օգոստոսի 12) և Մարձաբոտտոյի (սեպտեմբերի 28) կոտորածները:

1945 թ.

• Հրեա-գերմանացի Պրահայում բնակվող գրող Ֆրանց Վերֆելը մահանում է (ծնված 1890 թ.), ով «Մուսա լեռան 40 օր»

վեպի հեղինակն էր, վեպ, որի շնորհիվ ամբողջ աշխարհում ինչ-որ չափով տեղեկացան 1915 թ. հայերի կրած կոտորածների մասին: Երիտասարդ տարիքում Վերֆելը Կաֆկայի և Բրոդի Պրահայի շրջանակին էր պատկանել: Ապա բնակվել էր Բեռլինում և Վիեննայում՝ դառնալով գերմանական առաջին էքսպրեսիոնիզմի գլխավոր ներկայացուցիչներից մեկը: Գուստավ Մահլերի մահից հետո ամուսնանում է նրա այրի Ալմայի հետ: Մահանում է Կալիֆորնիայում:

- Լիբանանը անկախ է հռչակվում:
- Ծնվում է Արաբական երկրների լիգան:
- Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում չեզոք դիրք բռնած Թուրքիան պատերազմ է հայտարարում Գերմանիային և Ճապոնիային: Նա չի մասնակցում ճակատամարտերին: Դառնում է Միացյալ Ազգերի անդամ:

1946 թ.

- Հունիսի 2: Իտալիայում Խորհրդարանական ընտրություններ են անցկացվում և քվեարկության արդյունքում Հանրապետությունը հաղթանակ է տանում:

1948 թ.

- Ցեղասպանություն հանցանքից խուսափելու և այն պատժելու վերաբերյալ Համաժողով է տեղի ունենում:

1950 թ.

- Թուրքիայում առաջին ազատ ընտրություններն են տեղի ունենում, Ժողովրդավարական կուսակցությունը հաղթանակ է տանում:

1952 թ.

- Թուրքիայի մոտ հստակորեն ՆԱՏՕ-ին մոտենալու շրջան է սկսվում, այնպես, որ դառնում է նրա «հարավային թևը»: Նա մտնում է ՆԱՏՕ-ի կազմի մեջ:

1959 թ.

- Թուրքիան առաջին անգամ ԿԱԵ մտնելու խնդրանք է ներկայացնում:

1960 թ.

- Մայիսի 27: Թուրքիայում ռազմական հակամարտություն է տեղի ունենում:

1961 թ.

- Նոր սահմանադրությունը երկու մասից բաղկացած Խորհրդարան է հիմնադրում:

1963 թ.

- Ստորագրվում է Թուրքիայի ԿԱԵ կազմի մեջ մտնելու պայմանագիրը:

1968 թ.

- Արմին Տ. Վեգները Յադ Վաշեմի կողմից «Արդարի» կոչում է ստանում:

1960-ականներ

- Հայ Հեղափոխական դաշնակցության (դաշնակներ) և Հայաստանի Ազատագրության հայ գաղտնի բանակի (ASALA) կողմից տարբեր մահափորձներ են իրականացվում թուրք դի-վանագետների նկատմամբ: Լույս են տեսնում «վրիժառուների» տարբեր հուշեր:

1971 թ.

- Զինվորականները ստիպում են վարչապետ Սուլեյման Դեմիրելին հրաժարական տալ:

1973 թ.

- Ռուանդացի Նիկոդեմը Ռուհաշյանիկոն, որին Մարդու իրավունքների հանձնաժողովի և ՄԱԿ-ի տնտեսական և սոցիա-լական խորհրդի կողմից հանձնարարվել էր ցեղասպանություն-

ների վերաբերյալ ուսումնասիրություն կատարել, անդրադառնում է հայոց ցեղասպանությանը: Թուրքական պատվիրակությունը ընդդիմանում է:

1974 թ.

- Ազգերի մշտական դատարանը հայտարարում է, որ տեղահանության և սպանությունների միջոցով կատարված հայերի ոչնչացումը պետք է համարվի ցեղասպանություն: Եվ դրա համար պատասխանատու է երիտթուրքերի կառավարությունը: Դրան հետևում է Բենիամին Վիթակերի *Revised and Updated Report on the Question of the Prevention and Punishment of the Crime of Genocide* վերնագրով զեկույցը, որտեղ նորից խոսվում է հայոց ցեղասպանության մասին: Բայց զեկույցը չի փոխանցվում հանձնաժողովին:
- Թուրքական զորքերը արշավում են դեպի Կիպրոս կղզու հյուսիս:

1976 թ.

- Առաջին անգամ պարզ ձևով ցեղասպանության մասին խոսող թուրք պատմաբան Տաներ Աքսամը տասը տարվա ազատազրկման է ենթարկվում: 1977 թ. նրան հաջողվում է փախչել և ապաստան գտնել Միացյալ Նահանգներում, որտեղ աշխատում է Քլարկ համալսարանին պատկանող Հոլոքոստի և Ցեղասպանության ուսումնասիրությամբ զբաղվող Ստրասլեր ընտանեկան կենտրոնում:
- Վանի շրջանում երկրաշարժի արդյունքում մոտ 5,000 մարդ է զոհվում:

1978 թ.

- Հուլիսի 4: Ռուհաշյանիկոյի կողմից Հանձնաժողովին ներկայացված զեկույցում հանվում են «հայոց ցեղասպանությանը» վերաբերող բոլոր հղումները:

- Կիպրոսի արշավանքին հետևած Միացյալ Նահանգների էմբարգոն ուժը կորցնում է:

1979 թ.

- Հովհաննես Պողոս 2-րդը այցելում է Թուրքիա:

1980 թ.

- Սեպտեմբերի 12: Թուրքիայում զինվորականների կողմից պետական հեղաշրջում է տեղի ունենում: Ռազմական դրություն է ստեղծվում: Սահմանադրությունը դադարեցվում է: Կառավարության միակ մարմինը՝ Ազգային Անվտանգության խորհուրդը նախագահում է Քենան Էվրենը:

1980-2000 թթ.

- Թուրքիայի համար մութ տարիներ են գալիս: Տանջանքի համակարգը տարածվում է ամբողջ երկրով մեկ, քրդական գյուղեր են կրակի մատնվում: Անօրինական ժանդարմերիա Ջիտեմի կողմից հազարավոր քրդեր առևանգվում են և նրանց մարմինները նետվում են փողոց:

1981 թ.

- Մայիսի 13: Հռոմի Սուրբ Պետրոս հրապարակում մի թուրքի կողմից, ով հավանաբար «Գորշ գայլերի» անդամ էր, Պապի դեմ մահափորձ է իրականացվում:

1982 թ.

- Առաջին քայլերն են արվում դեպի իրադրության որոշակի կարգավորում: Նոր սահմանադրություն է ընդունվում: Էվրենը դառնում է Հանրապետության նախագահ (նախագահությունը տևում է 7 տարի):

1983 թ.

- *Անավատան Պարտիզին* (ANAP) կամ այլ կերպ ասած Մայր Հայրենիք կուսակցությունը ընտրություններում հաղթա-

նակ է տանում: Քաղաքականությունը ազատական է, բայց քուրդ փոքրամասնությունների դեմ ճնշում է գործադրվում:

1984 թ.

• Այս տարում սկսվում է թուրքական զորքի և ՔԱԿ-ի (Քուրդ աշխատավորական կուսակցություն) միջև դաժան հակամարտությունը, որի սկիզբը նշվում է 1978 թ. Աբդուլլահ Օջալանի կողմից:

1985-1986 թթ.

• Եվրախորհրդարանում «հայոց ցեղասպանության» ճանաչման վերաբերյալ բանավեճ է տեղի ունենում:

1985 թ.

• Մայիսի 19: Միացյալ Նահանգներում «Նյու Յորք Թայմսը» և «Վաշինգտոն փոստը» Խորհրդարանին ուղղված երկու էջանոց մանիֆեստ են տպագրում (ստորագրությունների մեջ էր պատմաբան, Փրինսթոնի դոցենտ Բեռնարդ Լուիսը) ապրիլի 24-ը «մարդու կողմից մարդու հանդեպ անմարդկայնության» հիշատակի օր սահմանելու դեմ: Ինչպե՞ս կարելի է խոսել ցեղասպանությունից, եթե օսմանյան արխիվները անհասանելի են:

• Հունիսի 29: ՄԱԿ-ը ճանաչում է հայոց ցեղասպանությունը:

1987 թ.

• Թուրքիան խնդրանք է ներկայացնում ԿԱԵ-ի մաս կազմելու վերաբերյալ:

• Հունիսի 18: Չնայած որոշ հայ խմբերի ահաբեկչական գործողությունները դատապարտելուն՝ Եվրախորհրդարանը ճանաչում է հայոց ցեղասպանությունը՝ մարդկության դեմ հանցանքը կանխելու և այն ճնշելու Հանձնաժողովի շրջանակներում, որն ընդունվել էր 1948 թ. դեկտեմբերի 9-ին ՄԱԿ-ի գլխավոր Ասամբլեայի կողմից:

1990 թ.

- Թուրքիան իր բազաներն է բացում Միացյալ Նահանգների կոալիցիայի համար Իրաքի դեմ հարձակումներն իրականացնելու նպատակով:

1991 թ.

- Հայաստանը անկախանում է Խորհրդային միությունից: Այսպիսով՝ ծնվում է Հայաստանի Հանրապետությունը:

1992 թ.

- Իրաքի քրդական շրջաններում ոտնձգություններ են կատարում մոտ 20,000 թուրք զինվորներ:

1993 թ.

- Տեղի է ունենում Սվազի կոտորածը: 37 մտավորականներ Մադիմակ հյուրանոցում մահմեդական ինտեգրալիստների կողմից խարույկի վրա այրվում են: Նրանցից ոմանք ալավիտ գրողներ և արվեստագետներ էին, այսինքն՝ մարդիկ, ովքեր կապ ունեին 13-րդ դարի եղբայրության հետ, որը հիմնադրվել էր Անատոլիայում և որին թուրքական կառավարությունը չէր ընդունում: Սպանվածների թվում էր սատիրական ոճի մի հայտնի գրող, որ կասկածի տակ էր դրել Ղուրանի հավաստիությունը: Նրան ընդունող երկրներից էին Շվեյցարիան, Ռուսաստանը, Միացյալ Նահանգները և Գերմանիան:

1993-1994 թ.

- Հայաստանը գրավում է Լեռնային Ղարաբաղի տարածքը, ինչպես նաև այլ ադրբեջանական հողեր: Հանրապետությունը տնտեսական դժվարություններ է ունենում՝ զրկված լինելով բնական ռեսուրսներից և մշակման ենթակա հողերից և կախվածություն ունենալով Ադրբեջանի նավթից: Մեծ էր կախվածությունը Ռուսաստանից, որը շարունակում էր կլանել արտահանումների մոտ 60%-ը:

1994 թ.

- Հայկական հարցին Ֆրանսիայում անդրադառնում է պրոֆեսոր Լուիսը «Լը մոնդ» օրաթերթում: Նրա կարծիքով տեղահանություն եղել է, բայց ոչ ցեղասպանական նպատակով: Այդ տեղահանությունը պայմանավորված էր հայերի դավաճանությամբ (հունվարի 1): Խոսքը այդ թեմայով նրա առաջին անդրադարձի մասին չէ: Ֆրանսիայում գտնվող հայկական կազմակերպությունները համախմբվում են, պատմաբանի դեմ քաղաքացիական շարժում է սկսվում և նրան դատի են տալիս (հունիսի 21, 1995 թ.): Այդ դատը հայերի համար բարոյական մեծ հաղթանակի դեր է ունենում:
- Թուրքիայում արգելք է դրվում Ժողովրդավարական կուսակցության քրդական ուղղության վրա:

1995 թ.

- Նոր սահմանադրությունը Մաքսային Եվրախորհրդում հավանության է արժանանում:
- Իրաքի հյուսիսում հակաքրդական հարձակում է տեղի ունենում:

1996 թ.

- Աջ կենտրոնի կոալիցիան անկում է ապրում: Իշխանության է գալիս Բարեկեցության կուսակցությունը մահմեդական ոգեշնչում ունեցող Նեջմեթին Էրբաքանը:

1997 թ.

- Թուրքիայում փակվում են խաղատները, որոնք ընտանիքների համար վտանգ էին ներկայացնում: Շարունակվում են բարեփոխումները, որոնք նպատակ ունեին բարելավել կրոնականների կացությունը (տե՛ս իմամի մասնագիտացված դպրոցների դիվանագետներին, 2005): Ամեն ինչի պատճառը Մայր Հայրենիքի կուսակցության ղեկավարության տակ գտնվող աջ կենտրոնն էր:

1998 թ.

- Բարեկեցություն կուսակցությունը արգելքի տակ է դրվում:
- Ջանկարլո Պալիարինին Իտալիայի խորհրդարանում «հայկական Հոլոքոստի» ճանաչման համար ստորագրահավաք է սկսում: Ստորագրում են տարբեր քաղաքական կողմնորոշումներ ունեցող 165 խորհրդարանականներ:

1999 թ.

- Թուրքիան պաշտոնապես դառնում է Եվրամիություն մտնելու թեկնածու
- Ապոն գրավվում է, ՔԱԿ-ը (Քուրդիստանի աշխատավորական կուսակցություն) պարտություն է կրում: Մինչ այդ հակաքրդական գործառույթով օգտագործվող Հեզբոլլահը օրենքից դուրս է հայտարարվում:
- Երկրի հյուսիս-արևմուտքում երկու անգամ երկրաշարժ է լինում՝ օգոստոսին և նոյեմբերին: Մոտ 17,000 մարդ է զոհվում:

2000 թ.

Ապրիլի 24: Գագիկ Բաղդասարյանի ղեկավարությամբ 300 հայ հավատացյալներ Հռոմում հաշտության երթ են կազմակերպում՝ Սուրբ Դռան միջով մտնելով Սուրբ Պետրոս և տաճարում աղոթք կարդալով: Հոբելյանական ուխտագնացությունը նպատակ ուներ հիշեցնել 1915 թ. հայերի կոտորածի մասին: Սուրբ Պետրոսից ուխտագնացները անցնում են Սուրբ Աննա՝ հայ բեյրութցի կաթոլիկ Ժան Պիեռ Կասպարյան պատրիարքի վարած պատարագին մասնակցելու համար: Նույն օրը Հովհաննես Պողոս 2-րդ Պապը Թուրքիայում հայերի պատրիարք Մեսրոպ 2-րդի կողմից հրավիրվում է Թուրքիա:

Սեպտեմբերի 12: Թուրքիայում հանրաքվե է անցկացվում: Մեծամասնությունը դրական պատասխան է տալիս 1982 թ. սահմանադրությունը էականորեն փոխելու գաղափարին: Ավելի քիչ իշխանություն է տրվում զինվորականներին:

Նոյեմբերի 17: Իտալիայի խորհրդարանը Եվրախորհրդարանի և Վատիկանի Հանրապետության օրինակով մի բանաձև է ընդունում, որով ճանաչում է հայոց ցեղասպանությունը:

2001 թ.

- Հունիս: Արգելանքի տակ է դրվում Առաքինություն մահմեդական կուսակցությունը (Fazilet Partisi, FP), որը մեղադրվում էր Հանրապետության լաիցիզմի դեմ գործելու մեջ: Մահմեդական ոգեշնչմամբ ծնվում են երկու նոր կուսակցություններ՝ Երջանկություն կուսակցությունը (Saadet Partisi), Արդարության և զարգացման կուսակցությունը (Adalet ve Kalkinma Partisi, AKP).

2002 թ.

- Դեկտեմբեր: Թուրքիայում իշխանության է գալիս Չափավոր մահմեդական կուսակցությունը Ռեսեփ Թայիփ Էրդողանի գլխավորությամբ, որը 2003 թ. դառնում է կառավարության ղեկավար: Հաջորդ տարիներին նա բարեփոխումների ծրագիր է իրականացնում՝ նպատակ ունենալով մոտենալ Եվրամիությանը: Բայց դաժան արձագանքների է արժանանում:

2003 թ.

- Մարտ: Ժողովրդի ժողովրդավարություն կուսակցության (Halkin Demokrasi Partisi, HADEP) քրդական ուղղությունը արգելանքի տակ է դրվում:
- Հունիս/հուլիս: Եվրամիություն մուտք գործելու հետ կապված օրենսդրական նոր փոփոխություններ են կատարվում:

2004 թ.

- Հունիս: Հանրային հեռուստատեսությամբ առաջին անգամ քրդական ծրագիր է հեռարձակվում:

2005 թ.

- Թուրքիայի վարչապետ Ռեսեփ Թայիփ Էրդողանը հրավիրում է թուրք, հայ և այլազգի պատմաբանների 1915 թ. դեպքե-

ը վերաարժևորելու համար: Հայաստանի նախագահը հույս է հայտնում երկու երկրների միջև լավ հարաբերություններ հաստատելու մասին:

- Հոկտեմբեր: Եվրամիություն մտնելու բանակցությունները բացված են:
- Դեկտեմբերի 16: Ստամբուլի դատարանում քննարկվում է գրականության համար նոբելյան մրցանակակիր Օրհան Փամուկին ներկայացված մեղադրանքը, ով մեղադրվում էր ազգային ինքնությունը վիրավորելու մեջ (ըստ քրեական օրենսգրքի 301-րդ հոդվածի): Շվեյցարական «Դաս մագազին» ամսագրի հետ ունեցած հարցազրույցի ժամանակ նա խոսել էր մի երկրի մասին, որտեղ սպանվել էին 30,000 քուրդ և մեկ միլիոն հայ: Նա արդարացվում է: Այդ պահից ի վեր հաճախ երկարաժամկետ գնում է Միացյալ Նահագներ, հազվադեպ վերադառնում է Թուրքիա, որտեղ պետք է թիկնազորով պտտվեր: Միևնույն ժամանակ «հայկական հարցի» թեմայով Ստամբուլի երեք համալսարաններում պատմաբանների և գիտնականների համաժողով է տեղի ունենում: Մասնակիցները բանավեճեր են ունենում: «Մոնրեալ Գազետ»-ը իր լրագրողներին հուշագիր է ուղարկում: Հայերի առնչությամբ «ցեղասպանություն» բառը ազատ կիրառվում է՝ առանց այլ որակավորումների: Հաջորդ տարիներին նմանատիպ միջոցառումներ են ձեռնարկում «Նյու Յորք Թայմս» և «Բոստոն Գլոբը» (տե՛ս Ֆլորեսը):

2006 թ.

- Փետրվարի 5: Տրապիզոնում՝ եկեղեցում սպանվում է իտալացի քահանա Դոն Անդրեա Սանտորոն, մոտ 6 տարի Թուրքիայում միսիոներ էր եղել: Նրա առաջին նշանակակետը Ուրֆան էր՝ Քաղդեացիների երկիրը, ապա նաև Եդեսիան՝ այն քաղաքը որտեղից մեկնել էր Աբրահամը: Նա հատկապես զբաղվում էր կանանցով և մարմնավաճառությամբ՝ հետևելով հայուհիներին և վրացուհիներին, որոնք ստիպված էին զբաղվել

վատագույն տնտեսական դրության այս գործունեությամբ: Նա ճանապարհորդել էր Մոլդավիայում և Վրաստանում: Շռայլում էր միջկրոնական երկխոսություններ: Երբեք չի բացահայտվել սպանողի ինքնությունը, չնայած որ բոլորը կարծում են, որ թրաֆիկինգով զբաղվողների կողմից վրեժ էր դա: Ուրիշները խոսում են Մուհամեդի մասին Դանիայում տպագրված կոմիքսների հետ կապված զայրույթի մասին: Կամ էլ պատճառն այն է, որ Տրապիզոնում մեծ թվով ծայրահեղ ազգայնական խմբեր կային:

- Ապրիլ: Քուրդ ցուցարարների և երկրի հարավ-արևելքի ոստիկանության միջև բախումներ են լինում: Մոտ 12 հոգի զոհվում է: Ստամբուլում այլ բախումներ են տեղի ունենում:
- Ամառ: Եթե թուրքական կառավարությունը թվում է, թե նպաստում է ցեղասպանության ճանաչման հարցի բացմանը, ապա Հանրապետական կուսակցության սոցիալ-դեմոկրատները և ազգայնականները խստորեն ընդդիմանում են: Հակաահաբեկչական նոր օրենք է սահմանվում, որը անհանգստացնում է Եվրամիությանը:
- Սեպտեմբերի 21: Բենեդիկտոս 16-րդ Պապը Կոստանդնուպոլսի պատրիարք Բարդուղիմեոս 1-ինի հրավերով չորսօրյա այց է կատարում դեպի Թուրքիա: Այցին նախորդում են հրապարակում տեղի ունեցած հանրահավաքները, Իտալիայի հյուպատոսարանի առջև կատարված կրակոցներն ու սպառնալիքները (Մարկո Անսալդո, 2011 թ.): Կապույտ մզկիթում Կոստանդնուպոլսի Մեծ Մուֆթիի հետ աղոթք են կարդում: Քահանայապետին հյուրընկալելով Էրդողանը նրա աջակցությունն էր խնդրում Եվրամիություն մտնելու հարցում:
- Դեկտեմբեր: Եվրամիությունը դադարեցնում է բանակցությունները՝ Թուրքիայի կողմից Կիպրոսի երթևեկության առջև նավահանգիստները և օդանավակայանները բացելու պահանջը մերժելու պատճառով:

2007 թ.

- Թուրքիա: Կառավարությունը հայտարարում է, որ թլպատությունը անվճար կլինի: Բացվում են կանանց և տղամարդկանց միջև խիստ բաժանում ունեցող հյուրանոցներ:
- Հունվարի 19: «Ագոս» ամսագրի խմբագիր, հայ լրագրող Հրանտ Դինքը, ով 6 ամսվա կալանավորման էր ենթարկվել հայերի տեղահանությունների և սպանությունների մասին խոսելու պատճառով, սպանվում է Ստամբուլի փողոցներից մեկում: Վարչապետ Ռեցեպ Թայիփ Էրդողանը անմիջապես հայտարարում է.
- Գնդակ են բաց թողել մտքի ազատության և Թուրքիայի ժողովրդավարության վրա: Դինքի դեմ հարձակումը բոլորիս դեմ է, մեր միասնության, մեր խաղաղության և կայունության դեմ: Հրանտ Դինքը այս հողի ծնունդ էր» (Մարկո Անսալդո, Ո՞վ է կորցրել Թուրքիան, էջ 41): Տարբեր հիմնադրամներ են հանդիմանությամբ արձագանքում, որոնց թվում էին «առանց սահմանների Reporter», Amnesty International և այլն: Գլխավոր քաղաքներում հանրահավաքներ են սկսվում: Կառավարությունը մեղադրվում է սպառնալիքները թերագնահատելու մեջ: Դա ամոթալի դեպք էր: Սպառնալիքների ենթարկվածներին թիկնազոր է տրամադրվում, մինչդեռ կառավարությունը, կարելի է ասել, բացակայում էր թաղման արարողության օրը:
- Թուրքական զինված ուժերը վերջին անգամ են փորձում ներխուժել քաղաքական կյանք: Աշխարհիկ և հանրապետական Թուրքիան ապստամբում է և բարձրաձայնում ժողովրդավարության և աշխարհիկ կյանքի պահանջի մասին: Ամիսներ շարունակ երկիրը մահմեդականացնելու ենթադրյալ ծրագրերի դեմ ամբողջ երկրով մեկ հանրահավաքներ են կազմակերպվում, ինչպես օրինակ Ստամբուլում, Անկարայում, Զմիռնեում, որպեսզի երկիրը չդառնա մի նոր Իրան:
- Հուլիսի 22: Ընտրություններում մեծ տարբերությամբ հաղթանակ է տանում Արդարության և զարգացման կուսակցու-

թյունը, որի գաղափարախոսն էր վարչապետ Էրդողանը: Երևի թե Թուրքիան նախընտրում է տնտեսական հաջողություն՝ այն ավելի կարևոր համարելով քան կրոնական ինտեգրալիզմի հանդեպ վախը: Տարաձայնություններ են սկսվում ընդդիմության շրջանում, որը մասնատվում է և ազոր դառնում:

- Օգոստոսի 28: Խորհրդարանի երրորդ քվեարկությամբ ընտրվում է Գյուլը, նա արդեն արտաքին գործերի նախարար էր: Նրա կինը գլխաշոր էր կրում, ինչը ողբերգական փաստ էր աշխարհիկ Թուրքիայի համար: Նույնն էր անում նաև Էրդողանի կինը: Վերսկսվում են Թուրքիայում մահմեդական հագուստի դերի մասին բանավեճերը:
- Հոկտեմբեր: ԱՄՆ-ի հետ հարաբերություններում դիվանագիտական ճգնաժամ է սկսվում, ինչի պատճառը Կոնգրեսի հանձնաժողովի կողմից հայոց ցեղասպանության ճանաչումն էր:

2008-2010 թթ.

- Թուրքիայում տասնյակ ձերբակալություններ են տեղի ունենում, որոնք կապված էին ուլտրանացիոնալիստական պետական հեղաշրջում ծրագրող Գորշ գայլերի հետ: Ներգրավված էին հատկապես նախկին զինվորականներ և ուղղությունը փոխած ծառայողներ: Բայց Թուրքիայում նաև սոցիալական մեծ փոփոխությունների ժամանակաշրջան է:

2008 թ.

- Հոկտեմբերի 14: Օրհան Փամուկը Ֆրանկֆորտեի միջազգային շուկայում խիստ ելույթ է ունենում, որտեղ բողոքում է գրողների և մտավորականների հալածանքներից և դժվարություններից:
- Էրգենեկոն կազմակերպության 86 անդամների դեմ դատավարություն է սկսվում, ովքեր մեղադրվում էին հակակառավարական պետական հեղաշրջում ծրագրելու մեջ:
- Վատթարանում են հարաբերությունները Թուրքիայի և Իսրայելի միջև:

2009 թ.

- Սեպտեմբերի 28: Մեծ տույժ է կիրառվում Դոգան Յային Հոլդինգ տպագրական խմբին՝ հարկերից խուսափելու համար, ով Էրդողանի կառավարության հանդեպ հստակ քննադատական մոտեցում էր ցուցաբերում: Այդ կառավարությունը փորձում էր քրդերի հետ հարաբերությունները լավացնել՝ հակառակ մամուլի ազատության: Շատ անգամ են բողոքներ գրանցվել Թուրքիայում այլախոհ մտավորականների հանդեպ գործադրված ճնշման վերաբերյալ, ովքեր շարունակաբար դատավարությունների և ազատազրկումների էին ենթարկվում:
- Ապրիլի 14: Քրդերի Աշխատավորական կուսակցությանը զուգահեռ գործող Քուրդ համայնքների միության վերաբերյալ հետաքննությունների շրջանակում հարյուրավոր քուրդ քաղաքական գործիչներ են ձերբակալվում:
- Հոկտեմբեր: Թուրքիայի և Հայաստանի Հանրապետության միջև տարբեր համաձայնագրեր են կնքվում՝ դիվանագիտական հարաբերությունները շտկելու նպատակով:
- Դեկտեմբեր: Խորհրդարանում միջոցներ են ձեռնարկվում քրդական լեզուն ճանաչելու և երկրի հարավ-արևելքում ռազմական ուժերի ներկայությունը նվազեցնելու նպատակով: Միևնույն ժամանակ արգելանք է դրվում Ժողովրդավարական կուսակցության վրա և մեծ թվով ձերբակալություններ են իրականացվում:

2010 թ.

- Փետրվար: Մոտ 70 զինվորական են ձերբակալվում՝ կառավարության դեմ գործած ենթադրվող դավադրության մեղադրանքով:
- Մայիս: Էրդողանը տեղական «Պաշտոնական թերթում» տպագրում է իրավունքների հուշագիր, որից պետք է օգտվեն Թուրքիայում գտնվող կրոնական փոքրամասնությունները: Սա մի աննախադեպ բան էր (Մարկո Անսալդո, Ո՞վ է կորցրել Թուրքիան, 2011 թ.):

- Իսրայելի հետ դիվանագիտական հարաբերությունները ճգնաժամ են ապրում:
- Հունիսի 3: Սպանվում է Անատոլիայի երեց, եպիսկոպոս Լուիջի Պադովեզեն, նրան սպանում է իր վարորդը՝ մի քանի անգամ դանակահարելով և ապա գլուխը կտրելով: Խոսքը մտավոր անկայունության մասին է, բայց նաև դա մի տարածաշրջան էր (Իսկենդերուն, Անատոլիայի հարավ), որտեղ քրիստոնյաների հանդեպ ուժեղ վերահսկողություն և անվստահություն էր տիրում և որտեղ հայերը միայն առանձին էին աղոթում: Խոսքը գնում է նաև Էրդողանի գործողությունների ընդդիմադիրների մասին, ովքեր դեմ էին նրա՝ Թուրքիան Եվրամիություն ընդգրկելու մտադրությանը:
- Հուլիս: Խափանվում են քրդերի և Աբդուլլահ Օկալանի հետ հարցազրույցները:
- Սեպտեմբերի 12: Հանրաքվե է անցկացվում, որը հավանություն է տալիս 1982 թ. ընդունված սահմանադրության մեջ զինված ուժերից ոգեշնչված կատարվելիք փոփոխություններին: Պակաս հզորություն է նախատեսվում զինվորականների համար, ավելի մեծ ինքնուրույնություն փոքրամասնությունների՝ այդ թվում քրդերի համար: Նոր ծրագրում թույլատրվում է նաև կանանց և դպրոցներում գլխաշոր կրել: Մեծ փոփոխություններ են տեղի ունենում քեմալիստական վարչակարգի համեմատությամբ (Մարկո Ասվալդո, 2011 թ.):
- Հոկտեմբեր: 2009 թ. դեկտեմբերին տեղի է ունենում ձերբակալվածների դատավարությունը (մոտ 151 մարդ): Մեղադրյալներին արգելվում էր քրդերեն խոսել:

2011 թ.

- Արգելվում են հակաքրդական գործողությունները:
- Հոկտեմբեր: Վանում ուժեղ երկրաշարժ է տեղի ունենում:
- Դեկտեմբերի 22: Ֆրանսիացի պատգամավորները օրենք են ընդունում՝ ըստ որի հայոց ցեղասպանության ժխտումը

պատժվում է: Էրդողանը թուրք դեսպանին ետ է կանչում Փարիզից: Թուրքիայի և Ֆրանսիայի միջև ռազմական համագործակցությունը դադարեցվում է:

2012 թ.

- Հունվարի 21: Մոտ 15,000 թուրքական ծագում ունեցող մարդիկ հանրահավաք են կազմակերպում Փարիզի Սենատի առջևում՝ հակառակվելով 1915 թ. հայոց ցեղասպանության ժխտումը պատժող օրենքին, որը վերանայվում է նույն ամսվա 23-ին:
- Հունվարի 23: Հայոց ցեղասպանության ժխտումը պատժող օրենքը Ֆրանսիայում հավանության է արժանանում («Լե մոնդ», հունվարի 24, 2012 թ.):
- Փետրվարի 28: Ֆրանսիական սահմանադրական խորհուրդը մերժում է ժխտողականությունը պատժող և Ազգային Ասամբլեայի կողմից արդեն հավանության արժանացած օրենքը:

Հայոց ցեղասպանության թեմայի շուրջ գրականության ցանկ

ԱԼԹՈՒՆՅԱՆ ՎԱՀՐԱՄ և ԱԼԹՈՒՆՅԱՆ ԺԱՆԻՆ, «Հիշել մոռանալու համար, Հայոց ցեղասպանությունը հոր օրագրում և դստեր հիշողության մեջ», Հռոմ, Դոնձելլի, 2007 թ.:

ԱՄԱԲԻԼԵ ՖԼԱՎԻԱ և ՏՈՍԱՏԻ ՄԱՐԿՈ, «Մուսա լեռան իրական պատմությունը», Վիտորիո Մեսորիի ներկայացում, Միլան, Գուերինի և ընկերներ, 2003 թ.:

ԱՄԱԲԻԼԵ ՖԼԱՎԻԱ և ՏՈՍԱՏԻ ՄԱՐԿՈ, «Մուսա լեռ. դավաճանված հերոսներ», Միլան, Գուերինի և ընկերներ:

ԱՆՍԱԼԴՈ ՄԱՐԿՈ, «Ո՞վ է կորցրել Թուրքիան», Թուրին, Էյնաուդի, 2011 թ.:

ԱՐՍԼԱՆ ԱՆՏՈՆԻԱ, «Արտույտների ագարակը», Միլան, Բուր, 2007 թ.:

ԱՐՍԼԱՆ ԱՆՏՈՆԻԱ, «Զմիռնեի ճանապարհ, Միլան, Ռիցոլի, 2009 թ.:

ԱՐՍԼԱՆ ԱՆՏՈՆԻԱ ԵՎ ԶԵՔՅԱՆ ԼԵՎՈՆ (խմբագիր), «Հայոց պատմություն», Միլան, Գուերինի և ընկերներ, 2002 թ.:

ԴԱԴՐՅԱՆ ՎԱՀԱԳՆ, «Հայոց ցեղասպանության պատմություն. Բալկաններից մինչև Կովկաս ազգային հակասություններ», Միլան, Գուերինի և ընկերներ, խմբագիր՝ Անտոնիա Արսլան և Բողոս Լևոն Զեքիյան (“The History of the Armenian Genocide. Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus”, Providence, R.I., Berghahn Books, 1995).

ԴԱԴՐՅԱՆ ՎԱՀԱԳՆ, «Դեպի անապատ. էջեր իմ օրագրից, Փրինսթոն (NJ), Կոմիտաս հաստատություն, 2003 թ.:

ԴԻՆՔ ՀՐԱՆՏ, «Աղավնու անհանգստությունը. լինել հայ Թուրքիայում», Միլան, Գուերինի և ընկերներ, 2008 թ. (Uluslararasi, 2008 թ.):

ՖԼՈՐԵՍ ՄԱՐՄԵԼՈ, «Հայերի ցեղասպանություն, Բոլոնիա, Մուլինո, 2007 թ.:

ԻՄՊԱԼԻԱՑՈ ՄԱՐԿՈ, «Պատուհան դեպի կոտորած. հայերի կոտորածի մասին չլսված փաստաթղթեր, 1915-1916 թթ.», Միլան, Գուերինի և ընկերներ, 2000 թ.:

ՔՈՒՉՈՒԿՅԱՆ ՊԵՏՐՈՍ, «Անապատի ձայներ. հայերի դահիճներ և վկաներ», Միլան, Գուերինի և ընկերներ, 2000 թ.:

ԼՅՈՒԻ ԳՈՒԵՆՏԵՐ, «Հայերի կոտորածը. հակասող ցեղասպանություն», Թուրին, Էյնաուդի, 2006 թ.:

ՄԻԼԼԵՐ ԴՈՆԱԼԴ Է. և ԹՈՒՐՅԱՆ ՄԻԼԼԵՐ, ԼՈՐՆԱ, «Փրկվածները. Հայերի ցեղասպանությունը այդ ժամանակ երեխա եղածների բերանով», Միլան, Գուերինի և ընկերներ, 2007 թ.: Անտոնիա Արսլանի ներկայացմամբ (Կալիֆորնիա Պրես համալսարան, 1993 թ.):

ՄՈՐԳԵՆԹԱՈՒ ՀԵՆՐԻ, «1913-1916 թթ.: Հայերի կոտորածների օրերին Կոստանդնուպոլսում ամերիկացի դեսպանի հուշերը», իտալերեն տպագրության և եզրակացության խմբագրեր՝ Ֆրանչեսկո Բերտի և Ֆուլվիո Կորտեզե, Միլան, Գուերինի և ընկերներ, 2010 թ. (Ambassador Morgenthau's Story).

ՌՈԶԵԼԼԻ ԱԼԲԵՐՏՈ, «Հայկական Հոլոքոստ», Հռոմ, Հրատարակիչ՝ Սոլֆանելլի, 2007 թ.:

ՇԱՖԱԿ ԷԼԻՖ, «Ստամբուլի ընկեցիկը», Միլան, Ռիցոլի, 2007 թ.:

ՍԻՆՈՒԵ ԳԻԼԲԵՐՏ, «Հայաստան», Միլան, Նեռի Պոցա, 2011 թ.:

ԹԵՐՆՈՆ ԻՎ, «Հանցագործ պետություն. 20-րդ դարի ցեղասպանությունները», Միլան, Կորբաչիո, 1997 թ. (L'Etat criminal. Les genocide au XXe siècle, Paris, Seuil, 1995).

ԹԵՐՆՈՆ ԻՎ, «Հետաքննություն՝ ցեղասպանության ժխտման շուրջ», Բրակքետս, 1989 թ.:

ՈՍԳԱՆՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ, «Շշուկների գիրք», Ռովերետո (Տրենտո), Քելլեր հրատարակչություն, 2011 թ. (Cartea soaptelor, 2009).

ՎԵՐՖԵԼ ՖՐԱՆՑ, «Մուսա լեռան 40 օրը», Միլան, Կորբաչիո, 2003 թ. (1997 թ.): Die vierzig tage des Mussa Dagh, 1933, թարգմանիչ՝ Կրիստինա Բազեջիո Մեդուզա Մոնդադորի, 1935 թ. (1935-1948 թթ. ընթացքում 7 հրատարակությամբ է լույս տեսել): Տպագրվել է «Պավոնեի գրքեր»-ում 1953 թ.:

ՅԱԼՑԻՆ ՔԵՄԱԼ, «Քեզ հետ սիրտս է ժպտում», Հռոմ, Edizioni Lavoro, 2007 թ.:

Հոդվածներ ամսագրերում և թերթերում

ԱԼԹՈՒՆՅԱՆ ՎԱՀՐԱՄ, «Հայեր, տեղահանության օրագիր», «Լա ռեպուբլիկա», նոյեմբերի 30, 2007 թ.:

ՎԻԿՏՈՐ ԲԵՐԱՐԴ, «Սուլթանի քաղաքականությունը», Փարիզի ակնարկ, հունվարի 15, 1897 թ.:

ԿԱԶԱԼԵՆՅՈ ԱՆԴՐԵԱ, «Հայերի հերոսական դիմադրությունը», «24-ժամյա արև», ապրիլի 20, 1997 թ.:

ԱՆՍԱԼԴՈ ՄԱՐԿՈ, «Թուրքիա, արգելված գրողներ», «Լա ռեպուբլիկա», դեկտեմբերի 27, 2005 թ.:

ԱՆՍԱԼԴՈ ՄԱՐԿՈ, «Թուրքիա, սպանվել է գրող հայերի պաշտպան Դինքը», «Լա ռեպուբլիկա», հունվարի 20, 2007 թ.:

ՄԱՉՈՏԻ ՄԱՐԻԱ ԻՄՄԱԿՈԼԱՏԱ, «Հայերի հանդեպ հալածանքները 19-րդ դարում», «Սոցիոլոգիական քննադատություն», XLV, 177, 2011 թ. գարուն, էջ 69-92:

ՄԱՐԻԱ ԻՄՄԱԿՈԼԱՏԱ ՄԱՉՈՏԻ
Սապիենցա համալսարան, Հռոմ, Իտալիա

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Գրքի իտալերեն բնօրինակը տպագրության է տրվել 2012 թ.
փետրվարին Print on demand տեխնոլոգիայով
«Նոր մշակույթ» տպագրական կենտրոնում,
Ալդո Մորո հրապարակ 5-00185 Հռոմ:
www.nuovacultura.it

Հայերեն հրատարակության շապիկին օգտագործված է
Մ. Սարյանի «Կարմիր քարեր» գեղանկարը, 1956 թ.:

Թարգմանիչ՝ **Վահե Գևորգյան**

Համ. ձևավորումը՝ **Ա. Աղուզումցյանի**
Շապիկի ձևավորումը՝ **Ա. Պատվականյանի**
Սրբագրիչ՝ **Վ. Դերձյան**

Չափսը՝ 60x84 1/16:
Տպաքանակ՝200:

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1